է ըստ սմանց ընձաքինարս, յորմէ երևեր գաւառն ամ ուշտունեաց, անէծ զմանաձիրհ և զգաւառ նորին։ Եւ ոչինչ յամեցին գատաստանքն այ հասանել՝ի վերայ նր. և նման հեթովմի պէսպէս ցաւովք նատակի մանաձիրհ. և պղտաբերուն գաւառին ջրաւորացն զար-ձաւ յաղտաղտուկ, եղեալ՝ի վերայ նոյ երկինք պղնձի ըստ գրոց. և ծով (այն է ծովն վանայ) հակառակեալ՝ յինքն ընդունի զսահմանս ան-դաստանաց։ Ո՞ր լուեալ մեծին վրթանայ և արքային խոսրովու՝ ցասուցեալ հրամայեն արձակել զգերեալսն. և առ նոյն այր մաղ-թել ապաշխարուք, զի դարձցի սրտմտութի-ն։ Ո՞ր յետ ելից յակովբայ յՅԷս, ժա-ռանգ որդի մանաձիրհայ (զուրա անուն) գեղեցիկ ապաշխարուք՝ ուժգին արտասուօք և հառաչմամբ՝ նորին բարեխոսուք գտեալ բժշկուի ինքեան և գաւառին։ Եւ այլ զայս-մանէ և զկնի լից բան ըստ Ձառընտրաց։[11]

Նոյ սքն այ յակոբ բազում Ճգանց համբե-րեալ, և բազում նշանս արարեալ, և այսպի-սի վարուք կացեալ՝ի մարմնի ոտ զանմարմին, որ և զհրեշտակս զարմացոյց, յետ սակաւ ժամանակի ննջեաց. այս է՝ միով ամաւ զկնի նահատակեալ անցից. և եղև վոխումն նորա յՅԷ այսպէս։

Յաւուր միաշաբաթու առ ցեղբարսն. այս-օր տեսի զհրեշտակն՝ որ հրաւիրեր զիս ելա-նել՝ի մարմնոյս, և մտանել առ Ած։ Եւ հրամայեաց նոյ հսկել զգիշերն ամ մինչև՝ի ծագել արեգականն. և մտանկր՝ի ժամ պա-

տաս-

տարագին , և կատարեր զփրկական խոր-
հուրդն . և տեսեալ զնմանուն հոգւոյն սքեայ՝
աղաչեր խաղաղութիւն անցանել ընդ իշխանութիւնն
և ընդ պետութիւնն ։ Այս կատարեալ զանարատ
պատարագն՝ ելանէր լուսատեսիլ և զուարթ
երեսօք . զոր տեսեալ բազմունեն , և խմացեալ
զիոխումն սքեայն՝ յարտասուս եղեալ լսային . և
նա հրամայեր լռել . և սակաւ մի կերակուր
առեալ՝ սկսաւ աւետարանել նոցա այսպէս .
Արք եղբարք լուարո՛ք ինձ . յիշեցէք զպատուէն արդելեալ՝ յոր եղև գնալ նախահօրն.
որ և ոչ ջան հասոյց, և սքեայ նր . և փոխանակ
անախտ դրախտին ժառանգեաց զերկիր ա-
նիծաբեր ։ Յիշեցէք զհալածանս մարգա-
րէիցն , որք սպանան յընտանեաց իւրեանց ։
Յիշեցէք ընդ արս և զկանայս ոմանս հալա-
ծեալս վասն անուանն նոն , որք զփառս ոչխս ար-
համարհեցին , և զսեր սորին ոչ զխաղս մանկ-
կըտւոյ ոչինչ համարեցան . և բազում և մե-
ծամեծ ձգնութիւք ելին յոչ ։ Յիշեցէք և զոմն
գաստ առաքելոց և մարտիրոսաց և զոմն
սքեայ , որք սաստիկ և զանազան տանջանօք վասն
քոյ զանձինս ի մահ եդեալ՝ փոխեցան ի քէն ։
Յիշեցէք զնոյն ինքն զնորն մեր , զողորմածն,
զբարերարն , զանմահն . և զնորին համբե-
րութիւնն վասն մեր մեղաւորացս , որ ի հակառա-
կութէ անօրինաց՝ զանարգանաց և զձաղանաց
զմահ կրեաց այնչափ այպանօք ։ Այս ի մէնջ
ապահատաւորեալ երախտաւորն մեր՝ ոչինչ ընդ
արժանեաց փոխարէն հատուցման ընկալաւ .
բայց աղաչեմ, մի անտես առնէք զերախտիս

քա

բարեացն քեզ, այլ ձեռացեք ի վարս ուղղութե-
քանզի կալոց եմք առաջի բեմի նը՝ առնուլ
վարձս ըստ իւրաքանչիւր վաստակոց. ընկեցեք
զչարիս յանձանց ձերոց. և մի խնայեք ի մար-
մինս, զի օտարացուցիչ է այն: Այս արդ ես
անպարտ եմ յարենէ ամենեցուն ձեր. զի ոչ
դադարեցի զտիւր և զգիշեր պատմել և ու-
սուցանել, և հաստատել յերկիւղ և ի սէրն
այ. քանզի գալոց են յաւուրս ձեր գայլք
յափշտակողք, և աստապատում վիշապք՝ որք
ոչ խնայեն ի հօտն քեզ: Այս արդ յայմ նե-
ղութիս ձեր գոհացօղք լինիջիք, և հաստա-
տուն կացեք՝ պինդ ունելով զկրաօտ ուխտի
իմոյ, անդադար խոկալով ի սէր և յերկիւղն
այ. զի զվարձս համբերողացն ընկալջիք ի
քեզ այ մերմէ. որում փառք յաւիտեանս:
Այս ասացեալ զամենն՝ օրհնեաց զնոսա. և
ծունր կրկնեալ երիցս՝ խոստովանելով զամե-
նաքեզ զերրորդութիւն, և կողմնեալ աւանդեաց
զոգին ի քո. և հոտ անոյշ բուրեաց. և լոյս
ի վերուստ երթևեկս առնէր ի վր՛ ձեռ նչխա-
րաց նր: Այս բազում լալիւն լինէր ժողովր-
դոյն, զի զրկեցան ի ձեռ հովուէն. և կատա-
րեալ զկարգ աղօթիցն՝ եդին ի գերեզմանի ի
ներքսագոյն վայրի, և անձեռնհաս ի յափըշ-
տակողաց. որ կան մինչև ցայսօր (ասէ մին
ի ձառընտրաց՝ քանիւ ժամակից գրչի):
Այս զերիս ամս ընդ անիծիւք եկաց երկիրն
ուշտունեաց. մարդ և անասուն անծնունդ.
և պտղաբերքն գօսացեալք, և անչափ գե-
ղեցկութիւնք խամրացեալք. ոչ ասաց ոմն ի

պատ-

պատմագրաց, եթէ նախ քան զանէծսն յա-
կոբայ նման էր երկիրն աշտունեաց դրախ-
տին աղինայ։ Եւ ապա խորհուրդ առեալ
ոմն յազգէ մանաձրհի, ոմանք քոյր ասեն, և
ոմանք հօրեղբօրորդի (զոր խորենացին ժա-
ռանգորդի ասաց), քանզի մանաձիհր սա-
տակեալ էր, յուղի անկեալ գնաց ՚ի խնդիր
նշխարաց խնդրել զբժշկուի ազգին և գաւա-
ռին, յոյժ աշխատաբար զծունկքն և զերեսն
ը գետին քարշել, մինչև քերթեալ լինէր.
և հասեալ ՚ի տապանն՝ անդադար աղօթիւք
ողբայր զքաառասուն օր։ Եւ ապա լուեալ պա-
զատանաց նր սքին յակովբայ՝ ողորմել պար-
գևէ նմա մանն, ոչ կենդանի մատուցեալ
զանարատ և զնբ աջն, հատեալ տուեալ նմա
զկոճ մատինն. մինչև աքանչանալ սպասաւո-
րացն. և օրհնեալ ՚ի տեսլեանն գաշխատուե-
նր՝ արձակեաց զնա. և նա ուրախութիք հա-
սեալ ՚ի գաւառն աղձնեաց ՚ի քլուրն երկա-
թահանք՝ աւետիս մատուցանէր գաւառին։
Իսկ յորժամ եկաս համբաւ աւետեացն՝
գրոհ տուեալ հասանէին բազմուի ժողովոյն
՚ի տեղին, որ կոչի առաքելոց բլուր. զի և
անտի գնային աւետաբերքն. և դունդք
դունդք զմիմեամբք փարէին, և անկանէին
յոտս բնակողին զնշխարան. և ՚ի յիշատակ ի-
րացն այր իւրաքանչիւր քար մի դնէր ՚ի բլ-
լուրն. և կայ մինչև ցայսօր կարկառ մանր
քարանցն, որ ունի զթիւ համարոյ եկեղե-
ցոյ ժողովրդեանն։

Եւ ապա առեալ տանէին զնշխարան զաւ ՚ի

վայր լերինն յերկինն ուշտունեաց . և նոյն-
ժամայն արգելան . քզի չեղև հնար ումեք
շարժել ոչ գրաստով և ոչ մարդով . և՝ ի զար-
մացման կային բազմութիւնքն զերիս աւուրս :
Այս՝ ի տեսլեանն հրեշտակ ոմն երևեալ՝ հրա-
մայեաց իջուցանել՝ ի տեղւոջն . և նկատել
՝ի ձորակին տեղի մի բարձրաւանդակ՝ անդ
հիմնարկուել առնէին սբոյ եկեղեցւոյ , ուր և
հանգուցին զնշխարս սբոյն : Այս եղ համբաւ
սբ աջոյն . և անդր հասանէին՝ ի մօտաւորաց
և՝ ի հեռաւորաց՝ ընծայ բերեալ , և առնու-
ին ողորմութիւն՝ բժշկելով յիւրաքանչիւր
ախտից :

Արդ զայս ամ՝ զոր գրէ Ձաւրնտիրն առա-
ջին յազգային աւանդուէ , քաջ հաստատէ
և Ձաւրնտիրն երկրորդ՝ բանիւ՝ ասորի կամ
մծբնացի ականատես գրչի , որ Թուի մաղա-
քիա աշակերտ մարուգէի , ունելով բանին
այսպէս . * Յայնժամ ապդ եղև արանց խա-
րազնագլեստից՝ ի հոգւոյն սբոյ եթէ ոչ է
հնար օրհնիլ երկրիդ ձերում , եթէ ոչ ե-
թեալ բերիք մանն լինչ՝ ի նշխարաց սբոյն յա-
կովբայ : Այս նոքա եկեալ պատմեցին մեզ
զամ որ լինչ եղեալն էր յերկրին իւրեանց . և
մեք ողորմութիւն արարաք վասն պատմելոյ նոցա
զանցս անցիցն . և առեալ՝ ի նշխարաց սբոյն՝
տուաք նոցա : Այս նոքա առեալ մեծաւ ուրախու-
թիւն գնացին յաշն իւրեանց՝՝ ի տեղին, որ մերձ
է՝ ի գաւառն աղձնեաց. և անդ կան նշխարքն
մինչև ցայսօր ժամանակի . և բազում բժշ-
կութիւնք լինին նովաւ՝ ի նոր ‖ :

Լսակ Թէ զինչ եղև զկնի բուն մարմին սբոյն
Ճնացեալն ի Մծբին , պէսպէս են բանք ։ Ո՛ի
սոյն սա գրիչ վարուց սբոյն զայն ևեթ նշա-
նակէ , Թէ * Ո՛կնի մահուան նորա պակա-
սեաց զօրքն Հռոմոց ի քաղաքէ անտի . և
եկեալ արքայն պարսից՝ առնու զքաղաքն ,
ոչ պատերազմաւ , այլ՝ սիրով ։ ։ Լսակ բու-
զանդ՝ որ և չէր ինչ հեռի ժամանակաւ , գրէ
այսպէս . * Լսայր ոսկերք նր շնորհեցան քա-
ղաքին ամդացւոց ըստ այլ Մծբնայիան ի փո-
խել նր անտի անդր ի մարտս պատերազմացն
յունաց Թէոդորացն ըստ Թէգրացն պարսից ։ ։
Ո՛նոյնս հաստատէ ամ իրօք և Թէոդորետոս
ի փիլոԹէոսն՝ յասելն . * Ո՛կնի ժամանա-
կի անցելոյ , յորժամ քաղաքն այն յինքնակա-
լէ ժամանակին աւանդեցաւ Թէգրուէ պար-
սից , ելին համօրէն բնակիչք քաղաքին , և
բարձին զյաւուրջամարտակին զմարմինն . Թէ-
պէտև դժուարեալք և վշտացեալք ըստ տա-
րաբնակուին , այլ նուագելով գովեսք զյաղ-
Թականացս աւաքինւոյն զգօրուէ . զի ոչ ար-
դեօք ի լինել նր ըստ նա՝ ըստ իշխանուէ բարբա-
րոսաց լինէին ։ ։ Այս զի այս բանք հաստա-
տուն երևին , պարտ է ի նոյն միտս իմանալ
և զգրեալն ի գեննադիոսէ զսբոյն յակոբեայ .
* Եռաւ ի ժամանակս կոստանդեայ . և ըստ
պատուիրելոյ հօրն կոստանդիանոսի ի մէջ
պարսպի քաղաքին Մծբնայ Թաղի , իմա ի
պահպանուի քաղաքին . որ յաջողեաց ըստ հա-
ւատոց կոստանդիանոսի ։ Վանզի յետ բա-
զում ամաց մտեալ յուլիանոս ի քաղաք անդր ,

կամ առ յաչաղելոյ զփառս Թագէոսին, և կամ զՀաւատս կոստանդիանոսի՝ որ վասն Հալածելոյ զտուն նր, հրամանն ետ հանել՝ի քաղաքէն զնշխարս սրբ մարմնոյն ։ Նա յետ սակաւ ամսոց յովհաննոս կայսր յաջորդն յուլիանոսի՝ ի պատճառս հաշտուհե ետ զքաղաքն ի ձեռս բարբարոսաց, որ մինչև ցայսօր հանդերձ սահմանօք իւրովք անկեալ կայ ընծայութիւնք պարսից ։ Արդ եթէ և այսպէս լեալ իցէ, պահի պատմութիւնն այն՝ Թէ յորժամ տիրեցին պարսիկք մծբնայ և սահմանաց նր, մծբնացիք տարան ընդ իւրեանս զմարմին սրբոյն յամիդ. և անտի ոչ գիտեմք՝ ուր. այս ինչ յայտնի է, զի մինչև ցայսօր կայ ճնայ Թափուր գերեզման սրբոյն յեկեղեցւոջ նորա ի մծբին ։

Լսակ վասն սրբոյ սրբոյն կամնշխարաց նր, որ բերեալ ի ուշտունիս, գրէ Ճառընտիրն, Թէ սահմանն՝ ուր բնակեցաւ սրբն յակովբ, այժմ կոչի մոգս, ՚ի մոկաց երկիր. և զի տեղին այն անկեալ էր զկնի ժամանակաց ի ձեռս այլազգեաց, Թշնամի հայոց յազգէն արծրունեաց՝ տայր գանձս, և գնէր զտեղին, և շինէր փառազարդ եկեղեցի. կարգէր քահանայս և կրօնաւորս ի փառաբանուն ամենասրբ երրորդուենն ։ Որում՝ի դէպ գայ և յօրինել սրբոյն գրիգորի նարեկացւոյ զպանծալին զայն Ճառ ներբողեանի յաւուրս Թագաւորացն արծրունեաց՝ ի վեր սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետի. ուր ոչ սկիզբն է ուղղեալ առ եկեղեցի ՚ի, նոյնպէս և մօտ ՚ի վախճանն՝

ասէ

ասէ առ յն . * Եւ հիմնեցուսցես զայս քար գովեստի՝ ի շինուածս յարկի քումդ Հանգստի դաւանարանի այսր բարի հովուի . և փոխադրեսցես մեզ տուն քնակուե զլուսապաճոյճ գաւթի տաճարիդ արքայականի ‖ : Նոկ ըզնշխարաց սբոյն փոքր մի յառաջ ընհանրապէս զայս ասէ . * Հոգւով սլացաւ՝ ի վերամբարձեալ առհասատչեայ ակնկալուեն . և՝ ի մասունս ոսկերաց մարմնոյն զանճախեալի պարգևան տնկեաց . որով յուսացոյց և եցոյց ըզյարուին կենդանուե . . . Նշխարհ միանգամայն նովաւ ունի հանդերձել զապագայիցն յուսադրուեի՛ . և՝ ի նոյն ինքն յերեալ կայ կանգուն՝ անդրդելի նորոգ անկործան միջնորմեալ երկնի և երկրի ‖ : Ոչ և յընթացս Հառին լիակատար վարք սբոյն բովանդակի : Այլ՝ ի շարականի սբոյն յակովբայ , որ կամ՝ ի նարեկացւոյն և կամ յայլմէ գաւառակից վէպ առ նովաւ երևի յօրինել կարի վայելչապէս , ոչ միայն բովանդակ վարք սբոյն գեղեցիկ նկարագրի , այլև նշխարք նորա և տաճարն յայտնապէս յիշատակին՝ յասելն . * Երկրպագեմք առաջի տեառդական նշխարացդ Հգնաւորին քո՛ի և պատուական վկային , որ ե պարծանք Հի , և քարեխօս վա՛ մեր . . . Ի տաճարի քումմ սրբուե երկրպագեմք քոց նշխարաց . փառաւորեմք զօր յիշատակի կատարման քո Հանգստեան . առ քո՛ քարեխօսեա՛ վա՛ մեր քո տօնողացս ‖ : (12)

Ի պահան սբոյն յակովբայ եղև ըստ մեզ յամի ՈՒՆ 346 , կամ 347 . զոր ոմանք չորս հինգ ամօք

ղկնի գնեն. իսկ անորիք յամի աղէքսանդրի 649. այն է ամ֊ն 338. որ լինի եօթնեւորդ ամ հայրապետուե սբյն արիստակէսի. այլ սակայն պարտ է գնել յեօթնեւորդ ամի սբյն վրթանէսի։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ծ ԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(ւ) Յակիկն գրիչ վարուց մեծին յակոբայ Ճանաչի ժամանակակից և ականատես՝ աշակերտ ամուսկցի նր մաքրուգէի՝ մաղաքիա անուն, զոր ոմանք շալեստա անուանեն. և երկրորդն՝ միով դարու զկնի Թէոդորետոս եպս կիւրեղոյ, ի սկիզբն մատենին՝ որ յաղագս վարուց սբյց Ճգնաւորաց կոչմանցն անտիոքայ ասորւոց, պատմուե ծածասէր կամ փիլոթէոս կոչեցեալ. Ճառ. ա։ Եւ յերկուց աստի առեալ են Ճառընտիրք մեր՝ կրկնակի օրիւ նակաւ։

Առաջին օրինակն է ի Ճառընտ. Ա. սկիզբն ունելով այսպէս. *ՊատմուԹի սբյն յակովբայ մծբնայ հայրապետին։ ՎերծանողուԹի պատմուե վ֊ա սբյն յակովբայ. զոր նա մատագոյնս ասացաւ նոր սինեայ, սակս այնորիկ արտաՃառի. զոր ուսուցեալ և ծանուցեալ զվարս սբյն յակովբայ՝ նախանձ ընկալեալ յանձինս՝ քաղաքավարեցին, և մանաւորեցան բաժնի նր. և արժանաւորեցան ընդ նմա տեսանել զնր։ Եւ ոմանք հակառակին յառաջին բանս, ոչ ասելով զնա յազգէն արշակունեաց, կամ հօրաքեւորդի սբյն գրիգորի. զոր մեք սերտ գտեալ և հաւանեալ ի գրոց ասորւոց. և որք ուրաստ կան, փոխարէն խրատու ի նորին յանձն նէ առցեն. մեք զձմմորիսն ասասցուք, անդաստան պարտ ինամբ ի նմանէ. զի և հրէայքն զ֊քրիստոս ասացին, եԹէ որդի հիւսան է։ Արդ յորժամ այս հաւաստեցաւ, և մանուկն գրիգոր ի ձեռն գայեկացն գնացեալ փախստեայ անկանէր յերկիրն կապպադովկիա. և զնորին համացեալն զսբյն յա֊

,, կովբ

,, կովբ նորին գայեկին առեալ՝ գնաց 'ի քաղաքն կեսա-
,, րիայ ||։ ևն։

Սակայն ոչով հետաքննուե յօրինեալ է բովանդակ այս օրինակ, յառաջ բերելով զայմ աւանդութիս՝ որ կան'ի գիրս հայոց և ասորւոց զբջին յակովբայ։ մինչ զի հերձ նակ ճանաչի նոյն իսկ յօրինօղն ճառընտրաց՝ վկայասէրն գրիգոր, կամ այլ ոք 'ի վերպաց առաջնոց, յառաջ քան զաւուրս չնորհալւոյն, և յետոյ քան զնարեկացին կալ ծեցեալ։ Ո՛չ պահէ զձիշդ կարգ ժամանակի կամ գոլ ծոց, այլ փոյթ նոր է զերեսեան հաստատել։ հաւատալ իմ զանձն ցուցանէ, այլ յերկուս տեղիս յայտնապէս սխալէ, եթէ չկայէ յաւելուածք ինքնահաճ օրինակա-
գրաց, ոյք տեսանի յաննմանուէ անյարիր ոճոյն։ մի՝ զի ասէ, * ուխտ եդեալ էր ծնողացն՝ ոչ սամուէլին ||։ փոխանակ ասելոյ՝ գայեկացն։ զի ծնօղքն հեթանոսք էին պարթևք, ոչ հաստատէ։ Եւ միւս ևս՝ զի գրէ յա-
զօթս 'ի բերանոյ սբջին յակոբայ յանապատի։ * քանզի
,, 'ի պատմութէ հարցն, որ զբազումս 'ի սբցն անմնան
,, հանեալ (է՝ գէն) 'ի վաստակոյն, և գերեվս պատե-
,, բազմի։ քանզի 'ի ժամ գիւտի խաչին քո գոչեաց վե-
,, յուդայի։ և գտեալ զօձն կամակոր զանիծեալն յու-
,, լիանոս, որ չարաչար տանջեաց։ Թէպէտև արիւն այն
,, (յուդա) յալթեաց նմա, բայց մեռանիր ||։ արդ յայտ
է թէ յուլիանոս յետ փոխման սբջին յակոբայ 'ի վեր է
բևեցաւ։ և գիւտ իսկ խաչին՝ թէպէտև յաւուրս սբջին յակոբայ եղև, այլ յետ լինելոյ նոր արդեօք յանապա-
տէ։ Թող զբուն ոճն գրչիս խառն 'ի մթուէ և 'ի պար-
զուէ, յասորւոյ և 'ի հայէ։ այլ մեզ պատմական ստու-
գութիւն ևեթ է խնդրելի։ և ահա զոր ինչ և գրէ, կամ
ներգործուէ և կամ զօրուէ պատանի և յայլ վաւերական
աւանդութիս հայոց, ասորւոց, յունաց և հռոմայեց-
ւոց։ և զոր ինչ զանց առնէ, ենթադրէ յայտնի լինել
այլուստ։ զոր օրինակ և զմեղիտոսի եպսկ հանդիպումն
ընդ սբջն յակովբայ և մարուգեի ոչ գրէ ասա, զի ուրոյն
գրեալ կայ 'ի նմին ճառընտրի 'ի վարս նորին սբջն մե-
ղեսի կամ մելիտոսի՝ յարևնման գրելոցն յայլ ճառըն-
տիրս 'ի սմին վայրի։

Երկրորդ օրինակն (որ զօրուէ առաջինն) է այն, որ կայ
'ի ճառընտ. ԲՀ. և Ե. և ընդ հատուածոյ նաև 'ի Զ. եր-

կաթսայիւը : Խորագիրն է ի Բ. * ՊատմուԹիւն սբ
,, յակովբայ, զոր գրեաց Մաղաքիայ տշակերտ մարու
,, գէի միայնակեցի ։ Եւ ի Ե. * ՊատմուԹիւն սբ
,, կովբայ հայրապետի, զոր գրեաց չաղկտա աշակերտ
,, սբ մարուգէի Ճգնաւորի ։ Որ չէ փոյԹ՝ ԹէԹ ա
նուն հեղինակին եցէ մաղաքիա կամ չաղկտա, այլ զար
մանալին այն է, զի Ճ սովին վերնագրով դնի անդ՛ին
պէս յառաջաբանն Թէոդորեատոսի, և յընԹացս է զի
բանն Թէոդորեատոսի, և է զի այլոյ՝ իբ մաղաքեայ կամ
չաղկտայի՝ տեսանի. մինչ զի կամ ինքն Թէոդորեատոս
առեալ է զայն ի մաղաքիայէ անտի, և կամ հաւաքօղն
Ճառընտրաց բաղկացուցեալ է զգրուԹիւն իւր՝ կէս մի ի
բանից Թէոդորեատոսի (զորոյ զանունն ոչ յիշէ, և կէս
մի ի բանից մաղաքիայի, զորոյ և է Թ յիշէ զանունն. Եւ
այսպէս երկրորդ օրինակս այս լինի բազադրեալ ի յոյ
նական և յասորի դրոց. Թող զի և ինքն Թէոդորեատոս
Թէպէտև յունարէն գրեաց, բայց գոլով ի վիճակի ան
տիոքայ ասորւոց՝ յասորւոց անտի և սա ստուգեաց. մա
նաւանդ Թէ և զսբն յակովբայ յայն սակս գրեաց, զի
և աԹոռ նորա մԹբին էր ի վիճակի աԹոռոյն անտիո
քացւոց :

Եւ արդ՝ այսպէս ունի յառաջաբան այսր օրինակի, կի
որ նոյն է՝ Թէոդորեատեան ընդհանուր յառաջաբանուԹի
ի վարս սբց Ճգնաւորաց՝ փիլոԹէոս կոչեցեալ. ի
սկիզբն ա. Ճառի. * Մովսէս ԱԹային օրէնադիրն՝ որ
,, եհերձ զնորս ծովուն, և եհան զԺողովուրդն յանա
,, պատ անջրդի, (յն. և զանջրդի անապատն ջրով
,, տոգորեաց,) և արար զայլ պանչէլիս. զոր և գրեալ
,, է. և յորժամ էառ ի պատմել (յն. և զայլն ամ պան
,, չէլապօրԹեալ՝ չարագրեաց) զվարս սբց առաջնոց,
,, ոչ աւանդուբ՝ զոր ընկալաւ (յն. ոչ լմնատուբ, զոր
,, ուսաւ) յեզիպտացւոցն, այլ ԾագմամբՃնորհացն այ՝
,, որ տուեալ նմա յայնմ ժամանակի : Ջի ուստի՞ ուսա
,, նէր այլուստ զառաքինուԹիւնն հաբէլն, կի զԱԹպաշ
,, տուԹիւն էնովբայ, կի զարդարուԹիւն նոյի, կի զքահա
,, նայուԹիւն մէլքիսեդեկի, կի զհաւատոցն աբրահա
,, մու և զընԹունելի պատարագի նր. (եԹէ ոչ զմուսաւոր
,, և զԱԾային հոգւոյն ընդունէր զձառագայԹս : Ա յսմ
,, և ինձ պէտք են գործակցուԹ ի ժամուս) : Ուստի

,, և

,, և ես կարձ՝ի կարճոյ և համառօտ ասացից ձեզ զվարս
,, սբ֊ին (որ յառաջքան զմեզ և առ մեզ), և զնորհս
,, հոգւոյն սբ֊ւոյ՝ որ՝ի նմա էր. և նշանակեցից զանուանս
,, նոցա. զի Թերևս օգնեսցեն ինձ, և տարցեն զիս՝ի
,, նաւահանգիստ։ Սկիզբն ճառի սբ֊ին յակովբայ։ Մրծ֊
,, բին քաղաք էր ըստ սահմանս եդեալ Թէրուեի հռոմայց
,, և պարսից ||. ևն։

Եւ ոչ միայն յառաջաբանն է պահեալ Թէոդորետեան՝ի ճառընտիրս մեր, այլև յետ պատմուհեն բաղադրելոյ՝ վերջաբանութիւնն իսկ՝ի նմանէ է փոխառեալ. քանզի Թէոդորետոս այսպէս կնքէ զվարս սբ֊ին յակովբայ. * Զայսոսիկ ի՞ն ածայնոյս այս (առն) պատմեալ, յայլ ,, պատմութիւն փոխեցայց, զսորա օրհնութիւնն առեալ՝ի ,, սատարուե ||։ Եւ ճառընտիրն Բ. այսպէս. * Զայս ,, պատմեցի ի՞ առնն ա՛յ, և նշանաւ գրեցի վասն սբ֊ին ,, մարտիրոսի... զի աղօթք նո֊ ,, վեզ՝ի սատարուե հասցեն. և ես յայլ սբ֊ոց պատմու֊ ,, թիւն ընթացայց ||։

Յորմէ յայտ է, թէ երկրորդս այս օրինակ զկրկին ու֊ նի հելենականէ. զԹէոդորետոսին ըստ ամ բանի. և զզ֊ մալաքիայն՝ զոր՝ի կարգին ընթերցանէ համաճայն ա֊ ռաջնի օրինակի և այլոց օրինակագրաց. մինչ զի և յայտ֊ նի սխալանքն Թէոդորետոսի մնեալ է և յայս օրինակ մեր. իբր զի չփոթեալ Թէոդորետոսի զանուն աղեք֊ սանդրի աղեքսանդրացւոյ ըստ անուանի աղեքսանդրոսի կոստանդնուպօլսոյ հայրապետի՝ գրեաց զատտակուծն արիոսի լինել առ առաջնումն՝ի նմին տարւոջ ժողովոյն նիկիոյ. որ է ըստ ամ պատմութեց. մինչ զի և կուսքեր բոլանդեան իշխեաց՝ի բաց հանել՝ի կարգէ բանից Թէոդորետոսի զայն հատուած երևելի. բայց չէ ար֊ ժան վասն մարդկային սխալանաց աղտաղտել զիւրս մատենագրաց. շատ է ասել, թէ զոր աստանօր վրիպա֊ կաւ գրեալ հելինակն՝ յետոյ ուղղագոյն աւանդեաց՝ի պատմ. եկեղ. ա. 14. ոյզ և ասասմանն խոհեմութիւն այս֊ պէս ուղղադրէ զԹէոդորետոս։

՝Ի նախահաւաքեալ երկուս օրինակս ճառընտրաց մերոց վերածին և բանք այլ ամ մատենագրաց և վկայագրաց, որք խօսեցան զսբ֊ին յակոբայ. ոյզ և բանք շարականին և նարեկացւոյն նովիմբք են հիւսեալ, և են հաստա֊

տու֊

առաքեալ նոցին : Ընդդէմ խմբի և վայրամաւուրեաց մերոց և յուսնաց և հաւմայեցւոց, ասորւոց և պիտոց եւն. ոչ և բոլանդեանք զԹէոդորետոս օրինակեն, որ է որպէս մանր բոլորական պատմուճէ ճառընտրաց մերոց : Ա՛յս չափ ինչ հանդրական առեղծուածի շատ լինի վե վաւերաց կանուխէ վարուց սրբոյն յակոբայ. մնայ ծանուցանել ինչ ինչ ի կարգիս :

(2) Ոչ ոք է յօտարաց, որ դիտիցէ զազգ և զծագումն սրբոյն յակովբայ, բայց ի մերոց մատենագրաց՝ որք և զաւրէս վկայ կոչեն բանից Եւբեանց, Թէ էր ազգական լուսաւորչին մերոյ կամ հօրաքեւորդի. ձայնակից լինի և բուզանդ յոյն՝ պարսիկ կոչելով զսրբն յակովբ, նման պարթևազեան : Ոչ և սրբն գր.նարեկացի՝ ինքեր բող նր նախ ասէ. * ի հեռաւորաց խուժային պարսկական ,, ազգաց ||. և ապա մեկն գրէ. * տոհմ արշակունեաց... ,, պսակահիւսից՝ Թագաժառանգաց ||. և դարձեալ Թէ * ազգաթիւր բարբարոսական ի զարմէ անմաքրի, և ,, մերձաւոր հպատոր ընտանի արեանն էրջանկի. որ ,, պի սեպհական քեռ սահմանողն (այ ծնողն) լուսաւ ,, ւորչին մերոյ սրբոյն գրիգորի ||: Ուր այլք հայելով յայն՝ Թէ էր եղբայր մծբնի քաղաքի, որ էր մանր ասորւոց երկրի, կամ մծբնացի համարեցան, և կամ ասորի եղեսացի. այլ բարւոք գրի ի յայսմաւուրս պիտոց. * և էր ասորի ըստ լեզուին ||. զի յիրաւի առաւել ասորերէն խօսէր և գրէր. զի էր ի մէջ ասորւոց, և հոգւով երկրի նց. և երևէլի եղև յաշակերտս նր եփրեմ խուրին ասորի յեղեսիոյ :

Ո՛չ գիտեն արտաքինք և զայն, Թէ մծբնի քաղաք էր երբեմն արքունիք հայոց. և ո՛չ իսկ զանուն քաղաքին ուղիղ հնչեն. ոմանք նիսեբին, այլք նեծպին, և յոլով նիսիպիս գրելով. այն է՝ որ և անտիոք միւգդոնիոյ կոչի ի նահանեաց. և ե այսպիսի կրկնանուն գոլոյ քաղաքին երեւի կրկնեալ ի ժմ: Յն. յիշատակ սրբոյն յակոբայ. ի յունվարի. ւ5. այսպես. * Յայսմաւուր յիշատակ սրբ ,, հօրն մերոյ յակոբայ՝ որ ի մծբնայ ||. և ի հոկտ. 31. * Յայսմաւուր՝ սրբ հօրն մերոյ յակոբայ եպսին միւգդ ,, նիոյ, միոյն ի յաջէ սրբց հարցն նիկիոյ ||. այլ երկոսին և է միևնոյն վարք նորին՝ քաղեալ ի Թէոդորետոսէ՝ փոքր ի երկար կամ համառօտ ի քան զմի. Թուղ ի հոկտ.

31· ասի, Թէ այս անուիտք միւդոնիոյ կոչի նաև նիսի-
գիս, փինկ գրէլայ՝ նիսիպիս, որ է Մծբին։ Գիտեն և
լատինք յարգիս՝ ի պատմութեանց այլևայլ ձիւհորդաց իւ-
րեանց յարևելս (ըստ որում նշանակէ և կուպեր բոլլան-
դեան), Թէ՝ ի մէջ արևելեայց ասորւոց և քաղդէացւոց
և նաստուռեաց՝ հայք առաւել ծանօթ են սքին յակո-
բայ և եկեղեցւոյ նր՝ ի Մծբին, ուր է ցարդ գերեզ-
ման նր Թափուր· Թող զի կատարեալ պատմութիւն՝ ի
միջն մերում կայ, որ առ այլս պակասի։ Գրէ տաւեր-
նիկեր՝ ի ձիւհադիրս նր, Թէ մահ՝ ի տաճար սքին հան-
դերձ ուղեկցօք լսելիք լատին քհնյուք՝ ի Մծբին, և տե-
սի անդ զպատարագ հայոց· և եթէ նց անձամբ էցոյց
մեզ զգերեզման սքին։ Վայ իրաւամբք գրեաց նարեկա-
ցին· * Հայաստանեայցս պահպանութեամբ մերձաւորա-
,, գոյն ||։

(3) Յ· ժմ· հոկտ· 31· * Սա բազում փորձանս կրեալ
,, ՚ի կռատաչտ լինքնակալաց, և ոչ տոհմեալ նց սերլ՝
,, եհաս մինչև ՚ի մեծ լինքնակալն կոստանդիանոս ||։ Լ·
յօրինակն ադոնիսի, որում զհետ երթայ ուսուցարդ·
* Սա մի եղև ՚ի Թուրոյ խոստովանողաց ՚ի հալածանս
,, մաքսիմիանոսի (կամ մաքսիմինոսի) ||։ Վայ ասէ հոգե-
կիր հռետորն մեր՝ ի գովեստ նր· * Մեծն առաջնոր-
,, դաց, պարծանքն լուսոյ· յարգարիչն եկեղեցականաց·
,, հանդիսարանն նահատակաց· ախոյեանն յաղթակա-
,, նաց, խրախոյան համբերողաց· նաւակատիսն մարտիկ
,, րոսաց· ապաքինիչն մահու երկանց· սպեղանին խըս-
,, տուեբ վերաց ||· ևն։ և Թէ՝ * Եւ՝ ի խնամ վարս
,, կրօնաւորս՝ վայելչապէս գոյր պսակաւորս ||։

(4) Յայսմաւ· ղիտ· * Սա՝ ի մանկուէ իւրմէ ընտրեաց
,, վիճակեցաւ, և զգեցաւ խորհ մակեղէն· ոչխ է
,, մազ այծեայ կամ ձիոյ կամ խոզի և որ նման են սոցա· և
,, նուաւ անցուցանէր զտապ ամարայնոյ և զցուրտ ձմե-
,, բայնոյ· և կերակուր նորա բոյս երկրի· և ըմպելիք
,, ջուր յանձրևոյ ևեթ· վայ և մարմինն էր տակառ, այլ
,, հոգի նր պայծառ փայլէր· վայ արժանի եղև ընդ-
,, նել զպարգև մարգարէութե և նշանագործութե· նա-
,, խագէտէր գործոց մարդկան՝ մինչև եղեալ· և ապան-
,, ջելիք նր բազում ||։

(5) Ձգիտեմ զինարդ միտքանէ բուզանդ զերկուս ան-

ուանս

ոճանս այլևայլ երևելի լերանց արարատայ և կորդուաց՝
յասելն, Թէ սքէն յակոբ գնաց ՚ի խնդիր նոյեան տա-
պանի՝ * ՚ի լերինն հայոց ՚ի լեառնն արարատայ ՚ի սահ
,, մանս այրարատեան հրուէն ՚ի գաւառն կորդուաց ||.
այլ զայսմանէ Յապկիք: Պատմէ և զառանձին բլուրն
աղբեր անգանօր այսպէս. * Մինչդեռ եւանէր ընդ
,, դաժանարին ը անջրդի ը ափափայան անապատին ա-
,, բարագեան լերինն՝ աշխատեցան և ծարաւեցան՝ նա
,, և որք ը նմայն էին: Ապա դնէր ծունր մեծն յակոբ
,, ՚ի վէր երկրին, և կայր յաղօթս առ ՚ած. և ՚ի տեղւոյն՝
,, ուր եդեալ էր զգլուխ իւր, բղխեաց աղբիւր, և ար-
,, բին՝ նա, և որ ը նմայն էին. որ մինչև ցայսօր ասեն
,, այնմիկ՝ աղբիւր յակոբայ ||: Եւ ապա յերկար գրէ վե
փայտի տապանն, նմանեցուցանելով զէնս սքէն ՚ի լեռ-
նէ տախտակաւ՝ իմման մովսեսի ՚ի լեռնէն ՚ած տախտա-
կօք կտակարանաց. և զնոյն բանս յարմարէ կորիւն սքէն
մեսրոպայ ՚ի բերելն զնշանագիրս մեր: ՚Ի վերջոյ ասէ
բուզանդ, Թէ ժողովուրդն ը առաջ եւին սքէն յակո-
բայ իբրև հրեշտակի. * և զբերեալ պարգևացն ըզ-
,, շնորհս լուրեանց յօժարուէ ը ընդունէին. որ մինչև ցայ-
,, սօր նշանակ աքանչելութեն կայ պահեալ առ նո՝ ե-
,, րևոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին ||:
՚ի ձեռագիրս օրինակս հերոնիմեան վկայադրոց հռով.
մայեցւոց կայ յիշատակ բանիս այսպէս. * Յակոբ եպս
,, մծբնայ, որ ՚ի մարմնի բաղում ՀԳ տարի կրեաց. և բա-
,, զում նշանս արար. և զտապանն նոյի սա միայն տեես
,, ՚ի լերինն. և ոչ այլում ումեք յորոց ը նմա երթեալ
,, էին, շնորհեցաւ տեսանել ||: Սոյնօրինակ գրէ և ՚ի
վկ. բեդայն. զնոյն երկրորդէ և նոսակեր, բայց վրի-
պակաւ տալրոս կոչէ զլեառն:

Եւ զայսմանէ այսպէս գրէ փլորենտինիոս ՚ի ծանօթու-
Թիս լատին յայսմաւուրսն, ը յառաջ բերելոյ բուլան
դեանց. * Որ ինչ պատմի վե մասանց տապանին պա-
,, հելոյ ՚ի լեառն տալրոս, ոչ է առաստել: Եւսե-
,, բիոս, կի երանելին հերոնիմոս ՚ի խօսելն զերբայա-
,, կան տեղեաց, առեալ ՚ի հին ՃԻադրաց՝ զորս բերէ
,, յովսեպոս յառաջին գիրս նախնեացն հրեից ՚ի բերո-
,, աե քաղդէացւոյ, ՚ի հերոնիմոսե եգիպտացւոյ, ՚ի
,, կանաիայ, ՚ի նիկողայոսե դամասկացւոյ, ուսուցանէ՝

,, Թէ

,, Թէ 'ի լերինս արարատայ կի հայաստան Ձի, զորս բե-
,, րոսոս լերինս կարդուճաց կոչէ, կի 'ի լեառն սկատիս
,, 'ի վր մունիադայ (փխկ գրելոյ՝ մասիս) նստաւ տա-
,, պանն կի նոյ մնացեալ զկնի ջրհեղեղի. և Թէ ը բա-
,, զում դարս ցուցեալ լինելին նշանակք նր, մանաւանդ
,, Թէ ոմանք նաւթս կորզեալ 'ի տապանէ անտի՝ այսր
,, և անդր տանէին, առաւել 'ի քաւել նովաւ զանձինս.
(զորմէ տես 'ի հայերէն քրունիկոնն եւսեբի, զոր անդէ
տանայ քննիչս)։ Ա յլ նորագոյնս՝ 'ի Ձմկս կոստաստայ
,, և կոստանդնի, առ որով վախճանեցաւ սբ եղիան մծբ-
,, բնացի, տակաւին կայքն մնային մասունք տապա-
,, նին. ը որում 'ի հասարակաց համբաւոյ վկայ գտա-
,, նի փիլոստորգիոս 'ի համառօտուէ առ փոտայ. գիր.
,, Ճ. ՌԽԵ. 8։ Մ անաւանդ Թէ ասէ տեսել մինչև ցաւուրս
,, իւր առ փոքրն Թէոդոսիէ, 'ի վր բերելով այսպէս.
,, Եփրատ գետն՝ ը որում երևի, ծագի 'ի հայաստա-
,, նեայց Ձէ, ուր է լեառն՝ արարատ անուանեալ ցարգ
,, ևս 'ի հայոց, ուր հանգեաւ տապանն ը գրոց. յո-
,, րում տակաւին կան ասեն ոչ տակաւ հատորք փայ-
,, տից և տախտակաց, որք մնացեալ էին անդ ։։ Յա-
ւելու փլորենտինիոս. * Մ նացին այս հատուածք տա-
,, պանին մինչև ցաւուրս բենիամենի տուդելացւոյ, որ
,, պատմէ 'ի Ձիզհորդուէ Իւրում, Թէ մծբին քաղաքն
,, երկօրեայ Ճիզհաւ ևեթ հեռի է 'ի ստորոտէ լերինն
,, արարատայ, ըստ է տաւրոսի, ուր է քաղաքն Ճէլիր-
,, պէն կնամուռ, և չէ հեռի քան զչորս մղոնաչափ 'ի
,, տեղւոջէն՝ ուր էր նաւեալ տապանն նոյի. և ասէ,
,, Թէ զամար իսկն ալևէզէպ բարձեալ 'ի Թիկանց լե-
,, րին զտապանն զայն՝ եբեր և 'ի կիր արկ 'ի պէտս
,, մզկէթի նմայէլացւոց ։։ Ուր յայտ է Թէ ծրչափ
ստոյգ են առաջին աւանդութիքն, նոյնչափ և ախմարտ
կան՝ յետին առացուածքն, խառնելով յայմ զմասիս
լեառն արարատեան Ձի ը լերինս կորդուճաց և տաւ-
րոսի ևն։

Ընդդէմ վերջին յաւելուածոյ բենիամենի բերէ հու-
պեր բոլանդեան զայլ ռամկական աւանդուէ՝ առեալ
'ի Ճիզհորդուիքէ բեղդացւոյ ուրուճն, տպագրեալ յա-
մստեղոդամ. ուր յերէս. 230. խօսի հեռվմայեցի ոմն
վիայնակեաց բնակեալ յայրարատ այսպէս. * Իբրև ոչ

,, կա-

„ կարապի ընդէմ կալ ալաչանաց յովհաննու յանաստնի
„ (բեղեացւոյ), որ խնդրեր յինէն գրով վկայուն, թէ
„ նա ինքն յովհաննէս յանաստնի եկեալ էջ առ իս՝ ի սբ
„ լեառն արարատ, իբր մինոս երեսուն՝ ի վեր ելանել
„ լոկ. ուր այն սա յովհաննէս բժշկեաց զնս (քանզի
„ էր բժիշկ) ՝ի մեծ պատառուհածոյ. սորին վն շնորհ
„ յոյժ ուսիմնասիս վն խնամոց՝ զոր եցոյց առ իս. և եա
„ փոխարէն երախտեաց նր շնորհեցի նմա խաչ մի, որ
„ էր մեան փայտի՝ ի սուրբ տապանէն նոյն. ուր եա
„ անձամբ՝ ի ներքս եկէ, և զայն տախտակ՝ ուստի խաչս
„ կազմեցաւ, ձեռամբ իմով հատի՝ ի սենեկէ միոյ տա-
„ պանին: Յայտ վայրի պատուեցի ես բերանով իմով
„ նմին յովհաննու յանաստնի զչմարտութինն մի ըստ միոջէ,
„ թէ որպէս և գնացէր է շինուած տապանին. և յայսր
„ ամի վր՝ եռուս նմա և քար մի, զոր ինձէն իմով ձե-
„ ռամբ բարձի՝ ի ներքուստ տապանին՝ ՝ի տեղին, ուր
„ նստեալ կայ տապանն: Զայս ամ խոստովանիմ զոլ
„ չմարիտ. և այնպէս չմարիտ, ոպ եաս չմարտանալս
„ և իրօք կենդանի կամ յայս սբ անապատական բնա-
„ կուԹես: Տուաւ ՝ի լերինն արարատայ. ՝ի Ե յունվա-
„ ր մի. յամի 1670: Դոմինիկոս ալեքսանդր հռովմայե-
„ ցի ||:

Ապաքէն ծաղու արժանի գրին այս բանք յաչս իմաստ-
նոց. այլ ոչ գիտեն զատածն, Թէ ոչ ստուտ գոյ՝ ի բանս,
այլ սխալ. վն զի այս պատմուԹիւն բաղադրեալ է ըստ հի-
մանն՝ ի հին անցից սբոյն յակովբայ, որ՝ ի մանէ փայ-
տի տապանին ձևացոյց զնաչ, և ետ սբոյն մարտիրէ.
և որպէս երևի՝ զայն պատմուԹիւն պատուիրէ է բեղեաց-
ւոյն այնմ Ձնչհորդի ալեքսանդր անուն ոմն՝ ի Ջահ-
կեցի կրօնաւորաց բնակելոյ յարարատեան Ճի. և զի
Ջահկեցիք էին դոմինիկեանք, և հռովմայեցիք ըստ ծխոյ,
յայսմանէ ձևացեալ է այս չփոԹ աւանդ դոմինիկոսի
հռովմայեցւոյ. և եԹէ չէ խաբեալ Ջահկեցին ալեք-
սանդր զյանաստնի բեղեացի՝ յատէն, Թէ խաչս այս՝ զոր
տամքեալ, է՝ ի փայտէ տապանին, ուրեմն ունէր առ
իւր մեան ինչ՝ ի մանէ անտի՝ որ՝ ի սբոյն յակոբայ բաշ-
խեցաւ երբեմն՝ ի հոլմանան յայնոսիկ. և ըստ զրելոյ սր
նչելն՝ կայր մինչև ցառաւօտս իւր:

Վայրապար տարժանի հուսալեր բոլլանդեան և ըստ բանս

վին-

վիճակեցաւոյ բեղլուակեցւոյ, ոյք թէ անմիաբան գտա-
նելոյն ըստ նախապրելոյ. ուր իրօք միաբան էն ըստ հին ա-
ւանդից։ Արդ բեղլուակեցին ՚ի պատմական հայելւոջ
իւրում. գիր. ը. գլ. 95. յետ պատմելոյ զաւարհարուն
ձին վրաց ՚ի թաթարաց յամի 1220. ապա ՚է գլ. 97. ի-
ա՛ի զարարատ լեռնէ այսպէս. * Լեառնս այս արարա-
,, դայ է բարձր յոյժ յոյժ. և ոչ ոք երբէք ՚ի մարդկա-
,, նէ ասի ելեալ անդր, բայց միայն միայնակեաց մի.
,, զի սա ասեն ջերմեռանդն սրտիւ վաղեալ առ տա-
,, պանն նոյի, որ անդ հանգեաւ, բայլում անդամ բա-
,, զում ջան եդ փորձել ելանել անդր. և երբև ելեալ
,, ՚ի մեան ինչ լերին, առ խոնջուԹէ հանգիստ առնոյր
,, ուրէք, միշտ զկնի հանգստեան վարԹուցեալ՝ գտա-
,, նէր զանձն յոտս լերին. մինչև զնջեալ ան փափաքա-
,, նաց նր, և լսեալ աղօԹից և ուխտին, ապդ արար
,, նմա ՚ի ձեռն հրեշտակի իւրոյ, զի ելանել ելցէ առ
,, անգամ մի, բայց յայնմ հետէ ոչ երբէք փորձեացէ ե-
,, լանել։ Ապա յայնժամ ել անեղկեան. և կնջանել
,, իւրում անուն եբեր ըստ իւր տախտակ մի ՚ի տապա-
,, նէն։ Յայնժամ չինեաց յոտս լերին վանս, յորում
,, զայն տախտակ զետեղեաց ջերմ հաւատով իբրև նչխար
,, արբսական ։։ Արդ զինչ և ասիցեն քննիչք՝ որք չեն
պէտակ հին աւանդից արևելեայց ստուգուԹե, այն
սա է պատմուԹ անցից սբոյն յակոբայ՝ դոյզն այլայլու-
Թբ. խակ Թէ Թէոդորեստոս ոչ յիշէ զայս անցս, չէ՛ ինչ,
զի նա զսակաւս ՚ի բազմաց գրեաց՝ ՚ի գործոց սբոյն յա-
կոբայ, և ոչ զայն, ոյք յայտ է՝ որոց գիտեն զլեակա-
տար պատմուԹ վարուց սբոյն։ ԵԹէ ՚ի ձեռին ունէին
բոլորանդեանք զհաւաքնակս մեր, բազմք այլազգ խոսե-
լին՝ ք զոր խոսեցան հայելով լոկ ՚ի Թէոդորեստոս։
(6) Հերոնիմոս ՚ի յաւելուածս քրոնիկոն կանոնին Եւ-
սեբի՝ ՚ի յաջորդ ամի մահուան մեծին կոստանդիանոսի
գրէ. * Ղազար արբայ պարսից առաքեաւ ՚ի մի-
,, ջագետս՝ երկամեայ աւուրբք պաշարէ զմծբին ։։. և
՚ի վեր բերէ. * Յակոբ մծբնացի ձանձրէ. ոյր աղո-
,, Թիւք բիլ մանգամ՝ ի վտանգէ ազատեցաւ քաղաքն ։։
Եւ վն այս այսպէս, ոչինչ են զարմանք՝ Եթէ վհրաշա-
լն ազատուԹն մծբնոյ մեծ ձաւրնաւրն յաւաչապոյն
պատմէ, խակ միւս ձաւրնաւրքն ըստ Թէոդորեստոսի՝ վկնի
գրեն.

գրեն. և մեզ չէղև լինչ փոյթ վը որոչելոյ զձմայ սոցին իրաց, այլ յայն հայեցաք, զի հաւանմատուԹը իրերաց քաղեսցուք՝ որ լինչ աւանդք կան յայս և յայն ձառըն, տիրս: Պետաւիոս յերկար քննուբ զննէ զայլևայլ պաշարմունս մԹբնայ ըստ այլևայլ մատենագրաց՝ յամի ՚ն 338. 350. և 360. յորոց վերջինն եղև զկնի մահու սբն յակովբայ. իսկ առաջինքն առ նովաւ. բայց եդեսէն 350. Թերևս պարտի դնիլ 345, կամ 346. զի երևի Թէ սբն յակոբ վախճանեցաւ յառաջ քան զ350. Թէպէտև այլոց այլապէս Թուիլն: Տես զբանս պետաւիոսի առ կուպերայ աստանօր:

(7) Թէ արջառի դիւրասխալ է մարդկային քննուԹիւն՝ ի վճռել զհնուԹիւ զհաճոյն կամ զանհաճոյն առաջի իւր, յայտնի եցոյց յանձին ասսեման. որոյ ոչ գտեալ զասորի օրինակ գրոց սբն յակովբայ մԹբնայ հայրապետի՝ վըճռեաց նախ, Թէ չիք նր գրել զայնպիսի գիրս ձառից յաղագս հաւատոյ և վարուց, ըստ որում նշանակել էր գենն նագիոս. բայց ապա տեղեկացեալ՝ Թէ գոյ առ մեզ ի վիննեւիկ, և աղաչել վերանաշնորհ հայր մեր զՄծն ՄխիԹար՝ առաքել զօրինակ գրոց նր, շնորհակալ եղև ըստ ծայից նր. և յետս կոչել զառաջինն կարծիս իւր՝ հաստատեաց, Թէ սբն յակոբայ են այն ձառք: Զայս ամ երկրորդ և կուպեր բոլանդեան, և այնպէս հաստատի ի ձմարտուԹէ: Զէ տեղւոյս խօսել վը տպագրուԹէ գրոց սբն հանդերձ լատին Թարգմանուբ ի հռովմ և յայլ տեղիս, որ առ հասարակ առեալ են յօրինակէ մերմէ: Տեսի և զայլ ձեռագիր նոր ի կոստանդինուպօլիս, որ չէր լաւագոյն քան զմերն. կարօտիմք հին և ընտիր օրինակի, զի բազդատուբ բարձցին սխալանք գրչաց կամ քերականական խոտորմունք լինչ, և ի լոյս ընծայեսցի անվրէպ ընԹերցուած: Եւ յայնժամ լինի դատաստան ուղիղ զննագրէն կամ զհայերէն ԹարգմանուԹէն: Յայնժամ Թերևս ստուգեսցի և ժամանակ յօրինուածոյ գրոցն, ի հայրապետուԹէ արդեօք գրեալ էցէ ի սբն, եԹէ յառաջ, ոմն ասէ ճառընտիրն. և Թէ ի խնդրոյ ոմն ումանց էցէ գրեալ. կամ Թէ օրինակ գրոցն՝ առ սբն գրէ գոր յղեալ էցէ, եԹէ առ արիստակէս սրգի նր՝ ըստ ճառընտրին, և կամ առ վրԹանէս. զի ժամանակն նշանակեալ ի ճառընտրէ՝ առաւել առ վրԹանէս հայի,

ի յաւուրս անցելոյն մանաւանդ։ Տես և զոր առասպել ի վերջին ճառի սրբոյն յակոբայ ՚ի վարս սրբոյն Մեղեայ եւպէս կի միւս մեկնուածս։

Մեծն աթանաս ՚ի խօսեալն ՚ի ճառն. ա. ընդդէմ արիանոսաց՝ զերևելի հարց ուղղափառաց փայլեցոց յաւուրս նոր բանիւք և գրով, յիշէ և զսրբն յակոբ յանուանէ, յասել անդ. * Արդ եթէ յուղղափառաց էին գրեալքն, այնպէս լինէին արդեօք, ոմն որ ՚ի մեծ և ՚ի խոստովանող նոզ ովսիոսէ . . . ՚ի յուլիոսէ կի՚ ի լիբերիոսէ եւպատցն հռովմայ . . . ՚ի մակարայ եղեմ, յաղեքսանդրէ կոստանդնուպօլսոյ . . . ՚ի մեծէն մեկնուածս և ՚ի բասիլեոսէ և ՚ի ղուննկիանոսէ, և յայլոց՝ որ յեծէն հայոց և պոնտացւոց . . . կի՚ ի յակովբայ, և յայլոց անտի՝ որ ՚ի միջագետաց, ոմն և ՚ի մերմէ երանելւոյն ապէք. սանդրէ, և ՚ի նոցունն ձայնակից եղելոց։ Արդ եթէ հանդոյն սոցա լինէին գրեալքն, ոչ ինչ տեղի կասկածանաց լինէր ՚ի գրուածս նոցա. վասն զի պարզ և յստակ է ուշիմութեան առաքելական արանց ||։

(8) Բարւոք առնէ կուպեր, զի յիշատակեալ աստ ըստ նմանութենակ հրաչս՝ զոր գործեցին ՚ի վերջ խաբեբայ մոլորելոյ սրբն գրիգոր սքանչելագործ և սրբն եպիփան, ՚ի վեր բերէ. * չէ արժան վասն նմանութեն պատմուճեն յերկոսին ոճանալ ըստ ստուգութեն հրաչիցս ||. և գովէ զսոզոմենոս՝ որ ՚ի խօսելն զսրբն եպիփանէ. է. 27. ասէ իրաւամբք. * Զայդ և ՚ի սքանչելոյն գրիգորէ, որ երբեմն նեոկեսարու եկեղեցւոյն եղև առաջնորդ, գործեալ՝ ընկալայ, և մտադիւր հաւատամ. այլ ոչ վասն այն անհաւատալի պարտի գաստիլ՝ զնոյն գործելն եպիփանեայ նոր. զի և ոչ պէտորս առաքեալն ևէթ յարոյց զմեռեալն ՚ի ստորին վայրից, այլև յովհաննէս աւետարանիչ զանիչ յեփեսոս քաղքի, և դստերըք փիլիպպոսի ՚ի կեսարիա. և գտանեմք իսկ զբազումս յառաջնոց, և զորս մեք առ մեզ յարանց սքոց, զի բազում անգամ զնոյնս գործեցին ||։ Այլ այս է խտիր, զի գրիգոր և եպիփան Թողին մեռեալս զայսպանօղս իւրեանց. իսկ մեծն յակոբ դարձոյց անդրէն և ՚ի կեանս։ Են՝ որք զնոյն գրեն զեփրեմայ աշակերտէն յակովբայ, եթէ չի ցեն չիմոթեաւ զգործս նր զվիպին իւրում։

(9) Վասն կոստանդիանոսի այսպէս գրէ ադաթանգեղոս

'ի բուն կարգի պատմութեէ նորոյ • երէս• 388 • * ասէ
,, կարգ թագրութեէ զնւր թագրութենէն անուանեալ • մին
,, չև այնչափ զօրացեալ 'ի վեր ամ մարդկան նրաւացի
,, լինէր պայծառացեալ • • • մինչև զամ աւուրս կենաց
,, նորոյ հրեշտակ յերկնից երևեալ ը առաւօտս առա
,, ւօտս՝ զօրհնասպաղ նմա սպասաւորել, զքեան նշան
,, թագին առեալ 'ի նորին գլուխ գնէր • և այսպէս տե
,, սեալ վերկնաւոր հրեշտակն յիւրում սպասաւորուե
,, երանելին և յանկալին ամ թագրաց կոստանդիանոս •
,, որ և զնւր թագրութե զծնրանիան քրի աւանգէր ասէ
,, սէրն, ասծասպաշտն || • ևն :

Լսակ 'ի Թուղթն գաշանց եղեալ է բանս այս 'ի բերա
նոյ կոստանդիանոսի, յերէս• 413• * Զի հաւատամք ձրշ
,, մարտուե, թէ եօթն սիւնք են յեի 'ի մերում ժամա
,, նակի • սբն սեղբեստրոս յարևմուտս • և սբն գրիգոր
,, յարևելս • և սբն անտոն 'ի հարաւ • և սբն նիկոլայոս
,, 'ի հիւսիս • և սբն մակար յեէմ• և սբն յակոբ 'ի մըծ
,, բին • և սբն եփրեմ 'ի յաւրհայ || • այլ յայտ է թէ եվ
րեմ չէր տակաւին 'ի համարի մեծամեծ սեանց առ
կոստանդիանոսիւ • վայ հայելով 'ի նա ը վիճակին՝ որ
զկնի, պատուհաստել է յայս տեղի • որոյ աղբիւր երևին
բանք ձառընտրաց • սւր ը հկէն՝ ագաթանգեղոս է աղ
բիւր աւանդութենէն՝ որ վե հրեշտակին կոստանդիանո
սի • և բուզանդ կի մալաքիա՝ աղբիւր աւանդուե, որ վե
հրեշտակաց սբն յակովբոյ : Ս՚եք 'ի կարգի պատմութե
եդաք ը ճառընտրաց՝ ոչ բանիւ մալաքեայ • իսկ աստ
գնցուք զբանս բուզանդայ, որ ունի այսպէս • ֆ • 10 :
* Ա՚յս յակոբ գործէր սքանչելիս մեծամեծս • և սա
,, գնպեցաւ 'ի մեծ սիւնհոդոսին 'ի նիկիա, որ եղև յամս
,, կոստանդիանոսի կայսեր Հռոմոց, որ ժողովեցան
,, յիւր եպիսկոպոսք վե անիծեալ արանդոյն արիոսի ասէքսան
,, դրացւոյ, որ էր 'ի նահանգէ անտի եգիպտոսի : Ա՚րդ
,, ամ եպսքն նստէին առաջի կոստանդիանոսի • և 'ի
,, հայոց էր անդ արիստակէս որդի գրիգորի սքանչել
,, ւոյ առաջին կաթուղիկոսին հայոց մեծաց : Ա՚կսա
,, երևել սքանչելեօք նշանաց հոգւոյն սբոյ այնմ յակո
,, բայ ծածկեալ գործք զարմանալի թագրին • եաես՝ զի
,, արքայն կոստանդիանոս քուրձ զգեցեալ էր 'ի ներ
,, գոյ իւրոյ ծնրանեացն և պատմուճանին • և հրեշ

,, տակն

,, տակն կայր պահապան սպասաւորել նմա ։ Զարմա-
,, ցեալ եւպան յակոբ՝ ասաց այլոց բազմունե ժողովոցն
,, եւպասցն զիրս հրեշտակին .... Ապա ետես և թիզրն
,, կոստանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն յա-
,, կոբայ, և աննաւ առաջի ոտից նր. և մեծապատիւ
,, մեծապարգև մեծարեաց զնա. և արկ զաթոռ նր 'ի
,, վերոյ քան զբազումս 'ի նոցանէ՝ որք 'ի սիւնհոդոսին
,, յայն էին ։ Ա յսոցիկ անգիտակ գտանին այլք 'ի
յոյն և 'ի լատին մատենագրաց. բայց չէ ինչ, զի տան
բաւական նշան՝ թէ որպիսի էր ձանաչումն կոստան-
դիանոսի զյակոբայ. մինչև ըստ գրելոյ գեննադիոսի յու-
նի՝ պատուիրել հաւատով, զի յետ մահուն թաղեսցի
'ի մէջ պարսպի քաղաքին իբրև պահապան մծբնայ. և
յորժամ հանաւ զկնի արտաքոյ, առաւ և քաղաքն 'ի
պարսից ։

(10) Որպս ասացաք, ճառընտիրն Ա, աստանօր զանց առնէ զպատմութիւն սբոյն մելխի կամ մելխասի պարսից եպսկ. զի յառաջնմն վարս նր գրե զամ լիով ։ Իսկ ճ. ր. և ե. ասա գրեն, ըստ որում լինի երկրորդումն ոճն նր ըստ յակոբայ. միայն թէ այս օրինակք յայտնի վրիպա-
կագրութիւք կոչեն զմելխասս եպս էնմ, հայելով յայն՝ զի 'ի մծբին գոյր 'ի կողմանց էջմի, ուր շրջեալ էր յովհաս. միանգամայն անցանելով և ըստ ամիպ, կամ ըստ համն, որ գրի 'ի ճ. Ա. էմիւ. որոյ փոխան թերևս ոմանք ընթերցան էջմ։ Բայց նոքին իսկ ճ. ր. և ե. ասեն, թէ 'ի մծբնայ գնաց 'ի վիճակ իւր յարևելս. և անդ կատարեցաւ մարտիրոսութիւք 'ի պարսիկ իշխա-
նէ. Թող զի գնաց յանդիմանեաց կանխաւ ասեն զպատ-
րիարգն պարսից, զոր կոչեն փիբոս կամ փիլիպպոս, այն է ըստ այլոց բաբոս կամ պապ. ապա ոչ կարէ լինքն մե-
ղնոս լինել էջմի եպս, այլ միոյ 'ի վիճակացն պար-
սից ծի, ոյ լիով ասացաք 'ի վարս նորա ։ Իսկ Հ. թէ-
պէտև ուղիղ ընթեռնու զանուն քաղաքին ամիպ, ուր
էրև ժողով վ ընտրուէ սբոյն յակոբայ եպսուէն, այլ
չարաչար սխալէ՝ զի վմելիտոսս զայս նոյն հասարի ընդ
պատրիարգին անտիոքայ, յորմէ ձեռնադրեցաւ սբն
յակոբ ։

(11) Ջնորհեցաւոյն եղեալ զբանս իբրև համաւօտա-
պոյն և ճշդապոյն. զոր ըստ գոյացուէ նոյնպէս պատմեն

և բուզանդ և Ճառընտիրք , բայց քանզի կան ի նոսին և երևելի պարագայք տարբերք , յառաջ բերցուք առ տանօր Բուզանդ զրէ , թէ աբէն յակոբ լուեալ զանըղգամ վթիս մանաւրհն՝ գնաց ի խրատել վնա . իսկ նր արհամարհեալ զաբէն՝ եա առաջն աչաց նր ի ծով հոսել ուղթ չարիւր այր անմեղ . և ծալրեալով առաց ցյակոբ . * առ քուռմ բարեխաոսանեք (կամ բարեխօսուեք) ,, տեսեր վնարդ մեծարեցի զքեզ . դիւր արարի նց ի ,, կապանացն , և ի ծովուն դեռ գուցին || . և այնպէս հալածեաց առ զաբէն . և նր թօթափեալ զփոշի ոտից իւրոց , * գայր հասանէր ի լեառն երկաթահատացն և ,, կապարահատացն , ինքն և որ ը նմայն էին . և ընդ ,, ուշանալիս բաժանէր լեառն բարձր . ուստի երևէին ,, գաւառքն բովանդակ , որում անուն ընձաքիարս կո, ,, չէին :

,, Իբրև հուպ եղև յայն լեառն ի ստորոտ լերինն , քզի ,, բազում աւուրք էին , զի չէր ինչ բնաւ ամենևին ճա, ,, շակեալ , և ծարաւեաց խիստ ծարաւով , եկաց յա, ,, ղօթս առ ար , գնէր ծունր , և եդ զգլուխ իւր ի վր ,, երկրի . և բղխեաց աղբիւր , ուստի արբ ինքն և որք ,, ը նմայն էին . և եղև այս ը առաջինն օրինակին , որ ,, սրար ի սարսրագ լերինն , սոյնպէս և առ ոտին ըն, ,, ձաքիարս լերինն՝ ի ծովեզերն ըռչտունեաց ծովուն . ,, որ ը առաջնոյն օրինակի կոչի և այս աղբիւր յակո, ,, բայ մինչև ցայսօր . (ը յայսմաւուրաց , ի սառրոտ լերինն՝ որ կոչի կապուտաղն) :

,, Եւ ելանէր քննյասեան ար յակոբ ի գլուխ լերինն ,, ընձաքիարս , և նղովէր զնն , վն մի պակասեսցէ անյ ,, ոի խաւսուսի մինչև խսպառ , փիսկ արուսնի խաղաղու, ,, թենն՝ որ ոչ լսնան . և սբ աւետարանիչ եոան գնաց ,, ի տեղի իւր : Իսկ յայնմ գաւառի յետ գնալոյ նորա ,, անտի՝ յետ երկուց աւուրց սատակեցաւ կինն մա, ,, նաշրհայ եօթն որդւովք իւրովք . յետոյ և ինքն չա, ,, րամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանօք յօդ . ,, և ը բանին որ ասացաւ՝ ոչ եղև խաղաղութի յնէին ,, յայնմիկ յօրէն յայնմանէ և առ յառա || :

Զայս ամ բառ առ բառ օրինակեալ է և Ճառընտիրն Բ. իսկ Ճ. Ե. որ հետևօղ է նր , խսպառ թողու զանցս մանաձրհն և զոր զինն գործս սբոյն յակոբայ . զի պատ,

մու,

մուԹՔ սբյն մելխոսի կնՔէ և զվարս յակոբայ։ Մնայ
լսել զբերեալն ՚ի մեծ Ճառընտիրն Ա, զանապանեալ
՚ի խորենացւոյն և ՚ի բուզանդայ՝ օրինակ զայս ։
* ՄանաՀիրՀ ոշտունի յաւարի առ զվիՃակ սբյն. և
,, գներ զերկոտասան սարկաւագունան ՚ի բերդին մա-
,, նազներտ (կամ մանակերտ) կոչեցեալ ։ Իսկ նր հե-
,, տամուտ լեալ՝ իբրև լսեաւ զհամբաւ զուժին, եկն
,, Էհաս զօրուն և նահապետին մինաՀիրՀէ. և տեսեալ
,, մանաՀիրՀ՝ անկաներ յոտս երանելոյն և խնդրեր Թո-
,, ղութիւն. և նենգիւՀ խոստանայր տալ զբերեալն,
,, պայման եդեալ առ վաղիւն. և սբյ հայրապետին
,, երկու օԹս (կամ երեկօԹս) արարեալ՝ գայ փութա-
,, նակի առ պայման ուխտին խնդրել զսարկաւագունան։
,, Իսկ անօրէնն մանաՀիրՀ ստուգանել ոչ ակնածէր
,, յերանելոյն. ծուխասոյզ արարեալ հեղձուցանէր զբ-
,, գերեալն ։
,, Իսկ իբրև եառես սբն յակովբ զգործ անօրինին՝ յար-
,, տասուս եղեալ լայր պատնապէս և գոչէր առ ՀԾ.
,, բացեալ զՀբ և զսոսկալի զբերանն՝ անէծ զմանաՀիրՀ
,, և զերկիրն ոշտունեաց. և ծածկեաց զհրաշերպ գէմն,
,, գնաց ՚ի սահմանաց հանդերձ իւրայովքն ։ Եւ հասեալ
,, ՚ի գաւառն ալձնեաց՝ հանդիպ գեղջին բէլու կոչեցեալ
,, և անհետանայր ՚ի աեսուէ երկիրն ոշտունեաց. ա-
,, պա հարցեալ ցաշակերտան. Թէ Թերևս երևի գա-
,, ւառն ոշտունեաց. և նք ասեն. ոչ ։ Ապա խորհուրդ
,, ՚ի մէջ առեալ՝ ոլորմեցաւ առ յապա ժամանակն. Թա-
,, ւալեցոյց երկոտասան վէմ և հիմնարկեաց, և ապա
,, տարածեալ զհրաշալի բազուկն՝ և լուսէ աՀոԹէր.
,, և առնոյր զխնդրեալն՝ որպս զմովսէսն և զհննայ. և
,, հնազանդեալ ատտառաժն՝ վաղվաղակի ջուր բղխե-
,, ցոյց. և տեսեալ աշակերտացն՝ սքանչացան. և ան-
,, կեալ յոտն համբուրէին. և տային փառս բարերա-
,, րին. և սակաւ մի գտեալ առեալ՝ զգաւազանն տունկ
,, արկաներ. և յուղի անկեալ սբյն՝ գնաց ՚ի տեղի իւր ։
,, Ապ եղև սքանչելիքն առ սբն առխատակէս (կամ
,, վրԹանէս) հարազատ իւր. բազում պատճառս ար-
,, ձակեր վ Ճին ոշտունեաց՝ լուծանել ՚ի կապանաց.
,, և զգիրսն տալ զինդրելին, զոր ինքնահաս արարեալ՝
,, զգօն կոչեցեալ ։ Եւ նորա կացեալ ՚ի մարմնի ամ մի՝

,, փոխն առքն || . և այնպէս անցանէ ի պատմութիւն փոխմանն , և յորս գիտի՝ ը գրէլոցս ի կարգն վարուց աքին : Ուր քաջ տեսանի , զի բանք մեծի Ճառընտրիս գեղեցիկ միաբանին ընդ խորհնացուցն . և բանք խորհնացուցն ոչ հակառակին ը Ճառընտրիս . իսկ բուսանիլ որչափ կարծի մերձենալ ի մին և ի միւսն , նոյնչափ և հեռանայ աւետարանչական ոճով իւրով : Սակայն և այն է հնարիւ , զի տարբերութեան պատմագրաց ի պարագայս՝ է առաւել հաստատութեան իսկութեան իրացն եղելոց :

(12) Ա յլ գեղեցիկ հաստատութեան համ աւանդիցէ՝ որ զաքին յակոբայ , լնովին տեսանի ի հին չարականն ներ , և ի Հառ գովեստի՝ որ ի նարեկացուցն : Չարականին հեղինակ թէպէտև անգիտանամք , բայց այն իսկ է նշանակ հնուէ՝ ը ընտիր ոճոյն . վասն և ի վաւերական ձեռագրի միում՝ ուր կան անուանք հեղինակաց միոյ միոյ ի չարականաց , վասն չարականի աքին յակոբայ ասի . * Յումմէ աստղաւքն չէ յայտ || : Եւ հաւանական է յընթացից պատմուէ Ճառընտրին մեծի , որ և՝ ի չարականն անդր ակնարկէ յանուանէ , թէ է յօրինուած միոյ ի գաւառականացն ուշտունեաց կամ արծրունեաց յաւուրս չինութեան եկեղեցւոյ անդանօր ի վէր առանձին նշխարացն . վասն ասելոյ , կամ նարեկացուցն է , և կամ ժամանակակից նր , և կամ ևս հնագունի , բայց ի նմին գաւառի . վասն և երբեմն չարական առանձին այնոցիկ կողմանց՝ ուրոյն ի վերջոյ գրեալ տեսանի ի ձեռագիրս հինս : Թողում բանասիրաց մի առ մի համեմատել զբանս չարականի և զբանս նարեկացուցն ը վարուց աքին առ ի մէնջ գրելոյ՝ բազադրութիւն Ճառընտրաց . զի յայնժամ քաջ լմնանան զվիպս երգոյն և ներբողական գովեստիցն : Նմին իրի և որ ինչ սակաւուք քաղեալ զվարս և զաքանչելիս աքին , յորս զընթերցօղս * ի կատարեալ

,, պատմութեան նր || :

Ուղիղ համառօտի և յայսմանէ բուք Հ. զբովանդակութիւն վարուց աքին՝ առաւել ը Ճառընտրին Ա , և ուրեք ուրեք ը Բ . և վն նշնարաց նր առնէ յաւելուած աւանդութիւն այսպիսի , զոր վաթսնքեաք այլուստ ստուգել : Նախ գնէ ը Ճառընտրաց , թէ աղ աքին , կի Ճկոյթ աջոյ ձեռինն տուաւ * ի բժշկուէ և յօրհնուէ գաւառին

,, ուշտու-

„ ոչտունեաց · զոր առեալ բերին մեծաւ պատուով ,
„ և ընկալան զնաղատուքն վշտացն · և եդին ի վանս
„ ընծակայ (ի ստորոտս ընծաքիարս լերին) , ուր և
„ զնուրն եհան · որ յետոյ չինեցաւ մեծափառ վանք ·
„ և անուանեցաւ սբ յակոբ ։ Եւ ապա ի վր բերէ ·
* Իսկ զմարմին սբոյն յակոբայ եկեալ յովհաննէս ար-
„ քայն յբստրմքօլայ՝ որ կոչեցաւ չիչկիկ , և հանեալ
„ զսբն յակոբ ի մծբնայ (գուցէ յամդայ՝ ուր քերեալ
„ էր ըստ բուզանդայ) , և տարաւ ի կոստանդինուպօլիս
„ ի դճ և ի ձ թուականիս հայոց · (պարտի լինել
դճէ · այն է յամի ռն 971 · զի նստաւ չիչկիկ ի 969 ·
„ նձը) , և անդ եդին պատուով ըստ այլ սբոյն՝ որ անդ
„ կան ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՒՆ

Աբեղն Իգնատիոսի ծաղկեաց հայրապետի։

Ի· դեկ· 17· կի 20 · ըստ որ եբելէ · և յունվար · 29 , կամ 30 ։ Բ · դեկ · 20 · և յունվ · 29 ։ Լ · դեկ· 17· և փետր· 1 ։ Ա՛ստ·ըն· Կ· ածե=ալիք· դեկ · ե · կամ իբ ։ Կ·որձ· եգնափոսի և ըստ·ղ ընդ ՚է մտաբանս հարց· հապ· ը· երես· 1=180 ։ Ընդ·ղանդեանն հենոդենիոս · ՚է ա հապ· փետր· էջ· 13=37 ։ Ա՛եսափէր ։ Ասիէբ · ՚է նեբբ · եգն· հապ · ը · երես· 592=601 ։ Յոռնաբդ · էջ· 7=19 ։ և այլք ՚է նախնեաց և ՚է յետնոց ։ (1)

ԱՍՈՒԱԾՈՒՕՉԻՆԱՅ անուն նախանձելի՝ սեպհական նեալ սքանչելոյն Իգնատիոսի, անդաստին յաւուրց նը էր հանդիսացեալ գեղեցիկ անուն պարծանաց, զոր տային նմա ամենեքին, և ինքն իսկ երբ յաւուրս կոչմամբ զանձն իւր ՚ի նոյն անուն յորջորջէր · որ յունարէն ասի ԸնդՔօռօս · և ունի զնշանակութիւն ներգործականի՝ ունի ածակիր, ածազգեաց, կամ ածազգեստ, ածաբեր կամ ածընկալ · այս է՝ զածն կրօղ յանձին իւրում համ՚ի սրտի · զորոյ և զխորհուրդն տեսցես յընդ-

յընթացս վկայաբանուես ՚ի բերանոյ նորին
ածարեալ անձին ։ Այսպա եթէ կրաւորաբար
առցի՝ վերծանելով, ընծՀօ-օս, յայնժամ
ստուգաբանի յայլ խորհուրդ. ոչ թէ ածա-
կիր կամ ածաբարձ, ըստ որում կրեալ կամ բար-
ձեալ ՚ի գիրկս այլ ։

Օ՛ ի ոչ դրէ մեծաւորաստէս՝ ըստ նախնեացն
աւանդուեն, սա ինքն ածայինն ագնատիոս կ
մանուկն այն՝ զոր ընկալաւ յիս ՚ի գիրկս,
ձեռն էդ և օրհնեաց. և ասաց յօրինակ խո-
նարհուեն առ աշակերտան. * ամէն ասեմ ձեզ.
եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանկտի,
ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից. արդ՝ որ
խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս
զայս, նա է մեծ յարքայութեան երկնից. և որ
զոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ,
զիս ընդունի ‖. (Տպտ. ԺԸ. 2 = 5 ։ Մրկ. Ը.
34 = 36 ։ Ղկ. Ը. 47 ։) Այս այս է՝ զոր նուա-
գեմք ՚ի տօնի սքանչելի ագնատիոսի. * Որ յա-
ղթուս քերովբէականս վերանստեալ Հանդ-
էսիր որդի այ, Հաձեցար խոնարհուիլ բառ-
նալ ՚ի գիրկս յորդւոյ ադամայ ‖ ։ (2)

Արդ օրպիսի ընդունայն եհաս արդեօք երա-
նելին ագնատիոս՝ ածաբարձ լինելով ՚ի ման-
կութենէ. ոչ ապաքէն գլխովին ածազգեաց
գտաւ ՚ի հասանելն յորբուն. վայ և առա-
քեալքն զայն՝ որում էդ ձեռն տէրն ՚ի տղայ-
ութենէ, սակիւր արժանի ձեռնադրութեանն գիտէին
յերիտասարդութենէ. և ո՞ կարէ պատմել զա-
ռաւելուսն ընդունայն այնուհետև ։ Ամէն իրի
աստ բերանն ոսկի ՚ի ներբողս սքանչ. * Արանձ-

լի առաքելոցն ձեռք շօշափեցին զնոր գլուխն զայն . . . և զի՞մ՝ ոյ՛ի մարդիկ առաքինութե՝ ՛ի նմա գոլ վկայեցին ‖ . ոպ պահանջէ պօղոս ՛ինն՝ որք կասին ենպատանալ ։

Այս ըս այսմ յայտ է , թէ սբն իգնատիոս էր եէմացի կի՛ի կողմանց պաղեստինոյ՝ ծնեալ փոքր ինչ յառաջ քան զվկրտութիւնն քնի , և ականատես փրկչին Ցի ՛ի տղայութե իւրում ։ Այս ոպ յայտ է յիմ եկեղեցական պատմութենէ՝ եղև զկնի աշակերտ առաքելոց . և մանաւանդ պետրոսի և յովհաննու . վ՞ոյ և ասի աշակերտակից սբն պօղիկարպոսի . և երկոքեան սոքա առաքելական հարք՝ եղեն մի մի լուսապսպուղք Ցի զկնի առաքելոց , յորոց առեալ էին զձեռնադրութե . այլ պատիւ իգնատիոսի մեծ եղև յոյժ , ասէ ոսկեբերանն , ըս որում եղև առաջնորդ աթոռոյ մեծին անտիոքայ ասորւոց՝ իբրև յաջորդ վիմին Հաւատոյ , յաջորդեալ սբն եւոդիոսի , որ նստաւ յանտիոք զկնի կեփայի . և աշակերտեաց զբազումն քանիս և գրով , նշանօք և զօրութե . զմերձաւորս օրինակաւ և քարոզութե հաստատեալով յաճախապաշտութե , և զհեռաւորս թզթովք իւրովք . յորոց սակաւք ՛ի բազմաց կան մինչև ցարդ ։

Նակ առաքինի նահատակութե աճապզգեաց անձինն՝ գրեցաւ յուխտ անտիոքացւոց ՛ի ձև շրջաբերական նամակի ՛ի ձեռն այնոցիկ, որք ընթացակից եղեն նմա յանտիոքայ մինչև ՛ի հռոմ, և անտ զնոր նշխարս նր բերին յաթոռ նր ։ Այն ե վկայաբանութե՝ հարա-

զատ ,

զատ, որ կայ ի Ճառընտրի միում՝ Թարգմանեէ՛ի վաղուց. և անտի առնուն ամ գրիչք վարուց նր. վ՛ոյ և մեզ զնոյն արժան է յառաջ բերել՝ համեմատութ օրինակին գտեալոյ առ Հռոմայեցիս:

Ա՛յն ինչ զիշխանութիւն Հռոմայեցւոց առեալ տրայիանոսի կայսեր՝ Հալածանս յարուցանէր՛ի վր եկեղեցւոյ. յորում ժամանակի խղնատիոս եպիս աշակերտ յովհաննու առաքելոյ և աւետարանչի հովիւն զեկեղեցին անտիոքացւոց, երրորդ եղեալ յետ առաքելոյն. քանզի զեւոդիոս յաջորդեաց զայր առաքելական՝ սա ինքն Ճգազգեաց ամրէ առաքելանման (3). որ զբազում Ճփանս դոմետիանոսի կայսեր անցոյց զինքեամբ՝ իբրև զիմաստուն նաւավար՝ զեկօք աղօթից և պնդութ պահոց. որ և ստէպ ստէպ վէպութ և երկօք (4) հոգևորովք ընդեմ կայր մրրկին, երկուցեալ՝ թէ գուցէ զոք՛ի վատասրտաց և՛ի կարձամտաց կորուսցէ:

Ա՛ւ՛ի սակաւ մի դադարիլ հալածանացն (առ ներուճասաւ՝ որ սուղ աւուրբք թէւորեաց), ուրախ լինէր՛ի վերայ եկեղեցւոյն անշարժ մնալոյ. այլ ինքն յանձին իւրում հոգայր վ՛ինքեան, զի չէզև արժանի վկայական մահուճան. իբրև թէ չև ևս լցէ բուռն հարեալ զսիրոյն քնի, և ո՛չ յաշտիճան կատարեալ աշակերտի հասեալ. քանզի զմտաւ ածէր՝ եթէ մարտիրոսուէն խոստովանութի առաւել ընտանեցուցանէ զնա ՚այ. ուստի յետ սակաւ ժամանակաց՝ յորս մնայր տակաւին

յե-

եկեղեցւոյն , և զօրէն ածելոյն Քրագէ զանձն իւրաքանչիւր ուրուք լուսաւորէր վարդապետութիւք գրոց սքից , եհաս ըղձալւոյն ։

Յանգի տրայիանոս կայսր՝ որ նստաւ զկնի Ներուասայ , թէպետև զառաջինն խաղաղութիւք եր ընդ քրիստոնեայս , այլ յետ այնորիկ յիննեւորդ ամի թագաւորելն իւրոյ հպարտացեալ յաղթութիւն՝ զոր յաղթեաց սկիւթացւոց և դակեաց (կամ Թրակաց) , և զմտաւ ածեալ՝ եթէ կատարեալ չէ յաղթութիւն , եթէ ոչ բռնադատեսցէ զհաւատացեալս քրիստոսի ի պաշտօն դից իւրոց , և միաբանեսցէ ընդ այլ ազգս , հալածանս յարուցանէր այնու հետև։ և զամ քրիստոնեայս՝ կամ զոհել և կամ մեռանել՝ հրամայէր ։ միանգամայն և ինքն ձառնապարհ արար յարևելս ի պատերազմ ։

Յայնժամ առաքինի զօրականն քրիստիոս հոգացեալ վասն եկեղեցւոյն անտիոքացւոց՝ զանձն ի վէր դնէր ժողովրդեան [5] , զի օրինակաւ իւրով ձգեսցէ և զնա յարիականն նահատակութեն ։ վայ յարուցեալ ինքնակամ հասանէր առ տրայիանոս թագաւոր ։ քանզի և այն աւուրս յանտիոքացւոց քաղաքին էր՝ վասն առաջնակայ Ձանապարհին , որ ի հայս և ի պարթևս [6] ։ և խնդրէր ի քաղաքի անդ զառաջնորդն քրիստոնէից , որոյ համբաւն էր հռչակեալ ։

Եւ իբրև եկաց առաջի տրայիանոսի և սինկղիտոսին , հարցանէր զնա թագն , և ասէր ։ այ չարադէպ այր , ոչ ես դու՝ որ զմերովք հրամանօք քամահես , և զայլս հրապուրես

զնա-

Էհնազանդիլ մերոց հրամանաց, զի չարաչար
կորիցեն. որ և զանտիոքացւոց քաղաքս և
զգաւառս խռովեցուցեր, մինչև յիմ լսելիս
հասանել՝ եթէ զնմա ասորիս դարձուցեր՝ ի
հեթանոսուէ՝ ի քրիստոնէուէ։

Ագնատիոս ասէ. զածաղգեստ այր՝ չարա-
դէւ ոչ ոք կոչէ (7). քզի դէք հեռի են՝ ի ծա-
ռայից այ. ապա եթէ չար գիս առ դևսն կո-
չես, զի նոյ ծանր եմ, վկայեմ և ես։ Ասէ
տրայիանոս. և զիաՀրդ իցես դու ածաղգեստ,
և ծանր դիւաց. ոչ ապաքէն այդպիսեօք
ձգես զամբոխն զկնի քո։ Ածաղգեացն ասէ.
քանզի զքո ընկալել եմ յիս զերկնաւոր թա-
գաւորն. նովաւ լուծանեմ զայմ մեքենաւոր
չարուհիս դիւաց. օՀ եթէ կարէի և զքեզ ևս
ոմն թիւր շրջել՝ ի կռապաշտութիդ, և ըն-
ծայել ամենեցունցն այ, և սիրելի քոյի կա-
ցուցանել, և հաստատագոյն ևս առնել
քեզ զիշխանութիդ։

Տրայիանոս ասաց. եթէ կամիս չնորհս առ-
նել լինձ, և ընդ սիրելիս իմ համարիլ, փո-
խեայց յայդպիսի կամակոր մտաց քոց. զոհեա
ճծոյն, և լեր քահանայապետ մեծին արա-
մազդայ, և թիչերեա ըստ մեզ։ Ագնատիոս ա-
սաց. չնորհ զայն արժան է առնել ումեք, որ
ոչ ինասէ և ոչ առիթ լինի յաւիտենական
տանջանացն. այլ դու զոր լինձ խոստանաս
տալ, ոչինչ պատուական համարիմ ամե-
նևին. և ոչ զարամազդ քնաւ՝ թէ ոմն ոք լոյծ
Ճանաչեմ. և ոչ թիչերութիե երկրի ցանկամ.
քանզի զինչ օգտեցայց, թէ զշն ամ շահե-

ցայց

ցայց, և զՀոգիս իմ կորուսից։ Ցրայհանոս ա-
սաց. Թուի ինձ, եթէ անբաժ ելցես ի զգա-
ուելիէ խնասուէ, և վը այնորիկ արհամար-
հես վնաստանսն իմ. ուսայի թէ զայրացու-
ցանես զիս, ամ չարաչար հարուածովք տան-
ջեցից զքեզ. ոչ միայն իբրև զանհնազանդ,
այլև իբրև զանշնորհ, և զընդդիմացեալ
հրամանաց մեծի սիկղիտոսին՝ ոչ զոհելով
ածոյն։

Պղնատիոս ասաց. արա զորինչ հաճոյ է քեզ,
քանզի ես ոչ զոհեմ. և զայս գիտեմ, թէ
ոչ հուր և ոչ խաչ, ոչ գազանաց երկիւղ, և
ոչ յօշումն անդամոց, և ոչ այլ ինչ դժնդակ
տանջանք կարեն հաւանեցուցանել զիս ապա-
տամբել յոյն կենդանւոյ. քանզի ոչ սիրեմ
զառաժամանակեայ կեանս, այլ զքո, որ վը
իմ մեռաւ և յարեաւ։ Սիկղիտոսն ասաց.
մեք գիտեմք, եթէ ածքն անմահք են. և
դու զիարդ ասես, եթէ քո մեռաւ։

Պղնատիոս ասաց. վը մատակարարեմ իրիք
մեռաւ՝ և յարեաւ չէտ երից աւուրց՝ փրկիչն
մեր. իսկ ձեր ածքն մեռան իբրև զմահա-
նացուս, և ոչ յարեան. նոյն իսկ արամազդ
ի կրեսէ թագեալ կայ (ասեն ձեր վիպա-
սանք). ասկղեպիոս չանթիւ տատակեալ
յայլումվայրի անկեղդնի ի կիթերան լեառն
քիսվոիոյ. ափրոդիտէ հանդերձ կիւբելեաւ
(ըստ այլոց՝ որսողիւ) ի պափոս կիպրոսի թագ-
եալ է. հերակղէս հրկիզ եղև ի միւսում
ևս տեղւոջ (ի տիւռոն, կիմ յոյեւոնէն լերին
Թեսսաղիոյ)։ Այս արժանի են այսպիսի պատ-
ժոց

ժող ըմբծքն ձեր . վ՚ա զի սուտք և անժոյժք և
չարագործք կին և ապականիչք մարդկան ։
Նակ մեր ուրն՝ յա քո՝ Թէպետև խաչեցաւ և
մեռաւ , այլ եղոյց զիւր զօրութիւն յարուցք իւ-
րով . ոչ և յառաջ քան զխաչիլն նորա դևք
զարհուրեալ խոստովանէին՝ Թէ նա է որդին
այ կենդանւոյ . և առաջի անկեալ աղաչէին
զնա , զի մի յառաջ քան զժամանակս վախ-
ճանին տանջեսցէ զնս . ուստի և մեռեալս
յարուցանէր միայն հրամանաւ . այլև դժոխք
ինքնին սարսեցան ՚ի նմանէ . և զհոգիսն զոր
ունէր բռնութիւն իշխանութենն՝ արձակել կամէր
յառաջ քան զլիմելն նէր ՚ի դժոխս , զի ինքն
անպատիժ մնասցէ ։ Այլ իբրև մատակարա-
րեցաւ մահն ՚ի ձեռն խաչին , իջեալ ՚ի դը-
ժոխս՝ զյաւիտենից ըմբռնեալ հոգիսն յա-
ղոյց հանդերձ մարմնովքն (ոմանց ՚ի սըբց ան-
տի) . և կապէալ զնոսա կապանօք անլուծիւք՝
եւ ՚ի պահեստ յօրն յայն, յորում դատի գնա
ղք ։

Այլ զինչ ասացից . զի ոչ բաւէ ինձ ժամա-
նակ ՚ի պատմել զնորա սքանչելիսն . քանզի
զշէս հալածէր , զբորոտս սրբէր , զանդա-
մալոյծս հաստատէր , կուրաց տեսանել
տայր , զգօսացեալս և զկաղս ողջացուցանէր ,
և զայդ ամ արարեալ՝ չառնէր գոնեա ար-
ժանի՝ ասել ախտին , եթէ Թող զախտա-
ցեալդ՝ զոր ունիսգ . այլ զինչ . անդամալու-
ծին ասէր , ած զմահիճս քո և գնա . և զկու-
կան ՚ի լուսաւորութիւն աչաց տայր արբանե-
կել .

կել. և յետ յարութեանն իւրոյ զայնոսիկ՝ որ ոչ հաւատացինն ի նա, ի ձեռն հռովմայեցւոցդ ետրուէ պատուհասեաց։ Եւ դարձեալ՝ ասէ ձեր ի միջէ ձմեռնեան այդ պատապարտեցան իբրև զջարագործս. իսկ մեր ետրն ի մարդոյ չարաց չարչարեցաւ, որք ոչ համբերեին նորա յանդիմանուեցին. և ամ բարեօք լցեալք ի նմանէ՝ ապաշնորհք առ տուչին եւրեցան։

Տրայիանոս ասէ. խրատ տամք եզ փախչել ի մահուճանէ, և ընթանալ ի կեանս։ Ադնատիոս ասէ. բարւոք խրատես ով թագաւոր. զգի և ես փախչիմ յաւիտենական ի մահուճանէն, և ընթանամ ի միանջենաւոր կեանն։ Տրայիանոս ասէ. և քանի՞ մահք են։ Ադնատիոս ասէ. երկու. մի ժամանակեայս, և մի միանջենականն։ Տրայիանոս ասէ. ոչ եկիր այսր ձարտարախօսել. այլ զոհեա ճոխոյն, և խոտորեա ի տանջանացն. քանզի ոչ լաւ ես դու քան զծերակոյտդ մեր։

Ադնատիոս ասաց. որոյ ճոխոյ զոհեցիր. ապրեսի, որ վ՛ոչ հնուԹէ զերեքտասան ամիս ի կարան արգելեալ կայր պղնձի կապանօք, եԹէ պոսիդոնի՝ որ վրիպեցաւ յրզմանէ անտի ածանալոյ, և ի կնոջէն յաղԹահարեցաւ՝ զոր ի տիտանացւոցն էր առեալ կնամարդին, և զնղնոնի պարիսպն շինեալ՝ ի վարձուցն անավաստակ ելանէր. Թուղ զայլսն։ Այս ամաչեմ մարդիկ անգամ կոչել զնա, Թուղ Թէ ածս. այլ կախարդս և ապականիչս մանկանց, յարծուն և ի կարապ և ի վիշապ կերպա-

պարանեալ՝ ոչ վճռ բարւոյ իմիք լերի, այլ՛ի լուծումն օտար հարսանեաց. յորոյ արժան եր ձեզ զարշիլ, և ոչ եթէ երկիրպագանել. Ա. ռ այնպիսիսն կանայք ձեր յաղօթս կան, զի այնպէս զգաստուն պահեացեն առ ձեզ։ Տրայիանոս ասաց. ես եղէ քեզ պատճառ զընծան թշնամանելոյ, վասն զի ոչ տանջեցի զքեզ։ Աբգնատիոս ասաց. ես վաղ իսկ ասացի քեզ, թէ պատրաստ եմ յամ տանջանս և յօրինակ ամ մահու. վասն զի փուճամ առ ամ։ Տրայիանոս ասաց. ընծովքն (երդնում), զի եթէ ոչ զոհեացես, չետոյ զղջանալ ունիս. արդ յառաջ քան զչարչարելն խնայեա՛ի քեզ։ Աբգնատիոս ասաց. եթէ ոչ խնայեի չիս, առնել զոր հրամայեաք։

Ասարկացեալ տրայիանոս՝ հրամանն ետ կապալեայ գնտիւք ծեծել զթիկունս նր. և սպասաւորք առեալն առնէին վաղվաղակի զհրամայեալն։ Իսկ աբգն ասէ՛ի տանջանս. աճեցուցեր ոմ զթագաւոր զփափագս իմ՛ի ինր։ Յայնժամ ասէ տրայիանոս. երկաթի եղնդամբք զկողս դորա քերեցէք, և աղիւ շփեցէք։ Իսկ երանելին Աբգնատիոս արիաբար տարեալ և այնմ, ասէր. ամենևին միտք իմ առ ամ են, և տանջանաց քոց բնաւին փոյթ չառնեմ։

Տրայիանոս ասաց. զոհեա ընծոյն։ Աբգնատիոս ասաց. զարմեալ հարցանեմ, որոյ ընծոյ. կարծեմ թէ եգիպտացւոյն հրամայես ինձ զոհել՝ եղին և քաղի և կապկի և քարբի թռչնաւորի, գայլոյ և շան, կամ կոկորդիղոսի,

կիմ պարսկականն հրոյ, կամ ծովային ջրոյ, կիմ դեմետրեայ հողոյ, կիմ սանդարամետական կանխին պղուտոնի, կիմ հերմեայ դողապետի։ Տրայիանոս ասաց. ասացի քեզ, եթէ գոհեա. քանզի զայդ ասել՝ զքեզ ինչ ոչ օգտեցուցէ։ Ադնատիոս ասաց. և ես ասացի քեզ, եթէ ոչ գոհեմ, և ոչ՝ ի քաց կամ՝ ի ինոջէ և՝ ի միայնոյ նմա, որ արար զերկինս և զերկիրը, զծով և զամ՝ որ՝ ինն. որ ունի իշխանութիւն ամ մարմնոյ. որ է ածծ հոգւոյ, և թագաւոր ամ զգայնոյ և մտաւորի։

Տրայիանոս ասէ. և ոչ արգելու զքեզ՝ և զինա պաշտել, եթէ արդարև է ձշմարիտ ածծ, և միանգամայն զսոսա՝ զորս ամենեքին ածծ խոստովանիմք։ Ադնատիոս ասաց. քնական դիտուն յորժամ յստակ է՝ ի մարդ, ոչ համեմատ զձշմարտուն ըստ ստութեն, և ըստ լուսոյ զխաւար, և ըստ քաղցու զդառն. իսկ որ ոչն որոշեն զայսոսիկ՝ ի միմեանց, նոց աւարտել կայ վայն. քանզի զինչ համեմատուն է քոի ըստ բեւիարայ, կիմ զինչ մասն գոյ հաւատացեալ ըստ անհաւատին, կամ զինչ զուգակատնուն է տաճարի ամ ըստ կուռս։

Կամին ոչ Թագաւոր, զի ասացից քեզ քան ձշմարիտ, որ հաւանեցուցանէ զքեզ՝ եթէ արդարև ըստ տանջանաց է, որ Թողու զձշմարիտն ածծ՝ և առ չածս փախչի։ Կ՚թէ ոք՝ ի քոյոց զօրականացդ ապստամբեր՝ ի քումմէ Թագաւորէդ, և առ այլ ոք ընթացեալ՝ զինա կոչեր Թագր, զինչ արդեօք առնէիր այնպիսւոյն. ոչ ապաքէն հնարէիր և՝ զինա կորուսա-

սանել, և զոր հակառակ քեզ անուանեաց
Թէր, զքեզ Թողեալ ։ Տրայիանոս ասաց ։
այդ Հնմարիտ է ։ Ագնատիոս ասէ ։ և արդ
դու զի՞ բռնադատես զիս զոհել ցծօցն ։ Քզի
այդու օրինակաւ՝ և զքեզ պատժէ Հնմարիտն
ճծ, և զիս առաւել տանջէ, եԹէ քեզ ան.
սայցեմ ։

Յայնժամ ասէ տրայիանոս, պարզեցէք ըզ-
ձեռս դորա, և լի՛ արարէք գնոսա հրով, զի
խանձողեսցի ։ Ասէ երանելին ասէր ։ ոչ Հուր
այրեցօղ և ոչ ժանիք գազանաց, և ոչ բռնու-
սատանայի վարատեսցէ զիս ՚ի սիրոյն քէն ։
Պատմեալ ասէ տրայիանոս ։ պրտու իշղով
ԹաԹաւեցէք, և լուցէ՛ այնու զկողս դորա
խարշատեցէք ։ Ագնատիոս քաջ նահատակն
քէն ասէ ։ կարծեմ Թէ մոլորեալ ես ով Թա-
գաւոր, և չիմանաս, եԹէ ճծն՝ որ յիս կեն-
դանի է, ոյժ շնորհէ ինձ, և զօրացուցանէ
զՀոգի իմ ։ ապա Թէ ոչ՝ ես ոչ էի ատակ Համ
բերել տանջանաց քոց ։

Տրայիանոս ասէ ։ կարծեմ Թէ երկաԹի ի-
ցես և խտացեալ իբրև զսալ ։ ապա Թէ ոչ՝
Հաւանեիր արդեօք, մոմմքեալ ՚ի տանջա-
նացդ, և զոհեիր ցծօց ։ Ագնատիոս ասէ ։
ոչ եԹէ՝ վա՛ զի չզգամ, ժուժկալ լինիմ տան-
ջանացդ, այլ՝ յաղագս սիրոյն ՚ճ և յուսոյ
հանդերձելոց բարեացն ԹեԹև Համարիմ
զցաւս ։ քանզի ոչ Հուր կիզիչ և ոչ ջուր ողո-
ղիչ չինջուցանել կարէցէ երբեք զսէրն իմ՝ որ
առ ՚ճծ ։

Ապա ասէ տրայիանոս ։ բերէք կրակ և

փայտ, և արարեալ կայծակունս՝ տարածեցէք ՚ի վեր զնիգնատիոս. զի գոնեա այնպէս հաւանեալ հրամանիս լիմուք՝ զոհեսցէ ընծոյ։ (Ուր ոմանք ընթեռնուն այսպէս. Ընդ նարեկացւոյն ՚ի մեկն. երփ. ա. 12. Ծնիգնատիոս՝ որ ասաց զնաչեաւն յինքն ունել, այրել հրամայեմ, որ խաչեալն և ս զկնի դորա այրեսցի։) Ինգնատիոս ասաց. Հուրդ քո չիջանուստ ՚ի գիտուէ ձգէ զնս անշէջ հրոյն. և առաժամանակեայդ այդ յուշ առնէ ինձ չմտանել ՚ի յաւիտենական հուրն։ Ասէ տրայիանոս. կարծեմ՝ եթէ կախարդ ես, և վա՛ն այնորիկ արհամարհես զտանջանս. ապա թէ ոչ՝ անասացեալդ արդեօք քո մեզ, այդչափ ՚ի մէնջ չարչարեալ։

Ինգնատիոս ասէ. որք ՚ի գիւմաց փախչին իբրև ՚ի թշնամեաց այ, և զկուռս՝ գարշելիս համարին, զնաւրդ իցեն կախարդք. ուստի ոչ մեք, այլ դուք՝ որ զնոսայն պաշտէք, արժանի էք այնպիսի թշնամանաց. այլ մեզ օրէնս եդեալ է՝ զկախարդս չթողուլ կենդանի, և զթովիչս և զհմայօղս չապրեցուցանել. և զիրս և ս զայնպիսի բժժագործացն այրել սովոր եմք իբրև զապականիչս. և զնայս այսպէս է, ոչ եմ ես կախարդ, այլ դուք երկրպագուք դիւաց։

Տրայիանոս ասէ. ընծայիքն, զնս վաստակեցի ՚ի քեզ ինգնատիէ, և չգիտեմ թէ որպիսի տանջանօք խոշտանգեցից զքեզ, զնս հաւանեսցիս հրամանաց իմոց։ Պէնկի ետ սէնն ինգնատիոս. մի՛ աշխատիր ոչ թէր. այլ թէ կամիս,

միս, ի հուր մատնեա, կամ սուսերաւ կտրեա, կամ յանդունդս ընկեա, կամ գազանաց արկ. զի գիտասցես՝ թէ ոչինչ յայդցանէ դժնդակ երևի ինձ վնս սիրոյն Այ: Ասացաւ Թագաւորն և ասէ. որո՞ւմ յուսոյ սպասես իգնատիէ՝ մեռանելով ի չարչարանս, որում համբերեսդ: Աղնատիոս ասէ. որք զԱստ ոչ գիտեն, և բարեացն՝ որ յայ պատրաստեալ պահի բարեպաշտացն՝ ոչ սպասեն, այնպիսիքն համարին՝ եթէ աստ իցէ գոյաւորութիւն իրաց՝ իբրև զանբան անասունս, վայ ոչինչ լաւագոյն յետ աստի վախճանելոյն վարկանին: Ասէ մեք՝ որ գիտեմք զբարեպաշտութիւնն, հաւատամք քաջալերուք, և գիտեմք, եթէ յետ վախճանին միւսանգամ յարուցեալք՝ յաւիրժ կեանս ընդունելոյ եմք ի քո յՅ՝ անպակաս և անյաջորդ. յորմէ փախուցեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: Տրայիանոս ասաց. ես լուծանեմ զպաշտօնդ ձեր և զհերձուածդ, և ուսուցանեմ զգաստանալ և չկալ հակառակ հրամանաց հռովմայեցւոց:

Աղնատիոս ասէ. և ով կարէ լուծանել զշինուածն Այ. քանզի թէև ձեռնարկիցէ ոք, ոչինչ կարէ վնասել, բայց միայն ածամարտ լինել: Ասէ քրիստոնեութիւն ոչ միայն չլուծանի ի մարդկանէ, այլ օր քան զօր յաճումն և ի մեծութիւն գայ զօրութեանն քոյ. և նոյնպիսի պայծառութիւք և պարկեշտութիւք լուսաւորեալ ճառագայթիւք ևս քան զևս յառաջ եկեսցէ. քանզի լցցի՛ ասէ գիր՝ ամ երկիր ծանօ-

թուքն ՚ի իբրև զջուրս բազումս , որ ծաղկեն զծովս ։ Ա. յլ գու ո՛չ բարւոք առնես ո՛վ թիֆլ՝ հերձուած կոչելով զքրիստոնէութի՛ն . քանզի քրիստոնէութի՛ն և գիտուի՛ն Հնմարիտն ՚այ և միածնի որդւոյ նո՛ր , և անձառ ըս մարմնոյ տնտեսուե՛նն , և խորհրդոց կրօնից բարեաց ուղղուի՛ , որք նուի՛րեալ են պնշուշտ և

գեղեցիկ պաշտամանս մերում ։

Օ՜ո՛վ ոք ՚ի մէնջ գիտացեր պատերազմանե՛ր , կի՛ խառնակամ , և կի՛ անհնազանդ իշխանուե՛ց և պետուե՛ց , ցորչափ անվտանգ և հնազանդուի՛ , և ո՛չ հակառակ ՚այ . և միաբանուի՛ մեր և խաղաղութի՛ւն և սիրով կեալ առ միմեանս , և հպատակել ՚երանց մարմնաւորաց՝ ՚ած պաշտուի՛ հանդերձ . քանզի հատուցանեմք զպարտս իւրաքանչիւր . որում ըզհարկ՝ զհարկն , որում զմաքս՝ զմաքսն . որում զերկիւղ՝ զերկիւղն , որում զպատի՛ւ՝ զպատի՛ւն . և փուճամբ չպարտիլ մինչ ումեք , բայց զմիմեանս սիրել . վ՚ի զի ուսեալ է մեր ՚ի ՚ած մի՛ զմերձաւորս միայն սիրել , այլև զթշնամիս . և բարի առնել ատելեաց , և աղօթս առնել ՚ի վե՛ր նեղչաց և հալածչաց ։

Օ՜ ի՞նչ ընդդիմացաւ քեզ կարգս մեր , ա՛ղէ ասա՛ , յորմէ հետէ սկսաւ քրիստոնէութե՛ն քարոզուի՛ն , միթէ չար ինչ եղև , և կի՛ խաղմ ինչ գործեցաւ ՚ի հռովմայեցւոց իշխանուե՛ս . ո՛չ բազում իշխանուի՛ք ՚ի մի իշխանութի՛ն փոխեցան ։ Ա. ւ օգոստոս նախնին քո , առ որով վրկիչն մեր ծնաւ՝ ՚ի կուսէն եղեալ մարդ , որ էրն ՚ի սկզբանէ ՚ած բանն , ո՛չ չխուն և

վեց

վեց ամ և ամիս վեց կալաւ զիշխանութիւնդ հռովմայեցւոց միահեծան երրուբ . ոմն և ոչ այլ ոք՝ որ յառաջ քան զնա . ոչ ասպաքէն ամ աղինք հնազանդեցան նմա . և որ յառաջապոյն անխառնուխն էր ազգաց և ատելութիւն առ միմեանս , լուծաւ ՚ի փրկչէն մերոյ գալստեանէ ։

Աինկղիատոն ասէ . այո՛ այդ այդպէս է , ոմն ասացերդ , ի գնատիէ . այլ զայն ցասուցեալ եմք , զի զպաշտօն ճշմոյ մերոյ խափանեաց քեզ ձեր ։ Աղնատիոս ասէ . ոմ պայծառ և փառաւոր ծերակոյտդ , ոմն՝ զբռնաւորութիւն բարբարոսաց հնազանդեցոյց երկն մեր հռովմայեցւոց իշխանութեանս , զոր ածէղէն՝ բանք գաւազան երկաթի կոչեն , նոյնպէս և զբռնութիւն չար և մոլեկան դիւոյ հալածեաց ՚ի մարդկանէ , և զմոլութիւն կռապաշտուն խափանեաց , զմին և զմիայն հրամայելով պաշտել՝ որ է ՚ի վեր ամենեցուն ածծ . և ոչ այսչափ միայն , այլև ՚ի գառն ծառայուէ արիւնարբու և անողորմ ոգւոյ չարաց ազատ կացոյց . վ՚ի զի միշտ մահաբեր սիրելի որդւոյ ձերոյ յօրանայրն դևք , և այլ ևս գնաստուք ։ Ա՚ղէ ասացէք . ոչ ազգային պատերազմաւ շաղախէին զձեզ . ոչ ամենայնէ լինել զձեզ հարկէին , և մերկս մոռանել ՚ի տեսարանն . և զկանայս նոյնպէս մերկացուցանել , և իբրև ՚ի գերութիւն ՚ի ցոյցս շրջեցուցանել պատրաստէին . ոչ արեամբ շաղախէին զերկիր , և զամենեցուն ոգիս հանապազ պղծութիւք պղտորէին ։ Ա՚ղէ հարցէք զսկիւթացիսն , ե-

թէ ոչ արտեմաս կոյս զենուին . թերևս դուք արդեօք յուրասա լինիք ամաչեցեալ վ֊ կուսին , զոր զենուիք կռանոսի . այլև այժմ և սարծին եղբենայիք ՚ի վերայ այնպիսի պղծութեանց և մարդազոհութեանց՝ իբրև ՚ի բարբարոսաց ընկալեալ զայնպիսի չարիս :

Յայնժամ ասէ տրայիանոս . ածովքն , զի զարմանամ ըստ քո շատուսութեանդ . թէպետև զկրօնսդ ոչ գովեմ : Իգնատիոս ասէ . և յիմ իմիք սադտեր զպաշտօնս մեր : Տրայիանոս ասաց . զի արեգական՝ որ ահրն է , երկիր ոչ պագանէք , և ոչ լուսնի՝ որ բուծանէ զնմա : Իգնատիոս . ոչ ոք կամիցի երկիր֊ պագանել արարածոց անկեալոց ըստ փոփոխու֊ թեան . քանզի ծագել յերկիր տօնան մարդ֊ կան , և ոչ յերկրպագուն առնուլ ՚ի ջեռու֊ ցանել զպտուղս կարգեցան , ՚ի պայծառա֊ ցուցանել զտիւն , և ՚ի լուսաւորել զգիշեր . այլև աստեղք երկնից ՚ի նշանակս կարգե֊ ցան և ՚ի ժամանակս և ՚ի շրջանս , և ՚ի մխի֊ թարուն նաւորդաց ՚ի ծովու . և ոչինչ յայտ֊ ցանէ երկրպագուեն արժանի է . ոչ ջուր՝ զոր պոսիդոնն կոչէք , և ոչ հուր՝ զոր հեփես֊ տոսն անուանեցիք , և ոչ օդ՝ զոր հերա ա֊ սացիք , և ոչ երկիր՝ զոր դեմետր կոչեցիք . և ոչ պտուղք նոր . զի այս ամ թէպետև ՚ի դարման մեզ կարգեցան , այլ սակայն ապա֊ կանացուք են և անշունչք :

Տրայիանոս ասէ . ոչ բարւոք ասացի զառա֊ ջինն , եթէ դու ես՝ որ հրապուրեցեր զնմա զարևելեանս չպաշտել զաստծան : Իգնատիոս ասէ .

ասէ. և ցասնուցս ոմն Թէոդոր, զի խրատեմք ոչնչոյն չափագանել երկիւղ, և ոչ պաշտել զնա, այլ՝ զՔրիստոս ասէ, զկենդանին, զարարիչն երկնի և երկրի, և զմիածինն նոր զյիսուս, և զնոքա հոգին. քանզի միայն այս է Քրիստոս գիտութիւն՝ որ ունի և խոստովանի զՔրիստոս ուսուցին. և այսպիսի բարեպաշտ կրօնիւք յօրանայ և յղփանայ մեր վէրսուրիս։ Ա՛յլ հեթանոսաց բազմաձայ անուանծուցին դիւրագայթ է և անվկայ, տարաբերեալ յամէ կողմանց, և յոչնչի վէր անհաստատ կացեալ. ոչ խրատաւանաց յանդիմանուէ մոլար ջոջի։ Օ իարդ արդեօք չիցէ ստաբանութի՝ ձեր խօսքն. զի միանգամ ասէք, եթէ երկոտասան աձք են՝ի վէր ամենեցուն. և միւսանգամ բազմադոյնս քան զնա կարծէք։

Ա՛յ եղև սրտմտութիւն տրայիանոս, և ասէ. ոչ ևս յանձն առնում խօսել քեզ զայդպիսիս, և ոչ համբերեմ ամբարհաւաճութեդ քո. վա՛ զի յոյժ ձաղես զմեզ՝ Քարտարաբանութիւն կամեցեալ յաղթել մեզ։ Ա՛րդ այսու հետև զոհեա. շատ է քեզ Քարտարախօսութիւնդ վա՛ մեր. ապա թէ ոչ՝ միւսանգամ տանջեալ զքեզ, յետոյ դադանայց ևս մատնեցից։ Ագնատիոս ասէ. մինչև յերբ սպառնաս, և ոչ կատարես՝ զոր խոստանաս դ. ես քրիստոնեայ եմ, և ոչ զոհեմ դիւաց չարաց. այլ երկիւղ պագանեմ Քրիստոսին այ միայնոյ՝ հօր ոն մերոյ յերկինս, որ ինորհեաց ինձ զլոյս գիտութե իւրոյ, և եթաց զաչս իմ՝ի նկատումն աքանչելեաց իւրոց. զնա միայն պաշտեմ և

պատ-

պատուհեմ. վ՚ն զի նա է ածծ և ոռ և թիւոր և միայն հզօր։

Ասէ տրայիանոս. հրեղէն պատգարակօք մաշեմ զքեզ, եթէ ոչ զղջանայցես։ Պնա- տիոս ասէ. քարւոք է ոմն թիւոր զղջումն՝ որ վ՚ն չարեաց է. այլ վ՚ն բարեաց՝ ըստ դատա- տանաւ է. քանզի ՚ի լաւագոյնսն ընթանալ պատուիրեալ եմք, և ոչ եթէ ՚ի վատթարա- գոյնսն։ Նարեպաշտուհ ամենևին զուգա- կան յերկրի չիք։

Յայնժամ հրամայեաց տրայիանոս դահճաց, և ասէ. քերեցէք զկողս դորա երկաթի եղն- գամբք. և ասացէք դմա, հաւանեաց լինք- նակալ թիւրին, և զոհեա ստծոյն ըստ հրամա- նի սինկղիտոսին։ Նա երանելին իգնատիոս ասէր. ես ՚ի հրամանէն ոչ երկնչիմ, որ ա- սացն, թէ մի եղիցին քեզ ածք բաց յինէն. և որ զոհեացէ այլոց ստծոց, սատակեսցի։ Սինկղիտոսի և թիւրի ոչ լսեմ և ոչ հաւա- նիմ, եթէ անօրինել ինձ հրամայեն. վ՚ն զի օրէնքն մեր ասեն, թէ ոչ առցես անկն հզօ- րի, և ոչ եղիցիս ըստ բազումն ՚ի չարիս։ Պարձեալ հրաման ետ թիւրն, և ասէ. քա- ցեայ հանդերձ աղիւ՚ արկէք ՚ի վէր վիրաց դո- րա։ Նա՚ւ նոքա վկայն ասէր. ով՚ որ վ՚ն քո՚ խոս- տովանուէն լինի յիս, գիտեմ եթէ վարձուց առնի լինի ինձ. և չարժեն չարչարանք այժ- մեան ժամանակիս զհանդերձեալ փառսն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ։ Տրայիանոս ասաց. ինայեա՚ ՚ի քեզ այր դու, և հրամանաց մե- ծոց հաւանեա. ապա թէ ոչ՝ զառնագոյն ևս տան-

տանջանօք տանջեցից զքեզ ։ Ագնատիոս ա-
սաց . և ով մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն քրի .
նեզուն՝ կամ անձկուն կամ հալածումն կամ սով
կամ սուր , վիշտք կամ մերկութի . հաւատամ
թէ ոչ կեանք և ոչ մահ մեկնել զիս ՚ի բարե-
պաշտուէն կարիցէ՝ զվստահ եղեալս ՚ի զօ-
րութի նմա ։

Ասէ Թէոդոր . կարծեմ եթէ յաղթեմ ինձ
ժուժկալութիւք քո ։ Ճաղգեացն ասէ . ոչ
կարծեմ , այլ՝ հաւատամ , թէ յաղթեցի և
յաղթեմ . զի գիտացես՝ եթէ քանի ինչ կ
՚ի մէջ բարեպաշտութենն և ամբարշտութէ ։
Յայնժամ ասէ Թագաւորն . առէք զդա , և
շղթայս զդուխս արկեալ , և զոտսն ՚ի կոձեղ
պնդեալ՝ զդուշութիւք պահեցէք ՚ի ներքնումն
բանտին . և մի ոք իշխեսցէ տեսանել զդա
ամենևին . և զերիս տիւս և զերիս գիշերս
մի հայ կերիցէ և մի ջուր արբցէ . զի յետ ե-
րից աւուրց առցէ զվրէժն՝ որում արժանի է ։
Ինկղիտոն ասաց . և մեք միաբանիմք այդմ
բանի . վա՛ զի զմեզ զամենեսեան Թշնամա-
նեաց հանդերձ Թէրատն . և ոչ հաւանեցաւ
հրամանաց մերոց . այլև վիճեցաւ՝ զանձն իւր
անուանել քրիստոնեայ ։ Եւ իբրև տանկին
զերանելի հայրապետն , ասէր . օրհնեա՛լ է
ած և հայր նո մերոյ յիսի քրի , որ բազում
գԹուէք իւրով արժանի արար զիս հաղորդա-
կից լինել չարչարանացն քրի , և վկայ հաւա-
տարիմ ձեմարիտ ածուէ իւրոյ ։ (8)

Եւ յաւուրն երրորդի կոչեցեալ տրայիանոսի
զինկղիտոն , հրաման ետ ածել յառեան
զինք-

զԻգնատիոս , զի տացէ նմա զվէճսն մահա-
բեր . քզի փուճայր ՚ի հայս և ՚ի պարթևս :
Նա իբրև ածաւ սբէն զառաջեաւ , ասէ ցնա
տրայիանոս . ես զարմանամ ընդ քո իրող ,
եթէ զինքդ կաս կենդանի յետ այդչափ
տանջանացդ և սովոյդ . այլ գո՛նեա այժմ
հաւանեաց լինիր . զի Թերևս յառաջիկայ պա-
տուհասեդ ապրեսցիս , և մեր սիրելի լիցիս
յայսմ հետէ :
Ասէ ետ ածաղբեացն Իգնատիոս , և ասէ
աներկիւղ համարձակութիւբ ցԹշնէրն . Թուի
ինձ , եթէ զկերպարանս մարդոյ ունիս , և
զբարս աղուէսու , որ քծնի ձեռամբն , և նենգ
գէ սրտիբն . և դու մարդասէր քանս լինիս
ստեղծաբանես ՚ի լսելիս իմ, և ՚ի ներքոյ խոր-
հիս առողջ և ոչինչ : Ասդ լուր յայտնապէս,
զի ես մահու այսուհետև փոյթ չառնեմ, և
ոչ զկենացս զայսցանէ հոգամ : Այլ քի ցան-
կամ , որոյ սիրոյ ես փոխանակ եղէց :
Տրայիանոս ասէ . զնաչեանըն առ պոնտացւոյ
պիղատոսիւ ասես : Իգնատիոս ասէ . զայն
ասեմ, որ խաչեաց զմեզ և զգտօղ նր . և
զայմ չարուԹիս դիւաց դատապարտեաց , և
հնազանդեաց ՚ի ներքոյ ոտից այնոցիկ՝ որք
զքն ունին բնակիչ ՚ի սիրտս իւրեանց : Տրա-
յիանոս ասէ . արդ և դու զքն ընդ քիշ ընկերս
ցանես : Իգնատիոս ասաց . այո՛ . քզի գրել
է , Թէ բնակեցայց ՚ի նս և գնացիւ ՚ի նս :
Այնժամ բարկացեալ տրայիանոս՝ վճիռ ետ
և ասէ . Ո՛վ Իգնատիոս՝ որ ասաց յինքեան ու-
նել զնաչեանըն , հրամայեմք կապել , և այն-

պէս

պես ի ձեռն զինուորաց տանել ի մեծ քաղաքն հռոմ. զի անդ առաջի բազմութեն ի տեսիլ և ի զբօսանս նոյ՝ կերակուր լինի գաղանաց։ Այս լուեալ զվճիռն զայն սքին՝ մեծաւ խնդութեբ աղաղակեր և ասեր. Վոհա նամ ղբէն ՝ուր կ՚ի, զի կատարեալ սիրով քո արժանի արարեր զնս պատուոյ առաքելոյն պօղոսի, նոյնպիսի երկաթի կապանօք կապել և ինձ։

Այս զայս ասացեալ՝ հանդերձ մեծաւ ուրախութեբ արկաներ զնուրեաւ զշղթայն. և նախ յաղօթս կացեալ վ՚ն եկեղեցւոյն. և զնա հանդերձ արտասուօբ յանձն արարեալ ՝ՙն, իբրև զնոյ նշանաւոր՝ գեղեցիկ հօտի առաջնորդ՝՚՚ի գազանաբարոյ և՚ի դժնդակ զինուորացայ իբրև՚ի գայլոյ յափշտակեալ լիներ, զի ածցի՚ի մեծն հռոմ՝ դէշ գազանաց լինել։ Մեծաւ յօժարութբ այնուհետև և ուրախութբ և ցանկութբ որ՚ի չարչարանս, իջեալ յանտիոքէ՚ի սելևկիա, անտի նաւեր. և հասեալ՚ի զմիւռնացւոց քաղաքն հանդերձ բազում տառապանօք՝ ելաներ՚ի նաւն, և մեծաւ ուրախութբ փութայր առ սքն պօղիկարպոս եպն զմիւռնիոյ՝ տեսանել զնա. քանզի եղեալ էին յառաջագոյն աշակերտք սքոյ առաքելոյն յովհաննու։

Այս որ մտեալ, և հաղորդել ըն նմա հոգևոր շնորհացն, և պարծեցեալ՚ի կապանն, ա՛ղաչեր զնա Ճգնակից լինել՚ի կապանս նմա աղօթիւք, զի կատարեցի փափաքումն կամաց իւրոց. նոյնպէս և զնմ եկեղեցիսն ա-

ղա-

զաչերը միաբան զնոյն առնել : Ընդունէին զնա այնու հետև եկեղեցիքն ամենայնի՝ ի ձեռն եպսկ. երիցանց և սարկաւագաց. քանզի փութային ամենեքեան տեսանել զնա, զի թերևս աւգեն՝ ի նմանէ չնորհս լինէ հոգևորս : Եւ նա դարձեալ աղաչէր զամենեսեան, առաւել ևս զքէն պօղիկարպոս զուսումնակիցն իւր՝ ամենեքումբք հանդերձ աղօթս առնել, զի վաղվաղակի՝ ի ձեռն գասանց աներևոյթ չՀեռս եղեալ՝ երևեսցի առաջի երեսացն քրի. և զայս այսպէս ասէր՝ վկայութիւն դնելով ամենեցուն, թէ այնչափ չիս ցուցանէք կատարել զսէրն քրի, որչափ աղօթիւք ձերովք փութայք՝ ի կատարումն իմոյ Հգնուես. մինչև լինիցի ինձ զերկնաւորացն բուռն Հարկանել՝ ի ձեռն բարւոք խոստովանութեանն :

Եւ ինքն տայր վարձս փոխարինաց եկեղեցեացն՝ որ ընդ առաջ գային նմա՝ ի ձեռն առաջնորդաց, չնորհակալութիւն առանձին թղթովք. յորս գրէր հոգևոր մխիթարութիւն և ածելոյն վերպատուիրէր՝ ամենայն ուրախութիւք՝ ի ձեռն չնորհացն՝ որ բղխեր՝ ի նմանէ. և յամի՝ ի թուղթս արձանագրէր զանձկալին իւր կոչումն՝ յայտարար միութեանն ընդ այլ սիրով, էպանոփոս ընդեղորս, այս է ածականիր, կամ ածականացն և կիսածականեաց :

Եւ իբրև տեսանէր, թէ ամենեքեան մեծաւ գթալից սիրով և խնամով չնորհաւ փակին, երկնչէր թէ գուցէ բազում գութ սիրոյն՝ որ՝ ի նոցանէ, զիոյթ նոր որ՝ ի քո և զյա-

ժա-

ժարուվճին լուծանիցէ. վա՛ զի դուռն բարի բացեալ էր նմա մարտիրոսուե. և խիթայր՝ զի մի արդեօք ազաչաւորք ըն մէջ մտցեն՝ ի հաւատացելոց առ հեթանոսս վա՛ ապրեցու- ցանելոյ զնա։ Այս զի զայս կարծիս առաւել ունէր զեկեղեցւոյն հռովմայ, յո՛ դեմ եդեալ էր երթալ և անդ կատարիլ, նմին իրի գրէր վաղագոյն և առ հռովմայեցիսն՝ ի զմիւռ- նիոյ, աղաչելով զամենեսեան, զի մի նորա բարի առաջարկուվճէն խափանիչ ոք լինիցի։ Այս էր պատճէն այնր թղթոյ օրինակ զայս։

* Ագնատիոս, որ և Աստուածատ, գտողիդ զողորմածէ մեծուբ բարձրելոյ հօր, և յի քէ միածնի նր որդւոյ՝ եկեղեցւոյդ սիրեցելոյ և լուսաւորելոյ կամաք այնորիկ, որ կամեցաւ զնա՝ որ էնչ է ըն հաւատոյ և ըն սիրոյ յի քէ ոչ մերոյ, (այն սէր՝) որ նստի նախագահ՝ ի տեղւոջ վայրիդ հռովմայեցւոց, արժանի ոչ, արժանի վայելչուե, արժանի երանուե, ար- ժանի գովուվճէ, արժանի դիպելոյ (տենչա- նացն), արժանի սրբուե, և առաջնորդ սի- րոյ, քրօրէն (կամ քեանուն), հայրանուն. զոր և ողջունեմ յանուն յի քէ որդւոյն հօր։ Ասացելոց մարգիով և հոգւով յաւմ պատ- ուէիրանս նր, լցելոց ընդհօքն ոչ աներկևա- նուբ, և պարզելոց յաւմ օտար գուռնակէ, ՚ի ոչ յո քն ոչ մեր անարատուվճէ՝ յոյժ ուրախ լինել։

Ա՛ն զի աղօթս արարէք առ ոչ՝ հասի խըն- դրուճածոցս առ ՚ի տեսանել զձեր արժանա- տես (9) երեսք (կամ զձեր՝ ոչ արժանի երեսս).

որ-

որչափ խնդրեցի, առաւել ևս առի. քանզի կապեալ՝ի քո յո՝ յուսամ ողջոյն տալ ձեզ, եթէ կամք իցեն ոմն արժանի լինել ինձ՝ի վախճանն հասանել: Քանզի սկիզբնս յոյժ աջողակ է, եթէ և վախճանին ևս ընդհայց հանդիպեցայց, և զվիճակն իմ առանց խափանելոյ առիցս: Այլ երկնչիմ՝ի սիրոյդ ձերմէ, գուցէ մեծասիցէ ինչ ինձ. զի ձեզ դիւրին է՝ զոր ինչ կամիքդ՝ առնել. այլ ինձ դժուարին է միւսանգամ այ պատահել, եթէ այժմ խնայիցէք դուք յիս:

Կամիմ զձեզ մարդահաճոյս լինել, այլ մանաւանդ աճահաճոյս, ոչ և էքդ իսկ. քզի ոչ երբէք ժամանակ գտանելոց եմ այսպիսի՝ պատահել այ. և ոչ դուք՝ լաւագոյն գործոյ ունիք գործօնեայս վերադրել, եթէ լուիցէք: Քանզի եթէ լռեք յինէն, ես բան եմ (կամ ես այ եմ). ապա եթէ ցանկայք մարմնոյս իմոյ, դարձեալ եղէց սոսկ ձայն (կամ դարձեալ եղէց ընթացօղ): Այդ ոչ առաւել ինչ ունիցիք չնորհել ինձ քան զայս, զի եղէց սպանդ՝ մինչդեռ սեղանն պատրաստ է. զի սիրով բակ առեալ ձեր՝ երդիցէք հօր՝ի ձեռն յանքան, և ասիցէք, եթէ զնոյն ասուրոց արժանի սրար ածծ՝ յարևմուտս գտանիլ, յարևելից կոչեցեալ. քարուք լմն է մտանել յՅեհս առ ածծ, զի՝ի նա ծագեցից (կամ եղէց արևելք):

Ոչ երբէք նախանձեցայք ընդ մեզ, և ոչ զայլս ուսուցիք. և արդ ես կամիմ զայն հաստատեալ՝ զոր ձեր ուսեալն է, և այլոց պատուիրեք:

քեք : Ա՛ւրհնեայ այժ իմ զբեղեցիկ ինձ ներքոյ և արտաքոյ , զի մի՛ ասացից միայն , այլև կատարեցայց . և ոչ անուշանեցայց միայն քրիստոնեայ ; այլև գտայց . զի եթէ գտայց , և անուշանիլ կարեմ : Ա՛ւ յայնժամ հաւատացեալ կարեմ լինել , յորժամ ձի չերևիմ : Ա՛յնչ բարւոք է երևեալն . քանզի ածին մեր յա՛ քո՛ ի հայր գոլով մանաւանդ երևի : Ա՛յ հրապուրանաց է գործ , այլ մեծուլե՛ք քրիստոնէութենն , յորժամ ատիցի չ՚էս :

Ա՛յս գրեմ ձամ եկեղեցեաց , և պատուիրեմ ամենեցուն , թէ չօժարուք մեռանիմ վ՚ա՛յ. միայն եթէ դուք ոչ արդելուցուք : Ա՛ղաչեմ զձեզ , մի՛ ընվայրահար (կամ տարադէպ) խնամս ցուցանել չիս . թո՛յլ տուք ինձ գազանակուր լինել , որով է պատահել ա՛յ : Յորեան եմ ես ա՛յ , և ժանեօք գազանաց աղացեալ լինիմ.

զի հաց սքի գտայց ա՛յ :

Ա՛ղաքեցէ՛ք զգազանսն , զի գերեզման ինձ լինիցին . և մի՛ թողցեն ի մարմնոց իմոց . զի մի՛ ննջեցեալ իմ՝ ծանր ումեք երևեցայց : Յայնժամ եղէց արդարև աշակերտ չի՛ քո՛ի , չորժամ և զմարմինս իմ՚ ոչ տեսցէ : Ա՛ղաչեցէ՛ք զնո՛ր վ՚ա՛ իմ , զի ի՛ ձեռն գործոցս այսոցիկ պատարագ գտայց ա՛յ : Ա՛յ եթէ երբէք զպետրոս և զպօղոս հրաման տամ ձեզ . քանզի նո՛ք՝ առաքեալք , և ես՝ դաւոսպարտ . նո՛ք ազատք , և ես մինչև ցայժմ ծառայ . այլ եթէ չարչարեցայց , ազատ չի՛ քո՛ի գտայց . զի չարեայց ընդ նմա ի՛ մեռելոց ազատացէ :

Ա՛յժմ ուսանիմ կապանօքս՝ չգանկալ իմիք :

Յաստրուց մինչև ՚ի հռոմ ըստ գազանս մարտընչիմ՝ ի ցամաքի և ՚ի ծովու, զցայգ և զզ-ցերեկ կապել ըստ տասն ընձու (կամ ընձառիւծու), որ են գազք գինուորաց. որոց երախտիս լինիցի գտեալ՝ ևս չարագոյն լինիմ. այլ ևս ՚ի նոցա անիրաւութենն առաւել և ուսանիմ (կամ հրահանգիմ). այլ ոչ եթէ այսու արդարանամ։ Այլ զի ինձ՝ զի օգտիմ՝ ի գազանացն, որ պատրաստեալ մնան ինձ. զոր և աղօթս առնեմ, զի արագ [10] գտցին. և աղերսեմ, զի կերիցեն զինս. որք երկուցեալք յոմանց՝ ոչ մերձեցան ՚ի նմա. այլ ես բռնագատեցից, թէև նք ոչ կամիցին։

Աղաչեմ՝ արարէք ինձ, ես գիտեմ զօգուտս իմ։ Այժմ սկսանիմ լինել աշակերտ. և կրթիմ չանկալ իմիք, և մի երանել երևելեաց կամ աներևութից. զի չէի քան պատահեցայց։ Դուր և խաչ, և ժողովք գազանաց, կտրումն, բարժանումն, ղրումն ոսկերաց, հատումն անդամոց, աղումն (կամ աղացումն և տրորումն) ամ մարմնոյ, և ամ տանջանք սատանայի եկեսցեն ՚ի վերայ իմ. միայն զի զքո չահեցայց։ Զինչ օգտեսցեն զինս ծագք ծի, և ոչ թէրութիւնն յաւիտենից այսորիկ։ Լաւ է ինձ մեռանել ՚ի քո քան թէրել ՚ի վեր ծագաց երկրի։ Զնա խնդրեմ, որ վասն մեր մեռաւ. զնա կամիմ, որ վասն մեր յարեաւ։ Զնունդն իմ (կամ տոկոսիք և շահն իմ) ՚ի վեր հասեալ կայ. Թողուն՝ արարէք ինձ ելքսարք, մի խափանէք զինս ՚ի կերոյ. կամեցարուք (ըստ այլոց, մի կամիք) ըստ մեռանելն իմ։

Աղնաւորեան աճապղծեաց հայրապետ։

իմ։ Ա.Յ կամեցեալ իմ լինել՝ ձի զիս մի՛ շնորհէք. և մի՛ տարերըք իւիք խաբիք. թո՛յլ տուք ինձ զիա լոյսն առնուլ։ Ա.յժմ մարդ եմ. այլ անդր երթեալ՝ հրեշտակ եղէց։ Հրամայեցէ՛ք ինձ նմանօղ լինել ջարչարատնայ ձեր իմոյ։ Ա՛թէ ոք զնա յինքեան ունի, իմասցի՛ զոր կամիմ. և թողուի՛ շնորհեսցէ ինձ. և ջարչարակից ևս լինի՝ դիտացեալ զվիշտս իմ։

Աչխան ձիս յափշտակել կամի զիս, և զխորհուրդս իմ՝ որ յաճ՝ ապականել ջանայ. արդ՝ մի՛ ոք՝ ի ձէնջ օգնեսցէ նմա. այլ մանաւանդ յիմ կո՛ղմ լերուք. ար է յայ։ Ա՛յ զյա քո՝ ի բերան ունիք, և ցանկայք ձի։ Ա՛խանձ՝ ի ձեզ մի՛ բնակեսցէ։ Ա՛թէ ես զձեզ եկեալ աղաչեցից (ազատել զիս), մի՛ հաւանիցի՛ք ինձ. այլ մանաւանդ հաւատացէ՛ք ինձ, որով պրեմն առ ձեզ, և ցանկամ մեռանել։ Ամ ցանկուին՝ ի հօրէ է. (ըստ այլոց. իմ ցանկութիւն, կամ՝ սէր խաչելեալ է). և չի՛ք յիս հուր սիրելոյ (օտար ինչ)[11]։ Ո՛ւր կենդանի և ասէ. ե՛կ առ հայր։ Ցանկամ ապականացու կենացս. հացին այ տենչամ, որ է մարմին յաւէտ քաղեալ՝ ի գաւակէ դաւթի. և ըմպելոյ ցանկամ՝ արեան նր, որ է սերմանական, (և կեանք յաւիտենական)։ Ոչ ևս կամիմ ըստ մարդկան կեալ. և այդ է՝ զոր եթէ դուք կամիցիք. արդ կամեցարուք, զի և դուք օգնութիւն գտանիցէք, (կամ զի և դուք կամեցեալք լինիցիք, ար ըստ լինք)։

Օ ոդ ՚ի ձեռն սակաւ նշանագրացս խնդրեմ ՚ի ձէնջ , ընդունեցէք զինձ ։ Յայտնեացէ ձեզ յո՛ք քո՛ , եթէ ձշմարիտ ասեմ , անսուտ բերանն՝ որով հայր խօսեցաւ ։ Խնդրեցէք վա՛ղ իմ , զի դիպեցայց (՚ի նպատակ անդր) ։ Ա՛սա մարմնոյ ո՛չ գրեցի ձեզ , այլ՝ ըստ հոգւոյ , և ըստ կամացն Աւ ։ Եթէ չարչարեցայց (ա՛ն նահատակեցայց) , յայտ է եթէ կամեցայք . ապա եթէ խոտան գտայց , յայտնի՛ լիցի՝ եթէ ատեցիք զիս ։

Յիշեցէք յաղօթս ձեր զեկեղեցին՝ որ յաստրիս է . որ փոխանակ իմ այսուհետև Աւ հովուի՛ . միայն յո՛ք այց արասցէ նմա , և սերդ ձեր ։ Ա՛յլ ես ամաչեմ կոչել զիս ոդ ՚ինոցանէ . քանզի չեմ արժանի . քանզի կրտսեր եմ նոցա և տրուպ . այլ յուսամ ողորմութիւն գտանել՝ եթէ Աւ դիպեցայց ։ Աղջոյն տայ ձեզ ոգիս իմ , և սէր Ամէկեղեցեաց , որք ընկալան զիս յանուն յի՛ քի՝ ո՛չ իբրև զուզևոր , քանզի որք էին ինձ անկ ըստ մարմնաւոր ձանապարհի , ըստ քաղաքի քաղաքի յաձախէին (կի՛ առաջնորդէին և յուղարկէին զիս) ։

Պ՚րեմ ձեզ զայս ՚ի զմիւռնիոյ ՚ի ձեռն եփեսացւոյ , որք արժանի են մեծի երանութե՛ ։ Ա՛ըստ ինս և կրոկոս ցանկալի անուն ինձ՝ հանդերձ այլովք ։ Աորք եկին յաստրւոյ մինչև ՚ի հռոմ՚ի փառս Աւ , հաւատամ՝ եթէ գիտէք դուք . որոց և ազդ արարէք զմօտաւորութիւնս իմ . քանի ամենեքեան արժանի են Աւ . զորս և արժան է ձեզ ըստ Աւմի հանգուցանել ։ Պ՚րեցի ձեզ զայդ յառաջ քան զինն կաղանդացն

Ա՛րդ այսու օրինակաւ պնդակազմեալ երանելոյն Իգնատիոսի ծաղկեցիլ, որպէս և կամէր, զեղբարան՝ որ ՚ի հռոմ էին, ՚ի ճեռն Թղթոյ, Թէպէտև նք ոչ կամէին (զրկիլ ՚ի նմանէ), մոռաներ ՚ի նաւ այնուհետև ՚ի ըզմիւռնիոյ, և յառաջակայ ուղին խաղայր. մանաւանդ զի շտապէին և զինուորքն զքաջազգեաան՝ ժամանել հանդիսի խաղուն ՚ի մեծ քաղաքն. զի յանդիման հռոմայեցւոցն՝ կերակուր անկեալ վայրենի գազանաց՝ արդարուե պատկացն արժանասցի ՚ի ճեռն այնպիսի հասեալ ՚ի տրովադա, և իջեալ ՚ի նոր քաղաք (որ և նեապօլիս ծովեզերեայ քաղաք Թրակիոյ և մակեդոնիոյ), անցաներ (ըստ փիլիպպոս և) ըստ մակեդոնիա հետևակ ըստ ցամաքն. մինչև հասանել նմա յեպիդամնոս քաղաք (որ է դիւրաքիոն՝ առ երի եպիրոտասյ) առ ծովեզերօքն։ Եւ անդ գտեալ նաւ մի՝ նաւեր ըստ անդրիական համատարածն. և հասեալ ՚ի տիւռահական (որ և տիւռենեան ծով), անցաներ և ըստ կղզիս բազումս (ըստ նեղուցն սիկիլիոյ և նեապօլսոյ իտալիոյ)։ Եւ իբրև երևեր պատիոզոս (կիպռուտէոլի), նաւ կամեր ելանել, և ըստ շաւիղս գնալ պօղոսի առաքելոյ. այլ անկեալ զնորօք բռնութիւն ուժգին հողմոյ՝ ոչ տայր թոյլ նաւին յառա-

ջիկայն խաղալ · այլ անդրէն ըլ կրունկին բե-
ըեր :

Այս նոր երանելիք զսեր եղբարցն՝ որ ի տեղիան յայնոսիկ էին , այնպէս անցանէր առ նոքօք-ապա դիպեալ (ասէ գրիչն ուղեկից) զօրն և զգիշերն ամ աջողակ հողմոյ՝ զառաջի եդեալ Ձանապարհն վճարեաք մեք ակամայ · վն զի մորմոքեաք զանջատուին սքէյն ի մէնջ (ընդ փութով հասանելն մեր նովաւ հանդերձ ի հռոմ) : Այլ նոր աղօթիքն յանկ ելանէին · վասն զի փութայր վաղվաղակի հրաժարել յՁեզ · զի ժամանեսցէ առ Ներն՝ զոր սիրէր : Այս հասեալ ի նաւահանգիստն հռոմայեց · ասց՝ յորժամ խաղն մօտ էր ի վախճանիլ , զինուորքն տատամսէին վասն յամելոյն , և շտապ հասուցանէին ի վէր սքէյն : Ասէ երա-նելի Ենգան ուրախութիւք լսեր տագնապոլացն · և յարուցեալ անտի ըլ այգն ըլ առաւօտն ի սեղանոջէն , որ կոչեր պորտոս (այն է բօու-դուս , ըր նաւահանգիստ՝ մօտ յոստիա) , պա-տահեաք եղբարցն (որ ի հռոմի) · քանզի լուեալ էր նոցա զհամբաւ սքէյն , և գայլին ըլ-առաջ մեծաւ երկիւղիւ : Ուրախութիւք ուրախ էին , զի արժանի լինէին տեսլեան քոազգե-ցին · և երկնչէին , զի ի մահ էկեալ էր այն պիսի այր · և նա պատուիրեր ամենեցուն ի խաղաղութեն կալ :

Այլ նոքա եռային յոյժ ջերմութիք վն նր · և կամէին զադարեցուցանել զամբոխն հեթա-նոսաց , զի մի կորուսանիցեն զսքէն : Ասէ նր դիտացեալ զխորհուրդս նոց հոգւովն , ամե-

նե-

նեցուն ողջոյն տուեալ՝ խնդրեր ի նոցանէ
ղձմարիտ սէրն. և առաւելագոյն ևս քան
զթղթոյն բանս խօսեալ ընդ նմա՝ հաւանեցու-
ցանէր չնախանձել փութացեալոյն առ նոր։
Ապա ապա ծունր եդեալ հանդերձ եղ-
բարբքն ամենեքումբք՝ աղաչէր զտրդին այ
վն եկեղեցեաց, և վն դադարման հալածա-
նացն, և վն սիրոյ եղբարցն որ առ միմեանս։
Փութայր այնուհետև մտանել ի տեսարանն.
և կացեալ ի մէջ ամբոխին՝ ասէր այսպէս.
Ընդ հռոմայեցիք՝ տեսօղք հանդիսիս այսո-
րիկ, ոչ չար գործոց աղագաւ, և ոչ վն մեսա
իրիք զայս կիրս կրեմ, այլ՝ վն բարեպաշտու-
թե. քանզի ցորեան եմ ես, և ատամամբք
գազանաց մանրիմ, զի գտայց հաց սբ։
Եւ յասել նր զայս՝ գազանաց վայրենեաց
արկանէին զնա անաձ դահիճքն. և ընթա-
ցեալ երկու առիւծք հեղձուցանէին զերա-
նելին. և ծախեցին զծոբ մարմին նորա։ Եւ
ընդյոյր ցանկուն նր՝ ըստ ասելոյ աճեղէն գրոց,
եթէ ցանկուն արգարոց ընդունելի է. քանզի
կամէր՝ եթէ ծախեսցի ի գազանաց, և մի
ծանր լիցի ամփոփուածն մարմնոյ նր եղբարցն.
և ըստ փափաքանաց յօժարուէ նր՝ նոյնպէս և
կատարեաց ածն. քանզի ծախեալ գազանացն
զամ մարմին սբյն՝ սակաւ ինչ ի մեծամեծ
ոսկերացն Թողին. զոր յետ այնորիկ տարան
յանտիոքացւոց քաղաքն, զանձ անհամեմատ
ի վկայութիւն չնորհաց սբյ եկեղեցւոյն ունե-
ցեալ։

Ապա ի ժամուն ժողովարարեալ սբց եղ-

բարցն՝ որ ՚ի հնում էին, որոց և գրեաց իսկ
երանելին՝ զի մի խաւխանիչ լինիցին նոր բար-
ւոյ առաջարկուեն, և բարձեալ զնշխարս սքեան՝
եդին ՚ի տեղւոջ միում. յորում լինէր ժողո-
վելոց ՚ի միասին օրհնել զնա և զորդի նորա
Մաածին և զսքեա հոգին՝ ՚ի յիշատակ վախճանի
սքեայ եպիսկոպոսի և վկայի. քանզի և յիշա-
տակ արդարոցն՝ գովեստ է, առաքելոյն ա-
սաց.

Եւ մինչդեռ մեք զցայգն հսկէաք հանդերձ
արտասուօք, և ատէպ ատէպ ծունր եդեալ
աղաչէաք զեր հանդերձ խնդրուածովք, զի
մխիթարեսցէ զտկարուեիս մեր, սակաւիկ մի
ներհեցաք: Եւ ահա ոմանք տեսանէին զե-
րանելին, զի փարէր զմեօք. և ոմանք գար-
ձեալ՝ զի ըստ մեզ յաղթեա կայր. և այլք տե-
սանէին, զի կայր առաջի նոն, և զքերտն
ջնջէր երբեմն՚ի մեծէ աշխատութէ եկեալ, և
նմա յանդիման եղեալ: Եւ զայն տեսեալ՝
մեծաւ ուրախութէ ընուին ամենեքեան, իմա-
ցեալ զբարւն և զպարմանալի յայտնուէն. և
երանէին զամենագով սքեն: (Նործեցաւ իրա
այս յառաջ քան զինն (ըստ զերեքատասան)
կաղանդայն յունվարի (այն է դեկտեմբերի.
24. կամ 20. ոմն գնի և ՚ի խորապրի Ճառընտ-
րին:) (12)

Յայս վայր առաջին վկայաբանն ակնատես
հանդերձ գործակցօք իւրովք. յորս յանուանէ
նէ յիշատակին ՚ի Թուղթն նգնատիոսի առ
զմիւռնացիս երեքին սքե եւկեղեց ըստ սքեայ յերկ-
րէն սատրուոց՚ի հռոմ, փիլոն սարկաւագ կե-
լե-

Լիկեցի, գայիոս, և ազաթոպոս։ Ո՞ սոցայ գրուածի երկրորդեալ ղկնի և այլ եկեղեցիք՝ սիրեցին առ փափաքօղս վկայաբանուե՛ ածաղեցին ի գնատիոսի. զոր և օրինակեցին ոմանք աւելով, ոչ է և օրինակս մեր թարգմանեալ՝ի յունէ, և այլք հաւատոտելով։ Քաղէ զնոյն և եւսեբիոս յեկեղեցական պատմուե (գ. 33, կ՛ 36). և յաւելու՝ի հատուածի տատուածի և զառաջինկայդ հատուածի, որ գտանի և՝ի ձառընտրի մերում։

*Կ՛ուտե զնոր վկայուին և երենիոս եպս զաւդոն քաղաքի. (այն է սքեն երանոս՝ հետևօղ առաքելոց կոչեցեալ՝ եպս զուգդոնայ՝ի գաղղիա). այլև զթուղթ նոր յիշէ և ասէ այսպես.

*Ա՛սաց ոմն՝ի մերոց՝ որ վեռ վկայուե այ դատապարտեցաւ գազանաց, եթէ ցորեան եմ ես, և ատամամբք գազանաց աղամ (կամ՝ի ժանիս գազանաց աղացեալ լինիմ), զի գըտայց հաց սքե։ || Եւ պօղիկարպոս եպս զմըրնայեցոց քաղաքին յիշէ, և ասէ զայսոսիկ՝ի թղթին՝ զոր փիլիպեցւոցն գրեաց. *Կ՛ուզ աղաչեմ զամենեսեան զձեզ՝ հաւանել բանիս արդարուե, և ձգնել ատանալ զայմ համբերուե. զոր և տեսիք աչօք ձերովք՝ ոչ միայն յերանելոջն իգնատիէ, և՝ի զոսիմոս և՝ի հռուփոս, այլև յայլ սքս՝ որ եղեն՝ի ձէնջ, և՝ի նոյն ինքն՝ի պօղոս, և յայլ առաքեալս. զմտաւ ածեալ, թէ սոքա ամենեքեան ոչ ընթացան և կամ՝ի զուր վաստակեցին, այլ՝ հաւատովք և արդարուքք վարեցան. զի հասցեն խոստացելոց աւետեացն,

զոր

զոր պատրաստեաց նոյ փրկիչն յիւ. որում և չարչարակիցն եղեն. քանզի ոչ զայժմու յաւիտեանս, այլ զքո սիրեցին, որ վա՛ն նոյ մեռաւ և յարեաւ. . . . Ա՛ռաքեցաք առ ձեզ և զԹուղթս, զոր գրեալ էր առ մեզ երանելոյն իգնատեայ. ոնո՛ր և պատուիրեցիք մեզ. զոր ընթերցեալ ձեր՝ գիտեմ զի յոյժ ուրախասջիք ||:

Ո՛վ կնի բանիցս պօղիկարպոսի՝ յարէ եւսեբի. * Ա՛յն ինչ՝ որ վասն սրբոյն իգնատեայ էր, և վկայուե՛ նը, մինչև ցայս վայր: Յաջորդեր զեպիսուին անտիոքայ հերոն ||: Նոկ յետ այսց եւսեբեան հատուածոց՝ դարձեալ՝ի վե՛ր բերէ Ճառընտիրն իբրև՝ի բերանոյ բուն վկայաբանին այսպէս. * Յիշատակ ածեսեր և առաքինւոյ նահատակին իգնատեայ՝ի հրոտից ամոյ, որ օր մուտ է, (ըստ յն. դեկտ. ի.) յայտ արարաք ձեզ և զօրն. զի՝ի ժամանակի վկայուեն ժողովեալք հաղորդեսցուք սրբոյ և առաքինւոյ նահատակի և վկային քրի. որ կոխեաց զնայթոց սատանայի, և կատարեաց զքնասեր և զցանկալի ընթացս իւր քրիւ՛ յիւ՛ տէր մերում. որում փառք և զօրութի՛ն հանդերձ հարբ և հոգւովն սրբվ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ||:

Ա՛ւրուեթ սրբոյն իգնատիոսի յիշատակե՛ի՝ի սրբոյն պօղիկարպոսէ, այն է գրեալն առ զմիւռնացիս՝ի տրովադայ, կայ՝ի մատենադարանի առաքելական հարց. ոնո՛ր և Թուղթ նո՛ր առ հռոմայեցիս յառաջ բերեալն՝ի կարգի վկայաբանուեա. ը որս և այլ Թուղթք առ

եփե-

եւ եւս ացիս, առ մագնեսացիս, առ տրալա-
սիս, առ փիղադեղփիացիս, և առ պօղիկար-
պոս ուրոյն. զորս մի առ մի նշանակէ և եւ-
սեբիոս։

Վասն փոխադրութեան նշխարաց սրբոյն Յովհաննէսի Ճաշոցին Հայրապետի։

Ա՛, ախկին փոխադրութեն սրբ ոսկերաց մնա-
ցեալոց՝ ի տեսարանն Հռոմայ՝ ի ժա-
նեաց առիւծուց, և ամփոփելոց՝ ի ձեռն եղ-
բարց Հռոմայեցւոց, ըստ ականատես վկայա-
բանին նշանակեցաւ վերագոյնդ. իբր զի յետ
այնորիկ տարեալ եղեն յաթոռ նոր յանտիոք.
և այս ըստ ոմանց՝ եղև՝ ի յաջորդ ամի կատար-
մանն սրբոյն։ Այլ և հերոնիմոս գրէ յաւուրս
իւր (յղ. եկեղ. Ծաբենադր. գլ. ծղ), * Նշխարք
մարմնոյ նոր եղեալ կան յանտիոք արտաքոյ
դաւինիդեան դրանն՝ ի քնարանի ‖։ Այր և
բերանն ոսկի յովհան՝ ի քահանայութե իւրում
խօսեցաւ Ճառ ներբողական՝ ի վեր Ճգազ-
դեաց հայրապետիս. ոչ է տեսանել՝ ի կար-
գի գործոց նր. ուր յետ յիշատակելոյ զկա-
տարումն՝ ի հռոմ, ՝ի վեր բերէ։

* Ընդ իբրև եւս ելոյծ անդանօր զկեանս, մա-
նաւանդ թէ յորժամ յերկինս՝ ի վեր եւ,
դարձաւ անդրէն պսակել. քանզի և այս այ
եղև տնտեսութե, վերստին զնա առ մեզ դար-
ձուցանել, և քաղաքակցաց շնորհել զվկայն։
Քանզի այն (այ հռոմ) զնր կաթել արիւնն
ընկալաւ. իսկ դուք նշխարօքն պատուեցայք։

Դուք

Պատուք եպիսկոպոսքն Հրաժուեցայք, նք Հրաժուե-
ցան վկայութիւն։ Պոքա տեսին մրցեալ և
յաղթօղ գտեալ և պսակեալ, դուք Հանա-
պազ զնա ընդ ձեզ ունիք։ Պա փոքր մի ժա-
մանակ Հեռացոյց զնա ի ձինջ ոճծ, և մեծ
ևս փառաք զնա ձեզ ընդՀեաց... Պաքե-
ցիք եպս, և ընկալայք մարտիրոս.... Պրա-
նելիս այս իգնատիոս զառ ինքն եկեալ՝ օրՀ-
նութիք, Համարձակուիք, զոՀարիմուն մտօք,
և բաղում արութիք լցեալս գարձուցանէ ի
տունս իւրեանց։ Պս արդ մի այսօր միայն,
այլև օր ըստ օրէ առ նա դիմեսցուք, զՀոգևո-
րականս ի նմանէ քաղելով զպտուղս. Քզի
կ և կ մատուցելոյն այսր Հաւատով՝ մեծա-
մեծս պտղաբերել բարիս. զի ոչ մարմինքն
միայն, այլև նոքին իսկ դիրք սբցն լի են Հո-
գևորական ընծայօք.... Պ ով յորդորեմ զա-
մենեսին զձեզ, եթէ ի Հռոմայ տկարուէ ոք
իցէ, եթէ ի հիւանդուիս, եթէ ի թշուա-
ռուիս, և եթէ յայլ ինչ կենցաղական ծան-
րուիս, և եթէ ի մեզացն ծանրաբեռնուիս,
Հաւատով այսր մատիցէ, և զայն ամ՝ի բաց
դնիցէ, և բաղմաւ գարձցի ուրախուք, ան-
դորրագոյն զկիզ մտացն գործեալ՝ի տե-
սութիէ ևեթ ||։

Պս ահա վ՛ս առաջին փոխադրութիս նշխա-
րաց սբոյն՝ի Հռոմմայ յանտիոք՝ լինի առան-
ձին տօն յիշատակի առ յոյնս՝ի յունվարի 29.
որ և՝ի մեր յայսմաւուրս կայ նշանակեալ՝ի
յունվարի 30, կամ 29. իսկ լատինք՝ի դեկ-
տեմբերի 17. առնեն զայս յիշատակ, մօտ՝ի
կա-

կատարումն նը՝ որ եղև ՚ի դեկտ. 20. զի լինքեանք զկատարումն ստանեն ՚ի փետր. 1։ Նրկրորդ փոխադրուն եղև նշխարաց սբ̃յն՝ փոքր մի յետոյ ՚ք զաւուրս ոսկեբերանի յաւուրս Թէոդոսի փոքու. զի ՚ի նմին անտիոք քաղաքի կմ՚ յարուճարձանս նը կայր տաճար բախտի, զոր սրբեալ յեկեղեցի յանուն սբ̃յն ՚գնատիոսի՝ անդ հանդուցին ըստ պատուճանական ոսկերս նը. զորմէ այսպէս գրէ եւագրիոս պատմաբանն (՚ա. 16)։ * Յայնժամ և ՚ծարեալն իգնատիոս, այն՝ որ ըստ որում՚ի յովհաննէ հռետորէ այլովքն հանդերձ պատմեալ է, յետ այնորիկ՝ զի կամեցաւ գերեզման ունել զորովհետև գաղանաց ՚ի տեսարանն հռովմայ, և՚ի ձեռն ինացելոց խոշոր ոսկերաց փոխաբերեալ եղև յանտիոք ՚ի քնարանն կոչեցեալ վայր, փոխադրի յետ բազումժամանակաց՝ յորժամ ազդեաց ամենաբարին ՚ած Թէոդոսի՝ զ՚ծագզդեացն մեծ և աս պատուճուք պատուճել, և զտաճարն զերբեմն դիւաց նուիրեալն, որ՚ի քնակչաց բախտ էր անուանեալ, քաջայաղթիս այսմ և վկայի վերագրել. և այնպէս՝ որ յառաջն մեհեան էր բախտի, եղև սբ̃ տաճար նուիրական իգնատիոսի, զոր նշխարս նը սրբազան հանդիսիւ ընդ քաղաքամէջն վերբերեալ կառոք, և եդեալ յայն տաճար։ Ասաի և բազմաժողով տօն և մեծահանդէս ուրախութի մինչև ցաւուրս մեր կատարի, զոր և պայծառացոյց մեծավայելուչ քննյապետն գրիգորիոս։ Յորմէ երևի՝ թէ տօն երկուց փոխադրուեց միա-

միացեալ առ անտիոքացիս՝ մեծ ևս փառաւք կատարիւր. մինչև նիկեփորոսի կալիստոսի շփոթ իմանալ զբանս եւագրիոսի, և՛ի մի խառնել զկրկին փոխադրութիւնս:

Նոր երրորդ փոխադրութիւնն եղև ըստ արև. մտեան մատենագրաց, յորժամ յետ ժամանակաց նշխարք սրբոյն յանտիոքայ միւսանգամ բերեալ էին՛ի հռոմ. և այս ոչ՛ի ձեռն արշաւանացն պարսից յանտիոք առ յուստինիանոսիւ՛ի հինգերորդ դարու, ոչ ոմանց թուեցաւ՝ ընդդէմ բանից եւագրիոսի, որ յետ այնր ձեռն գրեր, այլ յաւուրս պատերազմաց հերակլի ընդ պարսից յեօթներորդ դարու. զի յայնժամ յամի տեր ՝ 637, ըստ բարոնիոսի, յերեսաց խառնակուբ արևելից բազմ նշխարք սրբոց փոխադրեցան յարևմուտս: Ընդ որս և պատուական նշխարք սրբոյն իգնատիոսի ՝ածաղգեաց հայրապետի բերեալ եղան՛ի հռոմ յեկեղեցւոջ սրբոյն կղեմայ հռոմայ հայրապետի՝ մեծաւ պատուով, ասէ վկայագիրն հռոմայեցւոց՛ի գեկտ. 17: Այս ապա զանազան մատունք ոսկերաց նոր սիռեցան յայլ եւայլ տաճարս հռոմ քաղաքի, ոչ և՛ի նեապօլիս, և՛ի մեսսանա սիկիլիոյ, և՛ի բեղգիոն, և՛ի գաղղիա, և՛ի գերմանիա, ՛ի կողոնիա, ՛ի մոգունտիա, ՛ի բոյեմիա, և յայլ տեղիս. զորոց չէ տեղւոյս ի առ ի ասել: Այլ և երանելին բեռնարդոս (՛ի ճառն է. ՛ի սաղմ.) ասէ ունել առ իւր մասն՛ի նշխարաց սրբոյն իգնատիոսի: Յաղագս գովեստից յիշատակին զածաղգեացն՝ սրբոյն պօղիկարպոս,

սրբոյն

սքէն դիոնեսիոս , սքէն երանոս , որոգինէս , եւսեբիոս , աթանաս , և այլք ՚ի նախնեաց. յորս հանդիսացեալ է գեղեցիկ ներբող ոսկեբերանի ՚ի վր նորին սքէ հայրապետի լուսոյն քաղաքի ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Իրաւամբք պանծայ Հառընտիր մեր՝ հարազատ և լիակատար վկայաբանուԹիՀ սքէն Իգնատիոսի , որ անշուշտ Հանապազ սկզբնատիպ այլ ամ օրինակաց գտելոց առ այլս՝ իբրև գործ ականատես գործակցաց և ուղեկցաց սքէն , այն ինքն են երիցունք և սարկաւագունք եկեղեցւոյն անտիոքացւոց , որք առաջնակայ գտան ամ անցից ներ , և ապա ՚ի ձև շրջաբերական նամակի գրեցին զպատմուԹիՀ նորա . ոչ և երիցունք զմիւռնացւոց զպատմուԹիՀ սքէն պօղիկարպոսի ։

Իրաւամբք պանծայ ասեմ օրինակ մեր Թարգմանեալ ՚ի յունէ ՚ի հայ ՚ի ձեռն նախնեաց մերոց . վՀ զի է գործ անԹերի և անվրէպ . ուր օրինակք նորին գտեալք այժմ յայլ ազգս կամ են Թերակատար , և կամ վրիպական , խառնիխուռն և շփոԹ . մինչ զի ՚ի բրչափ ինչ ուղղագրի ՚ի նմ յիմաստնոց , առաւել մերձաւորի առ մեր օրինակն . ապա Թէ ոչ՝ ընդ հեռանալն ՚ի մերմէս՝ օտարացման ՚ի նպատակէ ՀմարտուԹեՀ ։

ՎՀ զի երբեմն օրինակք գտանին առ այլս ։ Առաջինն է ուսեբիոսեան կոչելի . ըստ որում ուսեբիոս գտեալ զլատին օրինակ նր՝ ՚ի լոյս ընծայեցոյց իբրև հարազատ վկայաբանուԹ . և հռուինարտ պտունական օրինակ նորին գտեալ՝ ևս առաւել հանդիսացոյց իբրև բուն և նախկին վկայաբանուԹիՀ հանդերձ նոր ԹարգմանուԹեՀ . և սակայն իրօք է քաղուած մերումն կամ հատուածուԹիՀ . զի սկսեալ ոչ գմերս , * Ա յն ինչ յաջորդեր ՚ի հռով- ,, միայեցւոց իշխանուԹեՀ տրայիանոս ‖ . ևն , բառ առ բառ զուգընԹանայ ընդ մերումն՝ մինչև ՚ի սկիզբն ատեանն

նա-

նախօսուէ սէյն Լիգնատիոսի յանտիոք առաջի Թէրլին. ուր յետ դնելոյ զառաջինն զայն խօսակցուԹիւ յորում Թագաւորն զԼիգնատիոս կոչէ չարադև, և սէյն կոչէ զինքն ՅԾաղգեաց, իսկ և իսկ անցանէ օրինակագիրն ՚ի վերջին բանս (Թողեալ զՅամ՝ չարչարանս և զգեղեցիկ առենախօսուԹիս)։ և միացուցեալ զնոսս՝ որ ՚ի նոյն միտս ասացեալ ՚ի սէյն, Թէ այո՛ կրեմ զայն քո, ըմ, բնակեցայց ՚ի նո՛ւ և գնացից ՚ի նո՛ւ, ՚ի վեր բերէ զվճիռ դատաւնակուր լինելոյ նր ՚ի հռովմ։ և յայնմհետէ գրէ շարունակի ամ ինչ մինչև ՚ի կատարումն սէյն յարևնման մեզ։ Եւ այսպէս եԹէ լցուացես զմիջին պակասուԹիւ օրինակիդ ՚ի մերմէս, լինի և այն կատարեալ. ապա՞ Թէ ոչ՝ կայ ճնայ անկատար գլխովին. ո՞ւր Թողից զայն, զի ուսսերիոս կամի և զայլ երևելի հատուածս պակասեցուցանել ըստ կամի. ոչ և հռուինարտ ՚ի լատին օրինակէն ՚ի բաց հանեալ զԹուղԹ սէյն՝ ուրոյն տպագրէ անխորհրդաբար. զոր ՚ի յունականէն չէ իշեալ ՚ի բաց զատուցանել։

Երկրորդ օրինակն՝ զոր զոյգ ըստ առաջնոյն տպագրեն ուսսերիոսեանք ՚ի կարգի գործոց Լիգնատիոսի, ոչ և բոլանդեանք, և մետափրաստեան կոչեցեալն. ուր Թէպետև առաջին տողն և հանգոյն առաջնոյն և մերումն, * Ա՛յն ինչ տրայիանոս զհռովմայեցւոց ԹագաւորուԹենն ,, զգաւազան առնոյր ||, բայց առ նմին գրէ մետափրաստէս այլուստ վաւանդուԹիւն զայն՝ որ վասն բառնալոյ փրկչին զՅաղգեացն ՚ի մանկուէ ՚ի գերկս իւր և օրհնելոյ. ոչ և զձեռնադրուԹիւն նր յառաքելոց յիշատուԹիւն անտիոքայ. և ապա գառնայ ՚ի կարգ նախընԹաց վկայաբանուԹեանն. և զընԹացս նր պահէ մինչև ՚ի կատարած՝ նոյնպիսի անկատարուէ. Թող զոՀ իւր տարբեր. միայն յայտ առնէ՝ Թէ ընԹերցեալ է և զըստարձակ օրինակն մեր. ուստի ՚ի փոխ առնու զայն, Թէ սէյն Լիգնատիոս բանտարկեալ եղև յանտիոք. և զբանի ի բանս յատենախօսուէց օրինակին մերոյ ՚ի մէջ առնու՝ յետ և առաջ կարգելով առ ՚ի յարմարել համառօտապրուԹէ նւրում. ոչ յիշեմ և զայլ առանձնական յաւելուածս նւր. այս ինչ յայտնի է, զի նախընԹաց օրինակին է օրինակօղ, և մերումն օրինակի երկրորդ։

Երրորդ օրինակն՝ բոլանդեան կոչելի, այն է՝ զոր բաց

յերկուց առաջնոց ապաւորէ լոկ լատիներէն հենաբե-
նիոս բոլանդեան՝ իբրև լրագրոյն և կատարելագոյն ք
ղնոսին, դնելով՝ ի վերնագրին այսպէս. * Ա՛յլ վարք
,, ՚ի կարի հնագոյն լատին ձեռագրաց ||. որոյ ոչ միայն
սկզբնաւորութեն է նոյն ը մերումս և ը այլոցն, * Ա՛յն
,, ինչ տրայեանոս զհռոմայեցւոցն առեալ էր զնչնանու-
,, թիւ ||, այլև որչափ ինչ պակասի առ այլս՝ և գտանի
առ մեզ, ունի զբովանդակն, ի գաւեհնախօսութիւնս և
գտանջանս՝ նովին ոճով շարադրուած. միայն քանի մի տողք
կիս հատուածք բանից են համառօտեալ, և ուրեք ուրեք
այլափոխեալ ը կամն լատին գրչի. և որ մեծն է՝ գլուխք
բանիցն յեսաւառաջուը գասաւորեալ՝ խառնաշփոթ ըն-
ծայեն և զվկայաբանութեն դլխովին. զոր ը կարի ուշ-
գադրեն բոլանդեանք. մինչ զի ՚ի կարգելն ը ուղղա-
գրութեե նոց և ՚ի ընուլ զթերութիս ինչ՝ եւանէ և ՚ի լա-
տինն մի և նոյն վկայաբանութեե ձառընտրաց մերոց.
զի ոչ հայերէնն, նոյնպէս և լատիներէնն ՚ի յունէ է
թարգմանեալ. բայց յունական օրինակն չերևի այժմ
՚ի մէջն։

՚ի հաստատութեե այսմ ասէ հենաբենիոս բոլանդեան.
* Կարծեմք, թէ այլ վկայաբանուե բազմք ձոխագոյն
,, կայր երբեմն յունարէն, ուստի քաղեցին ժամագիրք
,, յունաց և այլ գրիչք՝ զտանջանս, զորս կրեաց սբն
,, ևգնատիոս յանտիոք. ուր զանց առնէ զնոքիմբք մե-
,, տափրաստէս (ը ուսսերեան օրինակի). ոչ և այլ
,, բանք գտանին ՚ի վկայագիրս բեդայի և ադոնէի, որք
,, ձանձալարչ բանան անքոյթ առ ընդարձակ օրինակն
,, լատինական ||։ Եւ ահա խնդրելին սորա է օրինակն
մեր գտեալ ՚ի ձառընտրի, որ տիրապէս ունի զտեղի
յունական բնագրի. ոչ յայտ է ՚ի հաւատարիմ թարգ-
մանութեե՝ համեմատութեը ը այլ մասին յունականի յա-
ռաջ բերելոյ ՚ի հռուինարտոյ. և եթէ հռուինարտ
պարծի ը մասն, մեք զինչ՞ ոչ պարծեացուք ը բո-
լորն։

Քանզի այսպէս խօսի հռուինարտ ՚ի նախաճանօթս իւր
առ յունական օրինակ իւր կիսամասնեայ. * Ո՛չ ուրեք
,, գտանիւր յունարէնն, եթէ ոչ՝ այլայլեալն ՚ի մեռա-
,, փրաստիսէ։ Եւ թէպէտ աստարութեը հին (լատին)
,, թարգմանուե՝ զտեալ էր յուսսերիոսէ և ՚ի վոսսիո-

,, սէ պէտպէս ուղղադրուքք , բայց սակայն սպասէին
,, գիտնաւոր արք օժանդակուԹէ օրինակի երիք , որով
,, հաստատեսցի վերանորոգումն յոյն բնագրի աշխատա-
,, սիրեալն Ի նոցանէ : Քանզի այսպէս խօսի վոսիոս .
,, " Ւոյք Թէ կարօղ լինիմ Ի լոյս ընծայել և գԹուղԹն,
,, զոր առ հռովմայեցիսն գրեաց ամենասք վկայս ... Ո՛չ
,, վնձակեցաւ ինձ այնչափ երջանկանալ, մինչև գտանել
,, գյունարքէն . Թերևս այլք բարեբախտագոյնք քան
,, զիս և առաւել հետաքննիք Ի վեր հանցեն զայն Ի
,, հեռաւօտել զմտաեննադարանս " : Պիտեր այժմ կէն-
,, դանի լինել այդց արանց բարեացապարտից Ի գրա-
,, կանուԹէ , և խնդակից լինել մեզ ոչ միայն
,, վն ԹղԹոյն , այլև վն բուն խակ վկայաբանուԹէն հա-
,, րազատ բնագրի , որում ակնունել ոչ իշխէին :
,, Բայց արդ՝ աւելորդ է Ճառել յայտագս վսւերակա-
,, նուԹէ եԹէ ԹղԹոյն և եԹէ վկայաբանուԹէն || :
Ժամ է և մեզ ասել . պիտեր այժմ կենդանի լինել հռովինարտայ և հենաքենիոսի (Թող զուսսերիոս և ըզ-վոսիոս), և այլոց վկայասէր և Ճշմարտասէր արանց բարեացապարտից Ի վարս սքց , և խնդակից լինել մեզ ոչ միայն վն մասին , այլ և բոլորին՝ հարազատ վկայա-բանուԹէ սքյն իգնաթիոսի . որ Թէպէտև հայերէն , բայց գյունարքէնն անստերիւր լինքեան բերէ . ոմն և որչափ լինչ յունարքէն բերէ հռովինարտ , բառ առ բառ նոյնանայ ընդ հայումն . ապա որ լինչ պակասի յօրինակի նր , Ի մերմէս առցէ աներկբայ :

ՋպակասաւորուԹէ յոյն և լատին օրինակաց վկայեաց հենաքենիոս Ի գուշակել անդ , Թէ ունի լինել այլ Ճա-խապդն վկայաբանուԹ . լուր և զգեղեցիկ վկայուԹ նր Ի մեր կողմն՝ գուշակելով , Թէ նաև ընտրեալ օրինակն լատինական է ուղղագրելի ընդ հայումն . զի այս է ասելն նր . * Ա՛յս լատին վկայաբանուԹ յառաջ բերի Ի մէնջ՝
,, հանեալ Ի բազում յոյժ և Ի կարի հնագոյն ձեռա-
,, գրաց , և հաղորդեալ երբեմն հռոսուէեսայ , և ապա
,, մեզ . յորս գլխաւորքն են լոբիանեան , աւգոմարեան ,
,, ուլտրայեկտեան ևն , ձեռագիրք : Երևի Ի յունէ
,, Թարգմանեալ ... Ա՛յլ սակայն Ի սմին օրինակի՝ ան-
,, ջանքն , զորս ԻգնաԹիոս կրեաց յանտիոք , ասին լի-
,, նել Ի հռովմ առաջի տրայիանոսի . որ է անհեԹեԹ

,, ախա-

,, սխալանք • զոր և օրինակեցին բեզա , ադոմն , ուս-
,, ուճարդ , և այլք ՚ի լատին վկայագրաց • • • Գուցէ օ-
,, րինակ լատին Թարգմանչին էր Թերի կամ պատառո-
,, տեալ • կամ թէ զչորքաբերական նամակդ զառաքեալն
,, յանտիոքացւոց՝ բարձմամբ վերնագրին՝ համարեալ
,, է , թէ հռովմայեցիք լցեն գրեալ ‖ • ապա ՚ի վր բե-
րէ , թէ այլք ոչ սակաւք զնոյն օրինակն համառօտեցին,
և կրճատեալ ՚ի լայս ընծայեցին ։

Ա՛յս ամէն անտարակուսելի , ոչ և այլ վրիպակք եթէ՛ նոյն օրինակին , և եթէ համառօտողաց նո՛ր են ուղղագրելի ըստ մերում ճաշակին՝ որ ունի զտեղի յոյն բնագրի ։ Իսկ պատճառ կամ կիսամանեայ կամ խառնակ գոլոյ օրինակացն այլոց՝ յայտնի մեզ Թուի , զոր և ոչ յուշ ածէն այլք • իբր զի հայեցեալ օրինակագրաց ոմանց յաճարձակութի՛ վկայաբանուե՛ կամեցեալ են առնել զբովանդակութի՛ ինչ նո՛ր • և տեսեալ՝ թէ ոչ ՚ի սկզբան առենախօսուե՛ ճշմարիտ կոչումն սբ՛ն առաքեալ տրայիանոսի մատուցանել զնա յերկար հարցուփորձ և ՚ի բազմապատիկ տանջանս , նոյնպէս և ՚ի վախճանի նովին պատճառաւ քննագրեաց կոչեցոյ սրբոյն զինքն՝ վճռեաց զնա տրայիանոս վարել ՚ի հռովմ և գազանաց առաջի արկանել ՚ի թէատրոնի , դիւրին ճանապարհ տեսեալ են համառօտեցոյ , թողուլով զ՚ի միջի եղեալ բանս և գործս , և միացուցանելով զնմանօրինակ բանսն զառաջինս ըստ վերջնոցն • և այնպէս պահմամբ իսկ շարադրութե՛ կարգեալ են զհամառօտութի՛ ինչ • յորում երկու իրք աչեր գտանին կարևորք՝ յիշատակեալք և յայլ ամ մատենագրաց և յասկեբերանէն • ՚ի ներկայանալ սբ՛ն յանտիոք յատեան թիբերին , և յետ միանգամ խօսակցութե՛ վարուն ՚ի հռոմ ։

Բայց թէ բուն և առաջին վկայագիրն ականատես , ՚ի եկեղեցին անտիոքացւոց ՚ի չորքաբերական նամակի անդ ոչ էր այնպէս համառօտ գրեալ , այլ ընդարձակ առենախօսութե՛ հանդերձ և այլ ևս տանջանօք՝ զորս կրեաց սբ՛ն յանտիոք , ոչ միայն յայտ է ՚ի ճառընտրե՛ մերմէ՝ որ անթերի ունի զնոն , այլև ՚ի ժամագրոց յունաց՝ որ քաղէ և զազգս ազգս տանջանաց՝ որ յանտիոք • ոմն և հին վկայագիրք լատինացւոց բեզա , ադոմն են • միայն թէ լատինքս այսոքիկ չեն բնաւ ՚ի յոյն բնագիրն ակնար-

կեալ, այլ՝ ի լատին Թարգմանութենն խառնակ : Իսկ պատճառ խառնակութ բանից լատին Թարգմանչին քա- ջայայտ է. զի առաջի աչաց ունելով նը զերկուս յու- նական օրինակս՝ զբարձակն համաձայն ճառընտրաց մէ- րոց, և զխառնաւօտն ըստ նախայիշատակեալ կերպի, ՚ի նոր խորհուրդ անհեթեթ է մտաբերեալ. քանզի նախ ըստ հառաւօտ օրինակին աւարտեալ զատեանն անտիոքայ և վկարուածն սբ՚ն ՚ի հռոմ, զկնի կարգեալ է և զայլ ամ բանս բարձակ օրինակին՝ զյառաջագոյն եղեալս. և զի մի յետևառաջութե բանից անճառն լինիցի, յար- մարեալ է ըստ կամի և զյետևառաջութե դործոց. ը- հարկ համարեալ է դնել՝ թէ ատենախօսութիւնք և բազ- մապատիկ տանջանք սբ՚ն լեալ էցեն ՚ի հռոմ առաջի տրայիանոսի. ը նմին և առաջի Թէրին գազանակուր լեալ էցէ սբ՚ն :

Եւ զի այս ըդեմ է ամ վկայագրաց, ոչ և արտաքին պատմութեց հռովմայեցւոց, զի տրայիանոս յետ խաղաղոյ ՚ի վր պարթևաց՝ ոչ դարձաւ այլ՚ի հռոմ, այլ՚ի Հա- ղեպարհին՝ յոր գնաց, եւ՚ի կենաց, վայ յայտնի ստա- խօս գտաւ լատին օրինակն այն բարձակ. ուստի առնէ առեալ՝ համարձակ ընդվայր հարին զայն քննիչք արև- մտեանք, մանաւանդ նորայանդք. ոչ է տեսանել՚ի բանս ուսսերիոսի և այլոց : Եւ սակայն քայն հենոքե- նիոս բոլանդեան դիւրաւ հասու եղև, թէ ոչ ստուձ, այլ յետևառաջութ կայ յայն բարձակ օրինակ լատինա- կան. և ը նմին ինքն նշանակեաց, թէ որ գլուխ բա- նից յառաջ պարտի անցանել, և որ ցկնի. և ահա հա- ւաստի է խոհական դատուձն դորա՝ հաւատարմացեալ յօրինակէ ճառընտրին մերոյ. զոր՚ի ձեռս առեալ՝ ինք- նին կարէ ուղղագրել ամ որ նուաւս զլատինն ողջոյն, և ընդ զթերին այլոց օրինակաց յունաց. մանգամայն և քայ՚ի միտ առնուլ զիսոխոսուիս ը հաճոյս մուծէլս յորս է յունական և լատինական օրինակս : Մխով բա- նիմ. ճառընտիր մեր ճանաչի իրաւամբք աղբիւր և կա- նոն ամ օրինակաց ծանուցելոց առ քննիչս :

Եւ որ զարմանալին է, օրինակ ճառընտրիս մերոյ ունի և զհեղինակութե եւսեբեան, ը որում մտ՚ի վախճանն յարմարեալ էն և բանք եւսեբիոսի. որ՚ի պապ. էկեղ. գ. 30. ուր յառաջ բերէ նա զվկայութենս սբ՚ն երանոսի

և

և սբյն պօղիկարպոսի վ՚ իգնատիոսի ծծագքեցի : Որ
է նշանակ, թէ վկայաբանուԹիս այս է մի՚ի հին վարուց
սբց՝ զորոց վկայէ այլուր եւսեբիոս, թէ հաւաքեցի՚ի
բուն աղբերաց յառաջնոյն մատեան. որ և զվարս պօղի-
կարպոսի աշակերտակցին իգնատիոսի : Եւ զի նոյն յա-
ւելուածն եւսեբեան կայ և՚ի վախճան լատին Թարգ-
մանուԹե՝ յօրինակս ինչ Թերագատար, և յայլս անԹե-
րի, նոյնպէս և առ մետափրաստեսի, սոքա ևս լինին
վկայ, Թէ տեսեալ է նոյ զհնարագատ օրինակ մեր եւսե-
բեան. բայց ոմն այսպէս, և ոմն այնպէս այլափոխեալ
է զընԹացս. ապա որ ոք կամի ուղիղ ընԹանալ, պար-
տի զհետ երԹալ ճառընտրին մերոյ. Թող զինուԹական
սխալագրուԹիս տառից և բառից. զորս դիւրաւ ուղ-
ղագրէ ամ մտացի համեմատուԹ այլոց օրինակաց : Ա՚է-
լի ինչ քան զայս ասել չէ հարկ՚ի գովուԹի հայերէն
օրինակիս. զոր հնրկօրէն բառ առ բառ պահեցաք՝ բաց
՚ի դոյզն պարագաբանուԹեց ըստ ոճոյ մերոյ, ոչ և փորձն
յայտ առնէ զամ առացեալքս : Եկեսցուք այժմ՚իքա-
նի մի մանաւանդ ծանօԹուԹիս կարևորս :

(2) Խորհուրդ է առ քննիչս, Թէ ուստի՞ էրև սբյն իգ-
նատիոսի կոչել Ընօփօռօս, ոչ ածագղեաց կամ ածաբեր :
Նորալանդք՝ որք ոչինչ աւանդուԹենէ յանձն առնուն, է՛
զի ժխտեն՝ Թէ սեպհականեալ իցէ նմա այս անուն,
վասն և համարին՝ Թէ յետինք մուծեալ իցեն՚ի սկիզբն
ամ ԹղԹոց նոր զայս կոչումն * Իգնատիոս Թէօֆօռոս ||.
է՛ զի ըստ նմին, Թէ յատուկ անուն իցէ նոր, բայց ոչ՚ի
գործոյ իւրեք առեալ, այլ իբրև գովեստ ընդհանուր
տուեալ նմա. որ յովսէփ արդար կոչի, կամ յակոբ ար-
դար, կամ յեսու յուստոս ոչ արդար. մանաւանդ զի շուխ
տաս նաև զսբն պօղիկարպոս կոչէ Թէօֆօռոս, և ինքն
սբն իգնատիոս վերնատացիս կոչէ Թէօֆօռի, ոչ ածագ-
գեացք :

Բայց յայտ է Թէ սովիմբք ոչ ժխտի, այլ առաւել հաս-
տատի՝ Թէ գոյր ուրեմն պատճառ ինչ, զի՚ի սկզբանէ
և այսր յատկացեալ է իգնատիոսի այս կոչումն՝ որ կա-
րէր անկ լինել բազմաց, տինա հաստարակաց. և զար-
մանամ, զի ոչ են յուշ ածեալ նորալանդք՝ Թէ ըստ առա-
քելոյն ամ մկրտեալք՚իքո են ածագղեացք կամ քոյազ-
գեացք. ըստ, * որ միանգամ՚իքո մկրտեցայք, զքո

,, զդէցեալ էք ։ ասա ընդ սեպհականեացն անուն-
այս քառագեաց կի՞ ձեռագրեաց՝ իգնատոսի ։
Ո՛չ օգտի ուսուերիոսի, այլ առաւել ընդէմ եղանէ նմին՝
բերելն նր զգան մեռաւրասաեսի, Թէ իգնատոս էր
* և կոչմամբ և իրօք ձեռագրեաց ։ ոմ և զգան արիա-
պագացոյն՝ որ ոմ զայլս ՚ի սբց՝ նոյնպէս և վիճա-
տոս կոչէ Ռ՚օս, ջ ձեռայն ։ զի և մեք զայն խնդրեմք,
Թէ ի՞ր առաւելու իգնատոս քան զայլս յառաքելոց և
յաւակերտաց, զի ոչ միայն ձեռայն կոչեցի, այլև ձեռաղ-
գեաց ։ և իցէ ոչ միայն իրօք, այլև կոչմամբ, ոչ միայն
կոչմամբ, այլև իրօք ձեռագրեաց ։ Ապա ասայ հաւանա-
կան ինչ պատճառս գտանել յաւանդաւէ, և զանձաւա-
նականն ՚ի բաց Թողուլ ։

Սկսեալ ՚ի վերջնոյն՝ ոչ է հաւանական, այլ նորահնար
գիւտ ոմանց ՚ի չէնանոց լատինացւոց, ջր վինկենտիոսի
բէլովակեցւոյ, և մարտինոսի պողնեացւոյ, և որոց
դէտ երեսին նց, Թէ Թէօֆիլոս կոչեցի սբն իգնա-
տիոս՝ նէրգործաբար միայն, ջր զձձ կրօղ ՚ի սրտի ։ վա-
զի սասն ՚ի ժամ նահատակութեն բացաւ սիրտ նր, և
դաւաւ ՚ի նմա գրեալ ոսկի տառիւք անունն յն քրե ։
Օի այդ նախ սակ յայնմանէ, զի սբն իգնատիոս ՚ի կեն-
դանութեն առաւել կոչեաւ ձեռակիր կամ ձեռագրեաց ։
Երկրորդ, զի զսիրտ և զիորատիս նորս անդամ կերան
առիւծք, և միայն զբանի մի խորը ոսկեբս Թողին ։
Երրորդ՝ զի յորժամ ինքն իսկ իգնատիոս ասաց տրայիանո-
սի՝ Թէ զյ՞ւս կրեմ, ոչ իմնայր զինքեանսն անունն
յն՝ այլ զՔՆորհս նր ։ վայ և վկայուն ՚ի մէջ էաւ, Թէ
գրեալ է, բնակեցայց ՚ի նն, և գնայից ՚ի նն ։

Ապա հաւանական է, զոր նախ մեք մեզին իմաստասէ
բեցաք, ասպա և առ այլս հաստատուն գտաք, Թէ սբն
իգնատիոս կոչեաւ Թէօֆորոս, ոչ միայն ներգործաբար
և ըստ հնորհաց, ջր ձեռագրեաց կամ զձձ կրօղ յինքեան
հնորհեաք՝ հանդոյն այլոց ճշմարիտ հաւատացելոց քրիս-
պեցից մկրտուեբ, այլև կրաւորաբար և իրապես ձեռա-
կիր կամ ձեռագործ, ջր բարձեալ ՚ի մանկուեէ ՚ի վերին
յն ։ և այս է հաստատիւն աւանդուեն ։ զոր գտանեմք
՚ի չարականի մերում և ՚ի յայսմաւուրս, և առ մաեսէ
նագիրս յոանաց ըստ մեռաւրասաեսի ։ ոմ և մեկն գրէ ՚ի
ժամադիրս նց համաձայն Հ՚ւ այսպէս ։ * Սա էր երա-

,, նե-

,, նեղին , զոր տալայ գոլով՝ եբարձ ասեն ուրն . և գիրկս
,, արկեալ՝ ասաց , եթէ ոք ոչ խոնարհեցուսցէ զանձն
,, իբրև զմանուկս զայս , ոչ մտցէ յարքայութիւն երկնից .
,, և որ զմի ՚ի մանկանց աստի ընկալցի յանուն իմ, զիս
,, ընդունի : Վասն և Թէօփիլոս (այն ածաղկիւր) կոչեցաւ || :
Եւ ըստ այսմ նոմապէն յոյնք առ սբն յերգս իւրեանց :
* ով ածաղկիւր կոչեցեալդ արժանապէս , որովհետև
,, ուրն զքեզ երանելիդ Ղևնատիէ , ոսպ համակիր ՚ի
,, գիրկս ընկալաւ || : և դարձեալ . * Տիրապէս վայել-
,, չական անուամբ կոչեցար Թէօփիլոս (ածաղկիւր) ով
,, հայր , քանզի տակաւին տալայ դոլով փոքրիկ՝ ՚ի ձեռս
,, ուն բարձեալ կրեցար , որ վերաձայնէր առ մեզ . եղե-
,, րօք ինձ ոսպ զմանուկս զայս || :
Եւ յայտ է թէ չէք լինչ ըգիմումեն յայսմ պէղեցիկ ա-
ւանդութենէ . զի Ղևնատիոս էր ՚ի ժամանակի քարոզութե
փրկչին մանուկ տալայ . որ յետոյ յարբունս հասեալ ա-
շակերտեցաւ առաքելոց , և ՚ի նոցանէ ձեռնադրեցաւ
քահանայ և եպս , ոսպ ամենեքին ընդունին : Այլ զարմա-
նամք ըստ խնաստուն ոսկեբերնոյս , որ իբրև անժխտելի
առարկութեն կարծէ զայն , զի ոսկեբերանն ասաց՝ թէ
Ղևնատիոս ոչ ետես զքն : Այո ասաց . բայց զնարդ և
որպէս , անաչառ տեսցուք . ապաքէն բերանն ոսկի ՚ի
ներբոյլ Ղևնատիոսի ձեռնարկելով՝ թէ վկայութիւն յարու-
թենէ քնի ՚ի մեռելոց է և այն , զի աշակերտաք նախ երկ-
չոտք՝ վկնի արիք գտան , ասէ . * Ջնարդ էր , զի ցոր-
,, չափ կենդանի էր (ուրն մեր) , կենակիցք նր առա-
,, քեալք ամ յերկիւղէ տկարացեալք , մատնէին զվիպն ,
,, և փախուցեալ երթային ՚ի բաց . իսկ յորժամ մեռաւ ,
,, ոչ միայն պետրոս և պօղոս , այլև Ղևնատիոս , որոյ
,, ոչ էր տեսեալ զնա , և ոչ վայելեալ ՚ի կենակցութենէ
,, նր , այնպիսի ՚ի վր նր յօժարութեն ցուցանէին ոգ-
,, ւոյ , մինչև զկեանս անգամ տալ վս նր || :
Արդ՝ ասեմք , թէ ըստ ճշդիւտ տեսութենէ ոչ հակառակի
մեզ այս բան ոսկեբերանի . վս զի բանն է զսկանատես-
սից կենակցացն կամ զհամահասակաց , և ոչ զմանկանց
տալայոց կամ զերախայից , որք չեն ընդունակ կենակցութե ,
և ոչ կարեն բերել իբրև վկայ ականատես : Այլ մեզ
ապացուցական է՝ թէ ոսկեբերանն ենթադրէ զնդ-
տիոս ծնեալ նախ քան զյարութենն քնի . վասն զի դնէ

կենակից առաքելոց, այսպէս ուսնելով բանին Ի նոյն
ներբողն Իգնատիոսի. * Կենցաղակից (կամ կենակից)
,, եղև առաքելոց առաքինաբար, և էարբ վհոգևորա-
,, կան վհոսանս: Աւրդ որպիսի արժան էր լինել այնմ,
,, որ սննդակից եղև նոցա, և ամ ուրեք կենայ կցորդ.
,, և հաւէլեաց և անհաւէլեաց հասարակորդ եղև նոցա,
,, և այնպիսում իշխանութիւն արժանաւոր գտաւել եղև
,, Ի նոցէ ||, ցր ենգսուէ:

Որ Թողից զայն, զի Ի Թուղթն աբէյն Իգնատիոսի առ
զմիւռնացիս, ուր ոմանք ընթեռնուն, * Էս և յետ յա-
,, րութէ Ի մարմնի զնա գիտացի, և հաւատամ գոլ ||,
աբէյն հերոնիմոս Թարգմանէ. * Ի մարմնի զնա տեսի ||.
զի յն. է նմանաձայն և հոմաձայն, ֆպա կամ ֆպօն. յորմէ
երկբարբառ է. զի Թէ օչ ընթերցցիս՝ լինի գէպէ. և
եթէ էչ, լինի պէսանէ. և ահա պէսանէ ընթեռնու և
սոփրոնիոս, ևս և ուսեբիոս Ի հին Թարգմանութէ:
Բայց քանզի առ եւսեբի և Թէոդորետոսի՝ գէպէ ըն-
թեռնուաք, չէ մեզ և այն անհաճոյ. շատ է՝ զի և գի-
տացի ասելն յետ յարուածէ՝ ոչինչ ընդհատ է Ի տեսուէ.
շատ է՝ զի ոչ ընդհմանայ մեզ բանս, այլ լինի ձեռնտու:
Թողից ասել, Թէ յոյժ ցուցանէ ասպաւինելն սմանց Ի
բան սակեբերանի. ապաքէն նա՝ և ոչ իսկ յիշէ զծա-
գեաց կոչումն Իգնատիոսի. այլ միայն զեպուսութէ և
զմարտիրոսուէ նր խօսի. և այն ոչ պատմողաբար, այլ
ներբողաբար. իսկ Ի ներբողական ձևից գժուարին է
հանել զաւանդ պատմական: Գէթ կարեր յիշել և բա-
զում խորհուրդս հանել Ի բանէ անտի Իգնատիոսի, զի
յատենի կոչէ զանձն ածազգեաց ըստ սովենեցուն պատմե-
ցոյ. և սակայն ոչ յիշէ և զայն. զայս ասացի, զի մի և
Ի պակասական ձեռնարկս յածեսցին միտք բանախնդ-
րաց:

(3) Քանզի զբաւսդ՝ զայր առաքելական՝ սմանք Ի դրչաց
յարեն յեւոդիոս, և սմանք յԻգնատիոս, և զի երկո-
ցունց ևս է քաջայայտմամբ, մեք երկրորդեցաք և վասն
Իգնատիոսի ածազգեցի զառաքելանմանն: Աբէյն եւո-
դիոսի նախորդին Իգնատիոսի յիշատակ լինի Ի Լ.
մայիս. 6:

(4) Զարմանալի տարբերուէ՝ սմանք ընթեռնուն ասա
Ի յոյնն, ջօնօ, ուր այլք ընթեռնուն ջօնօ. և մեք գտա-

նեմք գրեալ՝ ի Ճառընտ. Երգովք, որ վառաջինն հաստա-
տէ, այլ խմնամք, երկօք, որ է յանկաւսր երկրորդին
և կարգի բանի. զի զհոգևոր աշխատուեց սբոյն է բանն,
և ոչ զերգոց կամ զձայնից. այր վն քննիչք որք հնրկօրէն
զառաջին ընթերցուածն պինդ ունին, չգտանեն զելս
երաց. և յերկար քննուեալք ճապալեն զնչանակուն բա-
ռին՝ ի պէսպէս միտս՝ հանդերձ այլ ևս սխալ վերծա-
նուեալք յաջորդ բառին. և ընտրեալ զլատին Թարգմա-
նուեալին վալծռէ, ցր ռ-ծռվ կամ զօրռւնք, տառապին յոյժ.
և ոչ հային՝ Թէ կայ Թարգմանուեալ ընտիր լսպօռէ, ցր
աշխապռւնք։ Ասյս չէ ինչ, բայց և ոչ զայն յուշ ածեն,
Թէ՝ ի գնել զառաջին ընթերցուածն՝ դծնօ, ցր հնչմամբ
կամ երգով, տեղի գտանէ գոնէ աւանդուեալին սակրա-
տեան. զոր Թէպէտև յիշեն այլուր, բայց ոչ զտեղին
գտանեն աւանդուեալ, և ոչ զմիտս ոսկրատայ խմա-
նան։

Եթէ մտցուք մեք՝ ի քննուեալ բանիս, այլ եզրակացու-
ցեալ Թէ Թերևս ելանէ, որ չէ հաճոյ արևմտեան քննչաց, և
ոչ իսկ յունաց, ըստ որում կարէ ակնարկել՝ ի ծագումն
երեքսրբեան երգոյն. զորմէ բազումք բազումս գրեցին՝
անհնին գծուցիւք. մնայ ապա առաքել զընթերցօղս առ
բանն ոսկրատայ, որ եդեալ կայ՝ ի պապ. հյ. հատոր Բ. երես.
633. զի աւելի ինչ քան զայս ասել չէ տեղւոյս։ Մրիայն
խմա զձև բանից կրիտիասց յօրինակէ խօսից Հռուխնար-
տայ. որ աստ՝ ի նախաճանօթս վարուց նգն. երես. 7.
համար. 5. գրէ այսպէս. * Պատմէ սոկրատ պապ. էկեղ.
„ Ը. 8. որում ձայնակցին ոմանք՝ ի յոյն մատենագրաց,
„ Թէ նգնատիոս մուծեալ նցէ յեկեղեցի անտիոքացւոց
„ զսովորուԹի փոխ՝ ի փոխ նոճագեղոյ, և անտի ծա-
„ ւալեալ նցէ յայլ եկեղեցիս։ Ասյլ այս կարծիք՝ ո-
„ րում հակառակ մարթ է կոչել զբազումս յերևելի
„ մատենագրաց, ոչ հաճոյ Թուի վաղեսիոսի՝ ի ծանօ-
„ Թութիս իւր յայսմ վայրի։ Տես զնուազարկուն մա-
„ բէլլոնի վն սոցին երաց ‖։ Բայց գնատեա. զի ձեռնու-
նայն ելանես. զի բազմապատիկ նախապաշարմունք են
՝ի խօսելիս։

(5) Քանզի ոմանք՝ ի նորագանդից ոչ հաւանին ըստ անձ-
նատուր լինել սբոյն յատեան, նմին երկի պարզաբանուք
յայտնի արարաք զդիւցազնական պատճառն. զոր և

բե-

բերանն ոակի յայտ առնէ աստանօր՝ առեալով * Վերջ
,, կացուս եղիւ մերոսմն եկեղեցւոյ առաքինաբար . և
,, այնպիսի զգուշութիւ հանդերձ , որպիսեաւ քո կամի .
,, զի զոր սահման և կանոն եպսուԹէ եԹող նա գոլ ,
,, զնոյն սա գործովք եցոյց . քանզի լուեալ քո՛ր որ ա
,, սէն , եԹէ հաւլիւ քաջ զանձն իւր դնէ ՚ի վէր ոչխա
,, րացն , հանդերձ ամ արուիք զանձն իւր մատնեաց վ
,, ոչխարոյց || :

(6) ՊարԹևք և հայք որոշ յիշին՝ ոպ ՚ի Ճ. նոյնպս և ՚ի յն. և լո. օրինակս վկ. առ հնրկ . ուր մեռսակր՚՚ եգեալ է լսկ պարսիկք . ուստի առևԹ առեալ ոմանց յընվայրաքնին արանց՝ չանան ընդդառաուրիւ միանուն գործել զպարԹևն և զպարսն . այլ յայտ է ամ գիտնոց , ԹԷ պարԹևք կոչեցան պարսիկք , յորժամ՚ի պարԹևաշտնց արշակունեաց եղեն Թիգրք պարսից , ոպ և հայոց : Վասն պատերազմին տրայիանոսի ընդ սոսս չէ հարկ խօսել աստ . զի յայտնի է ՚ի պատմուԹենէ :

(7) ՚Ի զուր երկարաբանէ գլերիւս ծանօԹարարն գոր ծոց սբոյն Իգնատիոսի ՚ի վէր բառիցս գաՓօՔՀօն , որով կոչեաց տրայիանոս զԻգնատիոս , և ընՔօՓՀօռօս , որով կոչեաց զինքն Իգնատիոս . զի այսպէս և այնպէս խօսի , և ոչ մերձի ՚ի նպատակն : Ասէ , ԹԷ տրայիանոս չարագև ասելով լամնայք չարաբախտ , հէր և Թշնամւոյ . ոպ և բարեբախտն էՀտէմոն կոչի . այլ ասէ՝ * Իգնատիոս
,, զայն բառ լմացաւ՝ ոպ ԹԷ Թշնամանիցէ զնա տրայիա
,, նոս . վնյ և պէնկի տայ՝ ցուցանել՝ ԹԷ ինքն ոչ է դէ
,, Հահար , զի ոչ է տէմոնիՓօռօս , (այ դիւակիր) , այլ
,, մանաւանդ ԹէօՓօռօս , այ զնծ կրօղ ՚ի սրտի , և ոչ
,, զդև : Այլ ոչ է կարծելի , ԹԷ կամեցեալ էցէ նր ,
,, զի բառք իւր այնպէս ըմբռնեսցին՝ ոպ ԹԷ անուն կամ
,, մականուն իւր էցէ ԹէօՓօռօս . ոպ համարեցան՝ ոյք
,, ՚ի ԹուղԹս նր նախադրեցին իբր անուն կամ մակա
,, նուն || :

Ուր Թող զայն , զի ենԹադրէ լաւ և այ լմանալ զմիտս տրայիանոսի՝ քան զոր լմացաւ սբն Իգնատիոս , այլև ենԹադրէ՝ ԹԷ անուննս ԹէօՓօռօս յայլոց մուծել էցէ ՚ի ԹուղԹս սբյն . զի այդպիսիկ են սնոտի և սուտ ենԹադրուԹիք : Ապաքէն և հեԹանոսք ըստնէին բարի և շար հրեշտակս , և ՚ի կամիլ նախատել զոք՝ չարա

դև

դև կոչէին. իսկ սքէն իգնատիոս կարի՛ ի դէպ պինդեաց
ըստ ան իւրոյ, թէ չիս դև ոչ դոյ. այլ փառաւորեմ զյն՝
զոր կրեմ յանձին, և դու՛ ի զուր անարգես զիս։ Եւ
թէպէտև ամ սքէք կարէին ասել զայս, բայց ոչ ասա-
ցաք յառաջն, յայտնի երևի՛ թէ էր հանդիսացեալ անուն
ածաղիեայ կամ ածակիր՛ ի վր իգնատիոսի՛ ի ներգոր-
ծական և՛ ի կրաւորական միոս, վայ և ինքն համարձակ
այնու անուամբ յաճախ արար զիշնամանուն իւր. և այն
իսկ եղև նմա դուռն մարտիրոսութեան։

Ապա քալ մ՚ոտ դիր, թէ արդեօ՛ ի բանէ ասոի սկսանի
ածխմասա ատենախօսութեան սքէն. և յետ ամ բանից և
տանջանաց, ՛ի նոյն յանգի. ուր համառօտիչք վկայա-
բանուեա՛ ի նմանուդ առ նման ըստուգեալ՝ կրճատեն
զպատմութեին. ոչ ծանուցեալք վերագոյնդ (1)։

(8) ՛ի հաստատուի անցից անցելոց ըստ իգնատիոս յան-
տիոք՝ համաձայն Ճառընտրաց, բերէ հենրքենիոս բոլ-
լանդեան զգրեալսն՛ ի ժամագիրս և՛ ի զանազան յայս-
մաւուրս յունաց՝ այսպէս. * Ածել յատեան տրայիա-
,, նոսի կայսեր՛ ի գնալ ընդդէմ պարթևաց, և բա-
,, զում բանս խօսեցեալ ըստ նմա, և զանյեղլի հաւատս
,, իւր՛ ի քրիստոսեայ առաջի ինքնակալին, անդէն կա-
,, պարեալ գնաւոք ձմլի, և ձեռնատարած ըստ նի ըզ-
,, հուր, խլախտան թերթիւք (կամ տերևովք) կողք
,, նր խանձողին, ՛ի վր դնի բորբոքեալ կայծականց,
,, երկաթի ճանկօք հերձոտի. և գեր ՛ի վերոյ եղեալ
,, սոցին՝ կապեալ առաքի արբանեկուբ տան զինուո-
,, րաց ՛ի հռոմ, կերակուր լինել գազանաց ||։ Այն-
նման խօսին և ագուին և բեգա. Թող զակամայ սխա-
լանս նց, զի՛ ի հռովմ դնեն զայն տանջանս՝ զհետ եր-
թալով վրկպանաց լատին թարգմանչի, ըստ ասացելոցս
՛ի (1)։

(9) Ոչ ճ. նոյնպէս և մետափր. ՛ի յն. ընթերցեալ են
ատոիՀՀատա, ըստ արժանատես. ուր այլք ընթեռնուն
ատոիՀՀա, ըստ արժանի այ։

(10) ճ. համաձայն եւսեբի՝ որ ընթեռնու ակնդօմա,
բարւոք թարգմանէ, արագ գոյին. ուր այլք ընթեր-
ցան էդիմա, ըստ պատրաստ։ Ընդ հակին՝ թէպէտև առ
եւսեբի պակասին այժմ այլ բառք քանի մի, բայց կան
՛ի ճ. համաձայն այլ ընթերցուածոց։

(11) Ի Ճ. գրեալ էր * չէք յիս հուր սիրելոյ ||. ուր մեռանիր. ընթեռնու, * չէք յիս հուր նիւթասէր ||։ Իսկ լս. Թարգ. ոմն ուրեմն այսպէս * չէք յիս հուր սի,, րոյ Ծնական նիւթոյ ||. և ոմն * չէք յիս հուր սիրօղ ,, զՅուր, այ զղովացուցին ||. որ է բաղադրեալ Ի յաջորդ բանէն։

(12) Եթէ լինէր Ի Ճ, անուն հիւպատոսաց՝ որոշէր զմի Ի բազմադիմի ընթերցուածոց յն. և լս. օրինակաց, որք ըստ հաճոյս պնեն զայս և զայն հիւպատոս՝ անհամաձայն միմեանց. և զքննիչս արկանեն ըստ բազում կռռուով, յորմէ մեք զերծ պատանիք։ Ծայ է մեզ ասելն ուսանելոսի. * առ կայսերուէ տրայիանոսի ամենևին չիոնի ,, տեսանի կարգ հիւպատոսաց ||. զոր ինքն ջանայ վերածել Ի կարգ ինչ։ Ջկատարուցին սէյն գնէ Ի տասներորդ կամ Ի մետասաներորդ ամի տրայիանոսի. զոր ոմն եդ յամի տն 108. այլ ոմն 110. այլք 111. և այլք այլազգ։

Եթէ ուղիղ լցէ, է. պեկտ. զոր պինդ ունին յոյնք, և վերնագիրն Ճառընարին մերոյ, ասլա վրիպակաւ գրի Ի Ճ. ինն կաղանդից յունվարի, փինկ գրելոյ ԺՁ. այն էր ըստ քննչաց՝ միջոց պարապոյ աւուրց և խաղուց առ հռովմայեցիս, յորս լինէին ուօնք կոչեցեալք «ֆէՃիլեւրիա, այ կնքաւորք կամ վճռականք՝ առ ընթեր աւուրց կոչեցելոց «ֆերոռնալիա, այ կռռնոսեանք։



ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սքին Յհոսպսմպայ Եպսկին , և Յհոշնայ կախարդին :

Ի· դեկտ· 18: Տէր եղեւ դեկտ· 30: Յ· յունվար· 4· կճ 5· և 2: Լ· յունվր· 3· և մայիս· 21: Լուսնդ· յովհ· ի ա· հատ· ընվր· երես· 127· և 1087: Ա՛ստուած· Ա· երես նհգ : (1)

ԹՈՒՊՈՄՊՈՍ, ՈՐ և Յհոսպեմպտոս , Ա՛ծառաք՝ անուանմբ , էր եպիկս կողմանցն արևեբլից, ըստ ոմանց՝ կիլիկեցւոց, և ըստ այլոց նիկոմիդացւոց՝ նախ քան զնբն անթիմոս և քան զնախորդն նէր կիւրղոս , այլ լի հաւատով և հոգւով սբվ, և հովիւ քաջ բանաւոր հօտի : Այս եղև , զի դիոկղետիանոս յառաջին ամի թագաւորելոյ (կամ յառաջին ամի հալածանաց) եկեալ ի հռովմայ ի նիկոմիդիա՝ արար եօթանասուն ըստ ինամանուելի արուճի և եգի , ի քարանց և ի փայտից , ի սղնձոյ , յարծաթոյ և յոսկւոյ . և անուանեաց մեծ ըստ զերկու ոսկեղէնսն , յարուսան՝ զապողոն , և յեգան զաստղիկ , այն է ափրոդիտէ : Այս կացոյց պահապանս և վերակացուս ի վէր նց ի քրմաց , զի սպասաւորք

տարցեն նոյ, և պաշտեսցեն զնա հանապա-
զօր. և զամ մարդ ինոյն յորդորեսցեն պաշ-
տօն մուղորուե. և որք ոչ պաշտեսցեն, գա-
նից և տանջանաց և մահու հասցեն:

Տեսեալ սբ եպան Թէոպոմպոս, որ գայր ի
կալուածոյ՝ որ արտաքոյ քաղաքին, ինկիւ-
միդիա, զի հրապարակաւ քարոզեալ լինէր
գործն ամպարշտուԹե, ոչ ժուժեաց. այլ
գնաց առաջի ատենի ինքնակալին, և յանդի-
մանեաց համարձակուԹե զնոտի պաշտա-
մունս հեԹանոսուե. և ասէ. ամէն Թագր ընդ
պաշտեք և պաշտել հրամայէք զայծս ձեռա-
գործս, Թողեալ զայծն Ջհմարիտ՝ որ արար
զերկինս և զերկիր. և այլ բազում գաւա-
նուԹք խօսեցաւ սբն:

Ասէ Թագրն. զիարդ իշխեցեր ասել զայդ ա-
ռաջի իմ: Ասէ սբն. գրեալ է, խօսիմ ըզ-
վկայուԹս քո առաջի Թագրաց, և ոչ ամաչիմ:
Արտմտել դիոկղետիանոսի՝ հրամայեաց ջե-
ռուցանել հնոց, և անդ արկանել զսբն. և
նա ի մէջ հրոյն ի ձայն մեծ զօրհնէրգուԹի
երից մանկանց մատուցանէր այ. և ափչեալ
Թագրն՝ ետ հանել զնա արտաքս, և դնել ի
բանտ ոտիւ զկախարդ՝ անսուաղ. քզի և զայլ
նշանս տեսեալ էր ինձա գեր ի վեր քան
զմարդկան. և առ անմտուե իւրոյ փորձել
կամեցեալ՝ եԹէ կախարդեաալ իցէ նէր զհուրն
հնոցի, ետ արկանել անդր շուն մի. և ան-
դն կիզեալ սատակեր անասունն:

Նա յետ քան և երկու աւուր բանտարկու-
Թեն ածին զԹէոպոմպոս առաջի Թագաորին.

և

և նա զարմացեալ ըզհարթուն և ըզհամարձակութիւն սքին ասէ . սթափեցարի յընտանի յուսոյ քո , որ առ խաչեալն ։ Ասէ սքն եպան. իմ յոյսն հաստատուն է առ խաչեալն ած ձշմարիտ . բայց քեզ մնայ յաւիտենական տանջանքն ի հուրն անշէջ և ի բանտ դեհենին ։ Եւ բարկացեալ բռնաւորն՝ հրամայեաց հանել զերկոսին աչսն , և վերստին ի բանտ արկանել . և քն լուսաւորեաց զաչս նորա ։ Այլք գրեն , թէ զմի յաչացն բրեալ էին , և զայն ողջացոյց Տէրն ի բանտին ։

Այն իբրև լուաւ դիոկղետիանոս , ետ բերել կախարդ մի անուանի , որում անուն էր Թէոֆիլաս . և խոստացաւ տալ նմա հարիւր լիտր ոսկի , եթէ յաղթիցէ Թէոպոմպոսի ։ Ասէ կախարդն . եթէ յաղթէ ինձ , ես հաւատամ յածն նորա . այլ ես ասէ ցուցից նշան , թէ ունիմ յաղթել նմա ։ Եւ այնպէս պարծեալ ի կախարդուն իւր Թէոֆիլաս՝ ետ բերել զուարակ . և ի խօսելն յականջս զուարակին՝ նոյնժամայն հերձաւ . և ետ կշռել զերկոսին հատուածսն , և գտին հաւասարակշիռ . և հիացաւ Թէրն և հաստատեցաւ, թէ անշուշտ յաղթէ Թէոպոմպոսի . վասն ետ ածել զերանելին . և ասաց Թէոֆիլաս ՝ առնել ըզնա զոր ինչ և դիտէ ։

Յայնժամ ասէ Թէոֆիլաս ցսքն Թէոպոմպոս. երկու արուեստս կախարդուէ փորձեմ ի վերքո . և եթէ ոչ ազդեսցէ ի քեզ և ոչ մին , հաւատամ և ես յածն քո ։ Թէոպոմպոս ասէ . յուսացեալ եմ ի քն ածն իմ, զի ոչ մերձ

ձե-

ձենայ յիս զօրուն օտար . և դու տեսցես ա-
ռաւել զօրութիւն զքոյն ընդդէմն , որով պարծիմ
և համարձակիմ առաջի Թագաւորիդ :
Յայնժամ Թէոփիլոս պատրաստեաց կերա-
կուր բժժանօք կախարդուե (2) դեղ մահա-
ցու , և կարդաց ի վէր նորա զախտրժակս չար
դիւացն . և ետ ցերանելն ենգեան , զի կերիցէ
զկորուսիչ կերակուրն : Նոյնպէս երանելի այրն
Յիսուս առնէր զքոյն նշանն ի վէր նոր . և առեալ
եկեր առաջի ամենեցուն . և ոչինչ վնասեաց
նմա : Ընդ որ հիացեալ Թէոփիլոս՝ ասաց . մեծ
զօրութիւն է Յիսուսի քրիստոնէից :
Եւ դարձեալ խառնեաց զդիւթական ըմպե-
լին ի մահացու դեղն , և կարդաց զանուն
դիւացն ևս չարագունից . և ետ սքեին Յիսու :
Եւ նոր արարեալ ի վէր զնորունական նշանն՝ արբ
աներկիւղ . և եղև նմա չար և ոչինչ . և Թէով-
նաս ակն ունէր այտնլոյ , և յանկարծակի մե-
ռանելոյ : Իբրև ետես , թէ ոչ վնասեցաւ
այրն Յիսու , ասէ . անյաղթ է զօրուն քոյն Յիսու .
և անկաւ առ ոտս երանելոյն , և հաւատաց
յԱստուած առաջի Թագրին և Յամմեծամեծաց նոր .
և ասէ . Պիղծ է Յիսու մեծ ոմն զնոյ քրիստոնէից .
և ես խոստովանիմ զնա արարիչ Յամի՝ որ ե-
րևինն և որ ոչն երևին . միայն ընկալցի զիս
ապաշխարութիւնդ , և Թողցէ խոստովանութիւնդ
զմեղս իմ՝ որոց ոչ գոյ Թիւ , զոր գործեցի ի
մանկութենէ իմմէ :
Եւ ասէր երանելի Յիսուս . գոհանամ զքեզն
Տեր , որ զմոլորեալս դարձուցեր , զկորուսեալս
գտեր , զվիրաւորեալս բժշկեցեր մարդասի-
րու-

բուլթը քով. փառք քեզ փառք, փառք ամե-
նասք երրորդութեդ, որ յարդարեցեր, յօրի-
նեցեր, այցելու եղեր ունայնացեալին յար-
դարուէ. զօրացո զսա ի վկայուէն անուանդ
քո առաջի թագրաց և զօրավարաց սոցա. զի
եղիցի և յատեանէդ քոյ վկայ հաւատարիմ
յերկրի. և սուաւ փառաւորեսցիս այժմ և
յաւիտեանս :

Նոյ ասացեալ Թեոփիլոս զամէնն, և քաջա-
լերեալ յաճ մեծապէս արուեթը և հաստա-
տուն հաւատով՝ յարեցաւ բոլորով սրտիւ ի
ներ. և ոպ գրեն ոմանք՝ գտեալ յառանձին
վայրի կիս ի բանտի զոր եպան՝ մկրտեցաւ ի
նմանէ, և անուանեցաւ սիւնեսիոս. և մա-
տուցեալ առաջի թագրին և ամ ատենին հան-
դերձ Թեոպոմպաւ՝ ասէր համարձակ. Ք՝ա-
ւատամ յաճ հայր ամենակալ և յորդին միա-
ծին և ի հոգին սբ. և ար համարհեմ զկուռս
ամ, և զդիւթուիս նց, զի ստուերք են, և
ոչ ձմարիտ. և ամենայն ինչ ի ձմարտէն այ
և ի փառս նր կատարի այժմ և յաւիտեանս.
որ և զիս ընկալցի ըս մեծի ողորմուէ իւրում.
և ես պատրաստ եմ մեռանել վ անուանն նր.
զի ապրեցուսցէ զիս յաւիտենական ի մահ-
ուանէն :

Նոյ զայս լուեալ թագրին՝ խռովեցաւ, և ամ
մեծամեծք նր ընդ նմ, և ասէ. յաղթեաց մո-
գուեթն քրիստոնէին, և աշակերտեաց զթեո-
փիլոս. արդ զի՞նչ պարտ է առնել, բայց
մահուամբ վճարել զնա ի կենացս. զի մի ճ-
այլք մոլորեսցին յայս խաբէուեթէ : Նոյ ասէ

ցոր եպան . մի պարծիր ի քոն քո , թէ այս-
պէս լինելով ապրիս ի ձեռաց իմոց : Ասէ Ե-
րանելի եպան . յուսացեալ եմ ի ձեր քոն իմ,
որ առնէ աքանչելիս միայն , զի զօրացուցանէ
զիս առ ամ չարչարանս և մահս՝ զոր ածելոց
ես ի վեր իմ հանդերձ նորընծայ հաւատա-
ցեալով . զի յաղթեսցուք քեզ և սատանայի՝
որ քև մարտնչի . և առցուք զանեղծութեան
պսակն . զի նա միայն է ահ և թիւր յաւիտե-
նից , և այլ ոք չիք :

Եւ սրտմտեալ Թիւրն հրամայեաց չորս ցից
հարկանել ի գետնի՝ երկուս ոտից և եր-
կուս ձեռացն , և կապել ընդ ցիցսն , և դնել
վէմ մի մեծ ի վեր նոր՝ ի տասն արանց թա-
ւալեալ : Եւ այն ինչ ձմլեալ լինէր երանե-
լին Յովսաւ , ասեն սպասաւորքն . ոչ է զօ-
րութիւն կախարդուն քո : Եւ սկսն սբյն այ աղա-
ղակեաց ի ձայն մեծ , և ասէ . տէր յիս օգնեա
ինձ , և զօրացո՛ զիս . և յամօթ արա զՀայ-
հոյիչս անուանդ քո սբյ : Եւ զայս ասացեալ՝
շարժեաց զլինքն ընդ վիմով , և անդէն լուծան
կապանքն , և վէմն հոլովեցաւ ի նմանէ քա-
ցաւ ոյն հնգետասան կանգուն . և եկաց Թէո-
պոմպոս ի վեր ոտից իւրոց ուղիղ :

Ո՛ արմացաւ Թիւրոն և ասէ . անյաղթ կա-
խարդ է , զայց ինձ ոչ կարէ յաղթել . և հրա-
մայեաց կախել զնա և քար կապել զպարա-
նոցն նորա . և կայր այնպէս գլխիվայր իբրև
ժամն երիս . և գոհանայր զՅս ի վեր ամ ան-
ձրկն անցելոց՝ որ վե անուանն ձեն : Ապա
հրաման տայր բռնաւորն խզել զկապանսն յո-
տից .

տից. զի այնպէս անկեալ խորտակեսցի։ Եւ
երանելին ամենևին ոչինչ միաբանեցաւ. այլ
եկաց՝ի վէր ոտից իւրոց, և փառաւորեր զԱստ։
Եւ հիացեալ Թէոն՝ սրտմտութեամբ հրամայեաց
գլխատել զաչքն նոյ. և անդէն հատաւ պա-
րանոց նոր՝ի դահճէն. և այնպէս կատարե-
ցաւ սքն եպիսն Թէոպոմպոս Չմարիտ խոստո-
վանութեամբ՝ի փառս ամենասքն երրորդութեանն։
Եւ ասէ Թագաւորն ցԹէոփիլոս. տես զմահ
եպիսին, որ ոչ կարաց ապրել մեքենայիւքն
իւրովք. արդ զղջացիր և պաշտեա զԱստ-
ուած, զի ապրեսցիս՝ի մահուանէ։
Եւ ասէ ցԹէոփիլոս սիւնեսիոսն, և ասէ.
մի լեր ինձ Թողուլ զբարի խրատ եպիսին և
սքն վիպին իմոյ, որ լուսաւորեացն զիս լու-
սով ճշգիտութեամբ և մկրտութեամբ. ոչ պաշտեմ զգ-
կուռս կռեալս և կոփեալս և արարեալս, այլ
զկենդանի Աստուածն, որ և զիս՝ի խաւարէ զեր-
ծոյց՝ի լոյս, զնա պաշտեմ, օրհնեմ և փա-
ռաւորեմ յաւիտեանս. ամէն։
Եւ իբրև եառես Թէոն, եթէ ոչ խոտորեցաւ
՝ի բան նր, հրամայեաց՝ի գուբ խոր ընկեղ-
նուլ, և Թաղել զնա կենդանւոյն. և այն-
պէս կատարեցաւ՝ի քո Չմարիտ խոստովա-
նութեամբ սքն վկայն Թէոփիլոս, որ յաւուրս հայ-
հոյիչն եր և կախարդ և արբանեակ սատա-
նայի։ Արդ սքն այսպէս կատարեցան առա-
ջինք՝ի հալածանս դիոկղետիանոսի՝ յաւուրս
ջին աոի Թէրուէ նր. այն է յամի տն 289 կբ

290։

XXXX

ոմանք և զԹէոդեսաս արարին եպս այլոյ քաղաքի՝ ի սպա-
նիա. որ են անհին ղօյցք ըստ քմից։

(2) Ուր Ճ. դնէ՝ բժժանօք կախարդուԹիք, Հ. սխալ
վերծանուԹիւք գրեալ է, բժ, կամ բժան ժանիւք կախար-
դուԹեն. իսկ լատին օրինակն գրէ՝ ոլորս կամ գալարս
ասէր կախարդականս։ Ընդ ըստ ոմանց յաւելեալ լինի,
Թէ մարմինք երկոցունց սրբոց Թադեացն՝ ի նիկոմիդիա
՝ի միում հրմի. Թող և վայր ԹեԹև տարբերուԹիս։

Վ. ԿԱՐԳԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոց Ղորից զինուորացն, Բասոսի, Նւսե-
բի, Նւտիքի, և Բասիլիդեայ կամ բասլի։

Ի. Յ. յունվար. 20։ Ղաբնա. Ա. ղէ=ղէ։
Բուլանդ յովհ. ՚ի յնվ. 20։ (1)

ՂՈՐԻՑ ՍՈՒՐԲ

պատուական վկայք՝ քաջ զօրա-
կանք քրի, են որդիք հոգևոր
երկանց սրբոյն Թէոպոմպայ ե-
պիսկոպոսի, ՚ի ձեռն վկայուԹ նր լուսաւո-
րեալք և վկայական պսակաց արժանացեալք.
և ունի պատմուԹ նց ըստ Նաւբնատրաց օրինակ
զայս։

Յետ վկայուԹ սրբոյ եպսին Թէոպոմպեայ, և
Թէոնէայ կախարդի, այս չորս զինուորքս՝
Բասոս, Նւսեբիոս, Նւտիքոս, և Բասի-
լիոս կամ բասիլիդես, որք էին պահապանք

ըծոյն դիոկղետիանոսի՝ ինիկոմիդիա, եկին՝ի մեսաին առաջի Թագաւորին. և լուծեալք զգօտիս՝ի միջոյ իւրեանց՝ եդին առ ոտս նր. աղաղակէին մեծաձայն, և ասէին. քրիստոնեայք եմք. և էին նք առաջաւորք և պատուականք՝ի դրան սրբուհւոյ, և մեծագոյն պատիւ ունէին քան զամ զինուորակիցս իւրեանց:

Լսեալ իբրև ետես Թագրն, բարկացաւ յոյժ, և ասէ ցնս. Թէ արդարև քրիստոնեայք էք, ոչ ասացիք զ. և նոքա ասեն ցնա. քրիստոնեայք եմք: Դիոկղետիանոս ասէ. զի՞նչ շարժեաց, և կամ զի՞նչ հաձեաց զձեզ՝ զայդ ասել ինձ: Յայնժամ պինդի ետուն իբրև՝ի միջոկ բերանոյ, և ասեն. չատ է մեզ՝ զոր յանցեաք՝ի մանկուէ մերմէ մինչև ցայսօր. կամիմք այսու հետև ապաշխարել վ առաջին յանցանաց մերոց. և խոստովանիմք՝ի ձեր մեր յն քն՝ի Թագաւորն, որ կայ և ինայ յաւիտեան. որ քաւիչ լինի վ բազում ողորմութեն իւրոյ:

Եւ յայսմ առաւել ևս խռովեցաւ Թգւորն բարկութ մեծաւ. և դարձեալ խորհեցաւ անցուցանել զբարկուէն՝ի նոցանէ. քանզի սիրէր զնս յոյժ. և սկսաւ ասել ցնոսա գաղտ. զինարդ էք քրիստոնեայք, զի բերանովք և շրթամբք խոստովանիք՝ Թէ քրիստոնեայք եմք, և սիրտք ձեր՝ի ստացուածս ձեր զանգեալ են. արդ եթէ ճշմարիտ քրիստոնեայք էք դուք, տուք ինձ զարարս ձեր զամ՝ զոր ինչ և ունիք, զի շնորհեցից զայն ընկերաց ձերոց:

Ո՛չ այս ասէր , զի փորձէր զմիտս նոյ , եթէ պահեսցեն և ոչ տացեն նմա զինչս իւրեանց ։ Յայնժամ փութացեալ երանելոյն բաստոսի՝ եկն և եբեր ոսկի լտերս քսան , և եդ առ ոտս դիոկղետիանոսի , և ասէ . ահա զայս սաստացուցածս իմ տամ քեզ ։ Նման սմա և եւսեբիոս երանելի՝ տեսեալ զյօժարուին բաստոսի՝ ինքն ընդ ինքեան եկն և եբեր ոսկի լտերս քառասուն ։ Նմանապէս և եւտիքոս այր ցանկալի եկն և եբեր ոսկի լտերս վաթսուն . և եդեալ առաջի թագրին՝ ասէ . այս ոչինչ է վճռոյ ։ Իսկ երանելի ծառայն քրիստոսի՝ հոգւով եռացեալ բազում զօրութիւք , եկն և եբեր ոսկի լտերս եօթանասուն . և ասէ . զայս ամենայնիվ արհամարհեցաք վճռոյ սիրոյն . զոսկի և զարծաթ և զհանդերձս պատուականս անարգ համարեսցուք ։

Նա ասեն ցթագրն . այս ամ ոչինչ է , և յոչինչ համարեալ է . եթէ զամ ինչ շահեսցուք , զի՞նչ օգուտ է մեզ . ոչ և գրեալ է , եթէ զամ ՚ծս շահեսցուք , և զանձինս մեր կորուսցուք , զի՞նչ շահ է . քանզի և դարձեալ ասէ պիր . զի՞նչ տացես փոխանակ անձին քումմ . և թէ՝ լաւ է անկանիլ ՚ի ձեռս ՚ծոյ , և մի ՚ի ձեռս մարդկան ։ Ո՛ի ոչ կարեմք մեք մոռանալ զվաստակս և զնեղուխս հօր մերոյ զերանելոյ վիգիլի զոր եպսին թէոպոմպեայ . քզի զքսան և զերիս աւուրս եղև ՚ի տան մերում ՚ի դիպահոլ , ոչ կերեալ և ոչ արբեալ . և ոչ նքթեցաւ անձն նր . այլ համարձակուխք և բազում զօրութ առնէր սքանչելիս . քանզի

տեսաք ՚ի գիշերին անդ լոյս մեծ . որ լուսաւորեաց զնա և զամ առուն , և շարժեաց զնաւտունն ՚ի հիմանէ ։ Ա՚ն կարեմք մեք մուտնալ զՀիմարիտ հովիւն մեր , որով գտաք զանապարհս Հիմարտուեն ։

Ա՚յլ վասն որոյ ասես դու , եթէ զոհեցիք ընծոյն , զիարդ ընծս կոչեսցուք զնա կամ զոհեսցուք , որ ոչ տեսանեն և ոչ լսեն և ոչ խօսին , և ոչ կարեն բարի ինչ առնել կամ չար ։ Վասնզի երիս առիսս եղեն ՚ի տան մերում , և ոչ տեսաք նշանս ամենևին , և ոչ զօրուեն ։ Այրին ՚ի մէջ մխորոյ՝ լի . և յորժամ տեսանէաք , մաքրեաք զփոշի յերեսաց նոցա ։ Ա՚ն ոչ զինքեանս բաւական էին բառնալ . քանզի ոչ կարէին գնալ , բարձեալ կրէին զնա մեհենաբարձք . և այսպէս խաբէին զբազումս ՚ի մարդկանէ , և քարոզէին՝ թէ այս են ածք ։ Զիտասջիր զայս ամէն թշէր . սէք ինքեանք կորուսեալ են , և զբազումս կորուսանեն . այլ դու ծանիր զնոճ Հիմարիտ , որ կայ և մնայ յաւիտեան ։ Ա՚յլ վա՛ մեր իշխանուեն ունիս , զինչ և կամիս՝ արա . պատրաստ եմք շահել զօգուտն մեր վա՛ն այն մերոյ ։

Ա՚ն լուեալ զայս թշէրն՝ հրամայեաց արկանել զնա ՚ի բանտ . և եղեն անդ աւուրս եօթն . և գայլն անդ փեսայք իւրեանց և քորք . և աղաչէին զնա , քաջալերէին և ասէին . Եղբարք փութացարուք և համբերեցէք ամ փորձանացդ . քանզի փրկիչն մեր ասաց , խնդրեցէք և տայի ձեզ . քանզի ոչ գոյ այլ հզօր քան զնոր , որ օգնական է մեր ։ Յիշեցէք և զայս եղ-

Էղբարք, զի զբարուհս Ձիս այսորիկ վարե-
ցաք ընդնայնս և անցաւորս. պարտիմք այժմ
նկրտել, մինչև հասցուք անապականուե կե-
նացն յաւիտենից. քանզի հանդիստ Ձիս այ-
սորիկ առ ժամանակ մի է. իսկ ակնկալելոյ
Ձի կեանքն յաւիտենից են. և այսպիսի բա-
նիւք քաջալերէին զնա ազգականքն իւրեանց:
Եւ յուԹերորդ աւուրն հրամայեաց Թէրն
տանել զնա յապարանսն իւր. կոչեաց զնա,
և խանդաղատեալ զնոքօք Թէրն՝ ցուցանէր
անկանիլ յոտս նոյ, աղաչէր և ասէր ցնոսա.
լուծարուք ինձ որդեակք իմ. դուք ինքնին գի-
տէք զիս և զԹէրուԹիս իմ. ոչ իսպառ բար-
կացայ ձեզ. խնայեցէք և դուք ի ձեզ, զի
մի չարաչար մեռանիցիք. քզի մահ ամ մար-
դոյ առ դուրս հասեալ կայ. ոմն պատուճով,
և ոմն անարգուեր վախճանի. դուք մի հայիք
ըզ մահ ենպսին Թէոպոմպեայ. քանզի կա-
խարդ էր, և ինքն իւրովի խնդրեաց զանար-
դուԹիե մահն: Եւ լուեալ զայս բանս՝ ոչ
խռովեցան ազատքն, և ոչ խաբեցան ի բանս
նր. այլ միաբան աղաղակէին, ԹէԹ քրիստո-
նեայք եմք. և ոչ դու կարես խաբել զմեզ.
քանզի հասեալ է ընորհքն նոյ ի վր մեր:
Ոյս իբրև լուաւ Թէրն, և ետես՝ ԹէԹ ոչ
կարաց ի հաւանուե ածել զնոսա միաբան,
հրամայեաց մի առ մի ածել զնա զառաջեաւ
իւրով: Եւ իբրև ածին զբասոս, ասէ ցնա
Թէրն. ընդ ոչ զոհես ըստծոյն իմոյ: Պինդ
ետ սբն բասոս, և ասէ. ոչ զոհեմ: Բար-
կացաւ Թէրն, և հրամայեաց ձեռս յետս

կա-

կապել զնա, և զոտս նր. և արար զնա ցոյց բարեկամաց իւրոց. և զձեռս նր հրամայեաց կտրել կացնով, ապա և զոտն. և այնպէս անդամ անդամ կոտորեցին զնա, մինչև արձակեաց զոգին երանելի նահատակն քրիս. և կատարեաց զվկայուն իւր բարի խոստովանութիւնն:

Յետ այսորիկ յառաջ մատուցին վաղվաղակի զԵւսեբիոս. ասէ Թէկղն. Եւսեբիէ խնայեա դու՛ի քեզ, և զոհեա ճշմոցն, զի մի չարչարեսցիս մեռանիցիս: Պինն ետ երանելին Եւսեբիոս, և ասէ մեծաձայն. մի լիցի ինձ Թողուլ զհոր իմ, որ սիրեաց զիս, և զսիրելի բարեկամն իմ՝ որ յառաջ կատարեցաւ, որ խոստովանեցաւ եղև իմ բարեացն: Ասէ Թէկղն. ոչ ոք կայ բարեկամ քո, և ոչ ոք կարէ ապրեցուցանել զքեզ՛ի ձեռաց իմոց: Պինն ետ երանելին, և ասէ ցնա. պապանձեա՛ց, և մի՛ ևս երկրորդեացես զբանս քո: Նարկայեաւ Թէկղն՝ հրամայեաց կախել զնա գլխիվայր զերկոցունց ոտից, և կապել զիւրաքանչիւր զոտս նր՛ի սիւնան. և այնպէս պրկեալ զարանօք՝ կատարեաց զվկայուն իւր խաղաղութիւնն:

Եւ յետ նր կատարելոյ՛ի նր՝ հրամայեաց ածել զերրորդն. և իբրև եկաց առաջի նր Եւտիքոս, ասէ ցնա Թէկղն. գիտե՛ս՝ զի որ լսեն ինձ, և առնեն զկամս իմ, չնորհեմ նց պարգևս. և որք հակառակ կան բանից իմոց, չարչարանօք հանեմ՛ի կենացս յայս. արդ ընտրեա՛ դու քեզ զպարգևան՝ կամ զմահ:

Պինն

պինի եւ սքեն եւսէքոս, և ասէ. պարգևք քո ընդ քեզ լինին ի կորուստ. մարդկան պատիւ առ ժամանակ մի է, և այլ զօրութիւն և պատիւ անվախճան է. զի յոյս երևելի չէ յոյս. արդ քո պատիւդ և յոյսդ կորուստ է մեզ։ Ո՞այս երբև ասաց երանելին յատենի անդ, հրամայեաց Թէգրն արկանել ընդ ծամեղնի նոր բևեռս, և յերիս բարժանել զմարմինս նոր. և այնպէս կատարեաց զվկայութիւն իւր զինաւորն քրիստոս։

Ապա հրամայեաց բռնաւորն ածել զչորրորդն զառաջեաւ, որում անուն էր բասիլիոս, որ պատուական էր և առաջաւոր ի պալատ նոր. և ասէ ցնա Թէգւորն. ազատեմ զքեզ, անսա բանից իմոց՝ զոր ինչ ասեմ քեզ. և յաւելցի պատիւ քո, և փառաւորեցից զքեզ քան զամենեսեան՝ որ են ի պալատի իմում. և մի ոք խաբեսցէ զքեզ սնոտի բանիւք. յո՛ւշ լիցի քեզ, զի բարի խորհուրդ խորհիմ քեզ. և արարից զքեզ իշխան ի վերայ զօրաց իմոց. զի ամ որ լսիցէ՝ երանի տացէ քեզ. և ի քէն կատարեսցի ամ արքունի հրաման. զի ոչ ոք ունիմ ի պալատանս առաւել քան զքեզ, զի քան զամ ոք առաւել սիրեմ զքեզ. լո՛ւր զոր ինչ ասացի քեզ, և հաշտի ընդ քեզ ապրիլն մեծ ճշն, և փրկէ զքեզ ի կորստենէդ յայդմանէ։

Ասէ երանելին և մեծատոհմն բասիլիոս ասէ. ո՛ դու անզգայ և անմիտ, զինչ խօսիս. ո՛չ դու և ո՛չ ապրիլդ քո կարէ կեցուցանել զինքն, և ո՛չ զքեզ՝ որ յուսացեալ ես ի նա.

զի

զի լինքն բաժին է հրոյ, և ամ որ հաւատայ
՚ինա՝ ընդ նմա այրեսցի։ Օ այս լուեալ Թա-
գաւորն՝ բարկացաւ յոյժ, և հրամայեաց բե-
րել սուր, և պատառեաց զորովայն նր. և
ասէ ցնա. վ՚ն զի ստեցեր սիրոյ իմոյ, պա-
տառեցից զքեզ իբրև զամպարիշտս մի։
Պինեհ ետ երանելին, և ասէ յաւաջ՝ք զա-
ւանդել հոգւոյն. այսօր կեցուցեր զիս. զի
ոչ օտարացայ ՚ի պատուհական մահուանէն,
զոր յաւաջ մեռան սքը եղբարքն իմ։ Նոյնս
զայս ասացեալ վայելուչն այն և բարեզարմն՝
ննջեաց խաղաղութիք, կատարեալ և սորա
զվկայութիւնն իւր։ Նոյն ՚ի միասին Թաղեցան
ջորեքին սքը զինուորքն, որք այսպէս կատա-
րեցան բարի խոստովանութիք ՚ի քն, յամի ոն
իբր 290. որ օր, ըստ. հր արաց ամսոյ, ասէ
Ճառընտիրն. այն է ըստ յայսմաւուրաց՝ արաց
ժգ. և յունվարի 20. յորում աւուր դնեն և
յոյնք զյիշատակ սքոցս պսակելոց ՚ի քն յո ՚ի
նոր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ճ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

(1) Յետ ունելոյ մեր ՚ի ձեռին զայսպիսի ընտիր վկայաբանութիւն ՚ի մեծ Ճառընտրի՝ ոչ կարօտացաք այլոց. Թէպէտ զի բոլանդեանք ոչ ինչ այլ յաւաջ բերեն, բայց զհամառօտագրուն ժամագրոց յունաց, որ է քաղուած վկայաբանութեանս մերոց. զնոյն լման և զայսմաւուրաց Հ. որ փոքր ի շատ ակ քաղէ։ Ուր Ճանիր, զի Թե-
րեւս զի իրիք հոմանձայնութե առ յոյնս, Հ. զրե՝ Թէ չոր-
եքին զինուորք ՚ի պատճառս նահատակութե սքոյն Թէո-
պոմ

պոմպայ հաւատացին ՚ի քո. ուր Ճ. ցուցանէ, թէ յայտնեցին զհաւատս՝ զոր ունէին. և ըստ այսմ՝ նաև ՚ի յաջորդ բանս, ուր Ճ. պատմէ, թէ ապաշխանք սքց որ տապնդէին զնո ՚ի հաւատս քն, Հ. ըստ հկոհն գրէ՝ թէ սքքն քարոզէին նոյ զհաւատս քն։ Դարձեալ փոխանակ լսերաց ոսկւոյ՝ Հ. և որ ինչ կենդինարս դնեն. և յաւելու Հ. ասել, * է ամէն կենդինար Ճ. լիտր ոսկի ։ որ երեւի չափազանց հաշիւ՝ օտար ՚ի ձառընտրէ. Թո՛ղ զի ուր Ճ. գրէ եօթանասունն լիտր վե սքյն բասիլիդեայ, Հ. եգեալ է կենդինարս Ճ. Թերևս հայելով ՚ի նախընթացս, զի քանիւ չափ աւելի էր տուեալն միոյ միոյ քան զընկերս իւր։

Դարձեալ Հ. զսքն եւտիքոս ՚ի չորս ցկցս ասէ կապել, և ՚ի չորս մասունս հերձեալ. իսկ Յ. ՚ի չորց ցկցս զնէ կապեալ, բայց յերկիս մասունս բաժանեալ։ Ալյլ մեք ոչինչ փոփոխութիւն արարաք ՚ի բանս ձառընտրին, որ է աղբիւր յայսմաւուրաց. և եթէ կայցէ ինչ թերեւս վրիպակ, չէ մարթ ուղղել նախ քան զգտանել զայն բնագիրն, որ չերևի ՚ի միջի։

Վ Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սքյն Պետրի հայրապետի։

Ա. Պետ. 21։ Ստրքն. և այլ պատմագիրք հայոց։ Պաւեման, և այլք յաստրւոց և ՚ի յունաց։

Ա. ՊՈՂՈՍ ՍՈՒՐՔ ՀՈՎՅՐՍ. պետն, որ յաստրւոց Պետ, կոչ անգէոս կոչի, էր եղեսացի մեծ տաքսագործ, և խոյրարար աքսարու թիւրին մերոյ. և եղև յորժամ եկն սքն

սէր առաքեալն Թադէոս յեդեսիա, և մկըրտեաց զարքայ, յայնժամ մկրտեցաւ և ադդէ, և աշակերտեցաւ առաքելոյն. և զգեցեալ զՀոգի նէր՝ արժանի եղև ձեռնադրիլ ի նմանէ եպս, և կարգիլ փոխանակ նէր Հովիւ և վարդապետ ՅԻՆ միջագետաց Հայոց և ասորւոց: Ա. Այդ ոնգ Հայք, նոյնպէս և ասորիք ձանաչեն զնա առաջին եպս իւրեանց յետ Թադէոսի իբրև յաջորդ նէր: Նա արդարև սէր Հայրապետն ադդէ եղև առաքելաբար քարոզ քանին այդ ոչ միայն յօւրհայ և ի միջագետս, այլև ի կողմանս ասորեստանեայց և մարաց և պարսից, սերմանելով յամէ տեղիս զաւետարանն քնի, և առնելով նշանս մեծամեծս: Նա էր յաջողուն առաքելական քարոզուն և առաջնորդուն սէյն ադդէի ի կենդանութնէ երանելի Թէքլին աբգարու. այլ յետ փոխման նէր՝ քանզի անանուն որդի նէր և սանատրուկ քեռորդին Թողին զպաշտօն քնի նայ մերոյ, և դարձան ի կռապաշտութնէ, բազում հալածանս կրեաց Հայրապետն սադդէ հանդերձ հաւատացեալ հօտիւն: Ա. Եւ յայտնութնէ նէծային վէ գաղտնի խորհրդոյ չարութեան արքային. իբր զի անանուն արքայ դժուարեալ ընդ դործն քրիստոնէից, զի մեծարեալ պատուէին երկրպագութնէ զանձառագործ դաստառակ փրկչին՝ զոր եդեալ էր աբգարու ի վէր դրան ուռհայու, խորհէր քառնալ և կորուսանել զայն, և կանգնել անդանօր զպատկեր կռոց:

Այնն իբր յարուցեալ սադդէի Հայրապետի դիշե-

շերայն՝ հաւ ըէ իւր զոմանս ի քարեպաշտից, և եկեալ ի դուռն քաղաքին՝ ետ կախել կանթեղ առաջի սքի գաւառակին, որ էր եդեալ ի գոգաւոր վայրի խորագոյնս. և կղմնտրօք ծածկեալ զայն՝ ետ ծեփել և հաւասարել որմոյ. և այնպէս խափանեցաւ խորհուրդ չարին. մինչև յետ ժամանակաց ի ծաղկիլ քրիստոնէութեն գտաւ անդ փրկչական պատկերն անարատ. և եդաւ յեկեղեցի սքի Ածածնի՝ որ յԵդեսիա։

Նոյն անօրէնն արքայն անանուն յղեաց պատճառանօք պատուէր ասէ ադդէ, զի արասցէ նմա խոյր բեհեզեայ անկուճածոյ յոսկւոյ, ոյ յառաջադոյն առնէր հօրն նր։ Ղ. այս ետ պինդ սքի հայրապետն. ոչ արասցեն ձեռք իմ խոյր գազաթան անարժանի, որ ոչ երկրպագէ քրի այ կենդանւոյ։ Յայնժամ քարկայեալ թշգրն՝ հրամայեաց միւսմ՝ի զինակրացն երթալ կարել զոտս սքյն սրով. որոյ գնացեալ և տեսեալ զնա՝ զի նատէր յաթոռ վշպուհէն, հաճ սուսերաւ և՝ի բաց կարեաց զսրունս նր. և նոյնժամայն աւանդեաց զոգին։

Օ այս ծայրաքաղ արարեալ՝ համառօտ լինի շատակեցաք, ասէ խորենացին, ոյ զառ՝ի յայլոց պատմեալ նախկին. զոր օրինակ առնէ և զքաղուճած վարուց սքյն Թադէի հարևանցի՝ առաքելով զընթերցօղս առ նախկին գրիչս. յորմէ յայտ է թէ ոյ կայ՝ի ձառընտիրս ընտրեալ վարք Թադէի, նոյնպէս պարտի լինել և ադդէի. այլ ոչ յաջողեաց

մեզ

Մեզ տեսանել զայն ։

Ա.ՅԼ արժան է լսել՝ զոր ՚ի վէր բերէ խորհուրդն, Թէ ածային իմն ակնարկուած խնդրեցաւ վրէժ մահուանն ադդէի յորդւոյն աբգարու. քանզի սիւն կձեայ կանգնել տայր յերեսիա ՚ի վերնատունն ապարանից իւրոց, և ինքն ՚ի ներքոյ կալով՝ հրամայէր զորպէսզի առնել. որ զերծեալ յուսոյացն՝ անկաւ ՚ի վէր նոր, և խորտակեաց զոտն և սատակեաց։ Եւ իսկոյն պատգամ բնակչաց քաղաքին եկն առ սանատրուկ ՚ի մեծն հայս՝ խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեսցէ զնոսա ՚ի քրիստոնէութենէ հաւատոց, և նոքա տացեն զքաղաքն ՚ի ձեռս, և զգանձս Թէգրին. զոր առեալ յետոյ ստեաց. նաև զամարու զաւակ տանն աբգարու մաշեաց սրով. և այնպէս յաջողեալ Թէգրին համօրէն Թէգրուհեաց հայոց արշակունեաց էանց ՚ի ցեղն սանատրկոյ. բայց յետ սակաւուց եդեսիա և ամ միջագետք անկան ընդ իշխանութիւն հռովմայեցւոց ։

Ա.ՅԼ յայս ամ փոփոխութիւնս ոչ պակասեաց քրիստոնէութեան յեդեսիոյ, այլ հանդերձ հաստատութեամբ միաց անդ միշտ հաւատն քրիստոսական, և հովիւն նոքա՝ աթոռակալ սբ առաքելոյն Թադէի և յաջորդ ադդէի սբ հայրապետին մինչև ցայսօր։ Որոց անուն սքն Թադէոս և հանուն զգուշաւորս, և եւ յադդէ եպիսկոպոսէ. որոց նշմարանք երևին ցարդ ՚ի կանոնագիրս։

ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ

Ընդարուն Թադաւորի։

Ա. պեկո. 31։ և հա Ա. և Յ. օգոստ. 16։ Յա-
ռաքելոս. ՚ա. 13։ Խորենացի. և այլ պատմագիրք
հայոց և յունաց և ասորւոց առ հաստակ։

ԱՌՔԱՅԻՆ Ի ՀԱՅՍՏ-
ցեալ Թադաւորս Ծի՝ ածասէր
և մեծահաւատ արքայն մեր աբ-
գար՝ էր արշակունի սպարթև՝
որդի արշամայ որդւոյ տիգրանայ, Թէր ամ
հայոց Ծի՝ մեծի և փոքու. որ վ՚ն նորոգելոյ
զեդեսիա քաղաք՝ որ և ուռհայ, և անդ դնե-
լոյ զարքունիս իւր, կոչեցաւ և արքայ միջա-
գետաց, և անխտիր՝ Թէր հայոց և ասորւոց.
ոյլ և Թադաւոր եդեսացւոց, և իշխան Ծի,
կիմ ըս յունաց դօքսարքա, այ իշխան տեղւոյ.
և ս տինասդիս, այ հզօր կիմ հարուստ իշ-
խան՝ ուռհենայ կիմ ոստրոյենայ, որով իմա-
նան զուռհայ կիմ զիսորձէն գաւառ սահմա-
նակից. կոչեն և արքայ ագիաբենաց, կամ
հադիաբայ միջագետաց՝ սահմանակից ասո-
ւեստանեայց. զի ցայն վայրս տարածեալ էր
Թէրուէ հայոց յաւուրցն տիգրանայ միջնոյ
մինչև ցԹուուն նէր ցաբգար։

Ա՛ս վե՛ տառաւել հեզութենն և խոնարհութենն, միանգամայն և պարծանական տիրոջն, կոչիւր Ա՛ստ այր. զոր ոչ կարելով ուղղախօսել յունաց և սորուոց, կոչեցին Ա՛ւգար կամ ագկար, աւկարիոս կամ ագկարէս և ագկարոս. ուստի եղև սովորական անուն նմ Ա՛գար կամ աբգարիոս:

Յերկրորդ ամի Թիբերիոսի սորա՝ ծնաւ փրկիչն մեր յն քն որդին այ՝ Թիբերն Թիբերայ և նորին նորանց. որ և ըստ մարմնոյ ժառանգ աթոռոյն դաւթի. վասն մեծ էր արդարև լինել աբգարու ժամանակակից և Թիբերակից քրիստոսի. այլ մեծ ևս եղև այն, զի արժանի գտաւ յերկարել՝ի Թիբերիոսէ իւրում մինչև՝ի չափ հասանելի կատարմանն քրիստոսի, և ըստ նմին առնուլ ըզլուր քարոզութենն, և հաւատալ՝ինառ Ա՛գար Թողեալ զբազմապատիկ զարտաքին գործս աբգարու՝ որովք արդոյ գտաւ առաջի հռոմէացւոց և պարսից և ամենայնի, ի կարգ ածպաշտութենն փութասցուք:

Պէտ եղև աբգարու՝ի պետս գործոյ նորա Թէ առաքել դեսպանս՝ի սահմանս պաղեստինոյ առ մանրինոս գործակալն հռոմայեցւոց զերկուս՝ի գլխաւորաց իւրոց զմարիհաբ բդեշխն աղձնեաց, և զշամշագրամ նահապետ ասպահունեաց տոհմին, և զանանէ հաւատարիմ սուրհանդակն իւր: Նմա նոյ կատարեալ գործ պատգամաւորութենէ՝՝ի գառնայն անտի եկին յերեմ տեսանել զփրկիչն մեր յն քն՝ վասն լրոյ համբաւոյ աքանչելագործութենն. որում ականատես եղեալ՝

եկին

Եկին պատմեցին աբգարու :

Ընդ որ զարմացեալ մեծախորհուրդ արքային, և լուսաւորեալ ի վերուստ՝ հաւատաց Քրիստոսի մարտասպես իբր յարդարև որդի Աստ. ան զօրութիք ոչ մարդոյ են, այլ՝ Աստ. զի չիք ոք ի մարդկանէ, որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստ : Եւ քանզի ապականեալ էր մարմինն իւր ի չարաչար ցաւոց՝ իբր բորոտուէ, որ պատուհեցին նմա ի պալատէ Ծին յաւաջ քան զԵօթն ամ, և ի մարդկանէ ոչ եղև նմա հնար բժշկուէ, ետ տանել առ փրկիչն Ծի Թուղթ աղաչանաց՝ գալ բժշկել զնա ի ցաւոց անտի, օրինակ զայս.

* Աբգար արշամայ՝ իշխան Ծի, առ Յն փրկիչ և բարերար, որ երևեցար յԾին Երմայեցոց, ողջոյն : Լուեալ է իմ վնտ քո, և վնտ բժշկուէդ՝ որ լինին ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի ոչ ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ, և զբորոտս սրբես, և զայս պիղծս և զդևս հանես. և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութիք, բժշկես. դու և զմեռեալն յարուցանես : Եւ իբրև լուայ վասն քո զայս ամ, եդի ի մտի իմում մի յերկուց աստի. կամ Երթ դու Ծ ինչես ինքեալ յերկնից, և գործես զայդ. կամ Թէ որդի Աստ, և զայդ առնես : Որդ վնտ այնորիկ գրեցի Ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիս՝ զոր ունիմ Ես : Զաև լուայ, զի հրեայք տրտնջեն զքէն, և կամին չարչարել զքեզ : Բայց քաղաք մի փոքրիկ է

լեմ, և բաւական է մեզ երկոցունցս ||։ Պատուէր ետ աբգար հրեշտակաց իւրոց. զի թէ ոչ կամեսցի գալ յն, գոնէ բերցեն զկենդանագիրն պատկեր փրկչին. և առ այս յղեաց ասեն ոմանք պատկերահան մի յովհաննէս անուն, որ ըստ այլոց է նա ինքն անանիա սուրհանդակ՝ զոր աստուածք հաննէ կոչէին։ Ընդ տարեալ հրեշտակաց զթուղթն աբգարու առ յն՝ պատահեցին նմա յԷմ յաւուր արմաւենեաց։ Ո այս վկայէ (ասէ խորենացին) աւետարանական բանն, եթէ էին ոմանք ի հեթանոսաց ելելոց յԵրեմ. և ոչ համարձակեաւ անձամբ մատչիլ և ասել զպատգամն առ յն, մատեան առ փիլիպպոս, և ասեն. Տէր կամիմք զյն տեսանել. և փիլիպպոս ասէ ցանդրէաս. և անդրէաս և փիլիպպոս ասեն ցյն։ Եւ յն ասէ. Եհաս ժամ, զի փառաւորեսցի որդի մարդոյ. ոմն թէ՝ հասեալ է ժամանակ իմ ելանել ի խաչ, որ է ինձ փառք, և այնուհետև քարոզիլ անուանն իմոյ և ի հեթանոսս փառօք։ Զինն երի իսկ յայնմ ժամանակի՝ յորում կոչէր զնա աբգար, ոչ էառ յանձն երթալ Տէրն. բայց թղթոյ արժանի արար զնա. որ էր փոքր պատիճ ծառային իւրոյ աբգարու։ Եւ այս էր պինակ թղթոյն աբգարու, զոր գրեաց Թումաս առաքեալն հրամանաւ փրկչին ի դիմաց նր և ի բերանոյ։

* Զրանկ էցէ այնմ, որ հաւատայ յիս, երբեւ ոչ էսկ նր տեսեալ զիս. զի գրեալ է վն իմ այսպէս. զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատան

առասցեն յիս . և որք ոչն տեսանեն , նք հա-
ւատասցեն և կեցցեն : Ասէ վասն այնր , զի
գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ , սր-
ժան է ինձ կատարել աստ զամ ինչ՝ վ որոյ
առաքեցայ ես : Այս իբրև կատարեցից զայս,
ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն
զիս . և յորժամ համբարձայց , առաքեցից
զմի յաշակերտաց իմոց աստի , զի զցաւս քո
բժշկեսցէ . և կեանս քեզ , և որ ընդ քեզ են ,
ընդհեսցէ ‖ :

Ա պա՛ի գուն գործել հրեշտակաց աբգարու
գէթ զպատկեր փրկչին առնուլ ՚ի ձեռն
պատկերահանի , իբրև ՚ի դերև ելին ՚ի խոր-
հրդոց իւրեանց , զի ոչ կարէր նկարիչն առ-
նուլ իւիք զէնդրիտ նմանուն ՚ի նն , գԹագաւ-
՚ի ննե յո ծածկագիտն ամի , և առեալ դաս-
տառակ մի սք՝ եդ ՚ի վր ՚ի ծածկին երեսաց իւ-
րոց . և տպաւորեալ ՚ի նմին զկենդանագիր
իւր երկրպագելի՝ ետ նոցա ընդ փափաքանաց
աբգարու հանդերձ Թղթովն :

Օ այս Թուղթ եբեր (ասէ խորենացին) ա-
ննան սուրհանդակ աբգարու . ընդ որում և ըզ-
կենդանագրուի փրկչական պատկերին , որ
և կոչի սք դաստառակ , կամ անձեռագործ
պատկեր : Օ որս ընկալեալ աբգարու , և հա-
ւատով երկրպագեալ՝ մնայր լրման խոստ-
մանց փրկչին աներկբայ յուսով , մինչդի Թէ-
պէտև լուեալ զհամբաւս խաչելուեն նր , ոչինչ
Թերհաւատեաց . և ՚ի լսել զյարուն նր և
զհամբարձումն՝ և ս ընդ զևս հաստատեցաւ ՚ի
վր բանից փրկչին գրելոց ՚ի Թղթի անդ նր :

Ա՛պա յետ համբառնալոյ փրկչին մերոյ, և իջանելոյ հոգւոյն սրբոյ ՚ի վերնատունն, Թովմաս առաքեալ մի յերկոտասանից ՚ի կատարել զբան ՚ին իւրոյ և վիճակի, առաքեաց զմի յեօթանասնից՝ որ և եղբայր նր երկոքորեակ՝ Թադէոս անուն, ՚ի քաղաքն Եդեսիա, քժշկել զաբգար, և աւետարանել ը բանին ՚ին։ Եւ սքն Թադէոս եկեալ նախ իջևանեցաւ ՚ի տուն տուբիայ իշխանին բագրատունեաց, որք էին յազգէ հրէից. և յետ ձգելոյ զնա ՚ի հաւատս քնի՝ հանդերձ երևելի նշանօք և զօրուք, Ճանապարհ եբաց քարոզուել աւետարանին. քանզի էլ համբաւ նորա ը ամ քաղաքն, և եհաս յունկն արքայի։

Լուեալ աբգարու՝ ասէ. նա է՝ վասն որոյ գրեայն յե. և իսկոյն կոչեաց զնա. և երբ ՚ի մտանելն Թադէի՝ տեսիլ մեծ երևեցաւ աբգարու յերեան Թադէի. և յարուցեալ ՚ի գահոյիցն՝ անկաւ ՚ի վր երեսաց իւրոց, և երկիրեպագ նմ. և զարմացան ամ իշխանքն՝ որ շուրջն կային. զի ոչ գիտացին զտեսիլն։ Ասէ ցնա աբգար. եթէ դո՞ւ իցես արդարև աշակերտ օրհնելոյն յի, զոր առաք առաքել ինձ այսր. և կարօղ իցես բժշկել զցաւս իմ։ Պետրոս եհան Թադէ. եթէ հաւատացես ՚ի քն յե յորդի ՚ին, տացին խնդրուածք սրտի քոյ։ Ասէ ցնա աբգար. ես հաւատացի ՚ինա, և ՚ի հայրն նր. վ՚ոյ կամեցայ առնուլ զզօրս իմ, և գալ կոտորել զհրէայն՝ որ խաչեցին զնա, եթէ ոչ էի արգելեալ վ՚ս թագաւորութեն հռոմայեցւոց։ Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ Թա-

Թադէի՝ աւետարանեաց նմա և քաղաքին նը. և եդեալ ձեռն՝ի վը՝ բժշկեաց զնա առ ժամ մայն. նոյնպէս և զաբգիւս պատադրոս, այս է ոտնացաւ և անդամալոյծ՝ իշխան քաղաքին և պատուական յամ տանն արքունի, նաև զամ՝ որ էին՝ի քաղաքին հիւանդք և ախտաժէտք, բժշկեաց:

Այս հաւատացին ամենեքեան, և մկրտեցաւ ինքն աբգար և ամ քաղաքն. և զդուրս տաճարաց կռոցն փակեցին. և որ՝ի բագինն և՝ի սեանն կային պատկերքն, ծածկեալ պատեցին եղեգամբք. և ոչ զոք սծէր բռնութ՝ի հաւատս՝ ոչ Թադէոս առաքեալն, և ոչ աբգար Թգւորն. բայց օրըստօրէ յաւելեալ՝ի հաւատացեալն՝ բազմանային քրիստոնեայք: Ասէ առաքեալն ձեռնադրեալ այնուհետև՝ի վը եդեսացւոց եպս փոխանակ իւր զիսոյրարարն աբգարու՝ ադդէ անուն, Թողու զնա առ արքայի. և իւր առեալ հրովարտակ յաբգարէ վ՚ն ՃԻ հայոց մեծաց, զի ամենեքեան լուիցեն աւետարանին, գայ առ սանատրուկ քեռորդի նորին, զոր կարգեալ էր՝ի վերայ Ճին և զօրացն:

Այլ երանելի Թգէն աբգար վառեալ օր ըզօր՝ի սէրն քնի՝ ոչ բաւական համարեցաւ զդարձ Ճին իւրոյ, այլ փափաքեր քարոզ լինել Ճշմարտուե առ ամ ազգս, առաւելապս առ հռոմայեցիս բարեկամն իւր և առ պարսիկս և առ ասորեստանեայս. և զի յառաջագոյն իսկ ընտանուի մեծ ունէր ընդ օգոստոս կայսեր, և ընդ յաջորդն նը տիբերեայ,

յօժարեցաւ գրել Թուղթ առ տիքեր կայսր. որ ունի օրինակ զայս ։

* Ընդար արքայ Հայոց՝ ետն իմում տիքերի կայսեր Հռովմայեցւոց՝ խնդալ ։ Վասն լսել իմ, թէ ոչինչ ծածկի ի քումմէ Թագաւորէդ, այլ իբրև զմտերիմ ոք աւելի ևս իմացուցանեմ ի ձեռն գրոյ ։ Օ՛ի հրեայք՝ որ բնակեալ են ի գաւառս սպանեստինացւոց, ժողովեալ խաչեցին զքն առանց իրիք յանցանաց՝ ի վր մեծամեծ երախտեացն, զոր արար առ նո՝ նշանս և սքանչելիս, մինչև զմեռեալս անգամ յարուցանել. և գիտեա՛, զի զօրութիք այս ոչ են սոսկ մարդոյ, այլ՝ ոյ ։ Օ՛ի և ի ժամանակին՝ յորում խաչեցինն զնա, արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ տատանեցաւ. և ինքն յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց՝ և երևեցաւ բազմաց ։ Եւ այժմ յայմ տեղիս անուն նորա ի ձեռն աշակերտաց նր սքանչելիս մեծամեծս կատարէ. որ և առ իս ինքն եցոյց յայտնապէս ։ Եւ արդ այսուհետև ձերումդ քո գիտէ, որ ինչ արժան է հրամայել ի վերայ ժողովրդեանն հրէից, որք զայն գործեցին, և գրել ընդ ամ տիեզերս, զի երկրպագեսցեն քեզ իբրև Աստ մարիտ ոյ ։ Ա՛ղջ լեր ։

Եւ այսպիսի պանծալի նամակ ածեսեր արքային աբգարու, որ յայտնապէս քարոզ լինէր Աշմարիտ ածուէն քեզ, ոչինչ ընդեմ կացեալ ասել կայսեր՝ որ գիտակն էր տիեզերաշունչ անցիցն անցելոց, հեթանոսական մոռաք յանձն առնոյր Աստուած ճանաչել զնմ իբրև

զմի

պին ՚ի սուտ ըծօց իւրոց . քայց տակաւին ոչ
էչխեր առնել և զայն առանց Հաւանուբ ծե-
րակուտին . վայ արար սկսին ծաղրական առ
աքգար ըս օրինակիս ըս այսմիկ ։

* Տիբերիոս կայսր Հռովմայեցւոց՝ աքգարու
Հայոց Թագըն խնդալ ։ Ո՛ Թուղթ մտերմուբ
քո ընթերցան առաջի իմ . վայ ընորհակա-
լուբ՚ի մէնջ քեզ Հասցէ . Թէպետև ՚ի քազ-
մաց մեր լուեալ յառաջագոյն , եցոյց և պի-
զատոս ատուգապէս վբ նշանաց նորա , եթէ
յետ յարուԹենն ՚ի մեռելոց Հաւատարիմ ե-
զև քազմաց՝ Թէ աճ է . վայ և ես կամեցայ
առնել զայդ՝ զոր և գու խորհեցար ։ Ա՛յլ
քանզի սովորուԹի է Հռովմայեցւոց՝ աճ ՚ի
Հրամանէ Թագըն միայնոյ ոչ նստուցանել ,
մինչև ոչ փորձեալ քննեսցի նա ՚ի սինկղիտո-
սէ . վայ և իմ յայտնեալ զբանս զայս սինկ-
ղիտոսին՝ արհամարհեաց սինկղիտոսն . զի
ոչ քննեցաւ նա յառաջագոյն ՚ի նմանէ ։
Ա՛յլ մեք տուընք Հրաման ձեմ ուսմեք , որպէս
և Հաճոյ Թուբեսցի կրբ , ընկալցին զնա ընդ
աճս . և մահ այնոցիկ սպառնացեալ՝ որ չա-
րախօս կայցեն զքրիստոնէից ։ Ա՛յս վբ ժողո-
վրդեանն Հրէից՝ որ յանդգնեցան ՚ի խաչ
Հանել զնա , զորմէ լսեմ՝ Թէ ոչ արժանի
խաչի էր նա , այլ պատուբի և երկրպագուբ ,
յորժամ առից պարապուցն ՚ի պատերազմէս
սպանիացւոց ապստամբողաց յինէն , քննել
Հատուցից նոցն զարժանն ։

Ընթերցեալ աքգարու զայս գիր կայսեր՝
վնռեցաւ ՚ի նախանձ փառացն քոմի ընդէմ
ան-

անմիա խորհրդոց ծերակուտին , միանգամայն և ընդեմ չարեացապարտին պիղատոսի՝ որ արդարացուցեալ էր զանձն առաջի կայսեր . վճիռ յաւել գրել միւս ևս նամակ ձարտար՝ օրինակ զայս ։

* Ընդառ արքայ Հայոց՝ ՚ին իմում տիրելի կայսեր Հռովմայեցւոց խնդալ ։ Ողջունգրեալ ըստ արժանի քոյդ տրունձդ՝ տեսի . և ըստ հրամանի մտածունձդ քոյ ուրախացայ ։ Այս եթէ ոչ յաանուցուս ինձ , գործ պինկղէտոսիդ յոյժ այպանելի է . քանզի առ դոսա ՚ի քննունձէ մարդկան տուեալ լինի ածուին . և արդ այսուհետև եթէ ոչ լինիցի հաձոյ ածն՝ մարդոյն , ածդ լինել նա ոչ կարէ . և իբրև յայսմանէ՝ մարդոյն արժան է քաւել զածն . (այս է դէմ ընդէմ իսկունձէ ածուէ . զի ածդ է քաւիչ կամ սրբիչ մարդոյ . և ոչ է մարթ զհակառակն խորհել ։) Ասայ քեզ ՚ին իմոյ հաձոյ լծուեսցի առաքել զայլ ոք յերկիր փոխանակ պիղատոսի . զի լուծցի նա անարգանօք յիշխանունձէն՝ յոր կարգեցեր զնա . վճռ զի արար զկամս հրէիցն , և խաչեաց զքեզ ՚ի տարապարտուց առանց քոյդ հրամանի ։ Ողջ լինել քեզ ըղձամ ։

Ո՜յս դրեալ աբգարու՝ զհաւատսար թղթոյն ետ և ՚ի դիւանի իւրում՝ ի յիշատակ ձխմարտուձէ առ յապայս , ոմն և զայլսն ։ Այս յաւուրսն յայնոսիկ առիթ առեալ և ՚ի բանից ներսէհի մանկահասակ արքայի աստրեստաձնեայց որդւոյ արտաշիսի պարսից արքայի՝ գրեաց և առ նա ՚ի բաբելոն զայս ինչ ։

* Ընդ-

* Աբգար արքայ Հայոց՝ որդւոյ իմոյ ներ-
սէհի խնդալ ։ Օ գիր ողջունի քոյոյ տեսի ,
և զպերոզ լուծի՛ ի կապանաց , և զՇնաս նր
Թողի . և եթէ կամ իցէ քեզ , կարդեսցես
զնա՛ ի վերակացուն նինուէի , ոչ և կամիս ։
Այլ վա՛ այնր՝ զի գրեցեր առ իս , թէ տուր
ածել զայրդ բժիշկ , որ զնշանագ առնէ , և
քարոզէ այլ ած՝ որ՛ ի վեր է քան զհուր և
զջուր , զի տեսից և լուայց դմա . Ա՛յս ո՛չ եր
բժիշկ ըստ արուեստի մարդկան , այլ՝ աշա-
կերտ եր որդւոյն ՚ի՝ արարչի հրոյ և ջրոյ .
և վիճակ հասեալ՝ ՚ի կողմանս Հայոց առա-
քեցաւ ։ Ասայ յընկերաց նր գլխաւորաց՝ սի-
մոնէ անուն (այն է կանանացի) , նա՛ ի կող-
մանս պարսից առաքեցէ . խնդիր արարեալ՝
լուիցես նմա , յորժամ և Հայրն քո արտա-
շէս . և նա բժշկեսցէ զնա՛մ հիւանդութիւն .
և Ձանձապարհ կենաց ցուցցէ ։

Յաւել գրել ածասեր Թագրն և առ արտաշէս
արքայ պարսից գիր յորդորական վ՛ն բանից
այսոցիկ՝ օրինակ զայս .

* Աբգար արքայ Հայոց՝ արտաշիսի եղբօր ի-
մում պարսից արքայի խնդալ ։ Վ՛իաեմ ,
զի ար՛դ լուեալ է քո վ՛ն յի՛ քի՛ որդւոյն ՚ի՝ ,
զոր խաչեցին հրեայքն . որ յարեաւ ՚ի մեռե-
լոց , և առաքեաց զաշակերտան իւր ընդ ամ
տիեզերս՝ ուսուցանել ընդհանուր ։ Նա՛ մի յա-
շակերտաց նր գլխաւորաց՝ որ սիմոնէ ան-
ուանի , է ՚ի կողմանս քոյոյ ՚ի՛ր ուղեւորդ . արդ
խնդիր արարեալ գայցես զնա . և նա բժշկեա-
ցէ զնա՛մ ախտս հիւանդութե՛ն՝ որ ՚ի ձեզ . և

Ձա-

Ձանապարհ կենաց յուցանէ. և հաւատաց-
ցես քանի նը դու և եղբարք քո, և ամենե-
քեան՝ որ հնազանդին քեզ կամաւոր։ Օ՜ի
ախորժելի է ինձ զձեզ ըստ մարմնոյ ազգա-
կանս (յարշակունի տանէ պարթևաց)՝ լի-
նել ինձ մտերիմս հարազատս և ընտրեալս։
Ուր մինչդեռ պէտն այսոց թղթոյ ոչ էր ըն-
կալեալ՝ վախճանի քաջասէր և բարեպաշտ ար-
քայն աբգար, և փոխի յերկնից Թէոդորու-
թին, յամի ՇՆ՝ ի ծննդենէ անտի փրկչին
37, կի ըստ հասարակ հաշուի, 33. այն ամ
երրորդ էր քրիստոնէութե նը, և երեսնե-
րորդ ութերորդ՝ Թէոդորէ իւրոյ։ Օ՜որ բար-
ձեալ արքունի փառաւք՝ հանդերձ սաղմոսիւք
և օրհնութե՛ք Թագեցին հաւատացեալք՝ ի
քաղաքն անդ նը յերեսիա՝ առաջնորդութե՛ք
նը հայրապետին ադդէի. իսկ Թէ զինչ եղև
յաւուրս յաջորդաց նը, ունիս տեսանել՝ ի
վարս սը՛ին ադդէի, և նը առաքելոյն Թա-
դէի։

ԱՅԼ արժան է՝ ի սմին վայրի յիշատակել
և զբարեպաշտուհին հեղինէ զկինն աբգա-
րու՝ որ էր տիկնայ տիկին՝ ի Թէոդորէ հայոց,
և հաւատացեալ և մկրտեալ ընդ աբգարու
առն իւրում՝ փայլեաց առ նուաւս և յետ նը
ամ կարգօք ածնպաշտութե՛ ի քո։ Իսկ յոր-
ժամ սանսատրուկ արքայ մնչեաց զամ արու
զաւակ տանն աբգարու, և զաղջկունան հա-
նեալ յերեսից՝ յղեաց բնակել՝ ի կողմանս
հաշտենից, առաքեաց և զթագուհին հեղի-
նէ յառանձին կալուածս իւր՝ ի քաղաքն խա-

ւան՝

ուան՝ ’ի վեր թողլով նմա զտիկնուԹիւնն ամ
միջագետաց, փոխանակ բարեացն՝ զոր գը-
տեալ էր ’ի ձեռն նը՛ յաբգարէ։ Ա. յս հեղի-
նակ (ասէ խորենացին) զարդարեալ հաւա-
տովք՝ ոՂղ և զայր իւր զաբգար, ո՛չ հանդուր-
ժեաց բնակել ’ի մէջ կռապաշտից. այլ ե-
գաւ յԷդեմ յաւուրս կղոդեայ ’ի սովին՝ զոր
մարգարէացաւն ագաբոս. և տուեալ զնա
զգանձս իւր յեգիպտոս՝ դնեաց ցորեան բա-
զում յոյժ, և բաշխեաց ամ կարօտեալոց. ո-
րում վկայէ և յովսեպոս. որոյ և շիրիմ նշա-
նաւոր կայ առաջի դրանն յԷդեմ մինչև ցայս-
օր ժամանակի։

’Ա. դնիլ այսմ, ուր խնդիրք լինին առ իմաս-
տունս վասն գիւտի նը խաչին առ հեղինէ
դշխոյիւ մարըն կոստանդիանոսի, և ոմանք
պնդեն յառաջագոյն լինել զայն գիւտ, կա-
րի ’ի դէպ գալ մերոյն հեղինեայ Թագու-
ւոյ այն գործ պանծալի. բայց մեք ոչ կամ-
ցաք ընդ կարծեօք արկանել զհաստարակաց
կարծիս. զորմէ չէ տեղւոյս ասել։ Կարձեմք
և զայլ բանս պէսպէս յաղագս աբգարու.
զորս լուալ գտցես ’ի պատմուԹենէ հայոց և ’ի
ծանօԹուԹիս նը։ Ջ այժ է մեզ՝ ցայսվայր
ասացեալս ըստ խորենացւոյն յաղագս վարուց
երանելի Թգրիս մերոյ. այն է ըստ բանից նը
իՂելի, * բարեաց արմատն, և առաջինն հա-
ւատացեալն ’ի քո յազգէ հեԹանոսաց. ան-
դրանիկն ամ բարեպաշտ Թգրաց, ցանկալին
երկնաւորաց և երկրաւորաց, աբգարիոս ար-
քայն հայոց մեծաց ։ ։

Ա. ԿԱՆ.

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աբգն Ինդոսի և Պոմպեայի, և Պղերիկոսի քահանայի, և Արկուց բիւրուցն. և որոց ընդ նոսա:

Ի. դեկտ. 24. և 29: Տէ էէլ. դեկտ. 29. և յունվարի. 4: Ի. դեկտ. 28: Լ. դեկտ. 21. 25. և 28: Ա՛ստղնտ. Ը. յոյն = նէ: Աբեաթր. աս. սուրբոսի. դեկտ. 26. երես. 1101 = 1114: (1)

Ի ՆԴՕՍ ՆԱԲՈՒՌԻՆԻ, որ և Ինդէս փառաւոր վկայն, և Պոմպեա կոյս վկայուհի, ի հեթանոսութէ դարձեալք, ի կարգէ պալատականաց կայսեր ի նիկոմիդիա, վկայեցին յաւուրս Արկուց բիւրուց, որ քան հազար նախանձելի նահատակաց՝ որ կատարեցան հրկիզութէ ի նիկոմիդացւոց քաղաքին: Որոց թէպէտև յայսմաւուրք զատանեն զպատմութէն սոցա՝ իբր յայլևայլ աւուրս կատարման ակնարկելով, բայց մեզ արժան է ըստ միով վկայաբանութէ աւանդել զնոսին՝ ըստ ձառընտրին. զոր և անայլայլակ պահէ գրեթէ ծայրէ ի ծայր մետափրաստէս. և ունի միաբան գրուածին այսպէս:

Ընդ ժամանակսն ըստ այնոսիկ եղև թէքրե-

ա-

անօրինին Մաքսիմիանոսի (որ և Հերակլէս գահակից դիոկղետիանոսի , կամ գաղերիոս արմենտարիոս՝ անուանակից նոցա) . և յերկրորդում ամի ինքնակալութեանէ իւրոյ հալածանս յարուցանէր՝ի վր՛ եկեղեցւոյն այ . և կատաղի զայրացմամբ վառեալ՝ի պատերազմ ընդեմ զօրաց բարձրելոյն՝ զամ հնարս մեքենայից չարասէր բանսարկուին իբրև զվարմ որսողաց պարփակէր՝ի վերայ այնոցիկ , որք քաջական հաւատոցն էին պաշտօնատարք , և արհամարհօղք մնոտիապատիր դիցն մոլորութեանէ ։

Ընդ՛ի սոյն ժամանակի էին քեզմք յուղղափառաց դասուցն արք երկիւղածք յոյ և Ճշմարտասէրք , հմուտք քերթողական և Ճարտարասան արհեստիցն , և առաւել ևս ծայրին գիտութեանէ և քնապատում վիպութեանէ փրկական աւետարանին առլցեալք . որք զամ հանդիսեալն և զանդանօր դործեցեալն՝ի ժամանակին իւրեանց՝ ՛ի ձեռն գրոյ պատմագրին , անմոռաց յիշատակարան թողլով զկնի իւրեանց եկելոցն ։ Որոց մի էր յայնցանէ երանելին Կիւրղոս՝ սրբազան քահանայապետն Նիկոմիդացւոց՝ի նահանգին բիւթանացւոց (որ կարծի յաջորդ սըքն թէոպոմպայ եղեալ , և է յայտնի նախորդ սըքն անթիմոսի) . այն՝ որ զսարդարեալն էր ամ քաղաքավարութեանէ ըստ այ ։

Վասնզի շիներ նա զեկեղեցիսն այ զանկեղծն և զկործանեալսն յանուծ հելլենացւոցն , կանգներ զմատուռնս մարտիրոսացն , և հաս-

հաստատեր զմիայնաստանս ձգնաւորացն . և քանիւ վիպուէ իւրոյ զօրացուցանէր զթե. բացեալսն ՚ի նոր հաւատոցն , և զամ ձանա. պարհս ձշմարտութիւնէ և զգործս արդարուէ սերմանէր ՚ի յամենեցունց լսելիս . մինչև ձեռնարկել և նմա առ այնոսիկ՝ որ յարքու. նական ապարանսն էին բնակեալ , և զյո. քունս ՚ի նոցանէ հաւանեցուցանել ՚ի պաշ. տամունս քրիստոսի արդար օրինացն . որք թո. ղեալ զձոխութիւն երեսելի մեծութենէ նոցա՝ կինչս և զստացուածս բաշխէին տնանկաց և կարօտելոց , և բոլորովին քրիստոսիւրէին զան. ձինս իւրեանց :

Օ այսոսիկ լուեալ ամպարշտին մաքսիմիա. նոսի՝ ներել ամենևին ոչ կարաց , այլ քանզի կրկին պատերազմաւ պաշարեալ էր՝ ուծա. մարտ լինել ընդդէմ եկեղեցւոյ , և վանել մարտիւ զբարբարոսս , զառաջինն թագաւ. ցանէր առ ժամանակ մի , և ասէր . ՚ի զրաւ լինել բարբարոսական մարտին՝ դարձեալ ըզ. գուշութիւն խնդրեաւ քննելոյ զքրիստոնեայս , և պահանջելոյ դատաստանաւ զվրէժս յար. համարհողաց անմահ դիցն , և յայպանողաց ուրուէ և արդար օրինացս հռովմայեցւոց . և այսպիսի գոռոզութիւնք խաղայր գնայր ՚ի պատերազմին առաջիկայ :

Նոքա բարեպաշտուէ ջահն և զամբարն ձրշ. մարտուէ , հուրն այն ուծայինն՝ զոր եկն ար. կանել յերկինս բոլորից ուրն , վերստին վա. ռէր յայնմ վայրի ևս քան զևս . և քնի զին. ուցչքն անպարտելի հաւատովք պատրաստ

լինէին հանդիսանալ ՚ի Ձակատամարտն . քանզի լսելով լուեալ էր նոցա զսպառնալիս բռնաւորին , զոր խօսեցաւ մեծաքարբառ

Հպարտութիւնն ։

Ա.րդ մինչդեռ յայս վիճակ կայր հօտն քրիստոսի , յանկարծակի երևեցաւ արեգակնափայլ ծագմամբ աստղն բարետեսիլ և վայելուչ յոյժ , գերապայծառ և մաքրամիտ , և ամ պարկեշտութիւնք զարդարեալ կոյս մի չքնաղ և զարմանալի , որում անուն Հռոմիա կոչէին , (սյն է պօճիա կիմ պօմինա , որ Թարգմանի հռովմայեցւոց բարբառով պէրուհի ,) ազգաւ և փառօք երևելի , անեալ ՚ի գահոյս Թագաւորական առագաստին . որ և յամենպարշտեն մաքսիմիանոսէ կարգեալ էր քրմապետութեան ՚ի սպասաւորութեի պաշտաման սնոտի աճօղն , որ ՚ի ներքս յարքունի ապարանս էին կանգնեալք . և առաջին իսկ էր սա և գլուխ քրմուհեաց , և ամ գոհիցն և ձօնմանց դիցն երկոտասանից վերակացու և իշխեցօղ ։

Ա.յլ զի խնդրեր բարի ծառն երկիր բարի , և ձիթենին պտղաբեր հաստատիլ ՚ի տանն ամ , տնկեաց ամ ՚ի միտս դոմնայի զխորհուրդն ամպաշտութեն , յորմէ շարժեալ զօրանայր հոգւոյն իմաստութ . և սակաւ սակաւ յառիթս պէսպէս ՚ի լսողութեի եկեալ ամային պատուիրանացն՝ ընդունէր զձաձանչ լուսոյ բարեպաշտութեն . և ըղձայր ծարաւի ոգւով հասանել սիրոյ անմահ փեսային ։ Որ և ՚ի ձեռս բերեալ զիւրս Թղթոց ամբընկալ ՚ոչն պօղոսի՝ հանապազ ընթեռնոյր , աշխատ

տասիրաբար խոկալով ի նմա ի տուէն և ի գիշերի . ըստ նմին և զգիրս գործոց առաքելոցն :

Այլ ձանձրացեալ եղեալ ամ հոգեպատում և ծածկրաշ բանիցն և նշանագործութեանց որ ի նմա , զուարձացեալ ցնծայր և թերկրեր ըստ շահաբերան հոգւոյ իւրոյ . մանաւանդ զի այնպիսի գանձուց հանդիպեալ ի միտ առնոյր զառաջինն տնանկութեն իւր ըստ հոգւոյ ի մարմնաւոր ձոխութենէս , և յաղագս ունայն գոլոյն իւրոյ յայնպիսի բարեաց և ի լուսոյ ճշմարտութենէ յանցեալ ժամանակս՝ խորին գիշեր զանցեալ իրս կենցաղոյս ի վէր իւր համարէր . և ոչ ժուժէր այնուհետև յապաղել գալ ի բարեպաշտութենէ հանդէս :

Այլեր ծածուկ դաղտաբար ի գիշերի առ ինքն կոչս մի հեզ և համուտ ածային օրինացն՝ դուստր խորհրդական սինկղիտոսի միոյ ի պատուաւորաց քաղաքին , և ցանկայր տեսանել մամբ մեծաւ ստուգել զիրս ճշմարիտ հաւատոցն քրի և պաշտամանցն . և ուսել ի նմանէ զարժանն՝ փութայր քաղաքավարել առաջնորդութենէ նր ըստ ածպաշտութենէ կարգի . և նովաւ յառաջեալ ի դեղեցկագոյն խորհուրդն՝ ի մկրտութենէ կանխեր : Ապա յարուցեալ ի միում գիշերի զանխլաբար յամենեցունց դոմնա հանդերձ ներքինեաւ միով՝ գային առ ըբ քահանայապետն կիւրղոս . և հանդիպեալ նմա՝ յայտ առնէին զփափաքումն իւրեանց ի քն :

Այլ նր ընկալեալ զնս ուրախութենէ մեծաւ ,

և

եւ խրատեալ զնա ուծական պատուիրանօք , եւ
վիպեալ զհաւատն Քրիստոսութեան՝ ինագրերը
զնա քրիստական նշանաւն , եւ իսկոյն ընդ երա-
խայան կարգեր . եւ կատարեալ զսովորա-
կանն՝ հրամայեր միւսմ ՚ի սարկաւագացն ,
որում անուն էր ագապիոս , կրթել զնա օր
քան զօր ։ Իսկ երանելի կոյսն դումնա այնու-
հետեւ յաղօթս եւ ՚ի պահս պարապեալ զկոտ-
վին մուռանայր զհեղղենական ցոփութեանցն
կրթութենէն ։

Այս ոչ ոք գիտեր ՚ի պալատան զկոչումն ըն-
ծայութեանն դումնայի ՚ի կեանս անմահ , բայց
միայն առաքինութենն էր վերձաւոր ներքինի
մի , որում անուն էր Ընդոս կամ Ընդես Ճա-
նաչիւր , սղգաւ եւ տոհմիւ բարբարոս (այր
օտարազգի ՚ի յունաց եւ ՚ի հռովմայեցւոց) .
թէպէտեւ բազում ինչ բարբարոսի , այլ ազ-
նիւ եւ պատուական , եւ ամ արդարութենէ ըն-
դունակ ։ Այս ոչ ըստ նմանութենէ կուսին առ
հաւատոն ևեթ ընթացաւ , այլ ՚ի մարտիւ-
րոսութեն անգամ յառաջ քան զնա ըղձալի
տենչմամբ փութայր թևաւորիլ . զի յան-
չափս վառեցաւ ՚ի սէրն քրիստ ։

Ընդ իբրև երկաքանչիւրքն եկեալ հասա-
նէին ՚ի սահմանադրել կէտ պայմանի մկրը-
տութենն , արժանացեալք լինէին քրիստական
կնքոյն վերստին ծննդեամբ սբ աւազանին ,
և օծման սբ հոգւոյն , և որդեդրուե հօրն
երկնաւորի՝ յարժանաւոր ձեռաց սբ եպիս-
կոպոսին կիւրղոսի . յորմէ և զերկնայինն ըն-
կալեալք զպատուական մարգարիտն՝ (այն

Ե՝ որ հաղորդութիւն ըստ կոչման հին դարուց), հասին հրաւիրմանց հոգւոյն սըբ։ Եւ որ յայնժամ առնչալն կոյսն դումնա ոչինչ առեալ քան զչորեքտասան ամաց [2]. որ հոգւով գիտութեամբ պարփակեալ ամրացոյց զինքն առնարատ մաքրութեամբ երանելին այն՝ հեռացեալ այնուհետև յամէն զգալի զբօսանաց, և՛ի բաց կացեալ՛ի անոտի և՛ի պատիր խաբէութեանց ստորաքարշ յաւիտենիս այսօրիկ, իմանալի կենաց հացին և ՚ծծային բանից միայն պարապելով։

Ընդ երթեմն առեալ՛ի ձեռս իւր երանելի կոյսն զծծային մատեանսն գործոց առաքելոցն, յընթերցուլն՛ի վեր հասանէր վազվաղակի բանին այնմիկ, յորում աշակերտեալքն առաքելական քարոզութենն վաճառելով զինչս և զստացուածս՝ բերէին դնէին առ ոտս առաքելոցն զքսակ արծաթոյն առ՛ի բաշխել զայն կարօտեալոցն։ Եւ զայս բարեաց յիշատակարան՛ի միտ առեալ ցանկալին կուսիկ, ոչքափ և ունէր արծաթեղէն և ոսկեղէն կահ սպասուց և հանդերձս պատուականս, ժողովեալ, և իւրոց ծառայիցն բարձեալ՝ գնաց՛ի գիշերի առ երանելին կիւրղոս. և աղաչէր զնա մեծաւ պաղատանօք՝ ընդունել զայնոսիկ, և ձեռօք իւրովք բաշխել աղքատաց. և ինքն լռելեայն յիւր ստորական սենեակն դառնայր՛ի պալատն արքունի։

Յաւուրն յայնոսիկ նա ինքն սքն կիւրղոս՝ ըստ հոգևոր երկանց վերստին ծննդեան հայր կար-

կարդացեալ դոմնայի , լքանելով զերկրաւորս կենցաղս՝ փոխեալ լինէր յերկինս առ Հայրն հասարակաց . և նշանք երևելիք լինէին ՚ի վախճանի նր ՚ի տեսիլ քաղմուԹե հաւատացելոց ։ Նակ երանելի կոյան Թէպէտև տխրէր ըստ մեկնիլ նր յաստեացս , այլ կնքեալ պահէր ՚ի սրտի իւրում զնմ դաշինս արդարուԹե Ձշմարիտ քհնյապետին՝ Ձգնողական առաքինուԹե նորին նախանձաւոր և նմանօղ լինելով ։ Նայև երանելին ինդես ըստ նմին Ձրգնեալ մաշէր զանձն պահօք . քանզի առ երեկոյս էր կերակուր նց հաց և ջուր միայն . իսկ զնմ դարմանս պիտոյիցն՝ որ ՚ի Թզրականս ապարանիցն մատակարարէր առ նոսա , յաղքատս ծախէին . այսպէս առնելով զօրհանապազ՝ բնաւ ոչ ումեք յայտնեցին զիրս , այլ՚ի ծածուկ ունէին յամենեցունց ։

Նայց զի չէ պարտ և պատշաճ քաղաքի՝ որ ՚ի վեր լերին՝ Թաքչել , և ոչ լուսափայլ Ձրագի դնիլ ըստ գրոՀանաւ , կամ ածային գանձուցն անյայտաբար ծածկիլ ըստ Հողով , անտուստ ուրեմն չարադև արանց մախացեալ ըստ բարի գործս նց՝ Հետամուտ եղեն իրին այնմիկ . և այնպէս ՚ի վեր բերեալ զբանն՝ Ձառէին մի ըստ միոջէ զնմ ՚ի յումնէն մեծի մատակարարին , որ կարգեալ էր ՚ի վեր արքունական պալատանն և գերդաստանաց ինքնակալին ։

O որ լուեալ նր՝ տանջանս ոչ սակաւս ածէր ՚ի վեր ինդոսի և դոմնայի , և գանս բազումս և նախատինս Հատուցանէր , Թէ կարգեալքն չեզ ՚ի Թզրական ապարանիցն ոՀրպէս վատ-

նին, կամ յինչ պատս ծախին։ Այս նոքա ոչ յայտնէին զըզձալի գիւտս հոգևոր շահիցն, այլ մեծաւ համբերութիւք կային մնային հատատուն ի ջանս նահատակութենն. զի մի մարդասիրութենն հատու մնայ՝ որ առ կարօտեալն եր՝ խափանեցի։

Բայց մի ոմն ինելքինեաց անտի (ըստ ոմանց՝ ազգաւ պարսիկ) սու իշխանն մատուցեալ՝ զմեծ և զգովելի գործ առաքինութենն նոյ իբրև զպարտաւանս ինչ պատմէր. մաքուր են ասէ, և ի կերակրոց ի բաց կացեալք, և հրաժարեալք ի հեշտութենէ, և տառապանօք ինն ձնշեալ մաշեն զանձինս. և ամ ինչ՝ որ յարքայէ առատատրեալ պարգևք ի դառա հասանեն, հակառակորդաց արքայի և ըստոցն՝ կերակուր լինին. և եթէ կամիցես լսանալ ձշմարտութիք, բաց զշտեմարանսնոյ, և տես՝ թէ զինչ ի նոցանէ ունիցին։

Այս իշխանին մտադիր յօժարութիք լուեալ յանօրինէ անտի՝ վաղվաղակի հրամայեր բանալ զսենեակ սպասուց նոյ. և ոչինչ գտանէր ի նմա, բայց զնշան ուրուննական խաչին, և զմատեան սքանչ առաքելոյն պօղոսի վերնագրեալ թղթոյն. ըստ նոսին և զգիրս գործոց առաքելոցն, և բուրվառ խեցեղէն և ձրագ, և փայտեղէն փոքր ինչ տապանակ, յորում զնշխար ոսկր հացին շտեմարանեալ պահէին, զառանց աւետարանաց կերակուրն՝ յորմէ հաղորդեալք լինէին. և երկուս ձորձս կիսփսխած շարամանեալս ի խոտոյ [3], որով մերկ ի վեր տրամ գետնոյն եղեալ լինէին.

նէին . և այն էին պատուհասեր անկողինք պոմպայի և ինդոսի աղնուականացն և ձիմարտասեր երանելեացն :

Եւրդ հարցանէր զնոս իշխանն ցասմամբ , և ասէր . ո՞ւր է ոսկին մաքուր զարդուցն , և հանդերձքն ձեր պատուականագոյնք , և ասնօթքն երևելիք : Նոքա երանելիքն ոչինչ փոյթ առնէին հարցման նր , և ոչինչ տային ամենևին պէնսէ , այլ գլխակորեալք ընդ երկիր նայէին լուռ լեայն . և ի սիրտս իւրեանց գոհանալով զնոսն՝ աղօթս մատուցանէին՝ ակն ունելով երկնաւոր վարձուցն և անանց բարուցն : Յայնժամ արքանեակ չարին մատներ զնոս ի չարչարանս՝ հարկանելով զմարմինն նց ջլատիւք , և արկանէր ի բանտ մի խաւարչային , մինչև ծանուսցէ զնոսմ իրան ստուգութիւնն թագաւորին՝ որ էր ի քաղաքի :

Նա նք այնպէս կային ի կապարանին զաւուրս բազումս . և միայն կենդանի հացն էր նց կերակուր , և ածային չնորհն էր նց ըմպելի . և այնչափ տառապանս կրեցին , զի և հացի կիմջոյ կարօտ մնային . զի դառն և անհնարին էր հրաման անօրէնն իշխանին ի վր բանտապանացն . քանզի ասէր , թէ փոխանակ այնորիկ՝ զի նք զորովայնս քաղցեալս լցուցին , նոյնպէս որովայնք նց մաշեսցին ի սովոյ , և կիզեալք ձնշեսցին ի տապոյ ծարաւոյ : Նա այնպիսի անողորմ տանջանս ի վր վկայիցն ոյ հասուցանէին , մինչ զի ի ցաւս հիւանդուէ անկանէր կոյսն փափկիկ , և ոչ ուստեք էր մխիթարուԹիւն գտանել :

Ա՛նգանօր նոյնժամայն ողորմութիւն գԹուԹիեցն ՚այ հասանէր ՚ի վե՛ր նմ՛, այն՝ որ բանայ զձեռն իւր, և լնու զամենեսեան կերակրովք. զի մինչդեռ ՚ի հսկման գիշերին ըզսովորական աղօթիսն կատարէին, երևեցան նոց երկնային դասապետութիեցն զինուորութիքն. յորոց և ՚ի փայլատակմանց լուսոյն առեգակնակերպ ձառագայթիցն երևէին հիմունք բանտի։ Այլ ողջագուրեալք երանելեացն ՚ի նը զօ՛արթնոցն՝ զօրացան, և յաղթուցեալ կային յաղօթս. և տեսին սեղան լի ամբարուք պատրաստեալ նոց. ապա քաջալերս տուեալ երանելի կուսին՝ վերացան հրեշտակքն յերկինս։

Ասէ սքէնն հաղորդեալք յերկնային սեղանոյն՝ ոչինչ յիշելին զանցելոց ժամանակաց վիշտս չարչարանացն. զի փարատեալ մերժեցաւ ՚ի նոցանէ ամ՛նեղութի՛ն նոցա. զի թէպետև ՚ի կապանս բանտին կէին, սակայն ՚ի հեշտալի կերակրոցն զօ՛արձացեալք՝ մոռանային զտրտմութի՛ն, և հանապազօր զդաւԹեան նո՛ւճագն երգէին. ո՛ւր ՚ի Ձարպոյ սպառարտուԹի՛ն լցոյն անձն իմ, և շրԹամբք ցընծուԹի՛ն օրհնեսցէ զքեզ բերան իմ։

Յետ այսորիկ յաւուր միում հասեալ լինէր անդ ինքնին Իշխանն, գիտելով՝ Թէ պակասեալ լինին ՚ի սովոյ, զի այնպէս հաւանեցուցանել մարԹասցի զնո՛ս ՚ի կամս իւր։ Ասէ յորժամ տեսանէր զնոսա պայծառս և զբա՛ռնարԹս և բերկրեալս և խնդալից երեսօք, հիանայր մեծաւ զարմացմամբ. և յերկիւղի ե-

եղեալ՝ ցնդմամբ մտաց կարծեր յածօցն ե-
ղեալ զսքանչելիս հրաշիցն ՚ի վեր նց ։ միան-
դամայն և ՚ի թշերն ակնածեալ վե ինքնա-
հրաման նեղեալ զնե՝ հրամայեաց այնուհե-
տև արձակել զնա , և թողացոյց կալ ծնալ
նց ըստ կամաց իւրեանց յանդորրութե ։ և զպի-
տոյից նց զկարգս , զինչս և զհանդերձս ե-
րևելիս և զամ պետս դարմանաց ոչ նուազ
քան զոր յառաջագոյն՝ շնորհեր նց ։

Այլ կոյսն այն վե անձին իւրոյ ոչ իմիք ինչ
փոյթ առներ յայնցանե և ոչ կարօտանայր ,
բայց միայն վե աղքատացն դասուց միայն
հոգայր թե որպես կերակրեսցե զնոսա , և
լցուսցե զկարօտութի նց ։ Այս և զղարդս
անձին իւրոյ ՚ի բազում մասունս հատանե-
լով բաշխեր աղքատաց ։ նաև աւուրս ոչ սա-
կաւ անսուաղ կացեալ՝ զկեբակուր իւր ըն-
ձեռեր աղքատաց ։ զոր տեսեալ և այլոցն
ևս՝ բազմութի ՚ի դուրս նր նստեալ դեգե-
րէին ։ Յայնժամ ՚ի տարակուսանս ըմբռըռ-
նեալ դոմնայի՝ ոչինչ ունելով պետս ՚ի լիուե
բաւականին այնքան ժողովելոյն , ապա դար-
ձեալ կրկին անգամ ձգեալ զձեռն իւր ՚ի
սապատակ զարդուց իւրոց , և զգօտին իւր
զայն՝ որ ականբք պատուականօք և մարգար-
տով եր ընտրեալ , և պայծառացեալ յոյժ
ոսկւով և արծաթով , ժողովեր ՚ի միասին՝ ի-
ջուցաներ ընդ պատուհանն , և առաքեր առ
ագաթոփոս սարկաւագ (որ ըստ սուրիոսի՝ ալի-
պիոս) , և աղաչեր վաճառել զայնոսիկ , և
զգինս նց տալ կարօտելոց ։ և թե սոքիմբք

որ-

ուրեմն բազմութեանն տնանկաց եղև ձեռնտու, ոչ գոյ ասել։

Ա.ՅԼ քանզի ոչ էր պարտ այնպիսի մաքուր և անաղտ կուսութեանն, և ամ առաքինութեանն զհետ գնացելոյ անձին՝ շաղկապիլ ընդ պատրանս ցանկութեանն անոտի կենցաղոյս ի յարկս մեղաւորաց, կամ ի գաւթիս ամպարշտաց թիգնաւորաց բնակել, այնուհետև ի հայրապարծ աղբերէն այս ինչ անօրինեցաւ ի միտս երանելւոյն։ Օ մտաւ ածէր զնածահօրն զմեծի մարգարէին դաւթի զխորհրդական հանդէսն՝ ի ժամանակի, յորում փախուցեալ էր ի սաւուղայ, թէ ուրպէս այլայլեալ ըզդէմն իւր անզգայապէս, և արտախելացն նմանեալ՝ յափսիթերս խաղայր, և այնպէս ի չխմարիտ անզգամացն ի բաց ձողոպրեալ եղև, և հաւ զյաղթութենին մեծ։ Այսպէս և սա զկամաւորական և զմարտիւրոսական կիրս յանձին բերեալ, և զչքնաղ գեղեցկուն պատկերին իւրոյ անշքացուցեալ յաչս տեսողացն, ի ձեռն այնր հնարէր զերծանել յանզգամացն պագշտուածէ. զի անբիծ և անարատ եւցէ յառաքեալսն վերին հարսնարանին. վայ յանկարծակի ելանէր ի սենեկէն ի կերպարանս անզգայից, ջուջերը զաչս իւր, թօթափիէր զարտեւանունս իւր, թողացուցանէր զտողունս ի վր պարանոցին ցլանջս, փրփրէր և անյայտ ձայն արձակէր. երբեմն զկական լալոյ բարձեալ, և յանկարծակի բարկ ծիծաղելով, և կրճտեալով զատամունսն։

Օ այս

Օ այս տեսեալ այնոցիկ՝ որ յապարանս Թա-
գաւորին էին, զոմանս գութ և վաղաքշանք,
և զոմանս սխրացումն զարմացման պաշարէր.
և գողումն և զարհուրումն ըմբռնէր զամե-
նեսեան ։ Օ որ լուեալ մեծի հազարապե-
տին՝ որ էր ի վերայ համ կայսերական պազա-
տանն, ետ առաջի իւր բերել զնա. և տե-
սեալ զեղեալն՝ Թուէր ցաւագնիլ և կարե-
կից լինել նմա. քանզի և յայնժամ յաւէտ
ուժգնակի շարժէր վկայուհին այն, և սաստ-
կագոյն երևեցուցանէր զախտն, յորժամ
իշխանն ի նա հայէր ։ Ասաի և յերկիւղի
եղեալ հազարապետն՝ բազում պահապանս
նմա կացուցանէր. զի մի ինչ վիշտ չարեաց
կրեսցէ, կամ ի վախից մղեալ՝ քարաւիժ լի-
ցի. և էր այնուհետև ոչ սակաւ Թախծուն
պահապանացն վերն. քանզի ստէպ ստէպ
անյայտ աղաղակէր և կոծէր զանձն առաջի
նոցունց ոմն զայսպահար ։
Յայնժամ մատուցեալ նոցա առ ներքինա-
պետն՝ աղաչէին զնա յաւէժապէս՝ առ քրիս-
տոնեայն արձակել զկոյսն. զի բազումք ա-
սեն նմանն սմին զառաջեալք ի մտաց՝ զա-
ռողջուն գտին ։ Օ այս ինչ նք վերն անձանց
հայցէին. զի Թերևս ազատեսցին ի ծառայ-
ութենէ նր. այլ ածէ ըստ կամաց իւրոց բերեալ
հաստատէր զայն՝ որ ինչ կուսին իղձք ցան-
կութենէ էին զերծանիլ ի ձեռաց անօրինաց.
զի զանխլացեալ լինէր բանն՝ ըստ առակին,
ձիոյ խստերախի Թոյլ տալ ի դաշտի, կամ
զէրփին առ ջուրս ածել բռամբ ։ Ընկնդիր
եղև

եղև այսոցիկ իշխանն մեծապետութիւն . քանզի և նա կամէր ազատանալ և արձակիլ ՚ի ցնորից անտի :

Յայնժամ վաղվաղակի կոչէ զեպիսկոպոսն առ ինքն , այս և ըմբն անթիմոս՝ որ էր յայնժամ՚ի նիկոմիդացւոց եկեղեցին յետ կիւրղի յառաջասացեալ քՀիւպատեին : Այս եկէնէր վաղվաղակի հոգւով ծանեաւ զիրան , որ յաղագս կուսին . այլ թաքուցեալ ՚ի սրտի իւրում՝ կայր լռելեայն : Այնպէս և կուսին տեսեալ զքՀիւպատեան՝ այլ ոչինչ անպատշաճ կամ մոլեկան ցուցանէր յանձն իւր , այլ յերեսաց սբեղն խորշեալ՝ հեղ և խաղաղական տեսութիւք զգաստացեալ երևէր . մինչ զի զամենեսեան զարմանք ըմբռնեալ էր , հիացեալ՝ թէ արպիսի զգուշութի՛ երևեցաւ յերեսս եղիսին , որ զանզգայացեալն ՚ի զգաստութեան փոխարկեաց :

Այսպա իշխանն մեծաւ աղերսանօք աղաչէր զեպիսկոպոսն՝ առնուլ զկոյսն առ ինքն , ընդ նմա և զինդոս , և ինչս բազումս ՚ի պետս դարմանին նոյ . Թերևս հնար լիցի ասէ բժշկութե՛ : Այսպէս ընդունելի՝ առաքեաց ՚ի վանս կուսանացն զդռնին , ոմն և զինդոս առ միանձնուհին . և ո՞ կարէ ասել , Թէ արչափ խրախճանեալք լինէին երանելիքն , և սիրով հոգւոյն առլցեալք :

Ի սոյն ժամանակի դառնայր մաքսիմիանոս ՚ի պատերազմէ բարբարոսաց մեծաւ յաղթութե՛ և ուրախութի՛ դիպն օգնականութե՛ մակապրելով զյաջողուճած մարտին . վ՚ս որոյ

ընծող

ամօթ իւրոց զօհս ձօնմանց կատարելով, և զարդարելով զմեհեանս նոյ, ձիրս պատուոյ բաշխեր քրմացն. և խորամանկ խորհրդով ջանայր զամ ազգս հնազանդեցուցանել անաւծ պաշտամանցն այնոցիկ և չարասէր կրօնից։ Յայնժամ և՛ ի ստադիոն ասպարիզին տեսարանս խնջոյից յօրինէր, և կոչէր զամ քաղաքն՝ ի հանդէս խաղուցն. և յետ արշաւանաց ձիընթաց կառամարտից՝ հրամայէր քրմապետացն զամ ստուտանուն դիս ամօթոյն զոսկեզինսն և զարծաթեզինսն բերել՝ ի տեսարանն. և զարդարէր զնա պէսպէս և հրաշալան պայծառուբ, և նախադրէր զնա՝ ի վէր թիւրական գահոյիցն։ Այս հրամայէր ամենեցուն երկրպագուել մատուցանել նմա ընծայս. և զպաշտօնեայս ամօթոյն պսակէր ոստովք ձիթենեօք և խոմիսական շոձիւք (որ ձօնեալ պոսիդոնի). և ցուլս և զոչխարակս զենեալ՝ առնէր տօնս ամօթոյն և ամօթուհեացն զօրն զայն. և զարիւն զոհիցն հրամայէր քրմացն սրսկել՝ ի վէր ամ զօրականացն։ Յայնմ վայրի գտան ոմանք՝ ի քրիստոնէից՝ եկեալք ոմն՝ ի հանդէս քաղաքական խաղուց. և սոքա իբրև տեսին զչարաչար կատարած հանդիսին, ոչ ևս հանդուրժեալ չարին՝ ի բաց երթային՝ ի տեսարանէն, լաւ համարելով զմահ անձանց՝ ք զշաղախել արեամբ անաւծ զոհիցն։ Ասէ անօրէնն մաքսիմիանոս մրմռեալ ընդեմ նոյ՝ ակսաւ հրապարակախօս լինել առ բազմամբոխ ժողովն հեթանոսաց բարձր բարբառով, մեծացուցանելով զսուտ

ամօթս

ըածս իւր , ևնոյ ընծայելով զամ բարիս ՅԻ՝ որ յերկնէ ևորյերկրէ , և զմեծանալն Թէոդոսէ հռովմայեցւոց ՚ի վեր ամ աղգաց՝ յոխորտ բանիւք ամբարտաւանութէ : Ա՛ւ մինչդեռ բանքն ՚ի բերանն էին ամպարշտին , յանկարծակի եղև Ընդիւն որոտմանց , և յահագին փայլատականց հրոյ շանթահարեալ կիզան մահն քաղաքին , և երևելի մեհեան կռոց . և կարկուտ ահեղ տեղացեալ ՚ի խաւարային ամպոց՝ հանդերձ յորդութէ անձրևաց իբրև հեղեղ ծովածաւալ՝ զամ սահմանս արտաւարացն հանդերձ պտղովքն ծովու աւանդեր . և բազմութէնն ըստ միմեանս խառնեալ յահաւոր սպառնալեաց՝ ընթադրելով զմեռեանս կոխան առնէին , և բազում դիակունք աւազք յերկիր անկեալ մեռանէին . և ինքն Թէոդոն մազապուրծ անկանէր յապարանս իւր . այլ զայսպիսի անաչխուժելի դատաստան ահեղ դատաւորին ՚ի դիպուածս համարեալ չարաբաստ իշխանն , ոչ մի ինչ ղեղջ բերելով՝ տակաւին կայր մնայր ՚ի նմին յամառութէ ընդեմ քրիստոնէից :

Ա՛պա յետ աւուրց յատեան նստեր , և հրամայեր ածել՝ զորս յընծայաշտութէ գտեալք լինէին . և արդար արեամբ անարատիցն կամէր ցածուցանել զսրտմտութէն սրտի իւրոյ : Հարցանէր և ՚ի դամնայի և ինդէսի , և զայլոց ոմանց, զի ոչ երևէին ՚ի պալատան կամ յատենի : Ա՛սէ ներքինապետն . դամնա անկեալ է ՚ի զգայութէնէ . և առ այժմ առ այնոսիկ է՝ որ զայնպիսիսն գիտեն բժշկել . և ընդ

նմա

նմա է ինդէս ՚ի պահպանութէն և ՚ի սպասաւորութէն նը ։ Իբրև լուծաւ զբանս գայսոսիկ Թէրն , բոլբոքէը ցասմամբ՝ Թախիծ սրտին բերելով՝ ասէր . ով անիրաւ դու և չարադգնդ ՚ի մարդիկ , զդուխս այսահարել հեռացուցեր ՚ի բարերարութէդ ածոցն , ընդէր և զինդէս պաշտօնեայ ածոցն և ածուհեացն օտարացուցեր ՚ի պաշտամանէ ։

Օ այս ասացեալ՝ հրամայէր լուծանել զգօսի՝ ներքինապետին զընդելուզեալն ակամբք և մարգարտովք , և մերկ և խայտառակ շրջել քեցուցանել ընդ քաղաքն , և ՚ի բանտ արկանել [4] ։ Իւ ապա հրամայեալ զինդէս ածել զառաջեաւ՝ վերստին կարգէր զնա ՚ի պաշտօն ածուհեացն ՚ի պալատան , ոչինչ կարծիս ունելով զքրիստոնէուէ նը ։ Իւ ինդէս ոչ եհան նմա ՚ի ժամուն զբանն ՚ի վեր . զի առաւել քարոզ լիցի Աշմարտուէ առ պալատականս . զոր և արարն իսկ . զի ոչ միայն ինքն պահէր զաւանդն բարեպաշտուէ , այլև զբազումս ՚ի մոլորելոցն ՚ի սնոտի պաշտամունս կռոցն՝ ածէր միւսանգամ ՚ի գիտութէն Աշմարտուէնէ ։

Իսայց ամպարիշտն մաքսիմիանոս օր քան զօր սաստկացուցեալ զվալածանս , և յայտնի ընդմքտական հաւատոց մարտ եդեալ՝ զտասաս այր երեր , և վերհեանս դիւաձայլ պատկերացն չիներ . և տայր քարոզ կարդալ ընտ՝ տեղիս իշխանուէ իւրոյ . Իթէ ոք աւիգէ ասէ , ոչ պաշտեմ զածս ինքնակալացն, տարադիր ելցի ՚ի կենացս , և ինչ և ասացուածք

ուշադք այնպիսւոյն յարքունիս եկեսցեն։ Ա
ղբակերը և գատաւորս անողորմս և վայրե-
նամիտ կողմնակալս ի տեղիս՝ որ ի բացեայ
էին. և սաստիկ սպառնալեօք օրէնս դնէր
նոցա, զի ուր և գտցի ոք նպաստաւորեցւոյն հաւա-
նեալ և ապստամբեալ յաթոռոյն, անողորմ և
դառն տանջանօք զրաւեսցին ի կենացս. և
առաւել ասէ զառաջնորդս աղանդոյ նոցա եթէ
գտանիցեն ուրեք, երկաթեղէն կապանօք
առ իս առաքեսջիք. զի ես զարժան վրիժուց

դիցն անարգանաց խնդրել մարթացից։ Յայնմ ժամանակի խոյզ և խնդիր լինէր վն
սբց եպսին անթիմոսի. մանաւանդ յորժամ
ի վեր եհաս թագաւորն, թէ ի նա յանձն եղև
դոմնա ի պետս բժշկուե։ Եւ զօրականն ար-
քունի բազմ անգամ սուսերամերկ զինուք պա-
տեր զեկեղեցին՝ ոչ գտանէին զհայրապետն.
քանզի խոյս տուեալ փախչէր յանապատ տե-
ղիս ուր անտեղի գործոց անօրինացն. նոյն-
պէս և դոմնա չերևէր ի միջի։ Օրս ոչ
գտեալ՝ ի տարակոյս անկանէր ամպարիշտն,
և Թախծեալ վարանէր, և իբրև ի տապոյ
ջերման տոչորէր կիզանօղ սրտմտութէ սրտին.
քանզի ի մտի եդեալ էր ընդ անհնարին տան-
ջանօք արկանել զնոքն անթիմոս առաւել քան
զամենեսեան. զի ի ձեռն պատուհասի ա-
ռաջնորդի ուսմանց իւրեանց ասէ զարհու-
րել ընդ ամենեքեան եկեսցեն ի պաշտօն ծիսոցն,
և զմեզ անաշխատ արասցեն. մանաւանդ զի
Թաքոյց ղէքնաղագործն դոմնա՝ հեռացուցեալ
զնա յապարանից. կարծեմ Թէ հրապուրեաց

և ես ինա , և կցորդակից կրօնից իւրոց արար :
Ասկյորժամ այս յոյզ քննուեն դադաթեր , զի
ոչ կարացին գտանել զնոքն այ , յայնժամ յայլ
և խորհուրդ մտաքերեր հնարագիտութիւք
բանսարկուին աղուհասաբարոյ բռնաւորն .
զկատաղութիւն զայրացմանն Թողեալ՝ ցուցա-
ներ ցածնուլ ի բարկութիւնն . և զվաղակա-
ւորն ի պատեանս իւր ամփոփել խոստանայր ,
և զօնարհ երեսս ամ հրապարակին ցուցա-
ներ . պատուիրակս հաներ , բարիս քարոզեր ,
զդառնութիւնն ի քաղցրութիւն շրջեալ մակադրեր .
Թերևս երևեսցին ասէ յայտնապէս՝ աներ-
կիւղ լեալ յիմոց պատուհասիցս . ապա միա-
հաղոյն ի վարմիմ ժողովեալ՝ բարձից յերկ-
րէ զյիշատակս նոց . զի քնաւ մի՛ երևեսցի ա-
նուն նոց ի մէջ յունաց . և այսուհիկ մեծա-
փառ դիքն մեր շնորհս բարեաց մեզ հատուս-
ցեն :

Ա.յսպիսի խարդաւանօղ և կեղծաւոր խոր-
հրդովք պատրեր զամենեսեան . և այնու-
հետև բազմութիւն քրիստոնէիցն ի համբաւ
խաղաղութե չարիմացին այնորիկ խաբեալք՝
աներկիւղ համարձակութե ի մի վայր ժողո-
վէին ի տեղեացն , ուր ցրուեալ և Թաքու-
ցեալ կային , և յայտնապես կամայորդոր սըր-
տիւք կատարէին զպաշտօն աղօթիցն :

Ա.րդ յաւուր միում յերևելոջ միահամուռ
ամ հաւատացելոց բազմութին՝ որ ի նիկոմի-
դիա և որ շուրջ ի շէնս գաւառին բնակեալ
էին , միաբանեալ ամենեքեան գային ի կա-
Թուղիկէ եկեղեցին՝ զսովորական աղօթից

կատարել : Օ՜ որ զգայեալ Թագաւորն՝ իսկ և իսկ զօրօք իւրովք վառեալ հասանէր ՚ի դրունս տաճարին այ . և անդուռս արկեալ և քեմբս բարձրագոյնս կազմեալ՝ նստէր ՚ի վէր նորա . և բազմուի զօրացն սպառազինեալք՝

անշշունչ կային առաջի նորա :

Յայնժամ խօսել սկսաւ Թէոդորն , և ասէ ցԹողոմէոս բազմուի եկեղեցւոյն . Ընդարտեւի և բարեբաստագոյն ինքնակալուհե իմոյ ներումն մարդասիրութեան յամ իրս՝ որ ծածուկն նմանեալ լիցի . զի և առ բարբարոս Թիգրան՝ որ զլուծ հարկին մերոյ գԺուարըմբերել համարին , և հնազանդին , ոչ վաղվաղակի զտեգ նիզակի զինուց իմոց շարժեմ , և ոչ նետս ՚ի պատկանդարանաց ՚ի կիր արկանեմ , և ոչ ՚ի ձեռն սուսերաց բարձրացուցանեմ զբազուկ իմ՚ի վէր նոյ , և ոչ վատնեմ զնա փութանակի վահանապատ պատնիշօք . այլ հանձարեղ և իմաստուն բժշկաց նմանեալ՝ զբարիսն ողջքական խոստմամբ կակղացուցանեմ . և սպեղանիս արկանեմ՚ի վէր վիրացն զմարդասպրութիւնն . իսկ յորժամ տեսանեմք կարեվէր խոցեալ , և ՚ի խորոջ Թաքուցեալ զվէրն , խառնօք խստագունիւք հատանեմք , և ՚ի վէր արկանեմք զդեղն կսկծեցուցիչ և զդառն ըմպելին . և ոչինչ ներումն ողորմուե գտցեն

այնպիսիքն ՚ի մէջ մարդկան :

Ա՜յ ասեմ ձեզ , և աղաչեմ , մի՛ ևս եղիցի ձեզ փորձ առնուլ զնմոյ սաստկութե և աննեղութեան բարկութե . այլ փութասջինք զոհել մեծա

ծամեծ ըմծոյն, և ՚ի նոցանէ և ՚ի մէնջ հաշտուէ գոջիք. և վայելեսջիք յամ բարիս. զի պարգևս բազումս և պատիւս երևելիս տայց ձեզ, և թեթևացուցից ՚ի ամակս հարկաց. և համապատիւս ինձ արարից զարժանաւորսն. արդ ՚ի բաց կացէք այսուհետև յաղտեղի կրօնից, և ՚ի պաշտելոյ մահաւորտ զոմն խաչէ նազովրեցի հրեայ, և մեռեալ։ Պա եթէ ոչ զայս գիտասջիք, զի իրաւունք դատաստանի իմոյ ոչ հեռի են ՚ի ձէնջ. տեսէք զտուն զայս՝ յոր յուսացեալէք, հրոյ Ճարակ տամ զսա. և զձեզ միանգամայն ընդ նմին կորուսանեմ։ Պայսպէս ամպարիշտն մաքսիմիանոս ահագին որոտմամբ և չարաչար սպառնալեօք՝ Թուեալն մահ բաշխեր յամենեցուն լսելիս, և խեթիւք հայեր յամ դասս քրիստոնէից ժողովոյն։

Պայնժամ շարժեալ ՚ի հոգւոյն սրբոյ իմաստասէրն այն՝ երիցս երանելի քահանայն Գողբիկոս կամ գղխկերիոս աւագերէց համայական եկեղեցւոյն որ ՚ի նիկոմիդա, յառաջ մատուցեալ ձեռներէց լինէր յատենին. և քարձրագոյն բարբառով առնէր բանիցն պատասխանի ՚ի գլխոց բոլորից՝ ասելով. Գիտուն լեալ քեզ ոմն արքայ, զի ոչ խոստմանց և պարգևաց քոց հաւանիմք, և ոչ ՚ի սպառնալեաց քոց երկնչիմք. զի ունիմք քաջալերիչ զնախասաձայնուելն պատուիրանի փրկչին մերոյ, որ ասէ. Մի երկնչիք ՚ի սպանողաց զմարմինն, և յոչ կարողաց սպանանելոյ զոգին. զի բարուեալքդ՝ զոր խոստանաս, կամիս

պատրել զմիտս մեր, և հանել զմեզ յայն բա-
րութենն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ
և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաս-
տեաց ած սիրելեաց իւրոց. և որով սպառա-
նաս հրկէզ առնել զմարմինս մեր, յաններ-
ւի տանջանացն կամիս բուժել զմեզ, և ան-
ցուցանել անկիզելի ընդ յորդահոսանս հրե-
ղէն գետոյն առ նաւահանգիստն մեր քո-
ղի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս
հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոցն է.
և զնմ զփառս և զպատիւս ժամանակիս իւ-
րև զկշկռանս կիմ զատուճերս երազոյ համա-
րիմք։

Օ՛ ՚ի զուր, և ՚ի նանիր խռովեալ ես ար-
քայ, և կափուցեր զաչս իմանալի հոգւոյդ.
զիարդ ոչ իմանաս զօգուտն քո, և կամ ընդ
ո՞ չ ձանաչես զարարիչն ամենեցուն և զտուիչն
քեզ զիշխանութիւնդ. ապա թէ ոչ՝ յաղթու-
թիւնդ քո, որով ամբարհաւաձեալ պարծիս,
և անօտի և աղքեղէն փառքդ՝ որով գեր ՚ի
վերոյ կարծես լինել բազմաց զքեզ, յետ
սակաւ աւուրց ՚ի ձեռն կանանց և մանկտւոյ
անգամ (որոց ոչ կարես յաղթել) բառնի ՚ի
քէն ՚ի մերում իսկ նահանգիս. զի նանրու-
թիւնք նմանեալ են կեանք քո, և պայծառուն
քո ունայնութիւնք իջանեն ՚ի գերեզման։

Եւ զարմանամք, թէ զիարդ այնչափ տկա-
րութիւնք զգաճեալդ՝ տակաւին մարտ եդեալ
պատերազմիս ընդ եմ անպարտելի զօրութենն
այն, որ յոչէից գոյացոյց զմեզ յաւիտեանից,
և կառավարէ զբնաւս բանիւ զօրութեան իւրոյ.

և

և ինքն կայ մնայ անշարժ հաստատուբ յիւ-
րում անհամեմատ և անփոփոխելի բնութեն ։
Եւ դու ամբարիշտ մոռք ամբարտաւանեալ՝
զասպիրատուԹի՛ի բարձունս խօսելով, զան-
գուգական անունն՝ դիւաձոյլ պատկերացն
կոչես, ՚ծծս և ՚ծծուհիս կարդալով զայնո-
սիկ՝ որ յանկարգ խառնակմանէ և՛ի չարա-
սերմանց սանդարամետականին են առեալ
զայնպիսի կերպարանս նմանուԹե՛, զոր և
աղտեղի է զՀմն յայտնել. մանաւանդ զի բա-
զումքն այն են՛ի կռոց՝ որ՛ի շանց և՛ի գա-
զանաց կերպարանս են քանդակեալք ։ Օ՛ի
այնչափ կուրացոյց սատանայ զմիտս քո, մինչ
զի արարիչ երկնի և երկրի կոչես զայնոսիկ՝
որ՛ի ձեռաց մարդկան կազմեալ են. և ե-
դեր Թշնամանս անմահ զօրուԹե՛ն Նմ՝ միայ-
նոյ և բոլորեցունց պատՃառին ։

Որ և բարձրացուցեր զեղջիւր քո՝ խօսել
բանս անհանՃարս զմիածնէ՛ն Ներ, և՛ի կարգս
մեռելոց իջուցանել զանմահուԹի՛ն Ներ. որ է
կերպարան և կնիք և ծագումն անսահման
էուԹե՛ առաքչին Հօր, և փառակից և էակից
ամենազօր և Համագոյ Հոգւոյն ։ Որ կամա-
ւոր մահուՃամբն ելոյծ զիշխանուԹի՛ն մահու,
և հրաշագործ և աքանչելի յարուԹիՀն կենա-
գործեաց զմահացեալսն մեղաց. և գայ միւս-
անգամ դատել զկենդանիս և զմեռեալս.
և Հատուցանէ արդարոցն՝ բարեաց Հատու-
ցումն ըստ արդար վաստակոց Նոցա. և զանաՀտն
և զչարագործսն՝ որ իբրև զքեզդ իցեն, մատ-
նեսցէ անանց և մշտնջենաւոր այրման ան-

ՀԼՔ գՀՀԵՆԻՆ . ոլք ոչ ՀԱՆԱՑԼՔ ՎՆԱ , և ոչ ապաՀԵԱԼ ԱԿՆ ՈՒՆԼՔ ՄԵԾԻ ԱՒՈՒՐ գԱԼԱՏԵԱՆ ՆՐ . ՎԻ յԱԿՆԱՐԿԵԼՆ ՄԵՐ ՄԻԱՅՆ ԱՌ ԱրարիչՆ ՄԵՐ՝ ԱՆյապաղ ՀԱԱՆԵՆՆ ՍպԱՌՆԱԼԻՔ պԱՏՈՒՀԱՒՑՆ 'Ի ՎՐ ՔՈ , ՈՒԱՏԻ ԱԿՆ ՈՉ ՈՒՆԻՑԻՍ . ՎԻ և գՈՒ յԱյՄՀԵՏ ՈՉ ԵՍ ՀՈղՊԱրԵ-

ԼՑ 'Ի ձԵՌԱՑ ՈՅ կԵՆԴԱՆՈՅ :

ԱՂԴ ՂԱյՍ ՈՄՐ և ԱՌԱՒԱԼ ՔԱՆ զՈՅՆ ԽՈՍՔՑԱՒ ԵրԱՆԵԼՆՆ գՂԵրԻկՈՍ ԱՌԱջՆ ԹՂԹՐՆ և 'Ի ՄՋ յՈգՆԱԺՈղՈՎ ՀրԱպԱրԱկՆՆ . ՈրՈՒՄ ՆԵրԵՒլՈՒՆՆ դՆԵր ԹՂԹՐՆ , և ոչ կԱՄԵր ԱՌ ԺԱՄԱՅՆ պԱՏՈՒՀԱՍԵԼ ՎՆԱ . ՎՆ ԱԿՆ ՈՒՆԵր ՊՂՔԱՆՈՔ ԱԾԵԼ ՎՆԱ 'Ի ՀԱՒԱՏՈՒԹԻՆ , և ՆՈ ՎԱՒ ՂԲՆԱՒ ԺՈղՈՎՈՒրԴՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ . ՆՄԻՆ ԻրԻ և ոչ ձգԵԱՑ ձԵՌՆ ԱՌ ՆՈՅ , ԹԷպԷՀԱՒ Ա-ՄԵՆԵՔԵԱՆ զԱՆձԻՆԱ 'Ի ՄՆՀ ԵգԵԼԵԻՆ . ԱյԼ ԵԼ գՆԱՑ ԼՌԵԼԵԱՅՆ 'Ի ՏԱՃԱՐԻ ԱՆԱՐ՝ ՈրպԷՍ պԱրԱպ ՏԱԼՈՎ ՆՈՑԱ ԽՈրՀԵԼ ՂՕգՈՒԱՆ ԻՒ ԸԵԱՆՑ : ԱՀ ՈՄՐ ԺՈղՈՎՈՒրԴՔ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅՆ ՀՈրՀՆ ԲԱՂՈՒՄՆ ՈՒՆԵԻՆ գՂԵրԻկՈՍՒ ԻՄԱՍՏՈՒԹԵՆ և ԱՃԱԽԱՍ վԶՊՈՒԹԵՑՆ :

ՎՊԱ ԽՈրՀՈՒրԴ 'Ի ՄՈի ԵգԵԼ ՔՆԱՒՈՐՆ՝ ԹԷ ցՈրՉԱփ կԵՆԴԱՆԻ Ե ՔԱՀԱՆԱՅՆ ՈՅ , ոչ կԱրՀ ԽԱփԱՏԵԼ զԺՈղՈՎՈՒրԴՆ 'Ի ՀԱՒԱՏՈՑ , կԱՄ ԵրկՓՒՂկԵԼ զՄԻԱՔԱՆՈՒԹԻՒՆՆՁ , ՄԻԱՆ գԱՄԱՅՆ և յՈգԻ ԽՈՅԵԱԼ 'Ի ՀԱՄԱրձԱկԱԽՕՍՈՒԹԵՒՆ ՍՐՅՆ , ոչ ԸԵրկԱրԵր զգԱՑՈՍՄՆ ԲԱՐ կՈՒԹԵԱՆ , ԱյԼ ՀրԱՄԱյԵր զԻՆՈՀՈՐԱՅՆ ՄՈՏՆԵԼ 'Ի'ՆՔ ԵկԵՂԵցԻՆ ՈՅ , և ՈՒՆԵԼ պԵրԱՆԵԼԻՆ գՂԵրԻկՈՍ և ԱրԱՏԱՔՍ ՀԱՆԵԼ : Օ. Որ ԻրՔՆ ՈՐԱԵԱԼ կԱցՈՒՑԻՆ ԱՌԱջԻ ԹՂԹՈրԻՆ , ոչՆՉ ՀԱրց-

հարցմանց արժանի արարեալ՝ հրամայէր տա-
րածանել ի գետն, և զալար արջառաջլօք
հարկանել յոյժ. մինչև վաստակեցան ձեռք
դահճացն։ Իսկ նա զտանջանսն առ ոչինչ
համարեր. այլ գոհանայր զնոսն, որը վա՛ ըզ-
չարչարանսն համբերել կրեր։

Յայնժամ սաստկացուցին զտանջանսն, և
սկսան արբանեակքն սատանայի երկաթի
եղնգամբք քերել զկողս նր, և զահս վա-
ռեալ մատուցին ի վէր մարմնոյն, որոյ պատ-
ուական արիւնն ի սաստկապոյն քերանացն
ոռոգանէր զերկիրն. իսկ նր վկայն ոչ դա-
դարեր ի քարոզել զձշմարտութիւնն, և ի
յանդիմանել զմոլորութիւն անօրինաց. մին-
չև անշնչացեալ և պակասեալ ի ձայնէ՝ ոչ
ևս կարեր շարժել զլեզուն։ Այն քարոզն
աղաղակեր և ասեր. խնայեա՛ ի լեզուդ քո
ով գլերիկդ, և մի լինիր ամբարհաւաճ և
պաճուճաբան. և մի խառնակեր զհանդէսս.
պատուէա զհռովմայեցւոց տէրութիւնս, և մի
շփոթեր զատեան ինքնակալացն. և մի ընդ-
դեմ հելլենացւոց իմաստնոցն զայն լինչ իրս
բարբառէր՝ որ ոչ վայելէ։ Այսպիսի բանիւք
քարոզն զհրապարակն լնոյր. այլ ոչ տանջե-
լումն հաւանեցոյց բռնաւորն զվկայն քրիստ, և
ոչ ողբանօքն հնազանդեցոյց։

Իսկ երիցս երանելին զօրացեալ ի հոգւոյն
սրբէ՝ գոչեր մեծաձայն ի հրապարակին, և
ասեր. Ես յո միածին որդի, ձառագայթ և
կերպարան բարձրելոյ քո հօր, վստահութիւն
իմ և ուժգնութիւն, զօրացո զիս յաւմի. զի ի

ձեռն բազմագունակ չարչարանացս բազմաց-
ցի առ իս բրաբիոն բարեացն հատուցմանց
ըստ ամ սքս քս ։

Ի վեր քանիցս այսոցիկ սրտմտեալ Թէոդորն՝
ցասնոյր սպասաւորացն , զի առաւելացուս-
ցեն զտանջանս սրբոյն . և նոքա ըստ հրամանի
բռնաւորին այնչափ հարկանէին զքանցեալ
մարմինն նր , մինչև անշնչոց նմանեալ եղև ,
և մորթ մարմնոյն ի յօդոյն փքայեալ՝ թա-
փեալ լինէր հանդերձ մսովն և ջլօքն , պա-
տառ պատառ յերկիր անկանելով . մինչև
երևիլ ոսկերացն , և զարմանալ ամ տեսա-
րանին ։ Իսկ երանելի նահատակն շարժե-
լով միայն զշրթունսն՝ տակաւին ասէր մեղ-
մաձայն . Ծառայ եմ միայնոյն ես Թէդրին
յաւիտենից . զմի որ՝ որ արար զերկինս և
զերկիր , զնա խոստովանիմ . և ի նա յուսա-
ցեալ՝ սպասեմ անձառ պարգևաց նր . կռոցն
ես ոչ զոհեմ , որ քան զշունսն ևս վատթա-
րագոյնք են ։

Յայնժամ անօրէնն բռնաւորն ոչ հանդուր-
ժեալ համարձակուԹե սքյն՝ վձիռ կնքէր
ի վր նր , զի արտաքոյ քաղաքին խաչեսցի ,
և մարմին նր հրով մաշեսցի ։ Իբրդ առեալ
դահճացն զնահատակն քնի՝ քարշելին ընդ փո-
ղոցամէջ քաղաքին . մինչև ածին արտաքոյ
դրանն ի տեփարակ տեղւոջ մերձ յեզր ծո-
վուն . ուր և զփայտն իսկ կանգնեցին ։ Ու-
նր հայեցեալ ընդ արևելս՝ սկսաւ ի ծածուկ
աղօԹել՝ շրթանցն միայն շարժելով . և իբ-
րև ի վեր առաքեաց զամէնն , ասէ ցդա-
հիճան .

հիշման. եկայք կատարեցէք վաղվաղակի ըզ-
հրամայեալսն ձեզ ի բանաւորէն. և ինքնին
դիմեալ ի խաչն, տարածեալ զձեռս իւր
քաւեռեցաւ ի վեր նր։

Այս ապա սպասաւորքն սատանայի սաստկա-
ցուցանէին զհրատ բորբոքել բոցոյն ի ներ-
քոյ նր ժամս ինչ, ողջակիզել զնա ի բարձ-
րութենէ խաչին. և նր աղաղակեալ ի ձայն
մեծ՝ ասէ. ահր յն ընկալ զոգի իմ ի հոտ ա-
նուշից, և խառնեա զնս ի ձիւր որոց սիրե-
ցինն զքեզ և զօր երևելոյ գալստեանդ քո.
և իսկոյն աւանդեաց զոգին։

Յաւուրսն յայնոսիկ լինէին զոհք և նուէրք
երկոտասան դից ի պալատան. իսկ ինդէս,
որ և ինդոս ներքինի ածասէր, ի սենեակ
մի մթին արգելեալ զանձն, և քրձազգած
լեալ՝ ողբայր զկորուստ այնոցիկ՝ որ զոհէին
կուռց։ Այս յորժամ լուրն այն հասանէր յա-
կանջս Թէքլին, հրամայեաց ածել զնա առա-
ջի իւր. և յետ անարգանաց վն անուճանն
քոնի՝ ետ ձեռս յետս կապել զնա, և անուր
երկաթի արկանել ի պարանոց նր, և ար-
կանել ի բանտ խաւարչտին, և սնդել զոտս
նր ի կոձեղս։ Այնուհետև ի խնդիր լինէր
սքեմ կուսին գոմնայի. և պագշոտականն յի-
մարութեաբ մաշէր ի միտս իւր վն նր. մինչև
մուտս եալ զոր վն նր լուեալ էր, ասէր մե-
ծաձայն. ոՀր է գոմնա՝ արտեմեայ և ա-
թենայ մեծափառութեան ածուհեաց քահանայ-
ուհին. և իբրև ոմանք ի պատուհասուորաց պա-
ղատանն ծանուցանէին նմա միւսանգամ զե-

ղեալ

ղեալ իրան՝ որ վասն դումնայի , նոյնժամայն հրամայեաց հատանել զգլուխ ներքինապետին՝ սակս հեռացուցանելոյ զդումնա յարքունական ապարանիցն ։

Ապա այնուհետև զինուորս բազումս սպառազինեալս առաքեաց ՚ի վր մենաստանաց կուսանացն , զի զդումնա գտեալ ՚ի մէջ ածցեն ։ Այն իմացեալ երանելոյն՝ առնական զգեստիւք գաղտաբար խոյս տուեալ գնաց ՚ի վանաց անտի՝ ուր էրն . զի այսպէս իրատեաւ նմա մայր վանացն ապապիէ ։ Եւ իբրև ոչ գտին զկոյսն , մրմռեալ անօրինացն իբրև զգազանս արիւնարբուս՝ նախանձ ընդէմ առնեցուն խորհեցան՝ և զայլ սրբասնեալ կուսանսն չարաչար քարշել և յանարգանս մատնել . իսկ նոքա փախուցեալք՝ յայրս և ՚ի ծերպս վիմայց ընդ գազանս վայրենիս առնէին զբնակութիւնս իւրեանց . և բազումք ևս այնոքիկ էին՝ որք անկան ՚ի ձեռս դահձաց . այլ աներևոյթ զօրուն վերին խնամոցն՝ ոմն զհաւատան , նոյնպէս զմաքրութիւնն անարատ պահեաց ։

Երդ մի ոմն երևեալ ՚ի մէջ սքեղն անհամեմատ գեղեցկութիւնք և բարի վարուք զարդարեալ , որում անուն Մելխիսիա կոչիւր . զսա տեսեալ գործօնեայքն չարին , և պագշտուքն յիմարեալք , և ընդ միմեանս խուճապեալք դասուց զինուորացն մոլեկան ցանկութիւն՝ յափշտակելոյն զնա ՚ի միջոյ քերցն . և բռնաբար վերամբարձեալ քարշելոյն մուծանէին ՚ի յարկս անօրինելոցն . և ՚ի հուշակ համբա-

ասյ նը կուտեցան ի տեղին յայն որփանօք երիտասարդք ։

Ա.ՐԴ մինչդեռ կայը նա արգելեալ յանապագուելե տեղւոջն յայնմիկ ի պանդոկի, գայս ի յերկինս համբարձեալ կուսին՝ առ մեծ նաւապետն ակնարկելով, հեղոյր զանձն իւր առաջի հզօրին զօրութե , այնմ՝ որ եկն ի բառնալ զմեզս ձեր, և գոչէր ասելով . Ընդ իմ և ձեր իմ, յո փրկիչ իմ և կեցուցիչ, հայեաց ի պատրաստ քնակուէ քումմէ յանապատ աղախին քո , և մի տար յապականութեն զքո ժառանգութես . և անպղտ և անարատ պահեա զառագաստ կուսութես . զի քեզ խոստացայ պահել զկուսութե իմ անարատ արգարութե ։ Լու արդ երևեցո դերեսս քո ամբիծ և անապական փեսայդ երկնաւոր , և փութա՛ յօգնել ինձ . և մի մնաներ գաղանայ զխոստովանութե անսէանդ քո . զի և առնուն քո փառաւորեսցի ի մէջ բարբարոս և ամպարիշտ ազգացս . և ես արժանի եղէց անարատ մաքրութե զընթացս իմ կատարել , և այլոցուէ հանդիպիլ քումմ փառացդ , և հասանել մասին սքեղն ի լոյս ։

Ա այս հանդերձ արտասուօք պաղատանս մատուցաներ առ ՝ն երանելի կոյսն Թէոփիլա . և իբրև կատարեաց զաղօթեան , ի ոմն յամպարիշտ զօրացն սեղեխաբար վատաթալեալ խորհրդով կամեցաւ մերձենալ ի նա . և յորժամ հնուպ եղև , վաղվաղակի ըմբռնեաց դնա ահ և դողութն և սասանութն . և լսէր ի չարէն՝ անկաւ և անշնչացաւ առ

ոտս Թէոփիլեայ իբրև զմեռեալ ։ Եւ իբրև ժամք բազք անցին , և ոչ ելանէր ՚ի դուրս , այլ ամն եմուտ ՚ի ներքս . և տեսանէր անձառ լոյս փայլատակեալ զկուսիւն . յորոյ ՚ի նշողէին առաժամայն խաւարեալ ՚ի լուսոյ աչացն՝ և նա ոչ կարէր ելանել ընդ դուռնն ։

Ասէ որք արտաքոյ կային առ դուրան , ոչ գիտեալ զեղեալսն՝ մտանէին և նք , իմանալ՝ զինչ եղև . և նովին պատուհասիւք և նոքա տանջեալք լինէին ։ Յայնժամ քաղմութիւն ՚ի միասին մտեալք՝ տեսանէին ահագին իրս հրաշից . զի երանելի կոյսն նստեր լուսեղէնն առանձինն , և ընթեռնոյր զաճեայն գիրսն՝ կիսզաւետարան զոր միշտ չինքեան կրեր . և երիտասարդ մի կայր առաջի նր լուսեղէնն , յորոյ երեսացն փայլատակունք լուսոյ արձակէին ։ Զայս իբրև տեսին , յերկիւղ մեծ ընկնեալ՝ հապճե ուրեմն զանձինս Ճողոպրէին , և արտաքս ելանէին ՚ի տանէն , ասելով . մեծ է աճն քրիստոնէից , և անյաղթ և անպարտելի է զօրութիւն նր ։ Եւ յայնմանէ բզմբ հաւատացին ՚ի Տր , և ուսան զաճեայսն։

Ոմն եղև յականջս մաքսիմիանոսի , զի անշաղախ մնաց կոյսն ՚ի զինուորացն , և կախարդութիւն համարեալ զայդ մեծասքանչ զօրութիւնն՝ ասէր , թէ չարիմաց կախարդասար աղանդիւք զայնոսիկ գործեն գալիլեայքն առ ՚ի պատիր խաբէութիւն բազմաց ։

Ասէ լուսատեսիլ երիտասարդն կալեալ զձեռանէ կուսին՝ առաջնորդէր նմա անձառ լուսոյն

սոքա մինչև յեկեղեցին, և ասէր. խաղաղութի՛ք ընդ ձեզ. և ինքն յերկինս վերանայր։ Յայնժամ երանելին այն երկիւղալից խընդութի՛ք պաշարեալ գոհութեի՛ն յոյժ մատուցանէր ոյ մարգասիրին, որ փրկեաց զնա յամենայնէ սատանայի։ Նոքա բազմութիք ժողովոյն եկեալ՝ ի մէջ դիշերին՝ ի կաթուղիկէ եկեղեցին կատարել զսովորական աղօթսն, իբրև տեսին զնա՝ ինեըքս, զարմանք կալաւ զամենեսեան. քանզի էր նա ազնուականագոյն՝ ընտանի և ծանօթ բազմաց։ Եւ նա պատմեաց զնոսա անցս չարչարանացն, եթէ ոչ պատրաստ զօրութիքն ոյ յամէ փրկեցաւ։

Ընդ իբրև լուան զայս նոքա բազմութի՛ն հաւատացելոցն, զձայնս խրատանց առ նոսա ամբարձին առ հասարակ. փառս՝ ի բարձունս առաքէին արարչահաս զօրութեի՛ն ոյ, և աղբիւրս արտասուաց հեղուին ամենեքեան, մինչև գրեթէ թանալ զյատակս սրբոյ տաճարին։ Նոքա սրբուհին Թէոփիլա ընկենոյր զինքն առաջի սրբոյ սեղանոյն ոյ, և արտօսրաց հեղձ հառաչմամբ աղօթս մատուցանէր ամենակալին՝ գոհանալով յաղագս փրկութե՛ն անձին իւրոյ։

Յաւուրսն յայնոսիկ ըստ հրամանի չարագործ բռնաւորին մաքսիմիանոսի՝ արքանեակք նոր չարք՝ ևս դժնդակ երևեալ՝ զհետ էին բարեպաշտից գլխատորաց, և հետապընդիր լեալ խնդրէին. և գտեալ՝ ձերբակալ արարին, և ածին յատեան Թիւրին զդատողն, որ փառօքն խոկ և քաղաքական շքով պայծառացեալ

ցեալ էր, նախանձուր և հրամանատար ի վր
ամ գործակալաց պալատանն. և զմարդո-
նիոս իշխան երևելի, և զմիգդոնիոս նորին ըն-
կերակից, և զյառաջասացեալն ինդիս ներ-
քինի, և զայլ ևս բազում հաւատացեալս ի
ն, որք էին ի պատուաւոր իշխանաց արքու-
նական դրանն։ (5)

Որոց ի ցասումն բարկութե եկեալ անօրէնն
մաքսիմիանոս՝ ասէ. երդուիմ ես յանմահ և
յամենակալ աստծոն, զի ոչ խնայեցից ի ձեզ,
այլ զամ տեսակ տանջանաց աստից ի վր ձե-
րոյ ամպարշտութեդ. և տայ զմարմինս ձեր
գազանաց երկրի և թռչնոց երկնից. զի և
այլք երկուցեալք՝ ոչ օտարասցին ի պաշտա-
մանէ աստծոյն. և հրամայեր զդօսի նոյ վաղ-
վաղակի լուծանել, և մերկ առնել զնա յիշ-
խանական հանդերձից։ Եւ նոքա միաբա-
նեալք միով հոգւով և միով բերանով աղա-
ղակէին ասելով. քրիստոնեայք եմք և ծա-
ռայք ամենակալին նոյ՝ սարսռոյին զերկինս
և զերկիր, և որ ի նոսա արարածք իցեն. և
զնա պաշտամունս քո ոչ թագաւոր իբրև
զայլ անպիտան վարկանիմք, և իբրև զե-
րազք զարթուցեալոցն։

Յայնժամ ևս առաւել ի չարուն սրտմտութե
բորբոքել թագն մաքսիմիանոս, հրամայեաց
առաստանօք զոտս և զձեռս նոյ պարանդե-
լով տարածանել ի գետին, և վայրենի մա-
հակօք ընդ երկար տանջել զնա։ Եւ դահիճքն
շուրջ զնոքօք եղեալք ի վաղուընէ աւուրն մին-
չև յերեկոյն՝ յանխնայ հարկանէին զնա, ոչ-

ինչ ամենևին խնայելով հասարակաց բնութեան։ Այս մինչ դեռևս կենդանի կային նք՝ ի տանջանս չարչարանացն, հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք արկանել ի բանտ. Թոռղ և զայլսն. զի անյապաքար սուր նր ձարակէր զամենեսեան։ Այսոքիկ առանձին վկայք ժամանակին. ժամէ ասել զհամագումար բազմութէն երջանիկ վկայեցոյն յաւուրսն յայնոսիկ ի Նիկոմիդիա։

Կատարումն երկրորդ Էջմիածնի։

Երդ քանզի պարտ էր մեծագունի և խորհրդական տնօրինեցելոյ բանին և ծնիցելոյն ի կուսէն ընծայաբերել զանձինս իւրեանց՝ որք ի նա հաւատացէքն էին. քանզի մերձեալ էր տօն ածայայտնուէ փրկչին մերոյ և ըստ մեզ շրջեցելոյն այ, իբրև ժողովեր բազմութէն հաւատացելոց ի կաթուղիկէ եկեղեցին (որ յոմանց կոչի եկեղեցի սքին երիւնեայ), յայնժամ սինկղիտոսն ամ իշխանական դասուք և գնդօք զինուորացն մատուցեալ առ մաքսիմիանոս՝ ասեն. Թագաւոր յաւիտեան կեաց. քզի ձշմարտիւ գիտեմք, զի հանապազ հոգ ի մտի եդեալ ես ինքակալութէդ քո բառնալ ի միջոյ զաղանդ անօտի յուսոյն գալիլեացւոց, զի հաստատուք անշարժ մնասցէ օրէնք հռովմայեցւոցն, և առանց վատթարութէ անքակ եղիցի պաշտօն մեծափառ անմահից բարերար տճոց մերոց։ Երդ եկեալ հասեալ է դիպող ժամադրութէն վրէժ-

վըհ ժ խնդրուե մըրդ ՝ի նոցանե , որ մ՚որթ է
ամենևին բառնալ ՝ի միջ զանհանձար և
զչար կրն նոցա . զի այսօր է գերահռչակ
գլուխ ոճից նը , իբրու առասպելաբանեն
զՅածն իւրեանց Ծնանիլ ՝ի կուսէ . զոր և ա-
բարիւ ինքեանց կարդան զնա , և հանդիսա-
ւոր կոչուցս ոճից կատարեն . ահաւասիկ ՝ի
մեծ մինչև ցփոքունս ժողովեալ են ՝ի մեծ
եկեղեցին :

Նե հաձոյ Թուէեցաւ բանս այս մաքսիմանո-
սի . և հրամայեաց ամ գասուց զինուորացն
սպառազինութիւ պատել զտաձարն ու շուր-
ջանակաւ , և փակել զդուրսն սրբ եկեղե-
ցւոյն , զի մի ոք արտաքս ելցէ ՝ի բազմուէին :
Նե առաջի դրաց տաձարինհրամայեաց կանգ-
նել զբաւինս ՅածոյԻսրոց . և քարոզն աղա-
ղակեր և ասեր . Լ՚ետ ոք կամեսցի Ձողոպ-
րիլ ՝ի տանջանաց և ապրիլ ՝ի մահուանե , և
լեալ երկիրպագիցէ քարերաթ Յածոյ ինքնա-
կալին . ապա եթէ ոչ կամիք հաւանել կա-
մայ նը , կենդանւոյն հրոյ Ձարակ եղիջիք
ամենեքեան , և ոչ ոք զերծցի . զի այսպես
հրամայեաց քաջ արանց մեծն մաքսիմիանոս :
Նե երբև բարձրաձայն աղաղակաւ բանըս
այս պատմեցան ՝ի քարոզացն , նոյնժամայն
և գործն կատարուեաւ առնոյր : Վ ՚ը և հրեշ-
տակք Թ՚ըրին մտեալ յեկեղեցին՝ մեծապես
գոչելն ասե լով . ինքնակալն առաքեաց զմեզ
առ ձեզ , ՚ի յայսցանէ երկոցունց ընտրել ձեզ
զմին . կամ ելանել զոհել Յածոյն՝ որ պատ-
րաստեալ կան առ դուրս տաձարիդ , կ՚թէ

անհաւան լինելով՝ հրկիզ լինել ամենեցուն
ձեզ աստանօր. արդ զոր ախորժէք՝ ընտրեցէք վաղվաղակի. զի ոչ ներէ ձեզ ժամանակ՝ այլ ինչ տալ պինդ։

Յայնժամ երանելի սարկաւագապետն եկեղեցւոյն, որում անուն էր Թէոփնաս (6), զօրացեալ՝ ի շնորհաց Հոգւոյն, և կացեալ համարձակուբք՝ ի վէր քեմին մերձ ածայնոյ սեղանոյն՝ երաց զբերան իւր, և ասէ աւժողվեալն յեկեղեցի. Ա՛րք եղբարք և հարք՝ որդիք վերինն ԵՀմի, գիտէք ամենեքեան, զի հանապազօր երգեաք զերգս երից մանկանցն, և աքանչացեալ զարհուրեաք ըստ մեծահանդէս ինքնակամ յօժարութեն նոցա. որ՝ ի մէջ հրոյն ոտիւ յատակաստի պարելով՝ զնամ արարածս ըստ իւրեանս յօրհնուն հրաւիրեին բոլորիցն այլ. որոց ոչ միայն երանեաք բանիւք, այլև հաղորդել նոցունց սքանչացան ցանկայաք։

Ա՛րդ քանզի եկեալ հասեալ է մեզ օր փրկութեան և ժամանակ ընդունելի, արդ վառեցարուք քաջ արիապէս ամենեքեան վասն անձուկ սիրոյն այնորիկ, որով արեամբն փրկեալ եղաք։ Ջուխտացարուք ամ սիրելիք, մինչդեռ ժամանակս՝ ի ձեռս է՝ իբրև զնուսկս անոյշս մատուցանել զձեզ պատարագս՝ անարատ գառինն այնմիկ, որ եկն քառնալ զմեղս Ցի։ Վա՜յ զի եկն եհաս ժամանեաց մեզ օր աւետեայ, որում և ցանկացեալ էաք ամենեքեան. և զրուանք երկնից բացեալ են մեզ այսօր. և աներևոյթ զօրուն այ կալով՝ ի միջի ձերում ոտիւ յերից մանկանցն՝ պատակ զա-

մեռեսին քաղցրութիւք կամաք իւրովք, և ընդ
ինքեան վերացուցանէ ի բնակութիւնս հրեշ-
տինաց վերին զոհարժանացն՝ առնելով մի հօտ
և մի հովիւ։

Ընդ հաստատումն կացէք միաբան, և միա-
խորհուրդ լերուք ամենեքեան, և անշարժ
մնացէք ի վէր վիմին հաստատանոյ, որոյ գլուխ
անկեան ինքն է քրիստոս։ Այս մի դրդոճեսցէ զձեզ
անոտի պատրանք կենցաղոյս, և մի զարհուրիք ի շինչանուտ հրոյս. և մի ոք օցտեալ արտաքս ելցէ ի բացեայ յածխային գաւթացն, և մի լինցի լուսկի և ձարակ յաւիտենական անշէջ գեհենոյն։ Նազում և այլ ընդհալէ ահաբեկօս վիպութիւք ի յորդառատ բանից զօրացոյց զնոսա հաւատացեալսն ի նոր։

Յայնժամ նոցա բազմութիւնն հանդերձ նուաւ գոչէին մեծաձայն, և ասէին. Քրիստոնեայք եմք, և ծառայք այ բարձրելոյ. զայծ քաղաւորին ոչ պաշտեմք, և պատկերի նր՝ զոր կանգնեաց, երկիր ոչ պագանեմք։ Այս իսկոյն հասեալ լինէր բանն առ մաքսիմիանոս. և նոյնժամայն հրամայէր սպասաւորացն զհուրն վառել, ասելով. մի ոք ձողոպրեսցէ, և մի ոք ողորմութեամբ հանդիպեսցի։ Յայնժամ քաջասէր նահատակացն զերախայան ի մի վայր ժողովելով զնոսին զխորհուրդ մկրտութեան կատարէին ի վէր նոցա. և անարատ շրջխորհրդոյն հաղորդեցուցանէին զնոսա։ Այս ի նմին ժամու սպասաւորք թիւրին հասանէին, և զհուրն շրջապատ բորբոքէին զնոսա տաճարաւն այ. և ահագին որոտմամբ էլանելը

ներ բարձրանայր բոցն, և զնա՝ արտաքինսն և զնեղբինսն շինուածոյ Ճարակեր։

Նոյնպէս բազմութիւնք ժողովոյն՝ որ յեկեղեցւոջն էին, մեծաձայն գոչմամբ երգէին զերգս երից մանկանցն. և զբոլոր արարածս յօրհնաբանութիւն կոչել ոչ դադարէին. այլև՝ ի մէջ հրոյն ըստ նոսին ձայնք հրեշտակաց լսելի լինէին. և շարժեալ դղրդեր երկիրն ամ յահագին գոչմանէ ձայնիցն. մինչև ամենևին ողջակիզեալ ամենեցունց՝ արանց և կանանց իբրև քսան հազարաց, աւանդել ՚ի ձեռն հրեշտակաց զոգիս իւրեանց. որոց անուանք իւրաքանչիւրոց գրեալ են ՚ի դպրութիւն կենաց. ըստ որոց կամայորդոր ջան նահատակութեանց ամ գօրք վէրնոյն հիացեալ զարմացան. Թո՛ղ Թէ մարդիկ. մանաւանդ ըստ անքակ միաբանութեան միակամ և միակրօն վկայիցն այ։

Ընդ իբրև աւուրք հինգ կամ եօթն անցին, և հուրն դեռևս Ճարակեր զնիւթն, այնուհետև ՚ի դադարիլ բոցոյն՝ հոտ անուշութեան բուրեր չքնաղ և հրաշալի տեսողացն. և սառաւել զարմացմամբ ընդոյր զամենեսին, զի նշոյլք ոսկեձաձանչ իբրև խորշ խորշ ինչ կիտուած ընդհալի, և իբրև զձառագայթս արեգական ՚ի ծագել իւրում զարդափայլեր ՚ի մասունս պատուական ոսկերացն. և այնպէս հրաշաձաձանչ լուսով երևեին նշխարք սրբոցն։

Ընդ մաքսիմիանոս յաղթութեան մեծ համարելով զգործն՝ տօն երևելի կատարեր ըստ իւրոց. և զկնի խաղուց ձիրնթացից ՚ի տե-

ծարանին՝ հրաման հանէր վ՚ի մնացեալոց քրիս-
տոնէից համարձակութիւ պաշտել զկրօնս իւ-
րեանց ։ Յայնժամ մի ոմն ՚ի զինուորական
գնդին՝ որում անուն զենոն կոչիւր , տեսեալ՝
թէ արդեօք ինքնին Թագրն ամ հանդիսական
զօրօքն կատարէր զտօն աղաւտանաց դեմետ-
րեայ չաճուհւոյն պաշտամամբք զոհից , ոչ
կարաց հանդուրժել զազրատեսիլ և դիւա-
ձեռնձեր զոհից ։ վ՚ի որոյ ՚ի բարձրաւանդակ
տեղւոջ միում կացեալ՝ գոչէր մեծաձայն և
ասէր ։ մոլորեալ ես ով Թագաւոր՝ քարանց
և փայտից անզգայից զոհելով , և զտարերս
նիւթեղէնս ածս անուանելով , և ձեռա-
գործ պատկերաց երկրպագութիւն մատուցա-
նելով , որ դիւաց պատկերք են և ստայօղ
կերպարանք ։ ամբարձ զիմանալի աչս հոգ-
ւոյդ և նկատեա , հայեաց և տես , ծանիր
և իմացիր երևելեօքս զանեղևոյթն , և ստա-
ցական նիւթեղինօքս զաննիւթականն ։ որ
զբնաւս ամ՚ի յանգոյութիչ ՚ի գոյութիւն ած ։
և դու Թողեր զՀաստիչն ամի և զաննիւթա-
կան արարիչն , և զչնորհս բարերար կամաց
նորա ապախտ արարեալ՝ մնատեաց զոհս և
պաշտօնս մատուցանես ։ ուր ամ ըստ քո
ամենեկի մի զօրութիւն ոչ ունին , նաև անար-
գագոյնք են քան զմիջուկս ։

Օ այսոսիկ իբրև լուաւ մաքսիմիանոս , հրա-
մայեաց քարամբք ջարդել զկռակս նր ։ և ՚ի
հարկանել դահճաց՝ զայրացմամբ գոչէր առ
նոսա զօրեղագոյն առնել առ նա զտանջանս
հարուածոցն , և ջաղխել զկառափն նր ։ զի

մի

մի անարդեսցէ զնածան ։ Ա.րդ յորժամ ջախ-
ջախեցան խելապատակք գլխոյ նը , և խոր-
տակեցան կզակքն , և մնուրք բերանոյն
փշրեցան , և ատամունքն չարաչար ի բաց
թափեցան , այն ինչ դեռևս փոքր մի շունչ
դոյր ի նմա , և հանդերձեալ էր մեռանիլ ,
հրամայէր քարշել արտաքոյ քաղաքին , և
ղհամարձակախօս գլուխ նորա սրով հատա-
նել ։ Ա.յսպէս քաջամարտիկ վկայն քրիս ղե-
նոն ղվճիռ մահուն ընկալաւ . և կատարել
զմարտիւրոսական ստադիոնն , առ քա՝ որ
գլուխն է ամի , վերաբերեալ լինէր ։
Ա.յլ որ ըստ դորոթէոսի էին սքոյն պարք պա-
ղատականք ի կապանս բանտի , պարտ էր ոչ
ճնալ և նոցա առանց չարչարանաց և պսակաց .
իսկ առիթն այս ինչ եղև ։ Թուղթ առա-
քեալ լինէր առ նա ի ձեռն Թէոփիլոսի սար-
կաւագի ի քրքքահանայապետէն անթիմո-
սէ , որ ի Թաքստեան էր ի գեօղ ուրեք ։
Ա.ւ այն ինչ անօրէնն Թագրին յայտնի լինէր
Թուղթն , ետ բերել զայն և ընթեռնուլ ա-
ռաջի իւր . զի էր քաջ հռովմէին մակադրել
ի նմա բանս իմաստուԹե , և քաջալերս վա-
ճաճադիր կետի կոչման յուսոյ կենացն յաւե-
տենից , արիապէս հաստատուն կալ ի վկայ-
ական մրցմանն յաղԹանակի վերին կոչմանն ։
Յայնժամ ցասմամբ մեծաւ զեղեալ մաքսի-
միանոս՝ հրամայէր առաջի իւր կացուցանել
զկապեալսն . և ասէ ցնա . ընդէր ապստամ-
բեալ ի կամաց իմոց՝ յարեայք ի վէր իմ , և
առ այլ օրն Թշնամի իմ խոտորեցայք ։ Ո՛րա-

մայրը և զթուղթն ընթեռնուլ, և զբերօղն
՚ի ներքս մուծանել զնոր սարկաւագն Թէո-
փիլոս. զոր տեսեալ սքեց վկայիցն՝ յոյժ ու-
րախ եղեն յոգիս իւրեանց։

Իսկ մաքսիմիանոս խեթիւք հայեր ՚ի նա. և
ցասմամբ մեծաւ ասէր ցնա. երիցս թշուա-
ռական և եղկելի, ով ոք աւանդեաց զգ-
թուղթս զայս, և ոնր ուրեք թաքուցեալ է
նա։ Իսկ արին այն և բարեզուարթ այրն
ոչ վեհերեալ ՚ի դժնեայ հայեցուածոյն, և
ոչ զանգիտեալ ՚ի սպառնալեացն նր՝ ասէ.
ով ոք էցէ տուօղ Թզթիդ, ասացից. այլ Թէ
ոնր է, չասացից. զի ոչ կարեմ մատնիչ լի-
նել հովուին իմոյ, յորմէ բազում շահ օգ-
տիւ մատակարարի ընդ ամ եկեղեցիս. այլ նա
ինքնին յետ փոքր ինչ ժամանակի երևեսցի
յայտնապէս բազմաց. զի ոչ կարէ քաղաք
Թաքչել՝ որ ՚ի վեր լերինն կայցէ։

Յայնժամ անօրէնն մաքսիմիանոս ոչ հան-
դուրժեալ համարձակուԹենէ բանիցն՝ զլեզու
նորա հրամայէր ՚ի բաց հատանել. և ապա
քարկոծել։ Իսկ նահատակն այն երբ յետ
հատանելոյ լեզուին և քարկոծմանցն՝ ապա
և նեռիւք խոցոտեալ լինէր. և մինչև ցշունչն
յետին ոչինչ փոյթ առնէր զտանջանացն,
այլ կարդայր գոհանալով ընդ
Տեր յո օգնեա ինձ, և ընկալ զհոգի իմ ՚ի
հոտ անուշից. և այնպես աւանդեաց զոգին։
Այլ տակաւին մաքսիմիանոս ցասմամբ և
սպառնալեօք լցեալ ՚ի վեր դորոթէոսեանցն՝
դառնատեսիլ և անողորմ տանջանս արկա-

ներ ՚ի վէր նոյ. և յորժամ ձեռք դահճացն
վաստակեցան յոգորածեծն առնելոյ զնա, այ-
նուհետև քերանօք երկաթի եղնգանց քան-
ցեցին զմարմինս նոյ. և դարձեալ ՚ի բանտի
ծորեալ մաշէին զանձինս նոյ կարօտութէ հա-
ցի և ջրոյ։ Ազդեմ անգամ և՚ի ծայրս մա-
տանցն և եղնգացն սայրասուր եղեգունս վա-
րէին։ Իսկ երանելիքն և այնու խոցոտեալք՝
քաջութէ համբերէին ամի վեց երանաւէտ
յուսոյն որ ՚ի քէ, և սաստկութէ յանդիման
նէին զամպարշտութեն թագրէն։

Վեց և ինքն թագրն լքաւ վաստակեցաւ ՚ի
բռնամահ վկայէցն համբերութեանց. ապա
դատակնիք մահու հատանէր ՚ի վէր նոյ այս-
պէս. Օ դորոթէոսի զգլուխն սրով հատա-
նել, և զմարդոնիոս կենդանւոյն այրել, և
զմիպոնիոս ՚ի խորխորատ ընկենուլ, և կար-
կառս քարանց կուտել ՚ի վէր նր. իսկ զգոր-
գոնիոս և զինդէս և զպետրոս՝ երկանաքար
՚ի պարանոցս կապեալ՝ ՚ի ծով ընկենուլ։
Եւ այնպէս յետ այսչափ զանազան տանջա-
նաց կատարեցան նոքա վկայքն երանելի մահ-
ուամբ և բարի խոստովանութէ. և ամբար-
ձեալք ելին առ նոճ յոյն իւրեանց, և խառ-
նեցան ՚ի բանակս երկնաւոր զօրարինոցն,
և սպասկեցան յարարչէն բոլորեցունց։

Օ այս նոմ լմնացեալ մաքուրն այն և ցանկա-
լի կոյսն դոմնա՝ ուրախանայր, ցնծայր և
բերկրէր ՚ի սրտի իւրում, մանաւանդ վ-
ինդէսի՝ որ էր ընկերակից նոր քաղաքավա-
րութեն իւրոյ. և յոյժ տենչալի փափագ-

մամբ ցանկայր Հաւատարակից լինել և հան-
դիսակից մաքուր մրցանաց նոյ և բրաբիոնին.
և որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ ինր՝
ոչ վրիպեցոյց զնա ի բարի ցանկութենէն՝ որ
առ ինձ. զսոյն՝ որ այնպէս մաքուր զհոգևոր
հարանուէն պահեաց զպատմուճան, և բազ-
մայեղց և ջերմ արտասուօք իւրովք սպիտա-
կացուցանէր զղարդ առագաստին, և ամ
ձգնութեանէ տուճեալ զանձն՝ ցանկալի երևե-
ցուցանէր զինքն անմահ փեսային։ Օ ի վ՛ա
անտեղի գործոց ամպարշտացն յայրի մնում
թաքուցեալ էր. և ի գետնափոր վայրի մ-
ում իբրև ի խաւարչտին սանդարամետա-
կան դերեզմանի անցուցանէր զաւուրս անձ-
կութեանէ. և սակաւ ջրով զովացեալ՝ կերա-
կրեալ լինէր յարմատոյ բանջարոցն, զոր առ
ափն քարանձաւին գտանէր։

Ա պա յետ բազում աւուրց ինչ իջանէր նա
ի լեռնէ անտի առնացի ձևով, զոր զգեցոյց
նմա յառաջագոյն ագապէ հոգևոր մայր նր
առ ի ձողոպրել ի ձեռաց անօրինաց. և ի
խնդիր ելանէր երանելւոյն ագապեայ. այլ
ծանեաւ, զի նա զվկայական ընթացան կա-
տարեալ էր հանդերձ այլ նր կուսանօքն՝
հրկեզ ի տաճարին ոմ եղեալ։ Ա ոմ վշտա-
նայր հոգւով երանուհին գոնինա, զի և ինքն
ոչ եղև ողջակիզեալ ըստ ագապեայ՝ հաղոր-
դեալ և այլոց չարչարանացն. և կացեալ
մերձ ի կիզեալ տաճարն՝ յորդառատ արտա-
սուս ըստ աչիւն նր մարմնոց նոյ խառնէր, և
աղեկիզեալ տուչորէր. մինչև քակտեալ լի-

նէին

նեկին յօդք մարմնոյ նոր կրծաբախ հառաչ-
մամբ և թախծեալ ոգւով։

Այս իսկոյն իջեալ յերը ծովուն՝ տեսանէր
նաւ մի ձկնորսաց, զի կազմէին զուռկանսն.
և ոչ ծանուցեալ նաւավարացն ղերանելին վը-
առնացի կերպարանացն՝ ասէն ցնա. Ելկ ոմ
երիտասարդ օգնական լեր մերոց աշխատու-
թեցս, զի հաղորդ արասցուք զքեզ որսոյ
ձկանցն։ Այս նորա մտեալ ի նաւն՝ զձկնոր-
սացն Ամլեցուցանէր զաչսն և զոգիս հեզա-
կան պարկեշտութեք, և քաղցրաբարբառ ծծա-
խօս բանիւքն։ Այս իբրև արկին զուռկանսն
ի ծովն, իսկոյն Թափեցան ի նմ բազմուն
յոյժ մեծամեծ ձկանց. զոր հազիւ և մեծ
աշխատութեք յերը ծովուն արտաքս ձգէին։
Այս ի հանել նոցա զձկունսն, տեսանէին ի
մէջ ուռկանացն և մեռեալ մարմինս՝ պատառ
պատառ կոտորել. և խռովեալ յայնմ տես-
լենէ՝ ահիւ և տրտմութեք ըմբռնեալք լի-
նէին. ապա ի բաց Թօթափեալ զմարմինս՝
Թողուին ի ցամաքի անդ. և զուռկանսն ա-
ռեալ՝ փութային երթալ յայնկոյս ծովուն,
և անտես ի մարդկանէ յայլ տեղի գնալ
յորս. և իբրև աղաչէին զնոքն որսակից լի-
նել նոցա, նա ոչ հաւանեալ նոցա՝ ի բաց գնայր.
իսկ նաւավարքն հայց և ձուկն տային նմ փո-
խանակ վարձուց աշխատութեն. և ինքեանք
գնացին։

Յայնժամ երանելին դոմինա, որ զինդեւին
և զնորին ընկերակցացն զյեղանակ մարտին
և զվախճանին յառաջագոյն իմացեալ էր,
և-

եկեալ ի տեղին՝ յորում անկեալ կային մարմինք սքեղն եւեթ յուռկանաց անտի, ստէպ ստէպ շրջ շրջէր, և ստուգութիւն զիւրաքանչիւր ոք ի նոցանէ զննէր. ոչ և նկարագիրն զիմաց նոյ հաւաստի ցուցանէր զկերպարանս նոյ. ապա գիրկս արկեալ ողջունէր՝ անյագաբար համբուրելով զնա, և արտօսր ոչ սակաւ հեղոյր ի վիր նոյ։

Եւ մինչդեռ դառնացեալ ոգւով փարէր զմարմնովք երանելեաց ի ծովէ զերին, ետես նաև մի եկաւորեալ ի վիր ծովուն. և նաւավարացն իջուցեալ զառագաստն՝ թէոք կամ թիւք հանդարտաբար մերձենային առ ափն ծովուն։ Ընդ յառաջ մատուցեալ՝ որ կոյն դումնա՝ զնաւապետն ողջունէր, որպես պարտէր. և ցուցանէր զձկունսն՝ զոր ունէր, ոչ թէ զիւրագին վաճառել. մինչև իմացի՝ եթէ քրիստոնեայ է ինքն և իւրքն, ոչ կարծէր. և նաւապետն զնոր զքրիստոնէութիւնն ստուգել կամեցեալ՝ երդմնեցուցանէր զնա յանուն Յի՝ ասել, թէ քանի՞ վաճառէ։ Յայնժամ աղնուական կոյն ծանեաւ զբարեպաշտութիւն առնն. և կոչեալ զնա արտաքոյ ի նաւէն՝ ցուցանէր նմա զմարմինս սքեղ՝ կցորդ առնել զնա կամելով նոցունց գեղեցիկ պաշտամանցն. և պատմէր նմա մի ըստ միոջէ ստուգութիւն զնոսմ անցս չարչարանաց վկայիցն։

Ընդ իբրև լուաւ զայս ամ նաւապետն, անկեալ առաջի նոր վկայիցն՝ համբուրէր զնոր ածակիր մարմինս նոյ. հանէր վաղվաղակի ի նաւէ

նաւէ անտի կտաւս նորս և հանդերձս սպիտակս, և իւղս անուշունս և խունկս ազնիւս. և դումնա լուանայր յառաջագոյն մաքուր ջրով, մանաւանդ արտասուօք զմարմինս երանելեացն. և օծեալ և խնկեալ զնոր հանդերձ նաւասպետաւն, և ամ զգուշութիւք պաստառակալեալ, բարձեալ տարան զնոսա մերձ առ պարիսպ քաղաքին՝ հուպ առ ձորակին՝ ի դրունն՝ որ հանէր ի ծովն համատարած. յորում տեղւոջ աքքն այն դորոթէոսեանք և ինդոսեանք ընկալան զվէճու մահու. և անդ պատրաստեցին գերեզման, և թաղեցին զնա զգուշութիւք։

Եւ դումնա ի նմին տեղւոջ խոստանայր.կել մինչև ի կէտ կոչման իւրոյ, և ոչ մեկնիլ ի նը գերեզմանաց նահատակացն քո։ Եւ այնուհետև անդ կեայր համբերութիւք բազմաւ, աղօթիւք և անուշահոտ խնկօք և անշէջ լապտերօք միշտ և հանապազորդ զպատիճ յիշատակի նոյ կատարելով. որում ձեռնտու լինէր և բարեպաշտ նաւապետն ընչիւք բաւականօք առ այնպիսի պետս։

Ընդ քանզի ոչ էր սարտ և պատշաճ առլեգականափայլ և լուսաձաձանչ ձառագայթիցն ծածկիլ ի յերկրի, և աս առաւել ոչ առանց կատարման մնալ ոճծային ցանկութիք կուսին առ վկայական հանդէս, անտուստ ուրեմն ի յայտ եկեալ զրոյցք իրին հասին յականջս չարիմացին մաքսիմիանոսի. որոյ իմացեալ զանձկալն տրփանս նը առ նահատակուն, և թէ սորին վե առ մարմինս սքանչդե-

պեգերկը , ծակ ծակիլ հարեալ ծիծաղէը , և ասէը . ընդհեգից նմ զբաղձալին իւր կատարած , և հաւատարակից արարից զնա նոցին չարչարանացն , արձակելով զնա ’ի անոտի յոյն իւրեանց՝ զոր ունին ։

Ո՛այս ասացեալ՝ վաղվաղակի զդահիճան առաքեաց . որք եկեալ հասին ’ի տեղին՝ յորում կայր նա . և տեսին , զի երանելին արտասուալից պաղատանօք յաղօթս կայր ’ի սրտի իւրում՝ շրթանց շարժելով միայն . և մերկացուցեալ զսուսերս իւրեանց՝ սպառնային ծայրաքաղ առնել զնմ՝ անդամն ներ . զի թերևս զարհուրեսցի և ’ի բաց կացցէ ’ի քէ ։ Նոքա երանելի կոյսն ոչինչ փոյթ առնէր զսպառնալեացն նոցա , և ոչ զանգիտեալ յերկիւղէ մահու՝ հանդարտութիւք և յնծութիւք կայր յաղօթս . մինչև ասացեալ զամէնն՝ հնքեաց զինքն նշանաւ խաչին , և խոնարհեցոյց զպարանոցն առաջի գահճաց ։ Նա այնպէս հատեալ եղև սրով գլուխ գերապայծառ և մաքուր՝ որ կուսին դոմնայի , յամ սեանն գեկտեմբերի՝ որ օր քսան և չորս էր ամսոյն . (որ է ըստ այլոց օր կատարման երկուց բիւրուցն) ։

Յետ վկայուէն դոմնայի ըմբռնեալ լինէր և մեծն անթիմոս (7) որ քահանայապետն քրիստոնէացոց նահանգին , որ զբազումս լուսաւորեալ վէրպուէիքն իւրով լուսաւորեաց , և ընծայեաց բանաւոր սպատարագ երկնաւոր և քաջ հովիւին . և ըստ ամ հանդէս արիականհամբերութիւք անցեալ՝ ընկալաւ զվէրջին մա-

հու

հու սրով ՚ի նմին ՚ի մաքսիմիանոսէ . զորոյ
զի՞մ հարցափորձուեցի՛ւ և զհանդէս տանջա-
նացն՝ յիւրում մանրամասնաբար պատմուեն
է տեառնե՛լ ։

Ա՛րդ ոչ միայն քան հազարօքս այսոքիւք
(առ վկայաբանն), որ ՚ի միասին ՚ի մում
վայրկեան ժամանակի եղեն սրբակիցք ըն-
դունել և պատարագ անուշահոտ քրիստոսի
ա՛յ, այլ սրովք անձինքք ՚ի սմա երևեցան
վկայք՝ քաղաքա այս մեծ նիկոմիդացւոց զար-
դարե՛լիներ իբրև զերկինս աստեղօք պայ-
ծառացեա՛լ ։ Այլ ՚ի կարգի նշուլագե՛ղ աս-
տեղացս յականէ յանուանէ փայլեցինն նահա-
տակութե՛ան յաւուրս հատարման երկուց քա-
րուցս՝ նախաձառեա՛լ վկայք նշանաւորք .
սքանչե՛լին գղերիկոս, այն է գղիկերիոս՝ ա-
ւագ քահանայ համաշխարհական եկեղեց-
ւոյն նիկոմիդացւոց, և Թէոնինա սարկաւա-
գապետ, և Թէոփիլոս սարկաւագ . և երա-
նե՛լին դորոթէոս նախատարար, և մարդոնիոս,
և պետրոս և միւգդոնիոս ասպետք և իշ-
խանք՝, և զենոն զօրական . և երջանիկն ին-
դոս նեղքինի, որ և ինդէս . և երեքին միշտ
կուսանք ա՛ծայինք, ագաթիէ, Թէոփիլէ կի՛ճ
Թէոփիլա, և դոմնա՝ գլուխ և աւարտ մար-
տիրոսացս և վկայուհեաց ։

Եւ եղև կատարումն սքոց վկայից առ հա-
սարակ ՚ի Թագաւորութե՛ն մաքսիմիանոսի և
դիոկղե՛տիանոսի, յամի ՈՆ երբ 300 . զոր
այսպէս նշանակէ Ձառընտիրն, * զկնի ծագ-
մա՛ն կենարարին մերոյ յամի երկերիւրերորդ

դէ

զի քանեռորդն (իմն վաթանեռորդն) ու-
թերորդն ‖ . (վրիպակաւ գրեալ՝ միշ, փո-
խանակ գրելոյ մկշ) , հաշուեելով ՚ի չարչա-
րանաց ՚ն . յոր յաւելեալ և զամս երեսուն
և երեք , լինի ամ ՚ն 301 , սկզբնաւորեալ,
կամ 300 , աւարտեալ . ըստ որում զօր կատար-
մանն դնեն ամենեքին մերձ ՚ի տօնն՝ կամ ՚ի
տօնի հրաշափառ ծննդեան և ածայայտնուե
փրկչին (8) :

XXXXXXXXXX XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ը

(1) Վասն միաբանին Յունաստրն մեր և մետափրաս-
տէս ՚ի վկայաբանուեես ոչխոյն՝ ըստ սկզբնաւորութե , ըստ
ընթացից , և ըստ կատարածին , հասարակօրէն բաւ առ
բաւ , և ուրեք ուրեք խմաստ առ խմաստ· զի ուրեք մին
համառօտէ զատենախօսուեես , և միւսն ընդարձակէ · յոր
մէ յայտ է թէ տղբուր երկոցուն է մի , եթէ օրինակն
մեր չէցէ տղբուր մետափրաստեսին : Թող զսխալանս
գրչաց ՚ի մին և ՚ի միւսն , մինչև անխտիր ուղղագրել
զմիմեանս · ոչ և զտարբերուեն հայ և լատին Թարգ-
մանչին · զի Թէպէտև բնագիրք երկոցունց են այլևայլ
քայց ուր նոյն բան կայ երկոսին՝ տակաւին այլևայլ է
ոճ Թարգմանուեե · զոր միշտ պանծալի տեսաք ՚ի հայ-
ումն : Վասն և մեք հասարակօրէն անայլայլելի պահեցաք
զչարագրուեն Յունարնին՝ զգեղեցիկ աշխատասիրուեն
նախնեաց մերոց · միայն ուրեք ուրեք վերծանուեեան
պարզելով , և զսխալանս գրչուեե մաքրելով : Յայտմա-
նուելք իւրաքանչիւր ազգաց են քաղուածք նոյն վկայա-
բանուեե , ՚ի զի տեսանել մետափրաստեան օրինակի հե-
տեւելով , և ՚ի զի այլուստ ինչ ինչ պատուճառաբանելով · որ
լինի երբեմն հետեւողուեե ընտիր ընթերցուածոց , և
երբեմն խոտորնակ հետք սխալ խմացուածոց :
Մետափրաստեան ոգւոյ օրինակ լինցին այս բանք · զի
՚ի սկզբան՝ ուր Յունարնին յայտնէ զվեճակ եկեղեցւոյ
ծաղկել ՚ն և խմաստուն արանէք , յորոց մի էր և կիւր

ղոս

ղոս եպս նիկոմիդացւոց, մետափրաստէս չորք զբանն՝ի
փոխաբերուն պարնան և ձպռան ևն։ Որ և յընթացս՝
Թէպէտև բազմօք համառօտէ զայլ ձևս բանից ձուռընա-
րին մերոյ, բայց մանրամասն նկարագրէ, Թէ զիարդ
ինդուա և դոմնա յԵլանէն՝ի չտեմարանէ՝ որ լեալ էր
նոյ աղօթանոց, և յերթալն՝ի բանտ, զանխուռ բարձին
զգերս և զտապանակն ոբ հացի։ Ճոխ նկարագրէ և
զայսահարուն դոմնայն զիամաւորը, և զխորհուրդ պա-
հապանաց վն աւետելոյ զնա աւ քրիստոնեայս. սոյն-
պէս և զքանի մի երս։ Երբեմն ևս վճռական առածս
կմ զբարոյական ազդարարուն ը մէջ արկանէ. որ աւե
զդոմնայէ. * ոպ կարևոր համարէր մարմնոյ (ալքա-
,, ասց) զդարմանս պետոյէց, նոյնպէս և հոգւոյ իւ-
,, րում կարևոր՝ դարմանել զայլս ‖։ Եւ վն դարձու-
ցանելոյ ինդուա զանհաւատս ասէ. * քանզի բանն աճէ
,, ՚ի ճշմարտութիւն, յորժամ ուն և զվարս միաբան ‖։
Եւ ՚ի բերանոյ գղխկերիսոս քահանայի՝ զորոյ զասաց-
ուածս այլապէս յօրինէ, այսպէս կնքէ զբանն աւ Թէրն.
*՚ի հարկանիլ մեր՝ ապանանեմք. և յանկանիլ մեր՝ յաղ-
,, Թանակ կանգնեմք ընդեմ քո ‖։ Եւ վան Թէոփիլայ
կուսին գրէ. * Էր՚ի պայծառ տոհմէ, որպէս լուսաք,
,, այլ առաքինուբ յոյժ պայծառագոյն ‖։ Գեղեցիկ են
այսոքիկ. բայց հաւատարմագոյն և պանծագոյն գտա-
նին արդեօք ձևք բանից օրինակին մերոյ։

(2) Վրնպակաւ գրեալ էր ՚ի ճ. վն դոմնայէ, Թէ ՚ի
մկրտելն՝ էր * ոչինչ աւելի քան զտան ամաց ‖. զոր ը
մեռուսկր. ուղղագրեցաք՝ չորեքտասան ամաց. կարէաք
դնել և ը Հ. ժը ամաց, քան ը որ լինէլն, ժբ ամաց։

(3) Որ ճ. դնէ ձորձս, և մետափր. վսխաԹս, Հ.
քաջ միաբանէ գերկոսին՝ գրելով այսպես. * միով պատ-
,, մուճանաւ ՚ի վր խոտեալէն խարոյ ննջէին ‖. իսկ որ
նէն էդեալ է. * ՚ի վր խոտի նստեալ և ննջեալ ‖։
Եւ զարամ գեաւնն՝ ՚ի լատինն ընԹեռնուածք մերկ գե-
տին։ Մնայ ասել վն փոքրիկ տապանակին, Թէ գինչ
գոյր ՚ի նմա, երբ ճ, գրէ՝ * նշխար ոբ հացին ‖. և
ստուրիոս՚ի լատին Թարգմանուբ մետափր. * ոբ նուէրր ‖.
որովհետև պարտ նմանալ զոբ հայելոյդուն, այլ զօրհնեալ
հացն, որ ը յուսոց կոչն օրհնուբ, և՚ի մեզ ասելովքն՝
մաս։ Զի Թէպետև լինելը երբեմն՚ի տուն պահելոյ

խար-

խորհուրդն, բայց կարգ պատմուչեն ոչ ցուցանէ առաջնոր զայն. և եթէ ոք զայն ևս իմասցի վն յիշատակեալ բուրվառն և Ճրագն, ոչինչ հակառակիմք։

(4) Վասն ներքինապետին՝ Ճ. առ մերկ և խոյտառակ շրջեցուցեալ ըզքաղաքն, և՝ ի բանտ արկեալ. իսկ մեծաւորս. որում ձայնակցի Հ. և ասր ինչ, ասեն՝ թէ՝ այնսորեցաւ՝ ի կղաւդիուսպօլիս (խաւրիոյ), դարմանել և արածել զերամակ ուղտուց. այլ ըստ ամենեցուն՝ գլխատեցաւ զկնի։

(5) Մխաբան յայտ առնեն Ճ. և մեծաւոր. թէ դորթեոս էր այր նախարար և երևելի ի՝ պալատան. որպէս և ընկերք նր արք պալատականք. և ոչ գիտեմ զիարդ Հ, և Հ = Յ, և ասր ինչ մխաբանին կոչել զդորոթեոս թագաւորն. թերևս չեն իմացեալ զբօրուն լատին բառին՝ զոր վարչին և յոյնք՝ ի պալատան, ըստ որում ասէ մեծաւոր. թէ ըստ էօէօնդոս կոչիւր, որ թարգմանի վերակացու կամ նախագահ։ Այլ հասանելի՝ կոչէին զոմն զընկերս նր ասպետս կամ աստյայպետս. ոմն և զմին կամ զմիւսն զդեղխս կոչեն։

(6) Մեծաւոր. ոչ յիշէ զանուն սարկաւագապետին, զոր ոմն Ճ. նոյնպէս և Հ. թէոնէնաս զրեն։ Իսկ թէոփիլոս անուն՝ զոր միօրինակ յիշեն՝ ի վախճան վկայաբանութեանն և այլ սքս՝ Ճ. և մեծաւոր. բարեաւք թուի իմացեալ՝ ի Հ. և՝ ի ասր ինչէն, թէ էր անուն սարկաւագին՝ որ էբեր զթուղթ սբոյն անթիմոսի. զոր վն և նահատակեցաւ իսկ։

(7) Փոխանակ անուճան Անթիմոսի՝ յայտնի վերնագիրս էդեալ էր յայսմ վայրի առ մեծաւոր. Եւթիմիոս. ուստի առեալ և եդեալ է նաև՝ ի Լ. դեկտ. 24. իբրև որինչ՝ ի սբոյն անթիմոսէ, որոյ յիշատակն լինի՝ ի Լ. ապր. 27, և՝ ի Հ. և՝ ի Յ. սեպտ. 3։

(8) Խնդիր դժուարին տեսանի վն աւուր կատարման երկուց բնուրուց, և այլոց վկայիցն՝ որ յայն աւուրս այլով տանջանօք կատարեցան, բայց ըստ մի հաւատոյ զրին ըստնս, որ ինդոս և գոնիս և դորոթէոսեանք։ Պատճառ դժուարութեն է, զի Ճառընտիրն ըստ հին ոճոյ յուսոյ՝ զոյգ ըստ սովորութե ազգիս՝ զծնունդ ոն ձմեռայնոյն կոչեաց միանգամայն, ոչ և տեսաք. յորմէ կարծի՝ թէ չև էր յայնժամ զանազանեալ երկին տօն աւ յոյնս վն ծննդ

դեան՝ի գ. դեկտ. 25. և վերադարձանեն՝ի յունվարի 6. ըստ որում՝ և ասկե ընդունին միով գարուս վկայն ասէ, թէ նորոգ ընկալաք զայս սուրբ գիրսն կրկին ածանց: Յայս հայեցեալ և որ ինչ՝ գերկուց բնութց օրն ձգէ՝ի յունվար վարի 4. և միանգամայն ասէ լինել օր ծննդեան: Իսկ մեսրոպեան՝ի միոյ կողմանէ հայեցեալ՝ի սովրութեն ժամանակի նորոյ՝ պարզապէս յաւուր ծննդեան քան ասէ զկատարումն սըց, առանց յիշելոյ զայսպիսի թե. և՝ի միւս կողմանէ զօր ածանց նոյ միով աւուրբ գինի ձգէ, գրելով՝ի վախճանի այսպէս. * որոց յիշատակին ,, կատարի միով աւուրբ գինի ծննդեանն քո, յաւուրջ ,, քան զածն անմեռ մանկանց. գի ոչ նոքա սրով, նոյն- ,, պէս և տղայ հրով պատարագեցան ոչ, որ գպեցաւ ,, գմարմին ||: և ըստ այսմ սուրբս գրէ գվկայաբանութեն երկուց բնութց, և որոց ըստ նս, ՚ի 26. դեկտ: Եւ սակայն յայտաւորգք և ժամագիրք յունաց գնեն գյիշատակ նոյ՝ի գ. դեկտ. 28: Եւ ըստ երկաքանչիւր իսկ գրութեց չգիտեմ օր կատարման երկուց բնութց, և ինդուսկ և գոնիայի և որոց ըստ նս. ուր յայտ է՝ի պատմութենն, թէ ուշ՝ի նմին աւուր եղեւ կատարումն ամենեցուն սոյ.

այլ՝ի ջանապան աւուրս:

Առ այս՝ յարմարութեբ լիմն. Ա. եդեալ է գկատարումն պղնկերության քահանայի՝ի դեկտ. 21. գեղթիմոսի (որ է ըստ մեզ անթիմոս)՝ի դեկտ. 24. գբնուրուցն՝ի դեկտ. 25. և գինդոսի և գդոմնայի՝ի դեկտ. 28: Իսկ Հ. եդեալ է գյիշատակ երկուց բնութց՝ի դեկտ. 24. իբր և յաւուր ծննդեան ոն, վասն ասելոյ՝՝ի նախատօնակի. և գինդոսի և գդոմնայի՝ի դեկտ. 29. ոչ և զսօն նոցա միաբան կատարեմք՝ի նմին միջոցի: Արդ յայտ ամէն գլինչ և կամ ոչ՝ մակաբերեսցէ, միայն թէ առանց հակառակութե, յիշելով զառաքելականն՝ թէ մի ոք գձեզ զանցառացէ ամօամոխք կամ ջաբանօք կամ մատամբք տոնից. գի ամն՝ի փառս ոչ կատարի երկուց բնութց ծնանիմի աւուրբք յաւուրջ կամ յեռոյ քան զբուն օր կատարման նոյ, (գի և չէ մարթ դիտել գյատգմոց օրն հաւասարի), միայն թէ տօնեացուք ատուգութե՝ ոչ արժան է, այ սրբուբ գաբա պատուհէրով, և նախանձաւոր լինելով վասակոց նոյ և պատկաց:

ԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ

Յոսատովանողացն՝ Աբրահամու և Յովհաննայ։

Ի. դեկտ. 20։ Տէր եղեալ. դեկտ. 8։ Աբեղ եղիզէ։ Փարպեցի. Ի այլ։



Արկածին սաստիկ սաստկացաւ սաքանչելի ՚ի երիցունք՝ պարծանք Հայաստանեայցս եկեղեցւոյ և ամենքն հաւատոյ, էին ՚ի համարոյ աշակերտացն սքոյ վարդանայ քահնայից, և սպասաւորէին նմա ՚ի նեղութեան բանտի՝ որ ՚ի նախշապուհ քաղաքի ապարանին վրկանայ. և յորժամ տարան զնոսա վարդանայ ՚ի ծածուկ արտաքոյ քաղաքին ՚ի նահատակել, դենշապուհ ոստիկան ամբարապետ ուրուշեաց զաշակերտան ՚ի վիշապաց, և ետ պահել կապանօք զաբրահամ և զնորին այլովքն հանդերձ ՚ի դղեակի անդ նախշապհոյ, մինչև լինի նմա հրաման յարքունուստ։

Ապա յետ կատարման սոքա վիշապացն՝ յամի տն 454, եղև նմա հրաման, զի արձակեսցին ՚ի կապանաց, և երթիցեն ուր և կամին։ Յայնժամ երանելի երիցունք խորէն և աբրահամ եկեալ առ ամբարապետն դենշապուհ

պուհ՝ բողոք բարձել ասելին. դու յորժամ
գՀոգևոր տեարան մեր և զվիշապ ի նիւշապ-
հոյ առեր գնացեր, ըստ որս և մեք կամեցաք
ուղեկից լինել ըռնաբռոյր հրամայեցեր խնամ
պահպանութ արգելուլ զմեզ մինչև ցայժմ։
Այդ՝ եթէ տարեալ ուրեք յերկիր օտար և
անդարձ անցուցիք զնա, առնելով բարերա-
րութիւն՝ պատմեցէք մեզ, երթալ և մեզ և
լինել անդարձ ըստ նմա. զի մեք անդ կեալ և
վախճանիլ պատրաստ եմք, միայն թէ տե-
սանելոյ զնոսա լիցուք արժանի. ապա եթէ
սպանիք զնա վա՛տ անուանն քրիստ, կամեցարուք
և ի վերայ մեր տալ զնոյն հրաման. վա՛տ զի
պատուհասական և մեծարգոյ համարիմք զմահ
այնպիսի քան զայմ փառս և զմեծութիս Տիս։
Այս վերդենչապուհ զարմացեալ ամ բազ-
մութէ հրապարակին ըստ համարձակութիւն
աներկիւղութէ արանցն՝ ասէ ցնա. զձանա-
պարհ վիշապաց ձերոց ոչ ոք ցուցանէ ձեզ.
բայց վա՛տ ձեր հարցցուք ցարքայից արքայ. և
մտեալ ի ներքս դենչապուհ պատմէր յազ-
կերտի զամ զբանս և զխնդիրս երանելի ե-
րիցանցն։ Ասէ թագն. եթէ ի նոյ վա՛տ վնաս
ինչ ոք յայտ չառնէ, և դատախազ ոք չկ
գՀետ, թող երկիր պագցեն արեգական, և
պատուհել զկրակն յանձն առցեն. և ընկա-
լեալ զպարգևս մեծամեծս ի մէնջ՝ արձա-
կեսցին յոյն իւրեանց. ապա թէ չհաւանեսց-
ցին յանձն առնուլ զմեր հրաման, պատու-
հաս կրեսցեն խեղութէ, և երթեալ յաստ-
ըեստան՝ մշակութէ արասցեն ընդ արքունի

մշակն մինչև ցվախճան իւրեանց :
Յայնժամ դենչապուհ առաքեաց զդահճապետն արքունի՝ առնել ըզ նա և ըզ այլս յաշակերտաց զհրամայեալն ի թագաւորէն . և դահճապետն հանել զնա կապեալն ի նիւշապուհ քաղաքէ , զատոյց ի մի կողմն զխորէն և զաբրահամ , և ուրոյն ի նոցանէ եհարց նախ զայլ աշակերտս և զկինգ ասորի քրիստոնեայս՝ եթէ առնուն յանձն զհրաման թագաւորին . և նոքա ոչ հաւանեցան երկիւղապատանել արեգական , այլ ևս առաւել այնքեցան ի հաւատս քրիստի : Ո՛վ չարչարեաց զնա դանիէլ . կարեաց զնոյ ուսուցս և զականջս , և ետ տանել յասորեստան , զի կացցեն ի մշակութեի արքունի . և նոքա երթային մեծաւ զօրութեամբ , իբրև այն թէ մեծ պարգևս գտեալ ի թագաւորէն :
Ապա կոչեաց դահճապետն զխորէն և զաբրահամ առանձինն յատեան , և ասէ ցնոսա . զինչ անուանք են ձեր : Պատասխանի ետ մինն , և ասէ . առ ի ծնողաց ինձ խորէն , և դմա աբրահամ . իսկ ըստ ընորհատուր կարգիս ծառայք քոյ եմք , և աշակերտք երանելւոյն՝ զոր սպանիք : Ասէ դահճապետն . իսկ արդ զինչ գործ է ձեր , և կամ որո իսկ ածեալ է զձեզ այսր : Պատասխանի ետ առ այս սբն աբրահամ, և ասէ . զայդ ձեզ ի վերպաց մեզ ոչ արժան էր ուսանել , եթէ այնպիսի առանց աշակերտաց և ծառայից զկետ ընթանան . զի ոչ գուշնաքեայ ոք էին նք , այլ երկիւղած

ուճաճս հայրենիս ըս արժան բաւականին՝ ըս
նմին և սպասաւորս, եր՝ որ իբրև զմեզ, և
եր՝ որ լաւագոյն քան զմեզ։ Որոց անուցեալ
և ուսուցեալն եր զմեզ, ըստ նմ եմք եկեալ.
քանզի և պատուէր իսկ ունիմք յաճատուր
օրինացն մերոց սիրել զնս իբրև զնոք ծնօղս,
և սպաս տանել նց իբրև հոգևոր հօրանց։
Յասեաւ դահճապետն և ասէ. իբրև զան-
խրատ և զաներկիւղ ստամբակս խօսիս. մինչ
դեռ՝ ի խաղաղութենէ և յօդի ձերում էիք,
բարիոք եր. այլ յորժամ քրէական յանցա-
նօք պարտաւոր եղեն նք յիրս արքունի, և
մահապարտ գտան ըս գործոյ իւրեանց, ձեզ
չեր արժան ամենևին մօտ երթալ առ նոսա։
Ոչ տեսանէք՝ ի մեծ կարաւանիս, յորժամ
ոք՝ ի նախարարացն կամ՝ ի սպասաւորացն՝ ի
դիպահոջ արքունի լինիցի, սգոյ հանդերձ
ագանի, և զատեալ և որոշեալ՝ ի բացեայ
նստի միայնիկ. և ամենևին հուսպ ոք ոչ իշ-
խէ երթալ առ նոսա. և դու այդպէս իբրև
զանյանցի աշակերտ՝ պարծելով խօսիս։
Ա. և այս ետ պինդ խորհն, և ասէ. ոչ ձեր
կարգդ անիրաւ է, և ոչ մերս ստուքս։ Այս
խարարն յանցաւոր առ Թագրն՝ ուստի զպար-
գևն գտեալ է, այնպես պարտ եր նմա հպա-
տակ լինել, զի՝ ի պատուհոյն վէր և այլ ևս
պարգևս մեծամեծս՝ ի նմէ գտանէր. արդ
փոխանակ զի զայն ոչ արար, ձախողակի յետս
ընդդէմքն պատահեաց նմա։ Այս մեր վար-
դապետքն եթէ առ ձեզ յանցուցեալ էին, և
կամ առ Թագրն մեղուցեալ լինչ էին, նոյնօրի-

նակ և մեք առ նոսա առնեսաք . ոչ յՀնդի մօտ երթայաք , և ոչ ի տար Ց այսր գՀետ նոցա գնայաք : Արդ քզի առ երկոսին կողմանն արդարութիք կեցեալ են , և դուք զուր տա- րապարտուց սպանիք զնո , մեք արդ ևս ա- ռաւել սպասաւորեմք ձեր ոսկերաց նց :

Ասէ ցնա դահճապետն . ես յառաջագոյն իսկ ասացի՝ ոչ միում , նոյնպէս և միւսում ի ձէնջ , եթէ կարի ստամբակ ոմն ես դու . ահա յայտ եղև աւազիկ , եթէ յամ ժնասս վէրպաց ձերոց խաւն կք դուք : Աբրահամ ասէ . յո՞ր ժնաս : Դահճապետն ասէ . առա- ջինն՝ ի մահ մոգուցն , և ապա՝ յայլսն ամ : Աբրահամ ասէ . այդ ոչ միայն ի մէնջ է , այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ . զի թա- գաւորք ձեզ տան հրաման գլխաւորացդ , և դուք ի ձեռն ձերոց սպասաւորացդ գործէք : Դահճապետն ասէ . ի միէր ծծ երդուիեալ իմ , խստագոյն և խօսիս քան զվէրպան քո . յայտ է թէ ժնասակարագոյնք և ես դուք . արդ ոչ է հնար ձեզ սպրիլ ի մահուանէ , բայց եթէ երկիր պագանիցէք արեգական , և կատարիցէք զկամս օրինաց մերոց : Լոտ- րէն ասէ . ցայժմ իբրև զմարդ չարախօսէիր , և արդ իբրև զշուն անպիտան ընկայր հաչես : Եթէ գոյր արեգականն ականջք , դու տայր նմա թշնամանս դնել . արդ նա բնութիք անզգայ է , և դու չարութիք անզգայագոյն և ս քան զնա : Երբ տեսեր զմեզ պակասա- գոյն քան զՀարսն մեր . մի քանիւք զփորձ առնուլ կամիր զմեր , այլ՝ հանդէս արա քում

ջա-

չարութիդ , և մերում բարութիես . և ամա-
չեցեալ գտանի հայրն քո սատանայ՝ ոչ միայն
՚ի մէնջ , որ կատարելագոյնքս եմք , այլև որ
կարի փոքրիկն Թուխի քեզ , նա դիցէ վէրս
սաստիկս յոգիս և ՚ի մարմինս քո ։

Օ այս իբրև լուաւ դահճապետն , սրտմտեալ
բարկացաւ ՚ի վերն նոյ . եւ քարշել չարագոյն
քան զառաջինսն . և այնչափ սաստիկ քար-
շեցին , մինչև բազմաց կարծիք եղեն՝ թէ մե-
ռան ։ Իսկ իբրև ժամք եւթեք ՚ի վեր անցին ,
դարձեալ խօսել սկսան երկոքեանն , և ա-
սեն . փոքր համարիմք զանարգանս զայս , և
առ ոչինչ զգաւս մարմնոյս՝ առ մեծ սէրն նոյ ,
որով կատարեցան հարքն մեր հոգևորք ։ Այ-
սպս մի դլսոր և մի դադարեր , այլ զոր ինչ
առ նոսայն արարեր , զնոյն և առ մեզ կատա-
րեա՛ . եթէ չարագոյն Թուխին քեզ գործք նոյ ,
կրկին և զմերս համարեսջիր . զի նոքա բա-
նիւք հրամայէին , և մեք գործովք զար-
դիւնան կատարէաք և կատարեմք ։

Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ ՚ի վեր
նոյ , և հրամայեաց զմահու դան հարկանել .
և առ սի մի ՚ի նոցանէ փոխեցաւ վեց այր ՚ի
դահճացն ։ Եւ մինչդեռ կիսամեռք յերկիր
անկեալ դնէին , հրամայեաց զերկոցունց ա-
կանջան մօտ կտրել . և այնպէս բրեցին , ոպ
թէ չէին լեալ ՚ի տեղւոջն ։ Օ արթեան ոպ
՚ի քնոյ ՚ի սաստիկ հարուածոցն . սկսան ա-
ղաչելով պաղատանս մատուցանել , և ասեն .
աղաչեմք զքեզ քանզ զինուորդ թագաւորին .
կամ կատարեա զմեզ իբրև զհարսն մեր մահ-

ուսանիք , և կամ արդ զպատուհասդ ըստ օրինա-
կի վերջնոցս : Ո՛ւ ահա լսեալիք մեր առող-
ջացան զանախտաւորութեի երկնաւոր . իսկ
հոտոտելիքս դեռևս աստէն ՚ի տեղւոջ կան
յանցս չարչարանաց . մի՛ կիսատարգև առ-
ներ զմեզ յերկնից բարուէն : Արբեցեր զգ-
մարմինս մեր քարշելով , և զլսելիս մեր կըտ-
րելով . սրբեա՛ և զրունգունս մեր հատա-
նելով . քանզի ո՛րչափ տգեղս առնես զմեզ
երկրաւորաւս , դեղեցկագոյնս առնես զմեզ
երկնաւորսն :

Այս պինդ դահճապետն հեղութիք , և ասէ .
եթէ և այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով ,
կարծեմ եթէ և աշակերտիք զիս ՚ի ձեր յա-
մառութիդ : Ո՛ւ ահա արդ և զկորհուրդս
արքունի ՚ի վեր հանեմ ձեզ . ցայդ վայր ե-
զև հրաման պատուհասիդ ձերոյ . և ՚ի վե՛ր
դորին պատուհասի երթալ ձեզ յաստրես-
տան , և լինել ձեզ մշակ յարքունիս . զի որ
՚ի ձեզ հայեսցի , մի՛ ՚ի դմին յամառութեան
պնդեսցի ընդեմ հրամանաց թագերին : Ասեն
ցնա երանելիքն . դու զմեր երկիրս կիսա-
գործ թողեր . մեք յարքունի երկիրն կեաս
մարմնովք մերովք ո՛չ վաստակեմք : Յորմ
զայս լուաւ դահճապետն , աղաչեաց զզին-
ուորսն՝ որ տանելոց էին զնա , և ասէ . միայն
աստի դուք առէ՛ք գնացէ՛ք . և հասեալ յա-
ստրեստան՝ ո՛ւր կամ իւրեանց է , ըզջեսցին :
Այս են հայոց խոստովանողք կատարեալք
(ասէ՝ որք եղիշէ ականատես) , որ զնեղու-
թիւն և զչարչարանս խնդութիք ընկալան յան-

ձինս

ձինս իբրեանց . այլ վա՜ղ զի վրիպեցին ի՝ նոքա
մահուընանէն , սպով և տրտմութիւք երթային
զերկայնուէ Ճանապարհին . ոչ ծանր թուէր-
լին նոյ կապանք ոտիցն և ձեռացն իբրև զայն ,
թէ ընդ ոչ եղաք արժանի հաւասարել ընդ
քաջ նահատակն ։

Եւ իբրև տարան հասուցին զնոսա յերկիրն
բաբելացւոց՝ ի գաւառ մի , զոր շահուղ կոչ
շաբուլ անուանեն , թէպետև էին յարքունի
պատուհասի , սակայն յայտնի և գաղտ մե-
ծապէս ընկալեալ եղեն ի քրիստոնէից քնակ-
չաց ասորեստանի . որք ըստ առաջ եւլին երա-
նելեացն խնդութիւք , և պատուէին զնոս ոչ
զնչխարս նահատակելոցն սբց . սակայն ե-
րանելիքն և յայնմ յոյժ տրտմագին էին , իբ-
րև այն թէ՝ սակաւ վաստակեցաք , և մեծա-
պէս հանգչիմք ։

Եւ իբրև հանապազ ինդին զղջման կային ,
տեսեալ զյօժարութիւն հաւատացելոց Ցին՝
որք առատապէս բերելին նոյ զնամ պէտս , յոր-
դորեցին զնոս հոգ տանել առաւել նախարա-
րաց եղելոց ի կապանս ի նիւշապուհ դղե-
կի ապար Ցի . և զի ինքեանք յարձակի կայ-
լին՝ ըստ յորդորելոյ բարեպաշտից յանձն առին
և անձամբ տանել զտուրս նոյ յասորեստանէ
մինչև յապար Ց . և այսպէս ամ յամէ ժողո-
վէին ըստ իւրաքանչիւր կարի մարդկանն ոմն
սակաւ և ոմն շատ , և տային յերանելիսն՝
տանել նոյ . և այսպէս յարքանեկուէ կային
նոքա երիցունքն , մինչև տասն ամն լցաւ ար-
քունի մշակութիւնն , միանգամայն և սպա-

սաս-

սաւորութիւնէ նախարարաց կատելոյ :
Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ՚ի ջեր-
մոջ ձին , և անդադար էին ՚ի ձանապար-
հորդութեանն ըստ նոյն շահուղ գաւառս և ընդ
մեջտուին և ըստ քաշկար և ըստ ամ աստրեստան
և խուժաստան , սաստիկ տագնապ հարեալ ՚ի
խոլշակէ մեռանէր ձին խոլէն անդէն յատա-
րեստանի . և ասէր ՚ի ընակչաց
ձին ըստ ՚ի վկայ :
Նոքա երանելին աբրահամ կայր ՚ինքնին առա-
քինութեամբ այլ և սա ամս երկուս մինչև յերկո-
տասաներորդ ամն պատժաւորացն , անվե-
հեր թոշակատար լինելով առ նախարարս
հայոց ՚ի հաւատացելոց աստրեստան ձի :
Այս սկսան նախարարքն աղաչել զերանե-
լին , զի ոչ վճռիցէ զայնչափ աշխատութիւնն
յանձն առեալ երթևեկելոյ ըստ երկայն ճա-
նապարհ , հաւանեսցի երթալ և յաճն հայոց ,
և մխիթարել զընտանիս իւրեանց . զի ՚ի քեզ
տեսցեն աստն զքաջ նահատակն՝ որք կա-
տարեցան սրով , և զոր կապանս չարչարա-
նաց մերոց . և քեզ օրհնեսցի ճն ամ . յոր-
ժամ կոխեսցեն ամենավաստակ ոտք խոստո-
վանողիդ զերկիրս հայոց , և կենդանի մար-
տիրոսդ շրջեսցի ՚ի մէջ ազգին , ամ ճին
կրկին լինի կենդանուն : Վերև ՚ի տեսա-
նել զքեզ՝ և զմեր կապանս յիշեսցեն , և ա-
ղօթս առնելով խնդրեսցեն յայ , զի գերե-
դարձ լիցի մեզ անդրէն ՚ի հայրենի երկիրն
մեր . և այս ամ այսպէս եղև ըստ հաւատոց նոցա :
Ո ՚ի յորժամ մեծաւ թախանձանօք ստիպե-

ցին

ցին զերանելին աբրահամ, ածէին զնոսա զ-
վանօղն ի հաւանութեն. վ՚ս զի ոչ էր երբեք
սովորութեն սէյն՝ քարուցն ընդէմ դառնալ.
ապա երաշխաւորութեբ հաւատացեալոց՝ որք
զտուն խուբեանց և զարարս փոխանակ նորա
դրեցին յարքունիս, և յիւրեանց վէր առին
զարքունի աշխատութեն ներ մինչև ցվախճան
նորին, արձակեցաւ երանելին, և եկն ե-
մուտ ՚ի ՏԱՅՈՑ։

Փութացան եւլին ընդառաջ ներ վաղվաղակի
մեծամեծք և փոքունք, ալք և կանայք. ան-
կանէին և փարէին զոտիւք և զձեռօք սէյն,
և աւէին. օրհնեալ տէր ած ՚ի բարձունս, որ
առաքեաց մեզ հրեշտակ յերկնից՝ բերել
մեզ աւետիս յարութեե, զի լինիցիմք ժա-
ռանգք արքայութեն. քանզի և տեան լսակ
երանելւոյն առանց ամ երկբայութե զկեր-
պարանս հրեշտակի ցուցեալ ծանուցանէր
ամ աեստղաց։

Նայց երանելի խոստովնօղն Քհպետև այս-
պես սիրով ընկալեալ եղև յամ ծէն, ընտ-
բեաց իւր տեղն մի զատ յամ բազմաժողով
ժողովրդոց. և առաքինի եղբարբք երիւք
անցուցանէր զկեանս իւր մեծաւ ձգնուբ.
զոր եթե կամիցի ոք ՚ի կարգ արկանել,
դժուարաւ կարասցէ ասել զվարս առաքի-
նութե նո՛ (ասէ սբն եղիշէ). զի եթե ըզ-
տքնութեն ասիցես, իբրև զկանթեղ անշէջ
կայր գամ գիշերս. և եթե զաղաւաթիտու-
թեն կերակրոցն կամիցիս ասել, հաւատեայց
եթե զանկերակուր հրեշտակացն բերէր ըզ-
նմա-

նմանութիւն. եթէ զհեզութիւն ցածուէն կա-
միցիս ասել, ոչ զոք ի կենդանեաց կարիցես
գտանել նման նմա. և եթէ զանընչասիրու-
թիւնն կամիցիս ասել, դարձեալ զոր օրինակ
չպարտի մեռեալն ի կարասէ, զնոյն օրինակ
ձշմարտութիւք և առ երանելին խմաջլիր.
անյագական ձայնիւ հանապազորդեալ էր
ի պաշտամանն, և անհատ աղօթիւք միշտ ընդ
այ ի բարձունս խօսէր:

Այս վճռ այսպիսի հրեշտակային առաքինու-
թիւնն նոր՝ ոչ հայեցեալ յականջատ գոլ սէյն
իբրև ի պակասութիւն, այլ առաւել որպս ի
կատարեալ նշանակ խոստովանողական ձըգ-
նութիւնէ, բռնադատեցին զնա, և ձեռնադ-
րեցին (ըստ գրելոյ վարպետցւոյն) յաստի-
ճան եպսուէ Ձին բզնունեաց. որով և բա-
զում ուղղութեց Ձին մարդկան լինէր ուսու-
ցիչ: Այ և եղիշէ կրկնել անդրէն զգովա-
թիւն առն այ ի վեր բերե. Այ եղև նա ան-
համեմոց, և խթան ընօստուցիչ այմ հեղգա-
ցելոց: Ասրովեցաւ նոսա ագահութիւն, և
կարի յոյժ ամաչեաց նոսա չոմայտութիւնն
որկրամոլութիւնէ: Այուղջութիւն եղև նա Ձիս
հայոց. և բազում վիրաւորք ի ծածուկ նո-
սա գտին զառաղջութիւն: Այս եղև նա վիճակ
կատարեալ՝ վիճակաց իւրոց, և՝ որ հայր խրա-
տու՝ հարանց իւրոց: Այս ի լուր՝ որ համբա-
ւոյ նոր իմաստնացան տգիտք. և ի տեսիլ
մերձաւորութե նոր զգաստացան լկտիք: Ընա-
կեալ էր ըստ մարմնոյ ի նեղ խցկան, և ահ
սրբուե նոր անկեալ էր զհեռաւորք և զմեր-

ձա-

Հաւատոք ։ Օ արհուրեցան դևք , և փախեան
'ի նմանէ . ընկին հրեշտակք , և բանակեալ
էին զնովաւ ։ Յոյնք երանի ետուն վ'ն նորա
Ձիս հայոց , և բաղում բարբարոսք փութա-
ցան տեսանել զնա մարմնով ։ Սիրելի եղև
նա սիրելեաց ՚ի , և զբազումս 'ի թշնամեաց
Ձշմարտութեանն էած 'ի հաւանութի՛ն սիրոյ ։
Սկիզբն արար առաքինութեան անդաստին 'ի
տղայ տիոց իւրոց , և նովին առաքինութիք
կատարեցաւ 'ի վախճան կենաց իւրոց ։ Որ
ոչ խառնեցաւ 'ի կարդ՛ սբ. ամուսնութե՛ Ձիս ,
այսպես չեմուտ ըստ մարմնաւոր պիտոյիւք նմ
ապականացու իրաց Ձիս ։ Այս եթէ պարտ
է պարզապէս ասել , ոչ փոխանակեաց ըզ-
պէտս մարմնոյ ընդ պիտանացու հոգևոր ի-
րաց , այսպես փոխադրեալ եղև յերկրէ յեր-
կինս 'ի բարւոք ծերութի՛ . որում արժանի
եղիցուք և մեք 'ի քո յ՛ 'ի տէր մեր . և նմա
փառք յաւիտեանս . ամէն ։

ՎԱՐԴ-

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոց անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի։



Ի ԱՆՑՈՒԱԾ ԺԱՄԱՆԱԿՍ եկեղեցիս քրիստոնէից յարեւելս և յարևմուտս անուն և պատիւ նշանագործ վկայիցս անարծաթ բժշկաց ՝ի սկզբանէ և այսր , և աքանչելիք նոցա յայմ տեղիս քարոզին . այլ այն է զարմանալին , զի ոչ մի , այլ երեք զոյգք եղբարց համարձակեցան ՝ի բժշկութենէ Կոզմայ և Դամիանոս անուանդին լինել յոմանց . թերևս զհամանմանս և զնախանձաւորս միմեանց առաքինութեանք ՝ի նոյն անուն կոչելով . եթէ չկայցէ և շփոթուի ինչ պատմական : Այս ժամ է լսել զպատմութիւնս իւրաքանչիւր , որպես և ղնարդ գտանեմք առ մեզ և առ յոյնս և առ հռովմայեցիս , սկսեալ ՝ի նոցանէ՝ յորս ամենեքեան միաբանին :

ԽԱ. Կոզմաս և դամիանոս եղբարք արաբացիք։

Ա. Տարս. 13, ԿՀ 14. և Նոյեմբ. 1։ Գ. Հոկտ. 17. և Նոյեմբ. 1։ Լ. սեպտ. 27։ Թոդլեանդեանդ, անդ. և Սուրիոս, երես. 403 = 406։ Ասողնդ. Ա. ղա = ղաբ։

Ընդ ժամանակս Թէոդոսիոսի դիոկղետիա նոսի և մաքսիմիանոսի՝ կին ոմն էր ի քաղաքն Էգէայ կիլիկեցւոց՝ երկիւղած յոյժ, Թէոդոտէ անուն. յորմէ ծնան երիւծորեակ եղբարք կոզմաս և դամիանոս՝ պտուղք աղօթից. և մնեալ ածապաշտ կարգօք և դպրութիւք՝ եղեն արուեստիւ բժիշկք, ուսեալք առաւել ի հոգւոյն սրբոյ. քանի բժշկէին զամ ախտս և զհիւանդութիս մարդկան և անասնոց անուճամբ տեն. մինչև լուսաւորել զկոյրս, գնացուցանել զկաղս, բանալ զականջս խլոց, և հալածել նաև զդեւս. և ոչ առնուին յոմեքէ ինչ՝ զհետ երթել պատուիրանին քրի, ձրի առիք, և ձրի տուք։

Լսակ ի միում նուճագի ի բժշկել նոյ զկին ոմն պալեստինա անուն յանբուժելի հիւանդութէ, նա բազում ծախանձանօք աղաչէր զնոքեն դամիանոս ընդունել փոքր ինչ ուղերձ յընծայ, կամ երեք ձու հաւու. և ի չառնուլ նոքա յանձն՝ երդումն տուեալ յանուանն այ ահաւոր՝ ստիպեր չառնել անտես զաղաչանս իւր. մինչև ամաչել նոսա և ընդունել։ Ոյն իբրև լուաւ

նոքեն

ընդ կոզման, տրտմեցաւ յոյժ, և կամեցաւ որոշել յեղբօրէն ամ իրօք. մինչև պատուէր տայ՝ զի մի թաղեսցին երկոքեան ի միում գերեզմանի. այլ ի նմին գիշերի երևեցաւ ոք ծառայի իւրում կոզմայի, և ասէ. զի՞ ի զուր խռովիս, զի եղբայր քո ոչ ի վարձ հատ ընծայն, այլ ի պատիւ անուանն Քրիստոսի՝ յոր երդուաւ տուօղն։

Այս եղև յաւուրսն յայնոսիկ հալածումն ի վերայ քրիստոնէից ըստ ամ տեղիս. և ի նստիլ լիւսիայ դատաւորի յատեան յերկիր քաղաքի՝ մատնեցին զերկոսին եղբարս, թէ անուամբն քրիստոնեայ զամ ցաւս. զոր տեսեալ բազմաց՝ ի բաց կան ի պաշտամանց ծածուց, և զկնի երթան կրօնից նազովրացւոց։ Այս կոչէր դատաւորին զնա զառաջեաւ՝ (ըստ ձառընտրին, յաւաջ ք զեօթն կաղանդացն դեկտեմբերի ամսոյ. այն է նոյեմբ. լե) սաստիւք սպառնալեաց խօսէր ընդ նա յաղագս ամբաստանուեն եղելոյ զնոցանէ. այլ նախ սասցէ ինձ ասէ զձեր և զքաղաք, և զանուն, և զբախտ կամ զձակատագիրն։

Պետրոս եպ անդրանիկ եղբայրն և ասէ. յՅիսուսէ արարեալ եմք մեք. ես կոզմաս կոչիմ, և եղբայրս մեր՝ դամիանոս. այլ զի՞նչ բախտն իցէ՝ ոչ գիտեմք. վասն զի քրիստոնեայք եմք, ուստի և ի պատուհասական սպգէ։ Դատաւորն ասէ. իցե՞ն ձեր և այլ եղբարք կամ ընկերք. կոզմաս ասէ, այո՛ են. և անուանք նոցա՝ անթիմոս, զևոնդիոս, և եւպրեպիոս լսին. եւ բերել լիւսիաս և զնոսա. և ասէ ցհնգեսին

միան-

միանդամայն . զմտաւ ածէք զօգուտն ձեր՝ մատիկք և զոհեցէք ընծող մերոց , և թողէք անդր ՚ի լաց զքոն ձեր . ապա թէ ոչ՝ տանջանաք ածեմ զձեզ ՚ի հաւանուԹի ։

Ես այս պինդ ետուն ՚ոբ վկայքն միաբան . զտանջանս քո արհամարհեմք , և ոչ զանդիտեմք . արա զոր կամիս . զի մեք զկուռս խուբս և հաւերս՝ քարեզինս և պղնձիս՝ ընծ կոչել ոչ կարեմք . և ոչ իսկ մարդիկ անուճանեմք , այլ՝ դևս ։ Ասարկացեալ դատաւորն՝ ետ կապել զձեռս և զոտս նոյ , և ուժգնապէս տանջել հարուճածովք . իսկ երանելիքն սաղմոսէին , Ցր ապաւէն մեր եղեր յազգէ յազգ , և որ ՚ի կարգին . և ցլիւսիաս ասեն . եԹէ լցեն քո և այլ խստագոյն տանջանք , փուԹա ածել ՚ի վր մեր . ոմն զի ծանիցես , Թէ տանջանք քո ոչինչ կարեն ստնանել մեզ ։ Յայնժամ հրաման ետ դատաւորն ծովըն. կէց առնել զնոս շղԹայակապ . և ահա հրեշտակ ՚ոն եկաց առ նոս , և խզեալ զշղԹայս նոյ՝ եհան զնոս ՚ի ցամաք ողջանդամ ։ Ընդ որ լուեալ դատաւորին՝ զահի հարաւ . կոչեաց զնոս , և ասէ . երդուցեալ ՚ի մեծ ընծան , կախարդուԹիք յաղԹեք դուք . զի զտանջանսդ արհամարհեցիք , և զծովն յիմարեցուցիք , ածէ և ինձ ուսուցէք զայդ մոգուԹի՛ , և ես աշակերտեցայց ձեզ ։ Պինդ ետուն ՚նդն կոզմաս և դամիանոս , և ասեն . մեք կախարդուԹի՛ ոչ գիտեմք , զի քրիստոնեայ եմք , և անուճամբն քով յոչինչ գրեմք զզօրուԹիւն կախարդաց . այլ դու Թէ կամիս տեսանել

զզօրութիւնն քոմի այ մերոյ , լեր քրիստոնեայ
և ՚ի կ ՚ի հետ մեր յանուն քոմի ։
Նոկ դատաւորն այսպն առնելով զնա ասէ .
յանուն սպողոնի տ՚ն իմոյ եկիր ՚ի հետ ձեր .
և յայն բան եհաս պատուհաս ՚ի վր նր . զի
երևեցան նմա երկու դևք , և սպտակէին և
տանջէին զնա չարաչար . մինչև աղաղակել
առ նբ վկայն . աղաչեմ զձեզ զօրականք
քոմի , աղօթս արարէք վ՚ն իմ առ ա՚ծ ձեր ,
զի մարթացայց ազատիլ ՚ի ձեռաց դիւ՚ացս ։
Եւ յաղօթել սէջն , և ՚ի դնել ձեռս ՚ի վր
նր՝ դադարեաց պատուհասն , և աներևոյթ
եղեն դևքն . իսկ անօրէնն լիւսիաս ասէ .
տեսանէք , զիարդ սրտմտեցան տ՚ծքն , վ՚ն
զի խորհէի թողուլ զնոսա . յայնժամ նբ
վկայքն յանդիմանեցին զնա ստատասրտուԹ՚ն նր
և զմոլորուԹ՚ն սուտ տ՚ծոց . վ՚ոյ արկան ՚ի
բանտ զօրն զայն . ուր սաղմոսիւք և օրհնու-
Թ՚ք ոչ դադարէին ՚ի փառաւորել զքն ։
Նոկ ՚ի վաղիւ անդր ետ բռնաւորն ածել զնա
զառաջեաւ . և ասէ . խորհեցայք յանձինս
ձեր , եԹէ՝ կայք յանմտուԹ՚ն ձերում ։ Նքն
ասեն . լսւր Թ՚ն ամիդ ՀՀմարտուԹ՚ն . մեք
քրիստոնեայք եմք , և մինչև ցվախճան պա-
տերազմիմք վ՚ն ՀՀմարտուԹ՚ն . ոչ ուրանամք
զՀՀմարիտն ա՚ծ բոլորից , և ոչ զարուսրածս
կիւ զանոտի պատկերս կարօղ եմք ա՚ծ անուա-
նել . այլ դու զմր խորհուրդ և խորհեցար
՚ի վր մեր՝ կատարեա ։ Յայնժամ հրամանն
ետ անօրէնն հնոց մեծ լուցանել , և արկանել
զվկայն ՚ի հուր բորբոքեալ ։ Նոկ երանե-

լիքն

լիքն շրջելին ՚ի մէջ հնոցին իբրև ՚ի դրախտ փափկութենե, և ցնծութիւն սաղմոս ասէին. առ քեզ ՚ի՛ր համբարձաք զաչս մեր, որ քնակեցեր ես ՚ի յերկինս։ Այս յաղօթել անդ նոյ՝ եւ բոցն և այրեաց զբազումս ՚ի հեթանոսաց. իսկ սքանչն գտան ամենևին անարատ, զի և մազ մի ՚ի նոցանէ ոչ այրեցաւ։

Այն տեսեալ դատաւորին՝ սքանչացաւ. այլ անդրէն ՚ի միտս յիմարութենե զառաջանելն, և ասէր ցվկայն. երդուիր ՚ի մեծ ցծս, զարմացեալ եմ ընտրատեսիլ իրսդ. արդ ասացէ՛ք ինձ, մինչև յերբ ստուերացս ՚ի վր աճէք աչաց մերոց մոգական արուեստիւ, և ոչ գոհէք դից՝ որովք կեան տիեզերք։ Սքանչն ասեն. մինչև յերբ ոմն ամպարիշտ՝ մոգութենե ընծայես զզօրութի քարձրելոյն, և զկուռս խուլ՝ ցծս անուանես. այլ մեք ոչ կարեմք ուրանալ զՅծ մեր՝ որով կեամք, շարժիմք և եմք։

Հրամանն ետ բռնաւորն հանել զնա ՚ի կախաղան քերանաց, և տանջել. և անդէն եկն եկաց առ նա հրեշտակ ՅՍ, և պահէր զնոսա անվնաս. զի դահիճքն վաստակեցան, և նք կային զօրարթ երեսօք։ Ասէ ցնոսա. ոչ ինչ օգտի ձեզ կախարդութենե ձեր, եթէ ոչ հնազանդեսջիք հրամանաց Թգրին։ Պնդեն ետուն կոզմաս և դամիանոս, և ասեն. չեմք ինչ հնազանդելոց անօրէն հրամանաց Թագաւորաց քոց. ունիմք մեք Թգր յերկինս զքո որդին ՅՍ։

Յայնժամ հրամայեաց դատաւորն ՚ի խաչ

հանել զկոզման և զդամիանոս, և քարկոծ առնել. իսկ զանթիմոս և զղևոնդիոս և զեւպրեպիոս ՚ի բանտ տանել կապանօք։ Եւ արսրին դահիճքն զհրամայեցեան. բայց քարինքն անդրէն ՚ի ձգօղն դառնային. և տեսեալ դատաւորին վիրաւորեալ զսպասաւորս իւր՝ հրամայեաց ջրից գնդաց զինուորաց նետաձիգ լինել ՚ի սէքան ՚ի վէր խաչին յանդիման ամ բազմուել. ետ բերել անդր և զնահատակն արկեալս ՚ի բանտ, զի տեսօղ լինիցին պատուհասի նոյ։

Եւ ՚ի ձգել զինուորացն զբազմութիւն նետից՝ ոչ մերձեցան ՚ի նա վկայն, այլ կարեվէր խոցոտէին զժողով ամբոխին. և եղև ձիչ և խռովումն յոյժ։ Ընդ որ խռովեալ դատաւորին՝ հրաման ետ վաղվաղակի տանել զվկայն յայլ տեղի, և դլխատել. և նէք միաբան ասէին զձանապարհայն. բարի է խոստովան լինել նմա, և սաղմոս ասել անուճան քոյմ բարձրել. և հասեալք ՚ի տեղի կատարմանն՝ աղօթս սրտարին դարձեալ. և իբրև ասացին զամէնն, մատուցեալ դահճաց հատին ըզգլուխս նոցա սրով. և այնպէս աւանդեցին սէքքն հնդեքին խաղաղութիւ զհոգիս իւրեանց առ Աստ, ընկալեալք զբրաբիոնն յաղթուէ։

Ահա աւարտեալ Ճառընտիրն մեր զպատմուչին, դնելով զկատարումն սէքց՝ որ օր քսանևհինգեր տրէ ամսոյ։ Իսկ այլք յաւելուն, թէ քարձին արք երկիւղածք զմարմինս նահատակացն, և ամփոփեցին ՚ի միում վայրի. որ ըստ ոմանց ասի լինել մերձ յԵՀեմ, ՚ի տեղին

կո

կոչեցեալ սուրբ եմ կոչեմն ։ Որ աւանդութիւն է առաքելոց, թէ՝ի վերայ եկեալ ուղղի մի՝ խօսեցաւ ոմն զկնի քաղաամու մարդկային բարբառով, և եղոյց զտեղի դերեզմանի նոցա. ոմն թէ նշանագործ վկայքն կոչմամբ և դամիանոս բարեացապարտ իցեն ոչ միայն մարդկան, այլև անասնոց ։

Այլ էջ ինչ անհաւանելի սքանչելիքն՝ որ զկնի պատմի, թէ յետ ժամանակաց ոմն՝ի շինականաց եկեալ՝ի հնձոց, և առեալ կերակուր՝ ննջեաց խոնջ մարմնով՝ի բացի բերանաբաց. և օձ մի սողեալ եմուտ ընդ բերան նր. յորմէ՝ի տագնապ անհնարին անկեալ առն՝ ընթացաւ՝ի գերեզմանն սրբոյն, և սկսաւ աղաղակել. ած սրբոյն կոչմայի և դամիանոսի օգնեա ինձ. մինչև միւսանգամ ննջեաց, և ել օձն՝ի նմանէ, և աղատեցաւ ։

Այս եղև յաւուրս քրիստոնէուե՝ յորժամ շինեցաւ վկայարան՝ի վր մարմնոյ սրբ վկայիցն, այր ոմն մաղքոս անուն՝ որ սպասաւորէր տաճարի նոցա, հաճ անդր զկինն իւր, և ասէ ցնա առաջի սրբոյն. ահա ես երթամ՝ի Հանապարհ հեռի՝ի տար ծ, և յանձն առնեմ զքեզ ած և սրբոյ նր կոչմայի և դամիանոսի. նիստ՝ի տան քումմ. և ցուցեալ նմա զնշան ինչ՝ ասէ. այս եղիցի քեզ նշան. յորժամ կամք լինիցին ած, առաքեցից զայդ, և կոչեցից զքեզ ։ Այրդ յետ գնալոյ առն՝ իբրև էանց ժամանակ ինչ, եկեալ դիւքին՝ի կերպարանս Հանապարհորդի՝ ասէ ցկինն. ահա նշան առն քո. նա առաքեաց զնա՝ զի տարցէ զքեզ

յայն ինչ քաղաք, ուր և նա: Զանեաւ կինն զնշանն. այլ կասկածեալ յօտարականէ անտի՝ խնդրեաց ի նմէ երդումն յանուն սրբոյն կոզմայի և դամիանոսի ի տաճարի նոցա, զի մի արասցէ ընդ նա ինչ չար զձանապարհայն. և դէն երդուաւ. և առեալ տանէր զնա գրաստուս. և իբրև անցանէին ընդ տեղի մի դժուարին, դրգուեցոյց զնա չարն, և կամէր դահավիժ առնել և կորուսանել: Յայնժամ աղաչեաց կինն յերկինս ի վեր, սրբ կոզմաս և դամիանոս օգնեցէք. և ահա նոյնժամայն երևեցան երագահաս վկայքն ոտք հեծեալք հանդերձ բազմութք սպիտակազգեցիկ. և առեալ զկինն՝ խարդաւանեցին զչարն ընդվիշտն, մինչև կորնչիլ և անհետ լինել. և լցաւ գիրն, եւթն գաւքն՝ զոր փորեաց և պեղեաց, ի նոյն անկի ի խորխորատ՝ զոր և գործեաց: Ու կալէք սրբոյն զձեռանէ կնոջն՝ ածին կացուցին զնա ի տան իւրում, և ասեն ցնա. մեք եմք կոզմաս և դամիանոս, որոց յանձն արարեր զքեզ, և երդումամբ չափ հատատացեր ի մեզ. վայ փուճացաք ի թիւրումն հասանել քեզ:

Նազում և այլ սքանչելիս՝ զորս յերկար լինի ի համար արկանել (ասէ վկայաբանն), կատարէ ածի ի նմին տեղւոջ մինչև ցայսօր ի փառս և ի գովեստ անուանն իւրոյ փառաւորելոյ: Այս վկայաբանուն ե հանդիսացեալ, զոր ոտք գտանեմք ի Ճառընտրի մերում, նոյնպէս Ճոխագոյն յառաջ քերէ սուրիոս ի հինմատենից հռովմայեցւոց. և զնոյն քաղէն նաև

նաև յայսմաւուրքն ոչ լատինացւոց, նոյնպես և յունաց և հայոց. միայն ի հայումն ըստ ձառընտրին և ըստ յայսմաւուրացն՝ փոխանակ դատաւորին եգիպացւոց՝ դնի եգիպտացւոց ։

Այ՛ի նոյն փառաւոր և աքանչելագործ վկայս հայկ գրեալն ի հին մատենագրէ ի սէյն գրիգորէ եպսկ տուրուշնայ՝ յաղագս փառաց վկայից (գէորգ. ա. գլ. 98), քանիւքս այսոքիւք.

* Արկուծորեակ եղբարքն կոզմաս և դամիանոս՝ արուճեատիւ բժիշկք, յետ քրիստոնեայ լինելոյ իւրեանց, ի ձեռն արդեանց առաքինուեց և զօրուք աղօթից և ե՛թ՝ փարատէին զհիւանդութիս ախտացելոց անձանց ։ Որ և աղգի աղգի չարչարանօք նահատակեալք՝ եղեն ի դասս երկնաւորաց, բազում սքանչելիս ցուցանելով քնակչաց երկրի. զի թէ ոք հատարել հաւատով յաղօթս կացցէ առ գերեզմանաւ նոցա, իսկ և իսկ ստանայ զառողջութիւն ։ Պատմեն ևս յոլովագոյնք, թէ սքեղրևեին ախտացելոց ի տեսլեան, և ցուցանեն՝ զոր ինչ արժան է առնել. և ընդ առնելն զայն՝ ողջամբ դառնան ։ Որոց զբազումս լուեալ է իմ. զորս յերկար համարեցայ ի առ մի նշանակել, չատ համարելով զոր ասացիդ, թէ ամենեքեան՝ որք հաւատով աղօթեցին, առողջութիւն դարձան ։

ՃԸ. Կոզմաս և դամիանոս հռովմայեցիք։

Ս. Ա. Յունիս. Ի։

Երկրորդ անուանեալ հարապատ եղբարս՝ կոզմաս և դամիանոս կոչմամբ՝ հռովմայեցիս, յոյնք և հայք նշանակեն յաւրացին աւուր ամենեանն յունիսի. ուր ունէր բասիլեան յայսմաւուրք յունաց այսպէս. * Վահատակութիւն սրբոյն անարծաթիւց կոզմայի և դամիանոսի՝ ի հռովմ եղելոց։ Կոզմաս և դամիանոս՝ քոյր վկայքն՝ էին առ Թագաւորութեան Կարինոսի. և բժիշկ գոլով արուեստիւ՝ շրջէին ընդ ամ տեղիս, ամ հիւանդաց առողջուիս պարգևելով, և վարձ բժշկութեն խնդրելով՝ ի բժշկելոցն՝ զի քո հաւատս։ Որդ կարծեցեալ կռապաշտիցն մոլորելոց՝ որպէս կախարդական արուեստիւ զբժշկութիւնն առնել, չարաչար եղեն առաջի Թագաւորին. և կալեալ ստիպէին ուրանալ զքո. և ոչ հաւանեալ՝ ի տանջանս պատրաստ լինէին. այլ զօրուքն քոյր զԹշերն կարինոս յետս դարձուցին՝ ի մոլորութէ. զի՝ ի Թիւրիլ պարանոցի նր՝ բժշկեալ զնա, ոչ միայն զնա հանդերձեցին հաւատալ՝ ի քո, այլև զամ ընտանիս նր։ Ասաի՝ ի պատիւ մեծարանաց եղեալք՝ նախանձելի գտան վիշապին իւրեանց. և՝ ի լեառն ածեալք՝ ի նմանէ՝ ի քաղել զբոյս՝ քարկոծեցան։ Յոյն

պատ-

պատմուի է, զոր առաւել պարզաբանելով
երկրորդե և յայսմաւուրքն մեր։

Ե. Առիւծ և դամիանոս՝ անհաւատիք։

Ի. Ա Թագ. Նոյեմբ. 1։

Երկրորդ անուճանել եղբարց անարծաթ
բժշկաց չիք ինչ բան հաւաստի. զի
և ոչ ժամանակ նոյ կիք քաղաք յիշատակի ու-
րեք. այլ ոմն յայսմաւուրք յունաց՝ նոյնպէս
և հայոց, զառաջին վկայաբանուին՝ որ ըստ
Ճառընտրաց մերոց և հռովմայեցւոց՝ կոչին
և յաղագս սոցա ամ հանգամանօք. որպես և
զսքանչելիսն նոյնպէս աստանօր երկրորդե-
լով. Թուղ զի ոմն զառաւսպել ուղտուն յեր-
կարեն, նոյնպէս և այլ յաւելուածս առնեն
այլ և այլ օրինակագիրք. յորոց մի է եդեալն
՚ի հայումս, զորով՝ բարւոք առնէ՝ զի զանց
առնէ ասր ինչ. ըստ որում փոխաբերիչ է այսր
՚ի կարգէ նշանագործուեց սքին մինասայ, և
այն ՚ի համարոյ տխմարական աւանդուածեց
ոամկաց։

ՎԱՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Սէյն Ա՛ճատրոյ, կամ Յիշատակարանի։

Ա՛յ. գԼԲ. 25։ Տէ՛ր ԷԼ. գԼԲ. 22։ և պատմագիրք հայոց։



ՈՐ Ա՛ՆԻԿՆ Ա՛ՅՍՕՐ

սէյ մանուկն Ա՛ճատուր՝ էր ազգաւ պարսիկ՝ ի քուրաստանէ քեշապհոյ՝ որդի մոգպետի, յամն Թագաւորուընն խոսրովու որդւոյ կաւատայ, բնակեալ՝ ի գուխին քաղաք հայոց ըստ դենշապհոյ պարսիկ մարզպանի. և առաջինն անուն նէր՝ ի հեթանոսութենէ մախոժ կամ մախոշ։

Այս եղև՝ ի տեսանել մախոժայ զնահատակութեն գրիգորի ուաժկի համազգեայն իւրոյ, զի և նա՝ ի մոգուէ էր դարձեալ, վաւերացաւ՝ ի սիրտ նէր սէր առ քրիստոնէութի. և այնուհետև խղճէր ըստ դենն պարսկական՝ զմտաւ ածելով զպատրանս անոտի կրակապաշտուէ և արևապաշտուէ. վէյ թէպետև յապարանս մոգուց կայր, բայց երկմիտ էր՝ ի հաւատոյ նէ։ Այս յաւուր միում յորժամ մոգքն զոհս մատուցանէին ատրուշանին՝ ոյ կրակարանին, և մախոշ ըստ նա, յանկարծակի բոցն բարձրացաւ,

ցաւ, և սկսաւ այրել զապարանսն, և ուչ կա-
րացին շինուցանել. և եղև աղաղակ մեծ ՚ի
քաղաքին:

Ո՞ր լուեալ հազարապետն հայոց՝ փութա-
ցաւ յեկեղեցին, հառ պքահանայն կենսա-
տու սբ խաչին, և ել ինն յապարանսն. և ան-
դէն վաղվաղակի ՚ի զօրուէն քոի նշանաւ սբ
խաչին շինաւ բոյն. և մոգքն շնորհակալ
եղեն նմ: Ոսկ պատանին մնխոշ ՚ի բաց ըն-
կեցեալ զպործի զոհիցն, և առեալ ՚ի ձեռս
ղբուրվառն՝ երթայր առաջի սբց խաչին մին-
չև յեկեղեցին:

Նա ՚ի վաղիւն գնացեալ մոգուցն՝ չարախո-
սեցին զնա առ դենշապուհ մարզպանն, որ և
միանգամայն վերակացու և դատաւոր քաղա-
քին զօնայ, և ածեալ կացուցին զերիտա-
սարդն յատեանի. և նա համարձակուբ խոս-
տովանեցաւ զքրի հաւատն, և այպանեաց
զնոսոտի պաշտամունս նց. ըստ որ բարկացեալ
դատաւորն՝ խուզեաց զհերսն և զմօրուսն,
և գանեաց սաստիկ. և եւս արկանել զնա ՚ի
բանտ:

Նա մնեալ մնխոշ ՚ի բանտն՝ եգիտ զոմն կրօ-
նաւոր ներսէս անուն արգելեալ ՚ի բանտին
հանդերձ սահակաւ ընկերաւ իւրով՝ վն ար-
համարհելոյ հրապարակաւ զդենն պարսից:
Նա մնաց ըստ նմ յերկար յարդելանս. և ու-
սանէր ՚ի նոցանէ օրըստօրէ զհաւատս քրի, և
զսաղմոսն դաւթի. և սաղմոսէին ՚ի միասին
անդադար:

Նա յետ երից ամաց (կիմոպ այլք ընթեռ-
նուն,

նուն, ամայց) միրտեցաւ մախոշ՝ի քանտին, և անուանեցաւ յիղնտբուզլիտ կամ յիզտիբուզտ, այն է եագիտպուզլիտ, որ թարգմանի Ոչ ծատուր. և երեալ կրօնաւոր՝ զգեցաւ մաղեղէն. և ձգներ խստակրօն վարուք զցայգ և զցերեկ: Ասկ յետ բազում աւուրց՝ յորժամ ըստ աղաչելոյ ամն մովսեսի Հայոց կաթղկոսի փոխեաց արքայն պարսից զդենշապուհ բռնաւոր մարզպան, և առաքեաց զայլ ոք վինաս վահրամ անուն հանդերձ երկու պարսիկ իշխանօք՝ իրաւունս առնել տառապանաց ընդ Հայոց, խաղաղուի եղև քրիստոնէից:

Եւ յաւուր միում նստեալ յատենի՝ քննէին զբանտարկեալսն. և ազդեցաւ նոցա, թէ՝ի վաղուց հետէ արք երեք են՝ի բանտի՝ մախոշ, սահակ, և ներսէս. զորս քերէ առաջի՝ քննեցին և գտին զներսէս և զսահակ՝ի մանկուձէ ծնեալ քրիստոնեայ. վասն արձակեցին զնոսա յազատուն: Ասկ զսքէն ածատրոյ՝ վն զի՝ի պարսկուէ՝ի քրիստոնէուն եր գարձել, պատուեցին զկրօնաւորականն զգեստն, և ծիւ ծիւ արարին զկնկուզն. և ասէին, գառնաս՝ի պարսկական դաւանուն, և ուրանաս զքո՝ յոր հաւատացեր, եթէ մեռանիս չարաչար մահուամբ: Ասկ երանելին. ես ծանեալ զքո միայն Աշմարիտ ածն և արարիչ երկնի և երկրի, և զանձն իմ պատրաստեցի՝ի գործ մշակուե նը, թէև մահ հասանէ: Եւ բարկացեալ՝ յոյժ տանջեցին զնա, և նեղէին ուրանալ զքո. և նա ևս առաւել համարձակու-

կուԹէք խօսէր և յանդիմանէր զպղծալին և զգարշելի մոլորուն նոց։ Այս իբրև տեսին զերանելին անդրդուժելի՝ իքեան, հրամայեն ետուն՝ ի խաչ հանել զնա՝ վասն յարելոյն՝ ի խաչեալն։

Յոկ հայրապետն հայոց լուեալ զայն, և ժողովեալ առ ինքն զքահանայսն, և ելեալ՝ ի տեղի մի յանդիման խաչին՝ եկաց՝ ի տեսիլ նահատակուն սքանչելին նշանաւն, հանդերձ խնկօք բուրեալք և լուցեալ մոմեղինօք, հայցելով յայ տալ սքեան զօրուԹիւն։ Այս ածեալ զերանելին պարսիկ դահճաց՝ մերկացուցին, և բևեռեցին՝ ի վեր փայտին. Ըստ նմին և այլ երկու արս չարագործս, մինն պարսիկ, և միւսն հրէայ, ոմն զաւազական՝ վճռ գործոցն իւրեանց։ Այս պարսիկն նախ քան զնահչելն իւր գայր և առնոյր զարիւնահատն հողն՝ ի պատուհանդանէ սքեան ածատրոյ, և օծանէր զերեսն իւր՝ ասելով. յիշեա զիս սքդ այ։ Յոկ դահճացն առեալ զնա բռնուԹիւԹ՝ հանին՝ ի խաչ ըստ աջմէ սքեան, և զհրէայն ըստ ձախմէ. որ աղաղակեր դառնալ՝ ի հոգուԹիւն, և ոչ ընկալան։

Յայնմ վայրի քաջ նահատակն քրիստոսի ածատուր քարոզեր՝ ի վեր խաչին, և ուսուցանէր զհաւատացեալս՝ հաստատուն կալ՝ ի քն, և համբերել մահու որ վճռ անուանն նր։ Այս պատեհ հար արարին զերանելին՝ ի վեր խաչին. և այնպէս աղօԹելով՝ ի վեր չարչարողացն իւրոց՝ աւանդեաց զհոգին իւր առ ածն սքեան յիշատակուտ ածատուր՝ յաւուր կիւրակէից

ըորդ ժամուն։

Եւ հաւատացեալքն եկին առ իշխանսն, և խնդրեցին բառնալ զմարմին սբյն. և նոքա հրամայեցին առնուլ զնա։ Յայնժամ դի. մեաց հայրապետն քահանայիւք և ժողովրդովք. և բարձեալ զպատուական մարմին սբյն՝ տարան ՚ի մեծ եկեղեցին դուռնայ. և եդին ՚ի տապանի սաղմոսիւք և օրհնուք. և զխաչն մասունս արարեալ՝ բաշխեցին ամ հաւատացելոց։

Ա. յս եղև յառաջին ամի Թուականութեանս հայոց, այն է յամի տն 552։ Եւ ես ներսէս (ասէ վկայաբանն) չարչարակից և ընկերակից սբյն՝ արարի զպատմութիւնս ՚ի փառս քրիստոսի մերոյ։

ՏՕՆ ՍՐԲՈՅՆ

Դաւթի Մարգարէի. ուր և պատճառ Ուազ Տօնից։ (1)

Ե. դեկ. 25։ Լ. դեկ. 29։ Նա-Յ. ընդ նախա-
հարս. դեկ. 19։ Սբ գերբ, և ձեռնէդ գրոց. և
ներբողեանք հարց։ Ճաշընկ. Ր. ամ = ամք։

ԱՍՈՒՆՕՒՀԱՅՑ ԴՈՒ-
ւիթ, և ածեղբայրն յակոբոս՝ գեղեցիկ խորհրդով՝ ի միասին տօնախմբին մերձ՝ ի հրաշափառ ծնունդ ածորդւոյն եղելոյ որդի մարդոյ՝ ի զաւակէ դաւթի. ըստ այնմ, * Ծիրք ծննդեան յի՛ քո՛ի որդւոյ դաւթի որդւոյ աբրահամու ‖։ Լսվին տեսուք և հռովմայեցիք՝ ի սին միջոցի առնեն զտօն յիշատակի դաւթի թագաւորի և մարգարէի՝ ի դեկտ. 29. որպէս և յոյնք՝ ի դեկտ. 19. ըստ նախահարս հաւօրէն։ Նա դարձեալ յայսմ վայրի՝ ի դեկտ. 27. դնի ըստ հին վկայաբանից հռովմայեցւոց յիշատակ ձեռնադրուե՛ յակոբայ եղբօր տեն յաթոռն եէմի։

Աղընթեր սոցին վայելուչ կարգի յայմ եկեղեցիս տօն նախաւկային ստեփաննոսի, որ եղև վկայ առաջին՝ ածուեն քեի, մարտիրո-

սաց

ական հանդիսիւ ։ Օ՜ Հետ բերեն հուսալ
մայեցիք և զաճաքան աւետարանիչն յովհան
նէս՝ որ Հառէն զանսկզբնական ծննդենէ
նախայաւիտեան բանին այ առ՚ի հօրէ , և
զլինելուէ անեղական բանին մարմին՚ի կու
սէն՚ի ժամանակի ։ Ասէ մեք յաւելումք ընդ
յովհաննու և զեղբայր նր զմեծն յակոբոս ,
ոպ և զյակոբ փոքրն կոչեցեալ՝ ըստ դաւթի ։
՚Ա նոյնս յարեմք խորհրդաբար յառաջ քան
զորդիան որոտման՝ զգերագոյնս քան զնոսա՝
զերկոսին ամոլս Հաւատոյ զգլխաւոր առա
քեալն զպետրոս և զպօղոս ։ յորոց մին եղև
վեմ Հաւատոյ՝ անուճանակիր քոի , զի վէմն էր
լինքն քո , ուստի և երեսփոխան ինն իւրոյ և
վիպոլի , և միւսն քարոզ աւետարանին ըստ ամ
հելեանոսս ։ Օ՜ ոլորինակ և զկնի ածայայտ
նուէ՝ յոյնք անընդմիջապես՚ի վէր ածեն , և
մեք զկնի ուղիղ օրինէց , զկարապետն յովհան
նէս՝ զմկրտիչն որդուոյն այ ։

Սոքիմք ոպ չքնաղ հանդիսանայ խորհուրդ
ածպաշտուէ նորածնեալս եկեղեցւոյ , նոյն
պէս և խորհրդաւոր տօնակատարութի սքոյ
կի քարեվայելուչ կարգաւորութի տօնացու
ցին ։ Արուամ ոչ միտ եդեալ ոմանց՝ ոպ ար
ժանն է տօնասիրաց և վկայասիրաց , սո
տիսպատուճաստ պատճառանս կրկտեցին օ
տարոտիս՝ յանգոյ պատմութենէ և՚ի ստայօդ
ձեռնարկուէ՝ վ՚ը պատճառաց տօնիցս , հա
կառակս միմեանց և անձանց իւրեանց ։ այլ
չմարտութին անհակառակելի այն է , զոր
առաջի եդաք ։

գիր և ի դրանէ վը այսր բանի. և փոխա-
նակ տապանակի առն իւրոյ աղեքսանդրոսի
եբարձ զտապանակ սրբոյն ստեփաննոսի. զոր
Ճառընտիրն և ժամագիրքք յոտնաց Համարին
լինել ակամայ սխալանօք՝ ըստ տեսչութեն այ.
և այլք գնեն լինել կամաւոր Ճարտարութ։
Ապ զնիարդ և իջեալ առեալ տիկնոջն բարե-
պաշտ զտապանակ սրբոյն, լծեաց կառս, և
եդ անդ ոմն զտապանակ առն իւրոյ, և հրա-
ժարեալ յեէմէ՝ յետ սակաւ աւուրց եկն ե-
հաս յասկաղոն՝ որ է յերդը ծովուն։ Այլ ո՞
կարասցէ զիմն պատմել՝ որ յայնմ գիշերի ի
Ճանապարհի եղեն սքանչելիք. վը զի ձայն
հրեշտակաց լսելի լինէր, որք նոճագէին այ
ի գնացս կառացն, յորոյ վը եգեալ կայր
տապանակն լի ածային մարգարտով. և բու-
րումն անուշահոտ խնկոց զամենեցուն հոտո-
տելիս անուշացուցանէր։

Լու ի մտանել սրբոյն ի քաղաքն ասկաղոնայ՝
բազում այսահարք ըստ առաջ ելեալ աղաղա-
կէին՝ ասե լով. վայ վայ մեզ, զի ահա եկն
այսր սբ նախավկայն ստեփաննոս՝ տանջել
զմեզ և կորուսանել. զինչ արասցուք, ո՛ւր
երթիցուք, չարաչար տագնապիմք յահեղ և
ի

ի սոսկալի փառաց նը ։ Եւ զրդ թէև սխալանօք քարձեալ էր սիկնոյն զմարմին սքն , այս ամ եղելոցս ստուգեալ գիտաց , թէ զորպէս դանձ տանի ըլ իւր • վայ և զանխլաքար նաւ ի վարձու կալեալ՝ փութայր նաւել ի կոստանդինուպօլիս , նախախնամութիւն այ զնրան վարկանելով ։

Եւ հողին աջողակ դիպեալ՝ յառաջ խաղայնի ի մէջ ծովուն • և ապա յանկարծակի ըմբռնեալք յալեկոծուէ սաստիկ՝ սկսան արտօսրալից պաղատանս առ սքն մատուցանել • անկանէին առաջի տապանակի սքն ոսկերաց նը , և ասէին • ո՛վ սքն նախավկայ քոնի փրկեա զմեզ յարժանահաս քարկուէիս՝ որ վ՛ս մեղաց մերոց եկն ի վր մեր ։ Յայնժամ շարժեցաւ տապանակն , և հոտ անուշութե բուրեաց ի նմանէ • և ձայն լսելի եղև՝ որ ասէր • մի երկնչիք , զի ես ըլ ձեզ եմ • և նոյնժամայն եղև խաղաղութի մեծ ։ Եւ ծագեաց լոյս ի տապանակէ անտի ըլ նմանութե ջահի , և զամենեսեան լուսաւորէր՝ որ ի նաւին էին • քզի գիշեր էր ժամն • և ձայն հրեշտակաց լսելի լինէր , որք քաղցր բարբառով նուագէին այ երգս յաղթականս ։

Ցսկիսի նախախնամութէ ապրեալք և ի հինից ծովու ի սահմանս յաբիդու , հասին մինչև ի քաղկեդոն • և անդ ի քաղաքին դադարէին աւուրս հինգ • ուր այսք պիղծք աղաղակ քարձեալ ի բերանոյ դիւահար մարդկանն՝ ասէին • ո՛վ դու սքդ ստեփաննոս , որ քարկոծեցար յերէմ ի հրէից , զի՞ եկիր այժմ

այժմ ասաց հալածել զմեզ. և անդէն փա-
խստական լինէին ի մարդկանէ. և զգաստա-
յեալքն անկանէին առաջի սքանչելի տապանակին,
և գոհանային զնա:

Յայսմ վայրի համբաւ սքանչելեացն տարա-
ծեալ՝ եհաս ի լսելիս բարեպաշտ թագաւորին
Թէոդոսի. և ուրախութիւք մեծաւ լցեալ լի-
նէին ամենեքեան՝ որ ըստ բարեպաշտութեանն
էին: Յայնժամ բարեպաշտութիւն յուլիանէ
եկն եկաց առաջի թագուին, և հայրապետին
(որ էր յայնժամ սքէն պրոկղ), և պատմեաց
զնմա եղեալսն կարգաւ: Նա ընդ զարմացեալ
փառաւորեցին զնա, որ այսպէս բարեհա-
ճեալ տնօրինեաց:

Նա ապա հրաման եառն կոչել այր մի ե-
րայեցի՝ ընթեռնուլ զվերագրեալն ի տա-
պանակին. և ընթերցաւ առաջի ամենեցուն,
եթէ այս է տապանակ առաջին վկային քրի-
քարկոծելոյն ի հրեից յեղեմ քաղաք: Նա
նոյնժամայն լուսաւորեալ ի հոգի իւր՝ աղա-
ղակեաց ասելով. և ես խոստովանիմ զքո
որդի նմա, և զնոր ստեփաննոս առաքեալ և
վկայ նորին. քանզի տեսին աչք իմ յայսմ
աւուր մեծ սքանչելիս. և օրհնեմ զբարե-
գութեանն նա, որ զողորմութիւն իւր ծագեաց ի
վերայ իմ, և լուսաւորեաց զիս զխաւարեալս
մեղօք:

Նա հրամայեաց թագուն սքէն հայրապետին,
ոսկի զի հանդերձ նմա բազմութեանն մեծաւ պատ-
ուով ածցեն ի քաղաքն զնոր տապանակն. քանզի
դեռ արտաքոյ կին՝ ի տեղին, որ կոչեցաւ լու-

ծուան

ճուսին կիրճումն կառաց։ Ու զի անդ լծեալ
զջորին՝ խաղացուցին զկառն ի թիւրական
քաղաքն։ Եւ մինչդեռ պատրաստեալ եւս-
նէին ամ քաղաքն ըստ առաջ սէր նշխարացն,
ընթացեալ կին մի այսահար՝ աղաղակեր. ով
քոնուես և անհնարին տանջանացս, որ եկն
եհաս ի վերս մեր. վասն զի եկն այսր նախա-
սարկաւագն և առաքելին մարտիրոսն՝ ի քա-
ղաքիս յայսմիկ բնակել. և նոյնժամայն բժշ-
կեցաւ կինն յայսոյն պղծոյ։

Եւ կին մի տեառատես յանկարծակի լուաւ
ձայն՝ որ ասէր ցնա. արի յարեաց ի կառն
առեփաննոսի նախավկային քոյ. ով զի և-
լեալ յեղեմէ գայ մտանել այսր. և նոր յարու-
ցեալ՝ եւ ըստ առաջ սէրն. և չէ ևս քաջ հալել
ի կառն՝ վաղվաղակի ցամաքեցաւ բղխումն
արեան նոր. ովոյ մեծաձայն ի լուր ամենե-
ցուն փառաւորեր զԱստ։

Եւ եր այլ ոմն քաջ և առաքինի ի զինուո-
րական կարգէ, որոյ եր զաւակ մի ուրեմ-
տասանամեայ անդամալոյծ ի ծնէ. սա տե-
սեալ զբջանչելին՝ որ լիներ ի ձեռն սէրն,
փութացաւ եբարձ զնա յոտս իւր, և բերեալ
ընկեց յանդս կառացն։ Եւ նոր առաժամայն
յարուցեալ եկաց ի վերոյ ոտից իւրոց, և վազ-
վազեր և երթայր առաջի կառացն. և ի
ձայն բարձր աղաղակեր և օրհներ զԱստ, և
ժողովուրդն ամ ըստ նմա։

Եւ այսպիսի սքանչելեօք և փառաւորութիւ
Հայրապետն և ժառանգաւորքն և ամ բազ-
մութիւն շուրջ կալով զկառաւքն՝ եկին հասին
մին-

մինչև ՚ի տեղին, որ կոստանդիանոսի ասպարեզ անուանի։ Այս անդէն լծեալ ջորիքն զտեղի առին՝ իբր կապանօք իմն կապեալ, և ըստ այն տեղւոյ ոչ կարացին անցանել. Թէպէտև երասանակալքն խստագոյն հարկանէին, սակայն ջորիքն անշարժ մնային։ Ո՞յսոսիկ տեսեալ Թէոդոսին՝ երկոտասան ջուխս այլ փոխանակ առաջնոցն հրամայէր ՚ի կառան լծել, իբրու կարծելով՝ Թէ այնոքիկ աշխատեալք են. այլ սքն Աստուածպաշտին զօրութիւնքն իբր կապանօք իմն կապեալք՝ անշարժ մնացին։ Յայնժամ ձայն լսելի լինէր ՚ի միջոյ կառացն՝ որ ասէր. Մի ՚ի զուր աշխատիք. վասն զի աստ հաձեցաւ Աստուծոյ բնակել սքն Նախավկայիս։

Ո՞ր լուեալ հայրապետին և ժառանգաւորացն հանդերձ ամ բազմութիւնքն՝ իբրև ՚ի միոջէ բերանոյ փառաւորեցին զՅԾ, որ այսպէս միշտ սքանչելագործէ ՚ի ձեռն սքոց իւրոց։ Այսպէս և Թագաւորն հիացեալ զարմանայր, և մեծ գոհութիւն ամենաւհին մատուցանէր. և ապա հրաման ետ եկեղեցի շինել ՚ի նմին տեղւոջ մեծապայծառ և վայելուչ՝ հանգիստ և վկայարան Աստուածածնին մարտիւրոսին. և տօն մեծ զօրն զայն կարգեցին՝ ամ յամէ տօնել ՚ի յիշատակ փոխադրութեանն մարմնոյ սքոյն ստեփաննոսի, որ օր երկու էր օգոստոս ամսոյ, յամի հն իբր 439 կամ 440։ Այլ մինչև ՚ի շինուածն տաճարին նախավկային՝ եղին զտապան նր ՚ի վկայարան սքոյն լաւրենտիոսի սարկաւագին. և ապա

պա զնախասարկաւագն յիւր սեպհական տա-
ճար փոխեցին։ Ուր և բազում բժշկութիւնք
կատարին մինչև ցայսօր (ասէ հեղինակ ճա-
ռընտրին) ՚ի վէր հիւանդաց աղօթիւք սբոյն.
Եւս առաւել մեղաց թողութիւն գտանեն՝ որք
հաւատով և ձշմարիտ սրտիւ հայցեն ՚ի նմանէ
բարեխօսութիւն սբոյն։ Օ՚ի նա՝ որ քարկոծ-
ջացն թողութիւն մեղաց հայցեր, յայտ է թէ
հաւատացելոցս և տօնողացս ևս առաւել
մաղթեսցէ զքաւութիւն։

Նոյն յետ դարուց անցելոց՝ առին վենետիկե-
ցիք ՚ի բիւզանդիոյ զնշխարս սբոյն նախաւկայ-
ին, և բերեալ հանգուցին յեկեղեցւոջ վա-
նական կղզւոյն՝ ուր գետոյգ մեծ կոչեցելոյ
դէմ յանդիման հրապարակի քաղաքին կիմ
ապարանից դքսին. զորմէ ձոխագոյն ձառէ
տանտուզոս ՚ի վենետկեան ՃմկագրութիՒ.
և ոչ նա գրէ, զոր և տեսանէաք մինչև ցա-
ւուրս մեր, յաւուր տօնի սբոյն ստեփաննոսի
երթայր դուքսն հանդերձ աւագանւովն և
ամ սպասուք՝ առաջնակայ լինել ուր պատարա-
գի և ժամերգուէ ՚ի նոյն եկեղեցին։ Ոյժղ
զայլևայլ մասունս նշխարաց սբոյն սիրեալ
ըն ամ տեղիս։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք

(1) Ղունիք պէտս քննուէ՛ի վր՛ վկայաբանուէ սքի նախավկային, զոր սքն ղուկաս աւանդէ՛ի գործս ա֊
ռաքելոց. Միայն յուշ առնեմք՝ զոր ասացաք՛ի վարս Մա֊
տթևայ առաքելոյն, թէ վկայաբանութիւն նր՝ որ ասի
հանեալ՛ի գրոց եբրայեցւոց, որովհետև նմանութիւն
յոյժ ունի ընտրայս, մնրթ է ասել՝ թէ՛ի գիրս հրէից
նշանակեալ էցէ անուն ստեփաննոսի՝ մանթիւս, այն
է յունարէն պսակեալ. ոյր և ստեփաննոս է անուն յու֊
նական: Սոյնպէս և վ֊ գիւտի և վոխադրութե նշխա֊
րաց նշանակեցաք՛ի կարգի զվաւերական ալբիւրս, յո֊
րոց հանաք. և եթէ ունէին քննիչք զպատմութի Ճա֊
ռընտրին մերոյ՛ի ձեռս նբեանց, գնբաւ ուղղափրէին
զքանի մի սխալանս այլոց. յորս յայտնի է վրնպսին Յ֊
ես. որ զգիւտ նշխարացն ասէ առ կոստանդիանոսիւ,
և սակայն դնէ ուղիղ առ յովհաննէս հայրապետաւ՝ որ
էր յաւուրս արկադեայ և թէոդոսի փոքու. զնոյն սխալ
անցուցեալ է ընդ ումանց և Յ. ժմ՛ի վոխադրութե նշխա֊
րաց, դնելով յաւուրս կոստանդիանոսի, և կարկատե֊
լով միւս ևս ստուածի, յր՛ի վր՛ բերելով և զանուն մե֊
րոխանոսի. ոյր և այլք էին կոստանդ հայրք, և ե֊
սեբիոս եպս. այլ այս վրնպսակ առեալ է յայնմանէ, զի
մարմին սքոյն ստեփաննոսի առ թէոդոսիւ ամիտփեցաւ
՛ի տեղին անուճանեալ ասպարէզ կոստանդիանոսի. նակ
եւսեբիոս՝ որ Թարգմանի բարեպաշտ, պարտի հայիլ՛ի
սքն պրոկղ:

Մնայ ասել վ֊ ժամանակի և աւուր կատարման նա֊
խավկային. զի ումանք՛ի քննչաց դնեն՛ի նմին նակ ամի
համբարձման ոն, այլք՛ի սկզբան երկրորդ ամին. կէսք
համարին՝ թէ քարկոծեցաւ՛ի գեկտ. 26. կի 27. և թէ
վ֊ այսորիկ յայն օր եղաւ ոճն նորա. և կէսք՝ թէ՛ի
գեկտ. 25. կի 26. եղև առաջին գիւտ նշխարաց նր. և
յայն օր առաւել հաստատեցաւ ոճն նր. և նբաքան֊
չիւրն ունի բաւական ցուցակուն՛ի նախնեաց: Ա֊

յնչ

ինչ ատոյգ է , զի ոչ նիւասացին և պրոկղ ասեն այլապէս հանդերձ , ոչ ասեփաննոսի լինի յերկրորդ աւուր ծննդեանն քան . այլ սակայն այն է խնդրելին , թէ ծնուիլդ ասելով՝ արդեօք լմանա՞ն ըս յեռին գանազանութե՞ն ոչնչ յայտնուեր , եթէ երբեւ մի՝ ոչ էր ՚ի վայելչուց յարևելս :

Յայտնապէս մեր և Հաշտցք հայելով յերկբանութեան խնդրոյս՝ ՚ի կրկին ասելս երկրորդէն գնիշատակ ստեփաննոսի . ք՚ի 26. դեկտ. որ է երկրորդ օր ծննդեանն գանազանելոյ , և ՚ի 7 . յունվարի , որ է երկրորդ օր յայտնութե : Ա՛ւ այս չէ՛ պարտ յերկարել զբանս . զի ոչ լեցի բերել գանաչառ վկայութի երևելոյն անտոնի սանտինի արևմտեան մատենագրի ՚ի պատուհայէ , որ յառաջելական պատմութե նորոգ ասէ վ՚ոչ ոչնչի ստեփաննոսի . * Հաւանեալ եմ կարծեաց այնոցիկ , որք

„ գնեն յեռքն կաղանդից յունվարի (ք՚ի դեկտ. 26.)
„ տեսանել նախավկային զերկինս բացեալ , և վերա-
„ Թևել առ յն՝ զոր եռես : Վ՚ոչ զի չերևի այլ պատ-
„ ճառ , թէ ընդ ՚ի ջորրորդ կի՚ ի հինգերորդ դարէ և
„ այսր , ոչ է իմաստասիրել յօգուտինոյ և յայլոց ,
„ յերկրորդ աւուր ծննդեանն քան կատարէ եկեղեցի
„ զմարախութուան ստեփաննոսի : Սակայն և զայն պարտ
„ է յուշ ածել , թէ ՚ի կապադովկիա և ՚ի պոնտոս (յո-
„ րոց յայտ է թէ էառ և լուսաւորիչն մեր) , ուր ծնունդ
„ ոչ մերոյ քան կատարիւր ՚ի ը նոյն յունվարի , (ի՚
„ ՚ի յունվարի 6 ,) հետևեալ օրն էր նոմբրական ստե-
„ փաննոսի . զմա այլևայլ ժամանակաւ , այլ պահմամբ
„ հին սովորութե եկեղեցւոյ , զի այս երկու ծանք միաս-
„ ցին . վ՚ոչ զի վարմանալի միաձայնութ զմահն ստեփան-
„ նոսի կցորդեաց հնութեն ը աւուր ծննդեանն քան ||

Աւելի ինչ քան զայս ասել ո՛չ ունիմք . որ ունիցի ա-
նայն լսելոյ՝ լուծցէ , և մի՛ անպտուղ եցէ եղբայր զեղ-
բայր վ՚ոչ զանազանաբար ունելոյ զաւուրս ծննդից :

ՏՕՆ ՍՐԲՈՑ

Պսխաւոր առաքելոցն՝ Պետրոսի և Պօղոսի ։

Ի · յունէս · 29 · և դեկ · 27 ։ Հ · յունէս · 29 ։ Լ · յունէս · 29 · և 30 · և հս · յնվր · 18 · և 25 ։ փետրվ · 22 ։ օգոստ · 1 ։ և նոյեմբ · 18 ։ Ձատընդ · Ը · վեհ · և վէհ ։ Ր · յՀ · և ճԵ ։ Բուլանդեանն հենուէն · և բաբելդոտ · և յաննինգ · հատ · ՁԵ · յունէսի · էՀ · 398 = 475 ։ Ձարմ , և եկեղեցական համեմատիչ առհասարակ ։

ՊԱՏՄՈՒԱ , ՈՐ ԱՅՍ ԿԱՓՐԱՆ , որ Թարգմանի վէմ , ըստ առաջին անուանն Ծ մատան կամ Սիմոն որդի յովհաննու , ի բեթսայիդայ գաւիլեացւոց , կրտսեր եղբայր անդրէի առաքելոյ՝ ըստ եպիփանու , կամ աւագ՝ ըստ ոսկեբերանի և ըստ այլոց , ջերմ սիրելին քրիստոսի և հինն եկեղեցւոյ , գլուխ առաքելոց և աշակերտաց՝ և երեսփոխան նոցն , փակօղն և բացօղն դրան արքայութեանն երկնից . և հովիւ քաջ՝ փոխանորդ երկնաւոր հօտապետին ։ Ընդ նմին և աջակից նորա և գործակից յամի՝ երեքտասան առաքեալն Պօղոս , կամ պաւղոս , որ Թարգմանի՝ փոքր , երբեմն սօղոս կամ սաւղոս և կամ սաւուղ , որ նոյն-

նոյնպէս ստուգաբանի՝ սուղ կամ փոքրիկ, յաղագ բնութեանն, ՚ի տարսոնէ կիլիկեցւոց՝ պատուական քաղաքին հռովմայեցի, երբեմն աշակերտել յեղեմ գամաղիէլի օրէնսուսոյց վիշպի, և հալածիչ անդամ քրիստոնէից, այլ զկնի դարձին և երկնաւոր կոչմանն՝ անօթ ընտրութե, ախոյեան հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ, երրորդ երկնից աստէն տեսօղ՝ և անձառելեաց հասու, քարոզ հեթանոսաց և հայր համատարած ։ Որբա ասեմ երկոքեան ամոլք հաւատոյ՝ գլխաւոր առաքեալք՝ ՚ի միասին տօնախմբին ՚ի մեզ միանգամ և երկիցս ։

Ա՛յս՝ յառաջ քան զվարդավառ յամարայնի՝ համօրէն առաքելովք հանդերձ, ըստ որում պետրոս ըստ որդւոյն զբեթեդեայ տեսօղ եղև պայծառակերպութե՛ն քո՛ ՚ի լեառն թաբորական. ևս առաւել՝ զկնի և այլ եկեղեցիք յայնմ միջոցի ՚ի 29 ։ յունիսի տօնեն զպետրոս և զպօղոս ։ ոմն և ոմանք ՚ի յունիսի 30, զպօղոս առանձինն յիշատակեն, կամ զառաքեալն առհասարակ տօնեն ։ և ըստ նմին եդեալ կայ և ՚ի յայսմաւուրս մեր՝ պետրոս և պօղոս ՚ի 29 յունիսի ։ և երկոտասան առաքեալք ՚ի 30 յունիսի ։

Նա երկրորդ՝ յայսմ վայրի ՚ի կարգի աւագ տօնից երկրորդեմք զտօն գլխաւոր առաքելոցս պետրոսի և պօղոսի, զի են գերագոյն ՚ի մեծամեծ աւագանիս քո՛, և անհրաժեշտ վկայք հռոմնական ծննդեան և տնօրէնութե՛ն մեր՝ ասի փրկչին ։ պետրոս իբրև առաքելապետ

և

և առաջինն ամ աշակերտաց , և պօղոս ոմն յերկնից կոչեցեալ առաքեալ . և արդարև երկոքին սքանչ եղեալ բանիւ և եղեալ թղթով , եղեալ նշանօք և եղեալ զօրութիւք՝ եղեն գլխաւոր վկայք և քարոզք աւետարանին ընդ ամ տիեզերս . և ի ձեռն սոցա առաւել սփռեցան շնորհք հոգւոյն սրբոյ ընդ ամ երկիրս . և եղեն ի կաթուղիկէ եկեղեցւոջ՝ որ է երկինք յերկրի , հանգոյն երկոցունց մեծամեծ լուսաւորաց՝ զորս արար ամբ ի լուսաւորուիլ ծիս . վայ և նուաղեմք ի տօնին նոյ . * Որ երկոքումբք ընտրեալք լուսաւորչօքն ծի հաստատեցեր զեկեղեցի քո քս , մաղթանօք սոցա խնայեա ի մեզ ‖ :

Արդ կամեցեալ աստանօր բուռն հարկանել զհրաշալի վարուց և զվկայաբանուէ սոցա , ծով համատարած և դաշտ լայնածաւալ տեսանեմք առաջի , զոր չէ մարթ ումեք հատանել անցանել . զի թէ լոկ զգրեալսն անգամ յաւետարանի զպետրոսէ , և զոր ի գործս առաքելոց զպետրոսէ և զպօղոսէ մանգամայն , կամէաք ծաղկաքաղ առնել , առանձին մատեան լինէր . ապա եթէ կամ լինէր ակնարկել և յանքաւութիւն աւանդութեց ընդ հին և նոր մատենագրաց , և յընտրեալ վկայաբանութիւնս ամբողոց և այլոց աղգաց , ոմն և ի բիւրապատիկ ներ. բողեանս սքոյ հարց և վիպաց ամ եկեղեցեաց , անցանէր զանցանէր զբազմահատոր մատենիւք :

Սակայն և այն աւելորդ էր , թէպէտև զսա

կաւս ՚ի բազմաց քաղէաք . զի ո՞ ոչ գիտէ ՚ի հաւատացելոց յԵրուսաղէմ տիեզերս զի՞ոքն լինել զպետրոսի և զպօղոսի , և զդործս և զվաստակս առաքելութեանն նոցա եւ ամ ՚ի յարեւելից մինչև յարևմուտս , և զնշանս և զարուեստս երևելիս , և զվկայական կատարումն յակն տիեզերաց ՚ի հռովմ. զի եւ ամ երկիր եւ բարբառ նոցա , և մինչև ՚ի ծագս ծով են խօսքնոցա : Որպէս վա՛ շատ համարիմք ՚ի լրումն գործոյս առաջի դնել զկարճ ՚ի կարճոյ վկայաբանութեանն յայսմաւուրաց մերոց , և ՚ի վեր բերել ՚ի հռովմայեցւոց զքաղաքաճաճ աւանդութենէն՝ որ վա՛ ն՚ չխարաց սքոյս , Թողեաւ և զինչ զինչ կարևոր ՚ի կարգս ծանօթութեց [1] :

Ա.ՐԴ յայսմաւուրքն ունի աստանօր այսպէս . Պետրոս և մեծ առաքեալն քրիստոս , եւ նմին և պօղոս , քարոզեցին զաւետարանն քրիստոս ՚ի բազում տեղիս . կարգեցին քահանայս , և շինեցին եկեղեցիս . եդին սահմանս և կանոնս հաւատացելոցն ՚ի նոր . և զգուշացուցին զաշակերտսն իւրեանց ՚ի չար հերձուածոցն , որ յետոյ լինելոցն էր յարքանեկացն սատանայի . որպէս և տեսանել և յայծմաշունչ Թուղթս նոցունց . զոր այժմ ունին եկեղեցիք քրիստոս , և նոքօք պայծառացեալ լուսաւորեցան :

Ա.ՅՀ զքարոզուն իւր ինքն իսկ յայտնեաց պօղոս՝ յասել անդ , Թէ յերկմէ մինչ ՚ի լիւրիկէ լի արարի զաւետարանն քրիստոս . զի վաթսուն և հինգ քաղաքաց քարոզեաց պօղոս ինքն միայն աշակերտօքն իւրովք . Թուղ զայն՝

որ յայլ գաւառս և ՚ի վիճակս այլոց առաքելոցն եմուտ, և քարոզեաց զքն։ Այսպէս և մեծն պետրոս վկեմն հաւատոյ յարևելից յարևմուտս շրջագայեալ՝ աշակերտեաց ըզբազումս ՚ի հաւատս քրիստոսի։ Այս յետոյ եկեալ հանդիպեցան միմեանց ՚ի մեծն հռոմ, և յոյժ ուրախացան. և էին ՚ի միասին. և օր ըստ օրէ յաւելուին հաւատացեալքն ՚ի տէր քարոզութիւնն նոցին. զորս և քրիստոնեայս անուանեցին նովքն քրեանոս։ Այս զայս անուն եդին նախ հաւատացելոց յանտիոք պօղոս և բառնաբաս. և պետրոս յետ դնելոյ զաթոռ իւր յանտիոք՝ եկն և հաստատեաց զաթոռն ՚ի հռոմ։

Այնդ ՚ի հռոմ էր և սիմոն մոգն սամարացի՝ երբեմն յանդիմանեալն ՚ի պետրոսէ. և իբրև ընդդիմ եկաց նա ընդ առաքելոցն, և ասէր զանձինն ածն ումն գոլ և զքն, յամօթ արարին զնա յատենին ներոնի կայսեր ընդ առաքեալքն պետրոս և պօղոս. և զբարձրացեալն յօդս զկախարդն սիմոն՝ խայտառակեալ յերկիր ընկեցին աղօթիւք. որ և չարաչար սատակեցաւ։ Այնդ որ զչարեալ ներոնի՝ որ ակն ածէր ՚ի կախարդէ անտի, և սա առաւել դառնացեալ վասն դառնալոյ ոմանց ՚ի մեծամեծաց և ՚ի տիկնայց պալատան ՚ի հաւատս քրի, ետ սպանանել զնոսա առաքեալսն. և այնպէս կատարեցան ՚ի հռոմ քաղաքի՝ յամի տն 66. ՚ի յունիսի. ԻԶ։

Պետրոս խաչեցաւ ըստ նմանութեանն քրի, որ ասաց նմա, ես գկինի իմ, նշանակեալ՝ թէ

ո-

որով մահու մեռանելոյ էին , այլ խաչիւ . բայց ստորահակ գլխիվայր . զի ինքն ասաց պետրոս խաչողաց իւրոց , թէ չեմ ես արժան նմին ձեն իմոյ նմանիլ մահու . (ըստ որմանց յաւետ և զայն , թէ ետրն իմ յերկնից յերկիր էջ . իսկ ես յերկրէ յերկինս ընթանամ) : Իսկ պօղոս սրով գլխատեցաւ . զի ոչ ասեն ոմանք՝ վասն զոլոյն հռովմայեցի ոչ կամեցան մատնել զնա յանարգական մահ խաչի : Այս կան եգեալ՝ եթէ մարմինք նոցա ի մեծ քաղաքն ի հռոմ՝ ի պարծանս ձի և ի բարեխօսուԹեամ հաւատացելոց :

Յայս վայր յայտմաւուրքն . որ և ի վեր բերէ զան գոլեստից ի պետրոս և ի պօղոս , առեալ աւաւեալ ի բանից ընտրհալոյն սարգսի . զոր արժան է ի բուն աղբիւր անդր ուսանել : Այր և գտանես նշանակեալ զսանդուԹին յոգունց ի նախնեաց , զոր մի ըստ միոջէ նկարագրեն ձառընտիրք . այլ Թէ յորժամ ի բազեկ եղեն հաւատացեալքն՝ որ ի հռովմ, եԹէ կամի ներոն ըմբռնել և սպանանել զնոքեան պետրոս , աղաչէին զնա խոյս տալ առ ժամանակ մի ի քաղաքէն . և յոչ առնուլ նոքա յանձն՝ իբրև կարի լինն ստիպեցին , և նա յայն միտս դեգերէր , ետես ի տեսլեան , ոմն Թէ ինքն ելանէր ըստ դուռն հռովմայ , և տէրն ի հռովմ մտանէր : Յայնժամ երկիր եղ պագ վերկչին իւրում և վիպէին , և ասէ . տէր ո՞ւր երԹաս . և նա ասէ . ի հռովմ՝ վերստին խաչիլ . և պետրոս դարձաւ զկնետ ձեն անդրէն ի հռովմ . և տէրն ասէ ցնա . մի երկն-

չէր, քանզի ըստ քեզ եմ, մինչև մուծիցէ զքեզ ի տուն հօր իմոյ. և զայս ասացեալ՝ եղև աներևոյթ։ Եւ այնպես ահիւ և զուարթու-թեամբ զարհուցեալ ի տեսլենէն՝ որ առաքեալն՝ ոչ մեկնեցաւ ի քաղաքէն, այլ անդէն կա-տարեցաւ յաթոռ քահանայապետութեանն իւ-րոյ. որում յաջորդեցին և այլ հայրապետք հռովմայ գահին մինչև ցայսօր, սկսեալ ի սբն զլինոսէ և ի սբն կղեմայ, զորս յիշա-տակէ պօղոս ի թուղթս իւր։ Ըստ հաստա-տակ աւանդութեան ի սկզբանէ՝ և այսր՝ ի միում տարւոջ և ի միում աւուր կատարե-ցան՝ որ առաքեցան. քայց են՝ որ ասեն, թէ յայլևայլ տարիս և յաւուրս. և այլք՝ թէ յայլևայլ ամս, քայց ի նոյն օր. պետրոս յառաջագոյն, և պօղոս զկնի. և յայս կար-ծիս է օգոստինոս այլովքն հանդերձ։

Ըստ աւանդութե հռովմայեցւոց՝ սբն պետ-րոս կատարեցաւ ի տեղին, որ կոչի յանիկ-կուղոն կիբեանի գուլում, այս է դռնակ անո-ւճանել լեառն. և թաղեցաւ ի քլուրն մերձ ձակայ՝ վատիկան կիմ վադիգանում կոչեցեալ, մօտ ի պալատն ներոնի ի Ճանապարհին աւրե-ղեայ, որ և մինս աւրկում, կիմ մինդօրիս, ի լեառն ոսկի։ Իսկ սբն պօղոս կատարե-ցաւ ի Ճանապարհին ոստիայ արտաքոյ հռով-մայ, ի տեղւոջն՝ որ կոչեցաւ աքուաս սալ-ուիաս, կիմ ատ Թռեիս ֆօնդէս, ի առ բժշ-կարար ջուրս, կամ առ երիս աղբերս. և յետ Թաղելոյն առ վայր մի ի տեղւոջն՝ քե-րեալ եդաւ զոյգ ըստ մարմնոյ սբն պետրոսի

ի

՚ի գետնայարկս , որ ընդ մէջ Ձանապարհին ոստեայ և ապպիայ . այն՝ որ կոչեցաւ զկնի գամբարան սբ֊ին սեբաստիանոսի ։ Եւ յետ քանի մի դարուց մարմին սբ֊ին պետրոսի ամ փոփեցաւ ՚ի վատիկան , և սբ֊ին պօղոսի ՚ի Ձանապարհին ոստեայ . և չինեցաւ տաձար ՚ի վր֊ն նց֊ յանուն նց֊ . և յետ այլ ևս դարուց բազմաց՝ նորոգ հրաշակերտութ֊ք կաւուցան եկեղեցիք֊ սբ֊ առաքելոցս . զորմէ չէ տեղւոյս ասել ։ Ա֊յն յայտ իսկ է , զի հոյակապ եկեղեցի սբ֊ին պետրոսի յաւուր յայսմիկ է մի միայն ՚ի վր֊ տիեզերաց ըս֊ ամ մեծագործ վայելչութ֊ . ոչ և սբ֊ին պօղոսի՝ է մի յերևելի տաձարաց . և յերկոսեանն իսկ ասին լինել այլևայլ նշխարք֊ երկոցունց առաքելոց՝ ոչ բաժանելոյ ՚ի միմեանց ՚ի կեանս և ՚ի մահու . և յանուն երկոցունցն իսկ ՚ի մեզ կոչի մեծն հռոմ՝ նաև պետրոս պօղոս ։

Պօղոսէ ասել զնշխարաց սբ֊ առաքելոցս՝ որ սփռեալ են ըս֊ ամ ծ , ՚ի հին ժամուց հետէ և յզկնի դարս . ոչ է տեսանել ՚ի պատմուիս և ՚ի յիշատակագիրս իւրաքանչիւր աղգի և աշխարհի և քաղաքի և եկեղեցւոյ . որպէս այն լիէ՝ և կենդանի նշխարք֊ նց֊ են կենդանի առաքեալք՝ սփռեալք ըս֊ ծ , ՚ի քարոզել մինչև ՚ի կատարած ծի՝ զոր միանգամ քարոզեցին ՚ի կենդանութ֊ զՔ֊ստարտութ֊ն աւետարանին քոյ , և զաւանդութ֊ս փրկչին ծի՝ եթէ՛ քանի՞ և եթէ՛ թղթով . և հաստատել զաշակերտեալն մասամբք սբ֊ նշխարաց իւրեանց , և զօրաւոր բարեխօսութ֊ առաջի քոյ ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Ըստ առածի Հռովմայեցի քերթողին, ճախուէն պէս աղափաղուրանէ · զի անգիտանամ, Թէ զմրն յիշեցից, կամ զմրն Թողից յանբաւ բանից, որք հային ՚ի գլխաւոր առաքեալն ՚ի պետրոս և ՚ի պօղոս : Ջայս գիտեմ, զի Թէև չափով խօսել յօժարեցայց, առանձին հատոր պարտ է յօրինել · ապա ՚ի ժամուս զայն լինիմ խոստովան, Թէ հալիմ զազբիւրան կարեմ մատաղը ցուցանել, զի որք կամիցինն՝ մատչիցին յարբուման · ապա Թէ ոչ՝ անհնար է առնուլ ամանով չափ, և արբուցանել ինդ բեղեաց զանչափս ։

Քառավտակ գոգցես աղբիւրս տեսանեմ ՚ի միում ևեթ ագի մերում · քանզի կայ նախ՝ ՚ի Հառընտիրս ընտրեալ վկայաբանուԹի կամ գործք սրց առաքելոցն պետրոսի և պօղոսի, հին Թարգմանուբ ՚ի յունէ · զոր ոչ գտաք առայժմ ՚ի տպագրել գիրս յունաց և լատինացւոց · բայց միայն գՀատուած մի նր, զոր բերեն բոլլանդեանք տ ռանց ընդ բանս լինչ ածելոյ՝ աստանօր ՚է յունիսի · 29 · էրէս · 431 · ըստ որում յառաջ բերեալ է զայն աբէլի ուբրումն երևելի մատենագրի ՚ի գիմանաց մեսանայ, ըստ մեսրնայ քաղաքի սիկիլիացւոց ։

Երկրորդ կայ ՚ի Հառընտիրս ԹուղԹ գիոնեսիոսի առ տիմոԹէոս վե կատարման պետրոսի և պօղոսի : Երրդ՝ կայ ընտրեալ Հառ ներբողական հատուածս ՚ի նախնեաց, հանդերձ այբուբենական գովեստիւք · որ է գործ միոյ ՚ի վեպաց ագրիս՝ առ ժամանակօք վկայասիրին գրիգորբի, որ է գլխաւոր հեղինակ Հառընտրայ : Ընդ կան և այլ բազմապատիկ բանք գիտելիք և քննելիք ՚ի զանազան տօնապատՀառս յօրինեալս ՚ի վեպաց յետին դարուց · Թող և զայլ ընտիր ընտիր ատացուածս հարց մերոց ՚ի գիրս իւրեանց ՚ի գովեստ նոբ առաքելոցս · ոչ և յայտ է · յորս բազում լինչ արժանի տեղեկուբե բովանդակեալ կայ ։

Եւ զինչ պարտ է ասել զյունական և զլատին և զասո

րի

ըն մատենագրուեց, սկսեալ յառաքելական հարց, ՚ի կղեմայ հռովմայ հայրապետէ, ՚ի դիոնեսիոսէ, յերբա-
նոսէ, ՚ի յուստինոսէ, և յեկեղեցական պատմագրաց՝ ընդ եւսեբիոսի, և ՚ի մեկնչաց աւետարանի և գործոց առաքելոց՝ ըստ ոսկեբերանի. զի ամենեքեան սոքա խօսեցան ճոխագոյն զպետրոսէ և զպօղոսէ ։ Որ թողից զհին և զնոր վկայաբանութիւնս՝ ստոյգս և անաստոյգս, յերևելի և յաննշան արանց աւանդեալս. զորս մի առ մի զննել չքաւէ կեանք մարդոյ ։ Թո՛ղ զհետևանս այսպիսի աշխատասիրուէ ըստ Ծագրական և ըստ Ժամագրական քննուեց ։ Վա՛յ և ՚ի բոլանդեանց երեք քաղ անձինք մեսեալ չափաւոր ևեթ հետազօտուէք յայս երկասիրութիւն, հազիւ՚ի բազմից զաւակաւ բանս մարթացան՚ի մէջ բերել ։

Գլխաւոր վկայաբանուէ՚ի մէջ առնուն նք կրկին. մին է յունարէն՝ հանել՚ի հին մատենից գրաստան փարեզու, վատիկանու, և վենետկոյ. որ է գործ միջին դարուց՝ քաղեալ՚ի ըբ գրոց և ՚ի նախնի հարանց, հանդերձ իւիք իւիք պատուհաստուէք այլևայլ աւանդից զանազան տեղեաց՝ յորս չըջեցան պետրոս և պօղոս, կի՛ մակաբերական յաւելուածով անանուն հեղինակին. ո՞ր թէ կինն պետրոսի առաքելոյ էր գուստր արխատաբուլեայ եղբօր բառնաբայ առաքելոյ, և թէ ծնեալ ինչ նմա ուստր մի, և գուստր մի. ուր իրաւամբք կասկածին քննիչք, թէ գուցէ ակնարկէ՚ի մարկոս յորդիսյեաւն պետրոս, և՚ի պետրոնիլլա՝ զոր ոմանք մարմնաւոր, և ոմանք հոգևոր գուստր համարին պետրոսի ։

Երկրորդն է լաւին վկայաբանուէ ինչ ընծայեալ սբ՚ն լինոսի աշակերտին և յաջորդին պետրոսի. և արդարև բազումք ասեն, թէ լինոս գրեաց զգործս պետրոսի. այլ ոչ ոք հաւաստայ գտանել ցկատարած գրուածս նր. ոի՛ և ՚ի սբ՚ն կղեմայ գիտեմք գրեալ զվարս պետրոսի, այլ որ կայ այժմ՝ համարեալ է այլոյ գրուածք յանուն նր ։ Թո՛ղ զայլ հին և նոր վկայաբանս, զորս հարևանցի նշանակեն բոլանդեանք, և անցանեն յայլ բազմերիւնակ ծանօթութիւնս, զորս յերկար լինի համառօտել անգամ. չա՛տ լինին մեզ ասացեալքս՝ յայտնիք և ըստուներիք ամենեցուն ։

Ինչ մի յաւելից վե՛ ձի՛ղորդուէ սբ՚ն պօղոսի աւանդե-

ԼՈՅ Ի ԳՈՐԾս առաքելոց՝ Ի գալն յառաջնում նոճադի յասիոյ Ի հռոմ, զի և ինձ վիճակեցաւ ընդն ճանապարհ նաւել, և դիտել անձամբ զատուգուն աւանդութեանէ մալթացւոց, թէ արդարև այն իսկ է կղզին մելիտինէ՝ յոր անկաւ պօղոս, որ այժմ ասի մելիտոն կամ մելիտէ, ասմօրէն մալթա: Արդ ՚ի սկզբան պօղոս նաւեալ յասիոյ Ի կրետէ՝ յայնմ հետէ տառապեցաւ Ի հանդրին անդունդս, և ասլա էլ Ի մելիտինէ, և անտի էանց Ի սիրակուսա, և անտի Ի հռեգիոնէ, անտի Ի պատիողս, և անտի Ի հռոմ. սոյնպէս և մեք յամի 1809, նաւեցաք Ի բիւզանդիոյ ընդ արշիպելագոսն՝ յորժամ հասաք մօտ Ի կրետէ, զոր ընդ ձախմէ ունէաք, և անցանէաք զչերկ կոյնէ, զոր ընդ աջմէ ունէաք, զերիս տիւս և զերիս գիշերս տառապեցաք ծանր աղեկոծութեամբ. յորմէ ապատեալ ապրեցաք սկզբան պօղոսի անվնաս՝ յառաջեցաք Ի ճանապարհ նոր Ի հանդրին անդունդս, այն է խորք լայնատարած ադրիական ծովուն, որ տանի Ի մալթա և Ի սիկիլիա, և ոչ վենետիկեան ծոցն՝ որ կոչի և է ադրիական ծոց կամ հանդրին խորշ, և ոչ անդունդք:

Եւ ոչ սկզբան պօղոս չորեքտասան աւուրըք եհաս զայն անդունդս՝ անհնարին տառապանօք՝ առանց տեսանելոյ զարև և զաստեղս, նոյնպէս և մեք յետ երեքօրեայ նաւակոծութեանէ՝ զաւուրս տասն թէպէտև արև և աստեղս տեսանէաք, այլ ոչ տեսաք ամենևին զյուսալիք, բայց միայն զերկինս և զանդունդս. և ապա յաւուրն չորեքտասաներորդի (յետ մեկնելոյ Ի կրետեայ) եղև մեզ տեսանել Ի տօնի առաքելոց ընդ յունաց՝ զսիկիլիա կամ զեանա լեառն. առ որով քերեալ՝ եկաք յերկրորդ աւուր վարդավառին մերոյ Ի մալթա. ուր զերկու ամիսս արարեալ՝ քանզ տեղեկացաք զսեղն խորտակմանն նաւուս սկզբան պօղոսի Ի ծովափն անդր կղզւոյն, ուր է մերձ կղզեակն կօղցօ կոչեցեալ Ի բնակչաց, որ Ի լատին գիրս գրի կատիսիսում կամ գաւառս, որ և Ի ճառընտիրս մեր Ի ՃՁհորդուեաս սկզբան պօղոսի կոչի գաւառ:

Եւս առաւել ուխտատենացուեաք արժանի եղաք տեսանել զկնկեան սկզբան պօղոսի Ի տան պօբղիոսի գլխաւորի դեղջն, և զգետնայարկ բնակարանն՝ ուր եկաց նա սկզբան առաքեալն զերիս ամիսս. և է այժմ տունն պօբղեայ եկեղեցի վառաւոր. ուր և արժանի եղէ պատարագել յն-

յընդերկրեայ մատրանն, որ է բնիկ տունն հին։ Ա֊յս կողմն կղզւոյն է վտքը մի բարձր դրիւք քան զայլ տե֊ղիս մալթայու, որ առ հասարակ է իբր տափարակ և հարթ. և այս վերնակողմն կոչի հին մալթա, ուր է և հին եպսարանն. բայց այժմ հոյակապ քաղաքն մալ֊թայու և եպսարանն է՝ ի ստորին կողմն առ մեծ նա֊ւահանգստիւ. և կոչի վալլեթթա. ուր է փառաւոր եկեղեցի յանուն սբյն պօղոսի պաշտպանի կղզւոյն. զը֊րոյ զարձանն՝ ի թաւիսր հանեալ յաւուր տօնի նորա՝ դնեն՝ ի բարձր վայրի մեծ փողոցին, ունի թէ տապաւին իբրև կենդանի քարոզէ կղզեցւոց. Թո՛ղ զհրաշակերտ տաճար սբյն յովհաննու մկրտչի, զորոյ եղբայրուե ու֊նէր զանուն տրուի կղզւոյն։

Ընդ ամ վայրս քաղաքին տեսանես զպատկեր սբյն պօ֊ղոսի՝ ո՛չ ունի յայլ պատկերս՝ աւետարան և սուր՝ ի ձեռս, այլ օձ մի կախեալ զձեռանէ սբյն, և առ ոտիւք նորա հուր. կա՛ կրակ առ նմա, յորմէ ելանէ լիժ մի, ըստ պատ֊մուճէ սբյն պօղոսի. և ունի ասի, այնպէս է և իրօք, զի այժմ ոչ գտանի անդ այլ ևս օձ. մանաւանդ թէ հող տեղւոյ բնակուե առաքելոյն տարեալ լինի յայլ աեղիս՝ ի բժշկութիւն օձահարաց։ Արդ ունի առաքեալն, նոյն֊պէս և մեք եղեալ՝ ի մալթայէ՝ անցաք յեթ պէսպէս ան֊ցից՝ ի սիրակուսա սիկիլիոյ. ուստի եկեալ՝ ի մեսսանա կա՛ մեսսինա շահավաճառ կղզւոյն՝ զկնի դեգերելոյ և՝ ի բալերմ թագրական քաղաք, անցաք՝ ի հանդիպակաց ցա֊մաքն կալաբրիոյ, ուր է հռեգիումն. և անտի եկաք՝ ի նէապօլիս, յոր մօտ է պատիսոլոս. և ապա անցաք՝ ի հռոմ. ուստի եկաք՝ ի վանս մեր՝ ի վենետիկ։ Զայսո֊սիկ յայն սակս առորագրեցի, զի իմասցիս՝ թէ ոչ ոք է, որ պայս ամ ձգհ առնիցէ, և ոչ առնուցու զձաշակ ձգհորդութեե սբ առաքելոյն պօղոսի։

ՏՕՆ ՍՐԲՈՅ

Որդւոյն Որոտման՝ Յակոբայ, և Յովհաննու։

Ոչնի սքանչ պետրոսի վիմին հաւատոյ՝ առաջին սիւնք եղեն եկեղեցւոյ երկոքին եղբարք հարազատք՝ Յակոբոս մեծն, և Յովհաննէս ածաբան աւետարանիչն, որդիք զեբեդեայ և սաղոմէի, ազգականք քո։ զի ըստ ոմանց զեբեդէոս կարծի լինել եղբայր յովսեփայ ածահօր և կղէոպասայ, և ըստ այլոց՝ սաղոմէ ազգական յովսեփայ, կին մանասանդ՝ դուստր մօրաքեռ տիրամօր կուսի։ Եւ ոչ յայտ է յաւետարանէ, ըստ օրինակի պետրոսի և անդրէի՝ ի ձկնորսութէ ընտրեցան և որսակիցք նոցա յակոբոս և յովհաննէս, լինել որսորդ մարդկան։ և զոր օրինակ զսէմոն՝ պետրոս կամ կեփաս անուանեաց Տէրն մեր՝ ի լինել վէմ հաւատոյ անվանելի՝ ի դրանց դժոխոց, նոյնպէս և որդւոցն զեբեդեայ յաւել զկոչումն քաներկիս կամ բոանէրգէս, որ թարգմանի որդիք որոտման։ և ըստ եբրայական ոճոյ՝ զնոյն իսկ զորոտումն ահաւոր յայտ առնէ, կամ զգօլմունս նոցա, այլ զփայլատակումնս։ և այս՝ ասէ հերոնիմոս, ի նշանակ հաստատուէ և մեծուէ հաւատոյ նոցա։ Եւ զի՛ որ օրինակ պետրոս ջերմն սիրելին քո՛

եղայր

եռայր հոգւով, նոյնպես և որդիքն որոտման ցուցանէին յանձինս եռանդն մեծ ՚ի սէրն քրիստոսի. ուստի յառաջ գայր նախանձաւորութիւն՝ թէպէտև ՚ի ժամուն անկատար, առաջարկել նմա համարձակութիւն, զի տացէ նոցա հրամայել հուր իջուցանել յեղիական հոգւով ՚ի վերայ սամարացւոց չընդունողաց զնորն. ոչ և նախագրաւ լինել ՚ի սպասաւորութիւն թագաւորութեանն՝ նստել յաջմէ և ընդ ահեկէ՝ ոչ տեսին զմովսէս և զեղիա ՚ի թաբոր, և պինդի տալ՝ թէ կարօղ եմք ըմպել և զբաժակ մահու։

Յայտնի է յառաջ քան զայն՝ և արժանի լինէն նոցա ընդ պետրոսի տեսանել զնծահրաշ այլակերպութիւնն նմա ՚ի լեառն թաբոր. և առանձին սիրելութիւն յովհաննու ՚ի յիսկ՝ իբրև կոյս և խոնարհ և կրտսեր հասակաւ ՚ի մէջ առաքելոց. մինչև ՚ի չիշխելն պետրոսի հարցանել զյնթրիս վասն մատնչին, ակնարկել յովհաննու. և նմա անկանիլ զլանջօքն յիսկ, և հարցանել՝ տէր ո՞վ է. և ՚ի ժամ խաչելութե ՚ի փախչիլ նմա աշակերտաց՝ սա միայն կայր առ խաչին ընդ մօրն յիսկ, և արժանի լինէր գրել յորդեգրութի տիրամօր, և ժողովել զնա ՚ի տուն իւր՝ կոյսն ասեմ զամենասքն կոյս նահատակին։

Նոյնպես և զկնի համբարձման և պենտեկոստէի քաջայայտ է գործակցութիւն յովհաննու ընդ պետրոսի յամ գործս ականաւորս, և կատարումն մեծին յակոբոսի վկայութ նախ քան զնմա առաքեալս։ Եւ ահա վ՚ա այսր նմա


առ-

առընթեր գլխաւոր առաքելոյն պետրոսի և պօղոսի՝ ոճնեմք՝ ի կարգի աւագ տնփոյս զոր-դիան որոտման՝ ի միում աւուր . Թէպէտև յայլևայլ ժամանակս եղև փոխուման նշ յեր-կինս . զոր յառաձին վարուց նոցա ունիմք իմանալ :

Վկայաբանութիւն

Աբեղն Յակովբայ առաքելոյ զեբեդեան :

Ղ . ֆեբր . 22 . և մայ . 8 . և դեկտ . 28 : Ց . նոյ . 25 : Լ . յոյլ . 25 : Ա՛ռաքնտ . Ի . Ճնչ . յԵսաբէայ . պատ . եկեղ . Ը . 9 : Իռլանդեանն էռատեր . ՚ի ը հատ . յոյլ . էջ . 5 = 124 :



՚Ի սուրբ գրոցն ուն-նիմք հաստատութիւն զերանելի առաքելոյս զկատարումն . զի զկնի սահմանոսի նախ քան զնա առաքեալս սա էարք զբաժակ մարտի-բոսուէ . զոր յառաջ բերեալ Եւսեբի կեսա-բացւոյ՝ յաւելու և զայլ աւանդութիւն բանիւ կղեմայ աղեքսանդրացւոյ . և զնոյն երկոր-դէ յեւսեբեայ Ճառընտիրն մեր բանիւքս այ-սոքիւք :

* Յայնմ ժամանակի ասէ , յայտ իսկ է թէ յա-

յաւուրս կղոդեայ, (իմա յամի ոմն իբր 42 կամ 43) ձեռնամուխ եղև հերովդէս արքայ (այն է սպրիպպաս առաջինն՝ չորրորդապետ) չարչարել զոմանս յեկեղեցւոյ անտի. և սպան զյակովբոս զեղբայրն յովհաննու սրով։ Ի՞ այսր յակովբոս կղեմենտոս պատմութիւն արժանի յիշատակի պատմեաց իբրև՝ ի կարգի տուչէուճ (ցն աւանդուճ) որ յառաջն էին՝ քննա, եթէ՝ այն, որ տարաւ զնա յատեան դատաստանի, իբրև ետես՝ զի վկայեաց նա (զհաւատս քրի) զահի հարաւ. և անդէն սկսաւ նա խօսել և խոստովան լինել վասն ձին իւրոյ, թէ՝ և նա (ինքն) քրիստոնեայ է. և վարեցան երկոքեան՝ ի միասին (՝ի մահ)։ Եւ մինչդեռ երթային՝ ի ձանապարհին, աղաչէր և խնդրէր՝ ի յակոբոյ՝ թողուլ նմա զյանցանսն։ Յոկ նա՝ ի մտաց խորհրդի եղև սակաւիկ մի, և ասէ ցնա. խաղաղութի՛ք քեզ. և համբուրեաց զնա. և այնպէս երկոցունցն՝ ի միասին հատան գլուխք նոցա։ Այլ քանզի յառաջ քան զայս անցս սիրէր էին առաքեալք վիճակաւ ընտ, վասն հաստատուն աւանդութեն և սպանիացւոց՝ զոր և յայսմաւուրք մեր հաստատեն, թէ մեծն յակոբոս չորաւ նախ յարևմուտս մինչև՝ ի սպանիա, և անդ քարոզեալ զաւետարանն՝ աշակերտեաց զբազումս, և հիմն եկեղեցւոյ, և կարգեաց քահանայս և պաշտօնեայս. և յաւուրց անտի նոր հաստատեցաւ քրիստոնէութի՛ւն՝ ի մէջ սպանիացւոց. և ապա դարձ արարեալ՝ եկն՝ անդ կատարեցաւ, կամ ոմանք

ումանք համարին՝ ի կեսարիա պաղեստինոյ։ Ո այս աւանդուն քազմօք հաստատեն քոլ-
ջանդեանք ըստ պէսպէս գլխոց. և ոչինչ ե երկբայելի. իսկ թէ զինչպիսի օրինակաւ
եղև երթևեկ սբ. յակոբայ յԵն սպանիոյ, և զինչ հանգամանք լուսաւորութե նոյ, չիք
ինչ յայտնի և յաղագային աւանդուե նոյ։
Ա՝իայն թէ ամ եկեղեցիք սպանիոյ, և՝ի մանաւորի եկեղեցին եղբայրակցուե սարա-
կոզայ՝ կամ կեսարաւգուստայ արագոնացւոց, անուանեալն Ջծածին քիլարի, աւանդեն՝ի
սկզբանե և այսր զայս ինչ, թէ եկեալ անդր սբ. յակոբայ, ՝ի գիշերի միում եւ աշակեր-
տաքն հանդերձ կալ յաղօթս, և ուսուցանել զնա առ գետուին՝ որ կոչի էբերիս կամ եբրոս.
յայնժամ երևեցաւ նմա ամենօրհնել Ջծած-
մայրն (որ տակաւին կենդանի էր), քաղմել
՝ի վերայ մարմարիոնեայ սեան, կամ քարձր
խարսխի՝ ի յասպիս քարե, շուրջ պատեալ
յերկնաւոր զուարճութեանց։ Եւ էբրև երկիր
եպագ նմա յակոբոս, ասե ցնա տիրամայր
կոյսն. յայսմ տեղւոջ շինեսջի՛ր եկեղեցի
յանուն իմ. քանզի գիտեմ ես, զի այս գա-
ւառ սպանիոյ լինիցի ինձ ջերմեռանդն պաշ-
տօնեայ, և ես եղէց նոյ պաշտպան։ Եւ էբ-
րև անէրևոյթ եղև տեսիլն, արար առա-
քեալն զ հրամանի տիրուհւոյն. և՝ի մատ-
ռան՝ զոր շինեաց անդ, եդ և զսիւնն զայն։
Ա՝յսմ աւանդուե հաստատութի գտեալ են
սպանիացիք և՝ի Ջաւրնտրի միում հայոց
գտեալ յեղեմ, զոր յօրինեալ է ասեն պատ-
րի-

բիարքն Հայոց՝ որ անդ, յամի ՌՃՃ 1054. ըստ որում նշանակեն աստանօր բոլլանդեանք. յերես. 69. հատոր. 298։ Այս և այս, թէ ըստ սքոյն յակոբայ էին և եօթն աշակերտք նր՝ անուանեալք, գալոկերոս, բասիլիոս, պիոս, խռիսոսիգոնոս, Թէոդորոս, աթանասիոս, և մնաքսիմոս. բայց քանզի ոչ ետես ասեն առաքեալն՝ ի սպանիա զայնչափ պտուղ հոգւոց, դարձաւ անդրէն յԵրէմ. ուր սահմանեալ էր ի տնէ լինել կատարումն նր։

Այս իբրև գլխատեցաւ նա առաքեալն, մարմին նորա կամ՝ ի ձեռն աշակերտաց, և կամ աքանչելեօք բերեալ եղև՝ ի սպանիա՝ ի կոմ պոստեղա քաղաքն գաղեկիոյ. որ և ցարդ ևս մեծ ուխտատեղի՝ ամ հրաշալի նշանօք փայլէ. զորմէ բազմապատիկ են քանք առ արևմտեան մատենագիրս. ոմն է տեսանել Ճոխագոյն և առ բոլլանդեանս։ Ոնոյն աւանդէ և յայսմաւուրք մեր այսպիսի ոճով. *Յակովբոս վ՚ը յայտնի կալոյն և հարարձակ զՀրէայսն յանդիմանելոյն՝ փուքթով գլխատեցաւ՝ ի Հերովդէէ. և զմարմինն ընկեցեալ՝ ի ծով՝ ծովն տարեալ եհան՝ ի սպանիա՝ ի վիճակն իւր սեպհական. ուր յաւուրջ գնացեալ էր անդ, և քարոզեալ զաւետարանն փրկուԹէ. և ապա դարձեալ եկն Երէմ, և սպանաւ՝ ի կեսարիա, որ արդ ասի զաղուն։ Այս հրեշտակ տնն առեալ զգլուխն յակոբայ՝ ի ժամ գլխատմանն, և տարեալ Երէմ, եդ առաջի՝ որ ածածկին, մինչդեռ նստեալ սրգային՝ ի միասին ածամայրն մարիամ, և տն

եղ-

եղբայրն յակովբոս, և աւետարանիչն յով-
հաննէս զմահն յակոբայ. քանզի ազդեցաւ
նոյ, եթէ եսպան զնա հերովդէս: Յորժամ տե-
սին զգլուխն յակոբայ, արարին կոծ մեծ ՚ի
վերն. և ապա ամիսս եցին ՚ի պատշաճա-
ւոր տեղւոջ. որ է այժմ վանք հոյակապ և
հռչակաւոր մեզ հայոց ազգիս:

Այլ ՚ի գլխատմանն սրբոյ առաքելոյն՝ կին ոմն
մեծազգի ՚ի սպանիոյ. որ աշակերտեալ էր
նմա, և եկեալ էր ընդ նմա յերկիր, (կոչեցեալ
յայլոց իւրիա փլոբիա,) ետ կաշառս գահ-
ճացն. և առեալ զսրբոյ անգլուխ մարմինն՝ տա-
րաւ ՚ի յոպպէ, զի տարցէ ՚ի սպանիա. և կա
պեաց ՚ի քար լինել յերկր ծովին, մինչև նաւ
հանդիպեսցի. և կամօքն այ արձակեցաւ սրբ
մարմին առաքելոյն, և ալիք ծովուն տարեալ
հանին ՚ի սպանիա: Այս հանդիպեալ կուրի՝
որ լուսանայր զձեռն իւր ՚ի ջուր գետոյն, իբ-
րև եհաս ձեռն կուրին ՚ի մարմին սրբոյն, և
եհար զջուրն յերեսն, բացան աչք նորա, և
ետես զսրբ մարմինն. և առժամայն ձայն
բարձեալ աղաղակեաց, եթէ եկայք տեսէք
զանգլուխ աճս, որ եբաց զխաւարեալ աչս
իմ: Այս եկեալ բարձին և պատուէրեցին սրբ
մարմինն. և անուանեցին անգլուխ աճ.
մինչև գնաց պօղոս առաքեալն, և կինն այն
մեծազգի, որ կամէր տանել զնա յիւր իւր.
և ասացին և ուսուցին սպանիացւոց, թէ ո՛չ
է դա աճ, այլ՝ ծառայ այ և առաքեալ նր ||:
Այս բանք թէպէտև մասամբ լինն ընդունելի
են սպանիացի մատենագրաց, բայց նք կա-

մին՝ զի և գլուխս սքոյն յակոբայ էցէ առ իւրեանս . մանաւանդ թէ՝ հաւատքին առ իւրեանս ունել զգլուխս երկոցունց սքոյ յակոբ անուանելոց , որդւոյն կեբեդեայ՝ և եղբօր նորա . այլ յայտ իսկ է՝ թէ շիտակ և աննւոյն աւանդութիւնք են և առ նա . վասն այսր ասացի գլուխս յակոբոս կեբեդեայ յերկիր՝ ի վանս հայոց . իսկ ի սպանիա էին թերևս գլուխք յակոբայ եղբօր նորա և յակոբոս ալփեան՝ զորս պերճ անգլուխ պատուական նշխարօք յակոբայ կեբեդեան . թէպէտև անտի ևս սփռեալ են մասունք ոսկերաց նոր ոչ սակաւ ի զանազան տեղիս :

Այս ինչ ստոյգ է , զի ոմն զսամփսոնէ ասէ գիր , թէ մեծ ևս յաղթութիւն արար ի մահուանն անդ իւրում քան առ կենդանութիւնն . այնպէս և մարմին մեծին յակոբայ մեծա մեծս արար և առնէ հանապազ յԱն սպասնիացւոց՝ քան եթէ քարոզուէր նոր առաջին . զի ոմն ընաձակ յառաջ բերեն բռլանդեանք ի զանազան մատենագրաց և ի յիշատակագրաց դարուց ի դարս , անբաւ սքանչելիք և գերահրաշ զօրութիւնք ցուցեալ եղեն և լինին ի ձեռն սքոյն յակոբայ առաքելոյ . մինչ զի թէպէտև յայմ տեղիս վկայեալ է զօրաւոր քարեխօսութիւն նր , այլ ի սպանիա առաւել ցուցանէ որդին որոտման իբրև ի սեպհական վիճակի իւրում զահաւոր և զհրաշալի հնչմունս և զթոլմունս լուսափայլս : Յայս վայր վե՛ս մեծին յակոբայ :

ՎԱՐՔ ՆՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Աքեն Յովհաննու առաքելոյ և ծածաբան աւետարանչի :

Ի . քեզիպ . 28 . և աբեպ . 26 . և Տայ . 8 : Յ . աբեպ : 26 . և Տայ . 8 : Լ . քեզիպ . 27 . և Տայ . 6 : Լ՛առբնպ . Ը . ոճ = ոճէ . և Ր . ճճդ . ճճէ : Տօնապատճառ : Ա՛բեպաէր . առ առաբ . քեզիպ . 27 . և այլ : Լ՛սեբէ . Ճ . 18 . և 23 : Լ՛առ և նբբոզեանդ Կարգ : (1)

ՐԱՍՏ ՄՈՒԹԲԱՆ ԱՒՐԱՆ

դուբե Կարգ և վկայագրաց՝ սկրբելի աշակերտն Յովհաննէս որդին որոտման , յետ կալոյ յեկեմ՛ի սպասաւորբ ածածնի , ոչ և յանձնեցաւ նմա՛ի վրկչէն , մինչև՛ի փոխուիլն նոր յերկինս , ապա ընդեցաւ քարոզութիւնբ՛ի զանազան տեղիս արևելից , առաւել՛ի կողմանս փոքրուն ասիոյ . ուր և յեփեսոս հաստատեաց զաթոռ իսր : Ասացեն՝ որ. ասեն , թէ ընդեցաւ առ ժամանակ մի և՛ի մեծն ասիա մինչև՛ի պարթևաս յո՛ի հայս և՛ի պարսս , և աս և՛ի հնդիկս . և ըստ այսմ համարի օգոստինոս՝ հանգերձ այլովք՛ի նախնեաց , թէ առաջին թուղթ կաթուղիկեացց յովհաննու գրե-

գրեցաւ առ պարթևս . ըստ որում և կայր ի
խորագիրս հին օրինակաց ինչ ։

Ապրդ ի գալ սքին յովհաննու յեփեսոս՝ ասէ ,
թէ նախ աղօթիւք հիմնայատակ արար զմե-
հեանն ամաղոնաց կոչեցեալ . և այլ ևս սքան-
չելիօք և ահաբեկն քարոզութեն և հրեշտա-
կային վարուքն դարձոյց զբազումս ի հելլե-
նացւոց յաճախպաշտութենի ։ Այս եղև ըստ ժամա-
նակս դոմետիանոսի՝ զկնի վեսպասիանոսի և
տիտոսի , յորժամ երանելին յովհաննէս շըր-
ջէր յասիա և աւետարանէր զքն , եհաս համ
բաւ նր առ կայսր . վասն ըմբռնեալ հրամա-
նաւ նորա՝ առաքեցաւ կապանօք ի հռոմ .
ուր ի յանդիմանել առաքելոյն զկուռս հե-
թանոսաց՝ արկաւ ի կատսայ եռանդան ձի-
թոյ , և ել անտի անվնաս . և ի գործել այլ
ևս նշանս մեծամեծս՝ արտասահմանն արար
զնա դոմետիանոս ի պատմոս կղզի եգէա-
կան ծովուն , ոմն ամենեքեան աւանդեն . ըստ
որում յիշի և ի գիրս յայտնութենէ նր ։

Յայսմ վայրի ձախափոյն պատմէ ձառըն-
տիրն մեր իբրև ի բերանոյ պրոխորոսի աշա-
կերտի առաքելոյն (որ և պռոխռոս , որիշ
ի միոյ յեօթանց սարկաւագաց) , թէ եր այր
մի կախարդ ի պատմոս կղզւոյն՝ ոմն զմի ի
դից համարեալ ի քնակչաց . և անուն նորա
կինոպաս ։ Ցեսեալ սորա զգործս յովհան-
նու , զի բանիւք և զօրութեամբ գեր ի վերոյ
գտեալ՝ կործաներ զմեհեանս կռոց , և խոր-
տակեալ զբազինս արտեմիդեայ և ապողո-
նի՝ համարձակութեք քարոզէր զքն աճ , հնա-

րեցաւ ի ձեռն դիւոց սպանանել զնոր առաքեալն և վաւեւտարանիչն քրիստոս, բայց ի դեր եւ ելին ամ հնարք նոր. արար կինովպաս և զայլ դիւական նշանս պատիրս, այլ յաղթեցաւ և յամօթ եղև յերեսաց Ճշմարիտ սքանչելեաց՝ զոր առնէր ած ի ձեռն յովհաննու. մինչև չարաչար կորեաւ կախարդն, և քնաքիչ պատմութիւն բաղում մասամբ հաւատացին յած, զի ծանեան Ճշմարտապէս զքրիստոս զօր զօրութեան։

Եւ եղև յետ վախճանին դոմետիանոսի իբրև թագեաց ներուանս այր իմաստուն և խաղաղասէր, որ ոչ արգելոյր զքրիստոնական վիպաւթինն, և ոչ հակառակէր ումեք ի քրիստոնէից, լուեալ վասն յովհաննու՝ եթէ այր առաքինի է և սքանչելի, առանձին հրովարտակ գրեաց վասն դարձի նոր յաքսորանաց անտի յաթոռ իւր յեփեսոս։ Օ այն գիտացեալ քնարկաց կղզւոյն պատմութի՝ յորոց բաղումք աշակերտեալ էին նմա, ժողովեալ գայլն առնա դասք դասք, և աղաչէին զնա, ոմն զի մի մեկնեսցի ի նոցանէ զամ աւուրս կենաց իւրոց։ Ասէ ցնոսա յովհաննէս. մի այդպիսի ծանրութի բառնայք հոգւոյս իմոյ ծրդեակք. քան առաքեաց զիս առ ձեզ, ոմն և կամեցաւ՝ լուսաւորել զձեզ. և այժմ հրամայեաց ինձ դառնալ յեփեսոս՝ վասն բազում հիւանդութեց (հոգւոյ) եկեղեց անդ յեղբարան մեր։ Յայնժամ անկեալ նմա ամենեցուն առաջի նորա ի վայր երեսաց իւրեանց՝ արտասուելով աղաչէին զնա, և ասէին. վարդապետ բարի, ո

թուիցեն ոչ կամիս մնալ ի կղզւոջս, և ըզմնաս ածեր որք թողուլ զմեզ, տուր մեզ գրով պատմուճե զնմ զնչանս և զարուեստս՝ զոր տեսեր յորդւոյն այ, և զբանս՝ զոր լուար ի նը բերանոյ նր. ոպ զի մի մոլորեցուս որոշեսցուք ի նմանէ և ի լուսաւոր վիպուէդ քումմէ, այլ հաստատիմն և անխախտելի եղիցուք։

Ա.սէ ցնա յովհաննէս. լուարուք որդիք լուսոյ. ապաքէն ցայս վայր լուսաք յինէն կենդանի բարբառով յաղագս նշանացն՝ զոր արար որդին այ առաջի աչաց մերոց, և ըզբանսն՝ զոր խօսեցաւ ընդ իս և ընդ այլ առաքեալսն՝ առ ի վիպել տիեզերաց. և մեր ընկալեալ ինմանէ՝ աւետարանեցաք և քարոզեցաք յաղագս նծուածնե նր. արդ ի դմին կայջիք. քանզի այս բաւական է առ ի ընդունել ձեզ զկեանսն յաւիտենական։ Օ այս ասեր սքն յովհաննէս, զի շատ համարէր ըզգրեալսն յերից աւետարանչաց՝ ի մատթէոս, ի մարկոս և ի ղուկայ, որք սկսեալ էին տարածիլ յն, հանդերձ կենդանի քարոզութիւնն ամ առաքելոց և աշակերտաց։

Ա.յլ իբրև շատ ստիպեցին զերանելին, ասէ ցնա. երթայք որդեակք իմ իւրաքանչիւր ի տուն իւր. և ես հայցեմ ի տնէ. և եթէ հրամայէ ինձ, տաց ձեզ զինդրուածս ձեր. և նք երկրպագեալ սքին ուրախութիւն գնացին ի տունս իւրեանց։ Ա.յն առեալ զիս յովհաննու (ասէ պրոխորոն,) եկաք ի քաղաքն արտաքոյ իբր մղոնաւ մի ի տեղի լուսաքե.

քանզի և անուն տեղւոյն դադարումն կո-
չեր . և կայր անդ Լեառն մի փոքր , և ելեալ
մեր անդ դադարեցաք աւուրս վեց ։

Եւ արարեալ յովհաննու զաւուրսն զայնո-
սիկ առանց կերակրոյ՝ առ ի յաղօթել և ի
հայցել յայ զբարի աւետարանուն եղբարցն ,
ի չորրորդում աւուրն ասէ ցիս . որդեակ
պրոխորոն՝ ընթացիր և երթ ի քաղաքն , և
բեր այսր քարտէզ և թանաք . և մի գիտաս
ցէ ոք յեղբարցն , եթէ յորմէ տեղւոջ եմք .
և դու ևս արա անդ աւուրս երկու , և ապա
եկ առ իս լռելեայն ։ Եւ իմ երթեալ արար
ըի այնպես . և իբրև եկի , գտի զնա յաղօթս ։
Եւ ասէ ցիս . առ զթանաքդ և զքարտէսդ ,
և կաց ընդ աջմէ իմմէ . և արարի այնպէս ։
Եւ եղև փայլատակումն և որոտումն յոյժ ,
մինչև շարժիլ տեղւոյն այնմիկ . և յահի ե-
ղեալ անկայ ի վէր երեսաց իմոց՝ պակուցեալ
մերձ ի մեռանել ։ Յայնժամ խոնարհեալ
յովհաննէս , և կալեալ զձեռանէ իմմէ՝ յա-
րոյց զիս և նստոյց ընդ աջմէ կողմանէ . և ինքն
եկաց յաղօթս . և կատարեալ զաղօթսն՝ ա-
սէ ցիս . Ցե՛ս որդեակ զգուշութիւն . զոր լինիս
և լսիցես ի բերանոյ իմմէ , գրեա՛ ի քար-
տէսդ ։

Եւ համբարձեալ զաչս իւր յերկինս , և քա-
ջեալ զբերան իւր սկսաւ ասել . * Ի սկզբանն
(կամ ի սկզբանէ) էր բանն . և բանն էր առ
Աստծ , և Աստ՛ծ էր բանն ‖ . և զոր ի կարգին՝ զնոմ
աւետարանուին աւետարանեաց՝ յոտն կա-
ւոնն , և ևս նստեալ գրեցի ։ Եւ ի կատա-
րել

րել մեր պաճառական զբանան՝ մտաք ի քաղքն, և չոգաք ի տուն տոսիպատրոսի. և ընկալեալ նոյ զմեզ բազում ցնծութիք՝ եդին մեզ տեղան, և բազմութեի կերակրոց ի նմա. և առեալ կերաք և արբաք զպէտս մեր։

Այլ ի միւսում աւուրն ասէ յովհաննէս ցտոսիպատրոս. որդեակ տոսիպատրէ արա խրնդիր ոք և դեղեցիկ մագաղաթաց, և բեր մեզ յաղագս՝ ոք գրուէ պճայլին աւետարանին. և երթեալ նոր՝ պատրաստեալ եբեր։ Յայնժամ ասէ ցնա յովհաննէս. որդեակ պրոխորոն առ զմագաղաթս, և նիստ այսր, ձևեա, և մաքուր գրեա ի դո զաւետարանդ զայդ. և ես արարի՝ որպս և հրամայեաց ինձ, ամ զգուշութիք։

Այլ յայնմհետէ ուսուցեալ աւետարանչին զբազմուն հաւատացելոց՝ կարգեաց եպիսկոպոսունս և քահանայս հանդերձ եկեղեցւովք և ուխտաւորօք ի կղզւոջն յայնմիկ. և առեալ զաւետարանն՝ տարեալ եդաք յեկեղեցւոջն։ Այլ հրամայեաց յովհաննէս ժողովիլ եղբարցն. և իբրև եկին՝ ասէ ցնս. առ զաւետարանդ և ընթերցիր առ ի լսել զդա եղբարցդ. և իմ առեալ ընթերցայ ի լուր ամենեցուն. և նք ընկալեալ մեծաւ ցնծութիք փառաւորեցին զԱծ։ Այլ ասէ ցնա յովհաննէս. առէք եղբարք, և փոխագրեցէք զդա ըստ նմին օրինակի, և դիք յամ եկեղեցիս ի կղզւոջս յայսմիկ. և առեալ նոյ զոր ի մագաղաթեայ տետրակն էր յստակ գրեալ, արարին այնպէս. իսկ զոր ի քարտէսն էր

պրեալ զառաջինն , կալաք առ մեզ ։
Եւ ասէ ցնա յովհաննէս ։ որդեա՛կ պրոխորոս
ես ելցուք յարտաքին գաւառսդ՝ առ ի վար-
դապետել մեզ և նոյ յաղագս որ աւետարա-
նիդ՝ նախ քան զերթալն մեր յեփեսոս ։ Եւ
ելեալ մեր անտի՝ շուրջ գալով , և ուսուցա-
նելով հաստարակայ՝ արարաք ամիսս վեց ։ Եւ
էր ի գեղջ միում քուրմ դիւահան մեհենից ,
որոյ որդին կոյր էր ։ և առաքեալն քրիստոս կա-
լաւ զձեռանէ նր , և ասէ , յանուն յիսուսի քրիստ
լուսաւորեա՛ց ։ և առ ժամայն լուսաւորեցաւ
աչք նորա ։ յայնժամ հաւատաց հայր ման-
կանն ։ և առեալ զնա յովհաննէս՝ տոգաք ի
տուն նոյ , և վճպել մկրտեաց զնա հանդերձ
ամ տամբն իւրեանց յանուն հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ ։ և դարձեալ մտաք ի քաղաքն ։
Եւ այսորիկ պատմէ պրոխորոս , թէ որ-
պէս միւսանգամ առանձնացեալ աւետարան-
չին ի տեղւոջ լուսնթեան՝ դադարեաց յայրի
միում աւուրս տասն ։ և արձակեաց յիւրմէ
զպրոխորոս երթալ ի քաղաքն ։ և ինքն ա-
րարեալ անդ այլ ևս աւուրս տասն առանց
կերակրոյ՝ ետես զհրաշալին զայն սեսիլ , որ
գրեալ կայ ի գիրս յայտնուե ։ զորոյ և ըզ-
գրուին հանդոյն աւետարանին ի ձեռն նո-
տարուե իւրոյ ասէ լինել պրոխորոն , և զնո-
րսն ևս օրինակ ասէ թողեալ յաւետարան-
չին ի կղզւոջ անդ պատմոսի ։
Ո՛կնի ամի երթեալ յովհաննու ի միում
աւուր , և նստեալ ի մէջ հրապարակի եկե-
ղեցւոյն ժողովելոյ՝ սկսաւ ասել ցնա ։ Տե-

սէք

աչք եղբարք և որդիք , զգուշասջիք պահեցէք զլուսաւոր վիճակիդ , զոր ընկալայք յհնէն ամարտիւք ձերովք , և փութասջիք առաջնմոտիլ կատարել զպատգամս քոյ . և եղերուք կատարելապէս որդիք լուսոյ . զի ա՛ հաւասիկ մերձեալ է ժամ առ ի հրաժարել ինձ ի ձենջ , և նաւել յեփեսոս ։ Եւ յասել նմ արտասուօք , հայր մեր բարի՝ մի որք Թո զուր զմեզ գծառայս և զորդիս քո , ասէ ցնա . սիրելիք իմ ուսուցերք և դաստերք բարեմիտք , ուրախ լերուք ի քո յո ի տեր մեր . զի նա հրամայեաց ինձ երթալ յեփեսոս ։

Եւ ի միւսում աւուրն գտեալ պատրաստական նաւ՝ որ երթայր յեփեսոս , աղօթս արարեալ հրաժարեցաք յեղբարց անտի , և մտաք ի նաւն . և նաւեալք իբրև աւուրս չորեքտասան՝ հասաք ի տեղի մի մերձ յեփեսոս տան մշտնաւ ։ Եւ եկէք մեր ի ցամաք՝ հետևեալով չոգաք և մտաք ի քաղաքն . և լուեալ եղբարցն՝ ժողովեցան առ մեզ մեծաւ ուրախութիւ ի տեղին , յորում նստեալ հանգչէաք ։

Եւ եկեալ դաննէս եփեսացի՝ դիտակորիդի որդին , առեալ տարաւ զմեզ ի տուն իւր . քանզի հայր նորա ախձանեալ էր (երբեմն ասպնջականն յովհաննու) . և դադարեցաք առ նմա . և անդ գային եղբարքն ամենեքեան , և ուսանէին ի յովհաննէ . մինչև հաւանեալ եփեսացւոցն առ հասարակ բանիւ և գործով յովհաննու ։

Ստանօր դնէ պրոխորոն այսպիսի հաշիւ ժա-

ժամանակի . մինչ՝ եկաք ասէ զառաջինն յե-
րուսաղէմ յասիա , էր յովհաննէս ամաց ճ .
և եօ էի ամաց ՟. և եղեաք արտաքոյ եփեսո-
սի ՛ի քարոզուելն ամն ՟ի . և նախ քան զաք-
սորին մեր արարաք եփեսոս ամն ԺԵ . և ՛ի
պատմոս կղզւոյն յաքսորանն արարաք ամն
ԺՀ . և յետ գալոյն մերոյ յաքսորանացն ա-
րարաք եփեսոս ամս ՟ . (որ վերինպակաս գրի
ինչ) : Այս այս հաշիւ քաջ ստուգի՝ հայելով
՛ի հաստատուն ձեռին գարձի աքսորանաց յա-
ռաջին ամի տրայիանոսի՝ ըստ հրամանի նա-
խորդի նոր ներսէսեայ , որ երկեամ ամի և եւթ
թագրեաց՝ յամի տեն իբր 96 , և 97 . վասն և աք-
սորանքն ՛ի պատմոս լինի յառաջին ամի դո-
մետիանոսի , ոյ յամի տեն 81 . ոյր և գալուստ
յովհաննու զառաջինն յեֆեմ յասիա՝ լինի
յամի տեն իբր 57 . և զի յայնժամ ասի լինել
լինքն յիսուն ամաց , գտանի իբրու եօթին կիր
տասն ամօք յետոյ ծնեալ ՟ք զփրկիչն և ըզ-
վարդապետն իւր . որ գեղեցիկ միաբանի ընդ
ընթացից վարուց իւրոց . զոր օրինակ և վախ-
ճանն լինի ՛ի հասակի աւելի քան զհինսուն
ամաց , ոյր և գնեն ամենեքին . զորմէ ժամ
կ ասել :

Ա՛րդ՝ ձառընտիրն մեր մեծ , ուստի առաք
զնախագրեալ քանս , աստ վախճան տայ պատ-
մուելեն . որոյ համար երևի զհետ գալ միւս հան-
դիսացեալ հատուածք գրուելեն պրոխորոսի
վասն հանգստեան կամ ննջման աւետարանչին ,
որ ակսանի՝ Այր ընդ եղբարս , և գտանի ՛ի բա-
զում մատեանս , և յօրինակս լինչ ածաշնչի

՛ի

՚ի վերջկոյս. այլ քանզի այլք նախ քան զնոսա
ննջեցին յովհաննու աւանդեն և ինչ ինչ,
նշանակեցուք ՚ի կարդիս։

Պատմէ կղեմէս աղեքսանդրացի առ եւսեբի, զոր յիշէ և ոսկեբերան այլովքն հանդերձ, թէ յետ դարձին ՚ի պատմոսէ՝ յորժամ շրջէր միւսանգամ յովհաննէս յասիա ՚ի կողմանս եփեսոսի ՚ի քարոզուել աւետարանին, գտեալ երիտասարդ մի գօրաւոր և գեղեցիկ՝ որ եւայր Հոգւով, սիրեաց զնա, և յանձնեաց եպսի ումեք յեկեղեցւոջ առաջի քան՝ բարւոք խնամ տանել նմա, և դաստիարակել ՚ի հաւատս և ՚ի վարս բարիս. և նա արար զայն, մինչև մկրտեաց զնա. և այնուհետև արձակեաց յիւրմէ իբրև հաստատեալ ՚ի քն, անփոյթ արարեալ ՚ի բազում հոգաբարձուէ և ՚ի պահելոյ։ Յայնժամ ժողովեցան առ նա աննդակիցք նր, և հրապուրեալ ՚ի Թուլամորթ վարս ղեղխուէ՝ արարին զնա չար քան զառաջինն. մինչև լինել աւազակ և աւազակապետ և սպանօղ։

Ոչեպ եղև յովհաննու գալ միւսանգամ ՚ի քաղաք անդր. և ասէ ցեպան. տուր մեզ ՚ի դուրս զաւանդն զայն, զոր ես և քն տուաք ՚ի քեզ՝ առաջի վկայութեն եկեղեցւոյս այսորիկ՝ յորում դուզ կաս։ Ասէ նա զառաջինն զարմացաւ, եթէ արծաթի խնդրիցէ արդեօք, զոր չէ լուր առեալ. այլ իբրև ասաց յովհաննէս, զերիտասարդն զայն խնդրեմ, և զհոգի եղբօրն պահանջեմ, յոգւոյ էհան եպսն զառնասցէս, և ասէր արտասուօք. նա մեռաւ.

ասաւ : Յովհաննէս ասէ . զնաքդ կիրերք , և որով մահուամբ : Ասէ ետեան , այ մեռաւ . զի ի բաց եկաց ի նմանէ , և աւազակ եղև չարագործն այն . և այժմ փոխանակ եկեղեցւոյ ի լերինս ջրջի հանդերձ այլովք՝ որ նման են նմա :

Այս լուեալ յովհաննու՝ ձեռն արկանէր զպարեզօտիւք իւրովք և պատառէր . և յոգւոց ելանէր լալ՝ կոծեր զերեսս իւր , և ասէր . վայ , բարւոք պահապան , զոր թողի ես հոգւոյ երիտասարդին . վաղվաղակի ձի ածէք ինձ , և այր առաջնորդ ձանապարհին ցուցանել ինձ : Ասաւ նա այնուհետև զոմանս յեկեղեցւոյ անտի և գնաց . և իբրև եհաս նա ի տեղին յայն , կալան զնա պահապանքն աւազակաց . իսկ նա ոչ փախեաւ և ոչ հրաժարեաց , այլ աղաղակեր և ասէր . վա՛ տայսորիկ իսկ եկեալ եմ ես . արդ այղ առէք տարայք զիս առ գլխաւորն ձեր :

Իսկ երիտասարդն այն կայր ճնայր ուրեք սպառազինեալ . և իբրև մերձեցաւ և ծանեաւ նա զյովհաննէս , զամօթի հարաւ , զոտս արձակեաց և փախեաւ : Իսկ յովհաննէս մոռացեալ զծերութիւն իւր , և զհետ մտեալ նմա յամ զօրութեամ իւրմէ , աղաղակեր և ասէր . զի՞ փախուցեալ ես դու ոդեակ . երկեաւր դու ի ծերունի հօրէ քումմէ . ողորմեաց ինձ ոդեակ , և մի երկնչիր . զի կայ և քո յոյս կենաց . ես տաց պէնսի քեզի փոխանակ քո . և եթէ մեռանիլ ևս իցէ փոխանակ ընդ քո , ուրախութեամբ և ցնծութեամբ յանձն

ա-

առէյ և համբերից, զոր օրինակ և ես ու մեք փոխանակ մեր. փոխանակ քո տայ զանձն իմ. կայ մնա հանդարտիկ. և հաւատա՛ ինձ, զի ես առաքեաց զիս։

Լսեկն ահբրև լուաւ, զառաջինն կայր գլխաւորեալ և՛ի խոնարհ հայեր. և ապա յետ այնորիկ ընկեց նա զգենն իւր՛ի բաց. և սկս զդողանի հարեալ՝ զահի հարեալ լայր դառնապէս։ Այս ահբրև մերձեցաւ առ նա յովհաննէս, դիրկս էարկ նմ՛ երիտասարդն, և գարձեալ արտասուօք զանձն իւր թանայր ահբրև անյոյս՛ի փրկութէ։ Լսեկ առաքեալն երաշխաւոր լիներ յայսմիկ, և երդնոյր նմա, եթէ ես թողութի խնդրեմ վ՛ես քո՛ի փրկչէն մերմէ, և քաւեացիս դու. և բուռն հարկաներ զաջոյ աւազակապետին, և դներ՛ի վ՛ր աչաց իւրոց և համբուրեր, ահբրև թէ արբեցաւ նա՛ի ձեռն ապաշխարութէ։

Այս էառ վարեաց զնա, և էած ընդ իւր յեկեղեցի. և ստէպ ստէպ պաղատանս և աղօթս մատուցաներ նա փոխանակ նր. և հանապազորդ պահօք վաստակեր և ջանայր ընդ նմա. և աղգի աղգի վայելուչ բանիւք մխիթարեր զմիտս նր. և ոչ գնաց անտի, մինչև հաստատեաց զնա՛ի հնորհս ն՛ն, և աւանդեաց՛ի ձեռս եկեղեցւոյն, տուեալ օրինակ ցուցանել մեզ՛ի ձշմարիտ ապաշխարութէն։

Յետ այսորիկ գրէ եւսեբիոս յաւանդութէ սրբոյն պօղիկարպոսի աշակերտին յովհաննու՝ ընդ յառաջ բերելոյ սրբոյն երանոսի հետևողի առաքելոց, եթէ յովհաննէս առաքեալ և-

մուտ

մուտ երբեմն ՚ի բաղանիս , որպես զի լուսացի անդ . բայց իբրև գիտաց՝ եթէ ՚ի ներքս է Կերինթոս աղանդապետն , ոստեաւ ՚ի տեղւոջէ իւրմէ , և փախեաւ ՚ի դուրս . զի ոչ համբեր նա լինել ՚ի ներքոյ յարկին՝ յորում էր նա . և ասէր ցայնոսիկ՝ որ ընդ նմա էին . փախիցուք , գուցէ և բաղանիքս փլանիցին . զի ՚ի սմա է Կերինթոս թշնամի Ճշմարտութեան :

Ասզում և այլ առանձին աւանդութիւնք են վասն աւետարանչին յովհաննու առ զանազան վկայագիրս . յորոց մի է և այն յիշատակեալն ՚ի հերոնիմոսէ՝ միաձայն ընդ գրելոցն ՚ի սմա աւետարանի նորա և ՚ի Թուղթս , թէ ստէպ խրատեր զաշակերտսն առաւել քան զամենայն ինչ յիշել զնոն պատուիրան՝ որ վասն սիրելոյ զմիմեանս . և յամի ՚ի բանս երկրորդել , սիրեսջիք սիրեցէք զմիմեանս . զի սէր յայ է , և ամէն սէր է . ուստի և ինքն երանելին կոչի և է՝ սիրոյ աշակերտ , և աշակերտն այն՝ զոր սիրէրն յն : Ասէ յասել երբեմն հաւատացելոց ցնա . վարդապետ , միշտ սէր քարոզես . այլ կամիմք , զի և այլ ինչ բան խրատու Թողցես մեզ յիշատակ , ետ ասեն պինդ . եթէ սէր լինիցի ՚ի ձեզ , շատ է այդ . և չէ ինչ այլ պիտոյ . զի ամէն բան յայն պատուիրան բովանդակի :

Նոյն աւանդութիւն այն առեալ յաբդիասայ՝ ՚ի հին , բայց յանվաւերական գրէն , թէ տրճնեալ էին յովհաննու զբաժակ մահու Թուեալից՝ ոմանք ՚ի հերձուածողաց , և ՚ի խա-

չա-

չակնքել նոր զբաժակն՝ խորտակեալ լոցէ, կամ արբեալ նոր զայն՝ ոչինչ ընասեալ լոցէ, ի վեր այլոյ անձին գրի ի մետափրաստիսէ ընտրեալ ձակ պատմուճէ ի վարս յովհաննու։ Որ ասէ այր մի ի հեթանոսաց անկեալ ընծան պատուէրք դրամոց. սա նեղէր ի պարտատէրց և ընկղմեալ յանյուսութեն՝ գնաց խնդրել հնարս ի հրէից ումեմնէ. և նա քանզի էր դեղագործ և դեղատու, ետ նմա բաժակ դեղոյ, ըմպարբեցէ և զերծցի ի հոգոց՝ դեղամահ լինելով։ Ասէ այրն երթեալ ի տուն իւր՝ այն ինչ բուռն առնէր անձին ըմպել զթոյնն մահառիթ, յիշեաց զսովորուն քրիստոնէից վերս օրհնելոյ զուտելիս և զըմպելիս. և խաչակնքեալ ի վեր բաժակին՝ հարբ զայն. և զօրութեբ սքէ նշանին եղև նմա չար և ոչինչ։ Այս յետ միւսանգամ փորձելոյ զնոյն փորձ, իբրև պատմեաց հրէին զերան, ի միտս եկն հրէայն, և գնացեալ առ նբն յովհաննէս աւետարանիչն՝ հաւատաց ի խաչելեալն քր, և մկրտեցաւ. յայնժամ կոչեաց յովհաննէս և զայրն զայն զհեթանոս, և դարձոյց զնա ևս ի քր. և ասաց նմ առնուլ բռամբ խոտ, և տալ պարտատէրց իւրոց. և գտաւ խոտն ի ձեռս նր ոսկի ընտիր. և այնպէս հատոյց զպարտսն։ Այլ մեք յևս ստուգագոյն աւանդս եկեսցուք, որ վերս փոխման նբ աւետարանչին։

Որքն հնախօսք առհասարակ, թէ սքն յովհաննէս գիտացեալ զօր փոխման իւրոյ յաշխարհն՝ յետ տալոյ աշակերտաց իւրոց զվեր-

ջին

ջին խրատս իւր և զօրհնութիւն, եւ թանալ
գերեզման անձին, և անդ ննջեաց իբրև ի
քուն. և այս ընարձակ գրեալ կայ յառան-
ձին ընթերցուածն՝ որոյ սկիզբն է. * Այր ե
եղբարսն երանելին յովհաննէս մեծաւ ու-
րախութիւն ի տեր ||. և կատարածն. * Այս ա-
պա կնքեալ զայմ գինքն, և ասացեալ՝ թէ
դու լեր ես իս տեր իմ յիս քո. և կողմնեցաւ ի
խորափոսին, ուր զհանդերձն իւր տարա-
ծեաց: Այս ասացեալ ցմեզ, խաղաղութիւն
ես ձեզ եղբարք. և մինչդեռ մեք ուրախ էաք
և լայաք, աւանդեաց զհոգին ի ձեռն տեն
նը առաքելն և աւետարանչին յովհաննէս ||:
Որ յաւելուն ամ վկայաբանք գրել ես հին
ձառընտրին մերոյ այսպէս: * Այս երթեալ
աշակերտացն ի քղքն՝ պատմեցին եղբարցն,
եթէ վախճան մեր ննջեաց յովհաննէս: Այս ե-
լեալ ոմանք յեղբարցն՝ բացին զտապանն, և
գտին զհողաթափս միայն, և զմարմինն ոչ
գտին. քանզի ածն վերափոխեաց զյովհան-
նէս, ոչ ինքն կամեցաւ || : Այր մետափրաս-
տէս ի վեր բերէ. * և յաւելաւ նա յենովք
և յեղիա թեսբացի || : Այսկ յայսմաւուրքն ա-
սէ. * ոչ գտին ջոր մարմին աւետարանչին,
զի վերափոխեալ էր առ ինր կատարեալ յա-
րութիւն, ոչ զի կուսին մարիամու հոգևոր
մօրն իւրոյ ածածնին || : Այր է հաւանելի կար-
ծիք. այլ ստոյգն է անգիտելի, և խորհուրդ
թաքուն. ես որում և անթարգմանելի մնայ
բանն ինն ասացեալ առ պետրոս զյովհաննէ.
* եթէ կամիմ, զի կացցէ դա, մինչև ես
գամ ||:

գամ ‖ . որ առ առաքելովք անդամ էր ընդ
խնդրով . և ինքն իսկ յովհաննէս ՚ի մեկնել
անդ զայն բան՝ թողու անլուծանելի , այս-
պէս ասելով . * Այս է քանս այս յեղբարս .
և համարեցան՝ թէ աշակերտն այն ոչ մեռա-
նիցի . և ոչ ասաց նմա յն , եթէ ոչ մեռանի-
ցի , այլ թէ կամիմ ես , թէ կացցէ զա մին-
չև ես գամ ‖ : Այդ եթէ զմիւսանգամ
գալստեանէ խնասցուք , լինի վիճակ յովհան-
նու հանգոյն ենովքայ և եղիայի . ապա ե-
թէ աւգուք զգալուստն յընունելութի հոգ-
ւոյն ՚ի փոխման ներ , լինի վերափոխելհան-
գոյն տիրամօրն : Այս զի ոչ գտան երբեք և
յլկնի գարս մաատունք ինչ նշխարաց նը աւե-
տարանչին , յայս կարծիս հաստատեցան քա-
զումք : Այլ մեզ կարևոր քան զամ է յար-
գել և պահել զնծաւթան վիպուն ներ և զհո-
գեկեցոյց խրատս սիրոյ՝ արժանի լինել մա-
սին սրբուն նորա և երկնաւոր պսակացն ՚ի
քն յն ՚ի նմա մեր . որում փառք յաւիտեանս ,
ամէն :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Քանզի յընթացս պատմուէ վաղբիւրան նշանա-
կեցաք , յորոց առեալ լինին իւրաքանչիւր աւանդուածք
՚ի վր վարուց որդւոցն որոտման , չէ հարկ այնուհե-
տև խոյլ և խնդիր առնել ՚ի վր նոցին իրաց . Թող զի
եթէ կամեաք յերկարել ծանօթուիս ը պէսպէս խնդ-
րոց՝ որ առ հարս և մեկնիչս , առ վկայաբանս և քննիչս,
զնրաց վերաբերելոց առ յովհաննէս կի առ յակոբոս ,

հատոր մի լիներ առանձին : Ո՞ւր Թուղց զայն, ուր կամ
և ինչ ինչ անատոյգ . զոր ոչ միայն յետունք, այլև հին
երևելի մատենագիրք յիշեն . և դժուարին է վեր՛ի վե-
րոյ բանիւք ստուգել կամ ստել զայնպիսիս . որպէս և՛ի
զուր ձգնին ոմանք ՛ի խուզարկուաց . ոչ է ասելն պո-
ղիկրատայ եւթսին եպիեսացւոց առ եւսեբեայ, թէ յով-
հաննէս աւետարանչին կրեր ՛ի Ճակատու Թիլթեղն ոս-
կի հանգոյն քհնյապետի . և ասելն յովհաննէս կաթո-
ղիկոսին մերոյ արտաքոյ հաստակաց կարծեաց, թէ
մարմին յովհաննու աւետարանչի գտեալ լոկ յեփեսոս,
և փոխադրեալ ՛ի բիւզանդիա . ուր այսպիսեաց գոյա-
նին և՛ ձայնակիցք և՛ դիմախօսք . ոչ նշանակէ ասանի-
նի անտրոչ բանիւք . Թո՛ղ ուր և զգրուեն աւետարանին
ոմանք յեփեսոս ասեն, և ոմանք ՛ի պատմս : Մեզ չատ
լոյսն պրեալքս եթէ՛ իբրև աներկբայելի, և եթէ՛ իբ-
րև հաւանելի :

Մնայն վ՛ ասանդուեն նախնեաց, թէ ուսոյին Թուղթն
յովհաննու գրեցաւ առ պարթևս, բերցուք զբանս մերոյ
՛ի նոր մեկնից . ՚ի յակոբայ գերբինի, որ ուն՛ի յառաջա-
բանի մեկն . այնր Թղթոյ այսպէս . * Թէպէտև կաթո-
,, ղիկէ, ՚ի ընդհանրական է Թուղթս, ՛ի պէտս հաւա-
,, տացելոց՝ որ ընծամտելոս, բայց յանուանէ ոմն պա-
,, նաս առաքեալ համարին սբն օգոստինոս (յղ. կոնտ.
,, աէպ. Է. 39), իսաակիոս (յղ. էդդոդէ), հիւգինիոս
,, պապ (կղե. ա), և յովհաննէս երկրորդ (կղե. ա. ոմ-
,, վաղէդ), և այլք : Վ՛ը զի եթէ՛ ասրուեն և եթէ՛ անուն
,, պարթևաց զայնու ժամանակաւ ընարձակ էր և հուչա-
,, կաւոր, և զպարսիկս ևս, և զայլ յոլովապոյն աղգս
,, յինքեան վտակեր, ըստ վկայելոյ յոսեպինոսի (գիրք.
,, կա. և կէ), և սերտուղիանոսի (յղ. պալէոնդ. գիրք
,, Է. և ընդդէմ հրէից), և այրինիոսի (ջ. 25) : Եւ յո-
,, լովք էին բնակեալ անդ, կէս մի ՛ի հրէից՝ և կէս մի
,, ՛ի հեթանոսաց դարձեալք ՛ի քրիստոնէութեն. ոչ ու-
,, նէին խնամատարել ՛ի գործոց առաքելոց (Է. 9), և
,, ՛ի տէրտուղիանոսէ, և ՛ի յովսեպոսէ :
,, Թո՛ղ զի անտոն կռճադրիոս պատուապետ ընկերու-
,, թեն յոհ յարևելեան հնդկաց, և մնջայել բարուղոս
,, ՛ի Թուղթան գրեալս ՛ի կուս՝ յամի տն 1555, ասեն,
,, Թէ ցարդ ևս ոմանք ՛ի պարսից՝ որք զքրիստոնեան հա-

,, ւսատս

„ ասաս ուենին, համարին ընկալեալ զայն ի սէյն յով-
„ հաննէ առաքելոյ: Քանզի և բարոնիոս (յամի 99),
„ և այլք ոչ սակաւք համարին, թէ սէյն յովհաննէս
„ յետ մահուան սիմոնի կանանացւոյ, բարթուղիմէո-
„ սի և թովմայի՝ որք անշուշտ քարոզեցին ի կոլոսանան
„ յայնոսիկ ըստ սուիրոնիոսի և ըստ այլոց, երթեալ էցէ
„ յՅեն պարսից և պարթևաց, և առեալ զնա հաւա-
„ տուն քրիստոսի ||:

Ի դնել այսր՝ ոչ սակաւ մխիթարուհի է ազգիս հայոց, որ առ առաքելովք ունէր զանուն և զերուխի պար-
թևաց՝ սկսեալ յեդեսիոյ և ի մծբնայ մինչև յայսմ սահ-
մանս հայոց մեծաց, ունել բաց ի բարթուղիմէոսէ և
ի թադէոսէ առաքեալ զծածաբան աւետարանիչն յով-
հաննէս, և արժանի լինել ընտրելոյն այնպիսի առա-
քելական թագոյ, որ է բոլորովին լի հոգւով սյ և սի-
րուն սյ և ընկերին: Եցէ՛ թէ ասասցէ առնա հայոց,
թէ առաւել առ նա ուղեալ է բովանդակ ձառ սիրոյ՝
սիրոյ աշակերտին. զի որդիք իմ՝ կարօտին յոյժ խրատու
սիրելոյ զմիմեանս. և եթէ զայս խրատ ևեթ չահես-
ցուք յընթերցուածոյ անտի թագոյն նոր, ոչ և ի լոյծ
վարուց սիրելի աշակերտին յետ, շատ է մեզ:

ՎԱՐԴԱՆ ՍՐԲՈՅՆ

Բարսղի կեսարու հայրապետին։

Յ. Ց. յունվար. 1։ Լ. յունէս. 14։ Ա՛սուքնոյ
Ի. է. ի Ի. քս. ի Ի. ոհը. յեղափոխութ հէսա-
քսաւոյ։ Իուլիանոսեան բայբրուես. ՝է Ը հաս. յու-
նէս. էլ. 807 = 957։ Ի գործս բարսղի. հաս-
Ջ. էլ. ԼԷ = ՃՄԷ։ Ալքն էիրէմ. ի գր. նէս. ի
գր. ՝աՃաբ. ի ամֆիլոխիոս. ի այլ ՝ընդբոզ բարսղի։
Ալոկրաս. սուլոմ. ընէոպորբէս. ԼՁ (1)։

ԼՈ. ՎԱՐՈՒՈՐՎԱԿԱՆ

անուն պանծալի՝ մեծն Բասիլիոս կիւվասիլիոս, որ և Բասիլեղ կեսարացի, պայծառ ջահ կաթուղիկէ եկեղեցւոյ՝ ըն Ճշդրիտ քանի ուրուն ՝ինսախինեաց (կիսոքեան ամիրլոքիոսի), և արտափայլէ արեգակն աւետարանական Ճշմարտութե, որ սիրեաց զՃառագայթս Ճծաբանութե իւրոյ ըն ՝ամ տիեզերս. կատարեալ վարուք, քանիւ գերիմաստ, զբանեղ որ գրով, և ծայրագոյն յՃծայրին և յարտաքին գիտութե՝ս, լի ՝ամ առաքինութ. սիրեն եկեղեցւոյ, զարդ քհնյապետութե և դպրոց Ճծպաշտութ. այր ՝այ, պատգամախօս միածնին հօր, տնտես հաւատարիմ և գրիչ հոգւոյն

ասէն սէյ . յորմէ սահմանեցաւ լինել ազատ-
արար եկեղեցւոյ յամ հերձուածոց՝ որպէս
երկնառաք ջանթ ջաղխէչ հրեղէն լեզուաւ
պլխոյն արխոսի , եւնոմիոսի , սաբէլի , մակե-
դոնի հոգեմարտին , ապողինարի , և ամա-
ղանդաւորաց . և եղև վէպ ոչ միայն կեսա-
րացւոց , այլև ամ Ֆի . ոչ միայն իւրուանց ժա-
մանակի , այլև ամ ժամանակաց ։

Զնաւ սէն բարեղ յաւուրս որ ժողովոյն
նիկիոյ , (ըստ ոմանց յամի 328 . և ըստ այլոց
317 .) ի կեսարիայ մայրաքաղաքէ առաջին
հայոց , որ և մաժակ գամրաց կի կապադով-
կիոյ՝ առ արգէոս լերամբ , յաղնուճական և
յազգաւոր տանէ . նախնիք նր էին ի սեբաս-
տիոյ փոքուն հայոց , այլ հայր նր համանուն
քահրիոս կոչեցեալ էր նեոկեսարացի ի պոն-
տոս , և մայրն եմեղիա ի բուն ի կեսարիոյ
կապադովկացւոց , երկոքին ևս սքք ծնող-
լիք . (ոմ և ծնողն ոմանք ի մայիսի . 30) ։
Յաւն նր մայրենի՝ նահատակեալ վ ի քր
հաւատոց ի Հալածանս դիոկղետիանոսի և
մաքսիմիանոսի . որպէս և քեռին գրիգոր ա-
նուն՝ ձեռնադրել եպս կողմանցն այնոցիկ .
(յորմէ անուն ընկալաւ և եղբայրն քարսղէ
գրիգոր նիւսացի) ։ Իսկ մանն՝ ի մայր մօրն՝
մակրինա կին ևր՝ (ծնօղ եւլի , ըստ ոմանց ի 14 .
յունվարի) էր աշակերտուհի սքոյն գրիգորի
աքանչելագործի . (յորմէ և քոյրն քարսղէ
ընկալաւ զանուանս մակրինա) ։

Էր էին եղբարք քարսղէ երեք . նաւկրա-
տիոս , որ եղև վաղամեռիկ իջ ամաց . գրի-

գոլ՝ որ եղև եպիսկոպոս. և պետրոս կրտսեր բազոյն ի զաւակս ծնողացն, որ եղև եպիսկոպոս եբաստիոյ. և քորք վեց, յորոց երեքն կուսանք, և երեքն ամուսնացեալք։ Կատարեալ ետես ի մանկուէ և ի պատանեկուէ զհանգիստ իւր զարքունին մակրինա, և լուաւ ի նմանէ զվիճակուն հին մակրինա քոյր նր՝ որ եղև երևելի արքունիք և իմաստուք, և մեծապէս սատար հոգևոր դաստիարակութեանէ եղբարց և քեռց իւրոց՝ ընդ ամենայն բարսղի։

Ընդ պարծանք բոլորեցուն տոցա անդրանիկ կիեղբարս՝ մեծն բարսեղ, որ ծնաւ որպէս ըստամուկէ պտուղ աղօթից ի տէր ծնողաց, և նաւ ի ձեռս նոցա որպէս ընծայուեալ, դաստիարակեցաւ ի հօրէն նաև յուսումն երբ պրոց և արտաքին դպրութեանէ իբրև յաւուրցին վարժապետէ. յորոյ ի դպրոցէ կայրն և ոմանք ի մանկանց հոյոց, ընդ որս և յաթենա ուսուցնակից եղև կիետոյ բարսեղ։

Գնեպ եղև բարսղի ի մանկութենէ խօսնանալ մինչև ցմահ. և ի հոգալ բասիլիոսի հօր նր՝ տեսանել ի քուն զիւրն, զի երկրորդէր առնա զաստուածային յաւետարանի առ թ գլուխն. Երթ, որդին քո կենդանի է. և ինքն ևս ըստնորին հաւատոց զհետ երթեալ՝ ընկալաւ զպատուղ հաւատոցն նոյնպէս. զի ողջացաւ բարսեղ երկրորդին, և դարձաւ յաւուրցին կայսրութենէ իւր։

Հետ վախճանել հօրն և հանուցն՝ յորժամ եր բարսեղ իբր վեշտասան ամաց, ետ զանձն յա-

յառաւել ուսումնասիրութեն ոչ միայն ՚ի կե-
սարիա կապադովկացւոց, այլև ՚ի կեսարիա
պաղեստինացւոց՝ որ առաւել ծաղկեալ էր.
և յետ դեգերելոյ ՚ի կողմանն յայնոսիկ
զամս բազումս՝ էանց ՚ի կոստանդինուպօլիս,
եբեւ ղի առաւել ինչ գտցէ յուսումնարանս
Թզրեալ քաղաքի ։ Ընդ աշակերտեցաւ ընդ
ոմանց՝ ընդանիսն հեթանոս փիլիսոփայի,
որ էր վարժապետ անուանի. այլք սակս՝
յանտիոք ասորւոց. և այլք յաթենս, ուս-
տի եւեալէր նա ՚ի բիւզանդիա ։ Ընդ յոր-
ժամ չոքաւ քարոզել ՚ի մայրն իմաստութեն
յաթենս յամի ոն իբր 343, անդ գտեալ
զգաւառականից իւր և զծանօթ զգրիգոր նա-
զիանզացի՝ յարեցաւ ՚ի նա. և գործակցու-
միմեանց յառաջադէմ լինէին յամի, թուղ զի
և յառաջագոյն կիրթ էին ՚ի կարևոր ուս-
մունս. միանգամայն և առաքինի քաղաքա-
վարութեբ իբրև հրեշտակք երևէին ՚ի մէջ
աթենացւոց ։

Նա թէպէտ բազումք էին յայնժամ վարժա-
պետք իմաստունք յաթէնս ՚ի հեղլենացւոց
անտի, այլ առաւել անուանի էր բազմութեբ
աշակերտաց և պերճախօսութեբ սուրբն կի-
պարոյրը (որ թուի) սիւնեցի կի՞ արծրունի,
՚ի յունաց կոչեցեալ բռօկրեսիօս, սուիեատէս
քրիստոնեայ հայկազուն. զորմէ վկայէ աշա-
կերտ նր հեթանոս փիլիսոփայ հելլենացի
եւնապիոս ՚ի վարս փիլիսոփայից, թէ * էր
ինքն ՚ի հայոց ծնեալ, իր ՚ի հայաստանէ, որ
՚ի խորագոյն սահմանակցութենէ պարսից ‖,

և զարձեալ՝ Թէ * բախտն զնա ՚ի մանկուէ ՚ի հայաստանէ յարուցեալ՝ յանտիոք ձգէր, զի ոչ դեպուղիղ յաթէնս եկն ‖ : Յանտիոք (ասէ) ուսեալ զձարտասանութի՝ եկն յաթէնս առ յուլիանոս վարժապետ ըէ հեփեսթիոնի, ընդ որում էր ի ոգի և ի մարմին. բայց յուլիանոսի աչք էին առաւել ՚ի վէր պատրոյրայ. զոր զկնի վէպին ընտրեցին աթենացիք յաջորդ վէպուէ : Այս պարոյրայ աշակերտեցան պոնտացիք ամ և սահմանակից ազգք. ոմն և բիւթանացիք, ասիացիք, եգիպտացիք ամ, և լիբէացիք. մինչև նախանձեալ այլոց ուսուցչաց՝ կաշառս ետուն անթիպատոսի՝ հանել զնա յաթենայ : Այս եղև յաղագս սքանչելի համբաւոյ նր կոչել զնա կոստասայ կայսեր ՚ի գաղղիա. և կենաց կցորդ և սեղանակից առնել զնա իւր ըէ ծիրանազգեացս ՚ի պալատան. մանաւանդ զի էր առաքինի և խստակրօն, առոյգանձն և գեղապանծ, և ոտնաչափ մի բարձր հասակաւ քան զամ մարդ. իսկ հանճարով և նրբութ և հեռատուութ մի միայն. մինչև յղել զնա կայսեր ՚ի հռոմ, զի և հռոմայեցիք տեսցեն զայնպիսի այր անհամեմատ, և նք այնչափ սքանչացան ըէ նա, և պատուէցին, մինչև կանգնել նմա արձան պղնձի ըստ չափու հասակի նորա՝ այսուհիկ վերտառութ, * Թագաւորեալն հռոմ՝ Թագաւորի քանից : ‖ Այս ապա արձակեաց զնա կայսրն անդրկն յաթէնս յաթոռ վարժապետութե նր, ընդհելով նմա նաև զարտաքին շուք պատ-

ուոյ՝

ուն՝ զի կոչեսցի ոստիկան կամ իշխան բանա-
կաց արքունի, առ՝ ի կարօղ լինել՝ պահան-
ջել՝ ի կղզեաց հարկս ցուրեննոյ՝ ի պետս աթե-
նացւոց։ Իսկ յաղագս վախճանի նորա այս-
պես գրէ Եւնապիոս. * պարոյր վերաչուէ՝ ի
մարդկանէ, այսչափ և այսպիսի եղեալ, և
լցեալ իւրովք բանիւք և ճառիւք զտիեզերս ||.
որում աշակերտեցայ ասէ զամս հինգ, մինչ
* էր նա ձեռ ամաց, բայց ժիր և յորդաւատ
բանիւ, գեղեցիկ յոյժ՝ ի ծերուէ ածային
այր. և գործք նր մեծամեծք և երկնայինք.
և զայս ա՛չ՝ ի ընորհս վիպիս ասեմ ||։
Եւ ահա այր այսպիսի և այսչափ՝ պարոյր
հայկազուն՝ եղև առաջին և գլխաւոր վիպ
բարսղի և գրիգորի յաթինս. յետ նր լրբա-
նիոս սոփեստիս, զոր վս հեթանոսութեն
նախապատիւ առներ ուրացօղն յուլիանոս՝ ք
զպարոյր քրիստոնեայ, ըստ որ գժկամակ լի-
նէին նոքին իսկ իմաստունք հելլենացւոց։
* Այլ այս եղև պարոյրայ անմահական յի-
շատակ (ասէ բայերտիոս բոլլանդեան), զի
աշակերտք եղեն նր սքն բարսեղ և գրիգոր.
և զի փոքր՝ ի շատէ հալածանս անգամ կրեաց
՝ի յուլիանոսէ. մանաւանդ թէ և ոչ յանձին
կալաւ զընորհն ինչ նր՝ գարշելով յամպարշ-
տութենէ նր. զի ոչ գրէ հերոնիմոս՝ ի քրոնի-
կոնն, օրէնս եդեալ յուլիանոսի՝ զի մի քրիս-
տոնեայք վարժապետ լինիցին ազատական
արուեստից, առանձինն ընորհեաց պարոյրայ
ուսուցանել զքրիստոնեայս. իսկ նա ինքնա-
կամ եթող զդպրատունն ||։ Այս՝ ի թիւրուէ

ու-

ուրացողին , այն՝ որ յառաջնմէ ըս քարտղի և
ըս գրիգորի վայելչէր յանծրմաստ վարժա-
պետութեն արդեօք , կամ գոնէ՝ ի լուր վիպու
նը . այլ եթող զչարքը ըս քրիստոնէութի նը ։
Ա՟ՅՍ և յետ ժամանակաց այսպէս գրէր սքն
քարտեղ առ ուրացողն յուլիանոս . * յուշ ա-
ծեմ քեզ զփոյթ ուսման մերոյ , որով զնք
և զպերատոյն ուսմունս՝ ի միասին ուսաք յա-
ԹԷնա , և՝ ի միասին մատեսք՝ ի վերծանութի
ածեղէն տառից ։

Պատմէ աստանօր ածաբանն գրիգոր , Թէ
կային յաԹէնս և մանկունք հայոց ուսում-
նակից քարտղի անպատին յՅԻ իւրեանց . և
՝ի նեղ արկանել սոցա զքարտեղ՝ ի նրբին
խնդիրս ինչ ուսման , ՝ի վե՟ր հասեալ՝ նախ
իրաւունս եւտու հայոց . և ապա ձարտարու
զկողմն կալեալ քարտղի՝ արարն զնա յաղԹօղ .
որով և սա քան զնս վաւերացաւ քարեկամու
որ ըս իս և ըս նա ։

Նայց քարտղի տեսեալ՝ Թէ ոչ եգիտ զա-
ԹԷնա , ոչ յուսայր , զի սիրատ նր՝ ի վերինա
խոկայր . իսկ աԹենացիք զերկրաւորգիտու-
Թի և եԹ խնդրէին , և զփառս և զվայելս՝ ի
հոգային , տխրէր յոգի իւր , և կոչէր զա-
ԹԷնա ըստնայնուԹի կիմանատ երջանկուի .
իսկ գրիգոր յորդորէր զնա մի լքանել . մին-
չև աւարտեցեն զընԹացս ուսման , և ապա
համամիտ և համակամ տացեն զանձինս՝ ի
հոգևոր վիպուն . և այսու սփոփեալ հան-
դարտէր քարտեղ առ ժամանակ մի ։ Եւ էր
քաղաքավարուԹի երկոցունց նոյ քարտղի և

գրի-

պրիպորի սքանչելի յաչս ամենեցուն . հետ յերիտասարդական ցանկութենց և ի զբօսանաց , և ամ առաքինակրօն հանդիսիւ փայլեալ . ծաղկեին և այպանէին զպաշտամունս հելլենացւոց , և պանծացեալ բերկրէին յանունն քրիստոնէական առաքինութեք զջուտէին զաչս աթենացւոց :

Յետ այսորիկ յամի 355 , երբ յետ տարւոյ միոյ ի գալատեն յուլիանոսի յաթէնա՝ բարեզ կատարեալ զուսմունս իւր , եւ յաթենայ՝ հրաժարեալ ի գրիպորէ , որպս թէ մի մարմին յերկուս էր բաժանեալ . վայ և գրիպորս ոչ յերկարեայ անդ այնուհետև . և յետ եւից սը ճնաց աթէնք ոպ մարմին անհոգի : Ընդ իբրև գարձաւ բարեզ ի հայրենիս իւր , ընկալան զնա կեսարացիք իբրև նորոգիչ և պահպանիչ քաղաքի իւրեանց , տեսեալ զնա զարդարեալ ամ գիտութեք և առաքինութեք , և հասեալ ի չափ կատարելութեն : Իսկ քոյր նր սքանչելին մակրինա (ոպ գրե եղբայր նց գրիգոր նիւսացի) խնթայեէ , զի մի արդեօք երկրաւոր իմաստութեք փքացեէ բարեզն՝ զհոգևորսքն ապախտառնիցէ , իսկ և իսկ արծարծէր զսիրտ նր ի սէրն քն և ի քրիստոնէական կատարելութեն , ոպ թե , ոպ թէ զինքնակամ ընթացօղ երիվար և ևս մտրակելով . և այնպէս առ ոտն կոխել բարեզն զամ փառս ծի և զճշմարիտ գիտութեն , եւ քարոզութեն զանձն յանծային իմաստութեն և ի վարս յետին խոնարհութեե , ոպ զմանկեա՝ որ առ երջանկացեալք յոչինչ համարեր-

բեցաւ զմեծութի գանձուցն եգիպտացւոց ։ Եւ զի էր այր, թէ երբ սկրտեցաւ բարսեղ, ասոյգ երևի՝ թէ ըստ սովորութե ոմանց ի ժամանակին՝ հանգոյն գրիգորի ածաբանի՝ յետ դարձին յաթենայ սկրտեալ էցէ . և այն՝ ի տիանոսէ պատուհասական եպիսկոպոսէն կեսարիոյ , յորմէ և կարգեցաւ դրակաւորդաց և պաշտօնեայ եկեղեցւոյ , (ոչ իմանան ոմանք ի բանից բարսղի անյայտից ի գիրսն յաղագս հոգւոյն սրբոյ) ։ Ասէ Ձառընտիրն՝ որ պատմէ մեզն բանիւ եղադիոսի կեսարացւոյ և ըստ հրաշալի օրինակ սկրտութե նմ ի դարձին յաթենական ուսմանց , ասէ՝ թէ սկրտեցաւ ի յորդանան գետ ի մաքսիմիանոսէ հայրապետէն եէմի հանգերձ եւուղոսիւ վճպաւ իւրով . (զորմէ տես ի ծանօթութե) ։ Եւ այսմ հաստատութե լինի այն , զի ըստ ամենեցուն ասելոյ բանիւ նորին բարսղի , նա յետ դարձին յաթենայ ոչ միայն յերկար ի կեսարիա , այլ բանիւ աւետարանին շարժեալ՝ թողլոյ զնմ և երթալոյ զհետ քրիստոսի , գնաց յաղեքսանդրիա և յանապատն հարց եգիպտացւոց . ընկեցաւ և ի պաղեստին և ի ստորին ասորիս և ի միջագետս առ միայնակեացս . և նախանձաւոր լեր անձուկ ճանապարհին՝ քաղեաց ի նոցանէ զծաղիկս ամ կրօնաւորական հանդիսի . որպէս և ասէ իսկ ինքն . * Եւ ի զարմանալ իմում ըստ նն՝ երանելի համարէի զկեանս սրանցն այնոցիկ , զի գործովք յայտնի կացուցանէին յանձինս բերել զմահն յիս . և ես ցանկանայի ըստ իմում

մեռմ կարի՝ հետեւօղ լինել նոյ ։

Այսպա իբրեւ զարձաւ անդրէն ի կեսարիա, թէպետեւ կամեցան ունել զնա ի պաշտօն եկեղեցւոյ, այլ նա փութայր հանդարտիլ յառանձնութէ. և ի սոյն յորդորէր գրով զգրիգոր նազիանզացին ըստ յառաջագոյն խորհրդոյ. այլ ոչ թողուին զնա առ ժամն ծնօղքն իւր. իսկ բարսեղ քանզի ոչ ունէր այն պիսի խափան, առանձնացաւ ի կողմն մի պոնտոսի. մանաւանդ զի և երանելի մայր նր եմիղիա հանդերձ մակրինաւ դստերբն իւրով փոքր մի յառաջ մեռեալ էր ի վանս կուսանաց՝ ոչինչ հեռի ի նէոկեսարիոյ ։ Յորդորէին զբարսեղ նէոկեսարացիք, զի հանգոյն հօր իւրոյ լինի վերակացու դպրոցի աշակերտել զմանկունս՝ խոստանալով նմ բազում ինչ. այլ նա ընտրեաց զառանձնութէն անապատի ի լերին միում՝ ի մէջ անտառաց խիտ մայրեաց, պարապեալ յաղօթս և ի պահս, ի ուրնութէիս և յընթերցուածս աբգրոց, և յամ ձգնութէիս ըստ օրինի կատարել միայնակեցաց, սպանանելով զանդամս մարմնոյ զերկրաւորս, և կրթելով զանձն յամ ներքին առաքինութիս. և պարզաբար յոհ հեռանալով, և մերձենալով առ ած. և զայս ամ գեղեցիկ նկարագրէ ինքնին ի թուղթն առ գրիգոր ։

Ընդր հասանէր առ նա և գրիգոր յամի իբր 358. և երկոքին ամօլք հաւատոյ՝ բանիւ և գործով յորդոր լեալ միմեանց՝ գնային զօրութէ ի զօրութէ, կ զի յառանձին խուզն

ձգնեալ,

Ձգնեալ, և ի դի իրերայ հանդիպեալ ի հո-
գևոր միխիթարուն ։ Յայնժամ ժողովեցան
և բազմութիք եղբարց առ մեծն բարսեղ,
և հայր հոգւոց և վարժիչ հոգևոր կարգաց
ծանուցեալ զնա՝ կրօնաւորեցան ըստ ձեռամբ
նը. զորս և ամ բարեկարգութիք հրահան-
գեալ՝ հանդերձ գիտնաւոր վիպութիք առ
ի լծորդել զտեսականն վարս ըստ գործնակա-
նին, աւանդեաց նոցա և գրով կանոնս գե՛ղե-
ցիկս, և մի առ մի թարգմանեաց ի լսելիս
նոցա զվիտս կանոնաց ։ Եւ յայնմհետե կարգ
սքնն բարսղի և կանոնադրութի նը հաստա-
տեցաւ յայնոսիկ կողմանս և յայլ բազում
տեղիս. մանաւանդ յորժամ զկնի ելիսութե
իւրոյ բազմացոյց զվանորայս և զվանականս,
և ի կատարեալ ձև եմոյծ զկանոնադրուիս
իւր ։

Նոսկ դրիգոր յետ կալոյ առ ձմռ մի կի զե-
րիս ամն ընդ բարսղի՝ հարկեցաւ դառնալ ի
տուն առ ծերունի հայր իւր, և ձեռնադրիլ
ի քհնյուն. բայց միւսանգամ եկն առ բար-
սեղ, և բռնագատեալ տարաւ զնա ըստ իւր ։
Եւ յաւուրսն յայնոսիկ տիանէոս արքեպն
կեսարու ի դուրս մահու հասեալ՝ կոչեաց
առ ինքն զբարսեղ. և ծանոյց նմ երդմամբ,
թէ ոսկամայ կամօք եղև սխալիլ ինձ և ստո-
րադրել հոմաձայն դաւանութե եպսց ո-
մանց ըստ հրամանի կոստանդեայ կայսեր, զի
մի պատահեսցի եկեղեցին. ապա թէ ոչ՝
ասէ, ոչ իմիք օտարացեալ եմ ես ի դաւա-
նութե երեք հարիւր ութևատասն հարց սքց

նի-

նիկիոյ , և ՚ի նոյն պատուիրեմ քեզ կալ
ճնալ հաստատուն ։ Օ այս ասէր , զի վա՛ այս-
պիսի անցից դայթակղութեն տուեալ էր նա
բարսղի և այլոց յուղղափառաց ։
՚Ի վախճանիլ տիանեայ նստաւ յաթոռ արք-
եպիսկոպոսութեն կեսարու կապադովկացւոց եւ-
սեբիոս , որ ձեռնադրեաց զբարսեղ ՚ի քա-
հանայութի . և զի տրտմեցաւ երանելին այն ,
զի անարժան զանձն համարէր , միանգա-
մայն և խափան առանձնուն իւրոյ , գրեաց
առ նա ածաբանն գրիգոր , և սիրելարեաց
զնա կամօքն ՚ի , բերելով և զանձն յօրինակ՝
թէ և ես ՚ի նոյն ըմբռնեցայ պաշտօն վան
հնազանդուն ։ Եւ այնուհետև ըն հրամա-
նի եպիսկոպոսին սկսաւ սքն բարսեղ քարո-
զել յեկեղեցւոջ զբանն ՚ի , և մեկնել ժո-
ղովրդեան զգիրս առաքից ։ Այլ ոչ եթող
և զհանդարտուեն իւր , ՚ի ձեռին
իւրում էր . զի ըն պարապելոյ առանձնանայր
՚ի տան յաղօթս և ՚ի ձգնուեն . և ժողո-
վեալ աշակերտս ՚ի կեսարացւոց անտի՝ վար-
ժէր զնա ՚ի կրօնաւորական կարգս և ՚ի կա-
նոնս իւր ։
Յաւուրսն յայնոսիկ ՚ի թագրել ուրացողին
յուլիանոսի զկնի կոստանդեայ , և ՚ի յառ-
նել գաղտնի և յայտնի հալածանաց ընդէմ
եկեղեցւոյն ՚ի , անկաւ և գժտուեն ըն մէջ
եւսեբի եպիսկոպոսին և բարսղի քահանայի .
զի մարդկային ինչ կրեաց եպն՝ ասէ ածա-
բանն , թերևս ՚ի ինաքանձ շարժեալ ըն պա-
տիր նր յաչս ՚ամ ժողովրդեան ։ Եւ զի բա-
զումք

գումք էին ի կողմն բարեպէ հանդերձ միաբանակեցօք, երկուցեալ բարեպէն՝ զի մի աղմուկ մեծ լինիցի ընդեմ եղեալսն, ըստ որում և այլք յեղեալք ունէին ինչ ինչ դժկամակութեամբ, հնարս խնդրեաց խաղաղութեամբ զիւր ցանկալի անապատն, և անդ առանձնացեալ միաբանգամ, և ածաբանն գրիգոր ընդ նմա. որ և հաշտեցոյց զեպիսն ընդ բարեպէն. բայց տակաւին կացին երկոքեան յանապատի հանգարտութեամբ դարձեալ զամն երիս։ Ա.ՅԼ յայնմ միջոցի մերթ ընդ մերթ գայր բարեպէ սատար լինել եկեղեցւոյ. մինչև երթալնոցա ի տեղիս հեռաւորս ի հրամանէ ենգեսայ, ոմն և ի քաղկեդոն և ի կոստանդինուպօլիս. այլ անձնապահ լինելով ի վիճելոյ ընդ արիանոսացոյ, զորս գիտէր անզեղջ ի չարիս. թէպէտ

զոր գրեաց ընդեմն զօրաւոր բանիւք։ Յայսմ վայրի յաւուրս քահանայութեան միաբանակեցութեան բերյն բարեպէի ասին լինել այն ամ անդք՝ որ անցին ընդ նա և ընդ յուլիանոս ուրացօղն. թէպէտև ամանք յաւուրս ենգեսայեցոյ նոր ձգեն։ Վանզի ուրացօղ կայսրն՝ որ յանչափս հալածեաց զեկեղեցին, ևս առաւել զառաջնորդս և զվիշապս, ակնածեալ ի մեծէն բարեպէէ՝ հնարեցաւ կեղծաւորել առնա զսէր իբրև առ դասակից իւր յաթենս, և գրեաց առ նա թուղթ շողոքորթ բանիւք. իսկ բերյն իմացեալ զխորամանկութիւն նր՝ յայտնեաց նմա զչարութիւն սրտի նր, և ի բաց առեալ զպատրուճակն՝ կշտամբեաց զանզգամութիւն նր և զապստամբութիւնն ի հաւատոց,

զոր

զոր երբեմն դաւաներ ։ Ասէ ուրացօղն կրկին դրեաց առ նա լրբաբար , թէ չեմ անդէտ կրօնից քրիստոնէութեանդ . ընթերցեալ է իմ առ ձգիլս ձեր . և զոր ընթերցայ , իմացայ . բայց յետոյ արհամարհեցի ։ Այլ դու ծանիր առ միմ այժմու բարձր ինքնակալուն և զօրինաւոր յաջորդութեանդ յանձն կայսերութեանդ . և յղեա առ իս հաղար լիտր ոսկւոյ ի պետս պարսկական պատերազմի ։

Ա. ու այս պինդ արար աբգն բարսեղ . * Զոր ընթերցարն , չիմացար . զի թէ իմանայիր , ոչ դատապարտ առնէիր ։ Զոր ինչ են այժմու գործեալ առ ի քէն քաջութիւնք . և յոլովագոյն չարութիւնք յարուխս անդ քաջուեն . բայց ոչ այնչափ ընդէմ մեր , այլ ոչ առ ի քոյին գլուխդ ։ Սակայն դողամ , յորժամ զմտաւ ածեմ , թէ ծիրանիդ զքեզ արկեալ , և թագն՝ որով գագաթն քո կ պսակեալ , որովհետև առանց բարեպաշտութեան քեզ տոչան , ոչ պատուհէլի , այլ անպատիւ ըզգլուխդ ցուցանեն ։ Ա. ռաւել ծաղրելի քան զքեզ ոչ զոք տեսի մինչև ցայժմ . քանզի վերացեալ և մեծացեալ՝ յայն վայր եկեր , յոր ձգեցին զքեզ դևք չարք և անողորմք . զի սոքա են՝ ոչ և դու սուրբ ես պարծիլ , որք ոչ մեղուք թագուցեալք զգլխովդ՝ պսակ քեզ բոլորեցին ։ Ա. րդ թագաւորեալ՝ սկսար ոչ միայն մեծամեծս սոնքալ , այլև ի վերայ այ բարձրամտիլ , և զբոլորից մայրն և զդայեակն զեկեղեցի Քրիստոսի նեղել ։ Ա. ւ առ իս ի կիր սրկեալ զքո ձրուն՝ պահանջես ի չին

ջին մարդոյ լտերս ոսկւոյ հաղար ... Ա. ՀԱՒ. հաձոյ Թուխեսցի քեզ ում քաջ, ներել մեզ, որք հապիհ այնչափ ինչ ունիմք, զոր եթէ պէտք իցեն ծախել, ում լինին աւուրս այսմիկ բաւական: Ա՝ ե զի արհեստ խոհակերու- Թե դադարել է՝ի տան մերում, և դանսակ ոչ մերձենայ յարիւն. լաւքն՝ի կերակրոց՝ տերևք բանջարոյ են մեզ, հանդերձ սակաւ հացիւ: ԼԵ: Յայսոսիկ հայեին աւանդուիք զանազան մատենագրաց և յայսմաւուրաց. զորոց լիցի բան՝ի ծանօթուխս. ոմն և զսա- տակմանէն յուլիանոսի՝ի պարսս՝ աղօթիւք

Ե՛ն բարսղի և Ա՛մ հաւատացելոց:

Ո՛կնի հալածանաց ուրացողին յուլիանոսի՝ի վէր եհաս եկեղեցւոյ հալածումն յերեսաց վաղեսի արիոսեան կայսեր. յայնժամ բար- սեղ և գրիգոր (ոմն պատմէ նա լինքն Ա՛ծա- բանն), իջին փութանակի յանապատէն պոն- տոսի՝ի կեսարիա՝ ձեռն տալ մեր իւրեանց եկեղեցւոյ սէյ. յայնժամ ցուցաւ մեծն բար- սեղ պարիսպ հաւատացելոց, և աշտարակ հզօր յերեսաց Թշնամւոյն, և հուր ծախիչ զփուշս յագարակի. զի ոչ միայն զուղղա- փառս ամրացոյց, այլև զչարափառս կարկե- ցոյց և ամօթապարտս յետս դարձոյց, բա- նիւ և գրով և արդեամբք ախոյեան կանգ-

նեալ հաւատոյ:

Ա՛յս այս ևս հնարկօրէն կարծի լինել յեպսուե բարսղի, քայց այլք՝ի քննյուե նր իմանան. քանզի գրէ նիւսացին, Թէ յորժամ բազումք առ ահի տանջանաց և կապանաց և աքսորա-

նաց,

նաց, կամ առ գտանելոյ ընդհանս առաջի վաղեսի, ձեռն դնէին հրամարտակի նորա՝ որ ընդեմ ուղղափառութեան, բարեզ հզօրեղապէս վառեցաւ կազմեցաւ հնազանդ ընդդեմ ինքնակալին՝ ի ժամանակին յորում նա եկեալ ի կոստանդինուպօլսոյ՝ խաղայր յաբևելս, եգեալ ի մոի՝ թէ ոչ ոք դիմակալ գտցի հրամանաց նորա, զի այն ինչ խորտակեէր նոր զբարբարոսս։ Եւ յառաջ քան զընթանալն՝ եպարքոսն էբրև՝ ի պատճառս պատրաստ առնելոյ զճանապարհ նմա՝ մտեալ ի քաղաքս քեզքս, ի բաց հաներ զուղղափառեսն, և դնէր զչարափառս, մինչև ի գալն ի կեսարիա կապադովկայոյ։

Ընդ կոչէր եպարքոսն զբարսեղ, և ասէր. լուար արդեօք զոր ինչ արարի ես յայմ տեղիս՝ ըստ որ անցի. արդ ասեմ քեզ, եթէ լսես ինձ, տաց քեզ առնուլ ի թագաւորէն զայմ փառս և զպատիւ, և ես և զղեկավարութեն եկեղեցւոյ. (իմա կամ զենպատի, եթէ չուննէր, և կամ զհաստատուն ինչն յաթոռ իւր՝ եթէ էր յայնժամ եպս) . ապա թէ ոչ՝ ասէ, ամ դառնութեիք վշտաց և տանջանաց մեռանք քեզ։ Պէտ ետ երանելին. ոչ միայն ի բաց կալ արժան է ձեզ ի չարեաց այսոքիկ զոր գործեցիքն, այլև ապաշխարել. ապա թէ ոչ՝ մեզ ինչ ստնանել ոչ կարէք. զի ոչինչ ի բարեաց անցաւորաց կարօղ է պատրել զծածաւերս, և ոչինչ ի չարեաց ահացուցանել՝ զորս ակն ունին վերնական յուսոյն. միայն կարօղ է ցաւիլ քրիստոնեայն, զի մի և եթէ մահ է

սահմանեալ ՚ի բնէ՝ , և ինքն չկարէ քաղցում
անգամ մեռանիլ վ՚ը ձշմարտութենէ ։

Օ արմացաւ եպարքոսն ը համարձակութի
առն այլ , և սկսաւ մեղմով խօսել ընդ նմա ։
ասէ ։ մի թեթև ինչ գրեր զկամս մեծի ինք-
նակալին , որ կամի լինել ՚ի ժողովրդենէ
քումմէ ։ այլ յանձն առ լինել ևնր վ՚ը պ ։ և
այս լինիցի , եթէ ՚ի քաց բարձցես ՚ի հան-
գանակէ զհամագոյակիցն , կամ զնոյն ինքն
՚ի քնութենէ հօր ։ Ասէ ասէ ։ ծանր է նմ
իրօք ը ունել յեկեղեցի այլ զինքնակալդ ։ ա
պաքէն մեծ ինն է կեցուցանել զհոգի , ոչ զի
կայսեր է , այլ զի մարդոյ է ։ քայց այնչափ
հեռի է յինէն՝ ինչ մի բառնալ ՚ի հաւատոյ
կի յաւելուլ , զի և ոչ զկարգ ձևոյ քանիցն
փոփոխել առնում յանձն ։ Յ.յսուիկ հաս-
տատութ զդէմ կալաւ մեծն բարսեղ և նո
րուն իսկ վաղեսի ։ որ մեծաւ յոխորտանօք
եկեալ ՚ի կեսարիա՝ ոչինչ կարաց վճարել
անդ ։ այլ ակամայ կամաք սէր ցուցեալ առ
բարսեղ և առ կեսարացիս՝ մեկնեցաւ անտի
գլխակոր հանդերձ արիոսեան եղծօք , որք
շրջկին ը նմա ։

Յետ այսորիկ յիշէ ածաբանն և զպատարա-
գամատոյցն , զոր յօրինեաց սբն բարսեղ ։
զոր և ձոխագոյն նշանակէ սբն պրոկղ ՚ի մա-
տենադարանի հարց , թէ ուր առաքեալք և
աշակերտք քոյ սկսան աղօթիւք և օրհնու-
թիք կատարելին զխորհուրդ տեր պատարագին
յերկար ժամ , և կրկին օրինակք հին ա-
ւանդուեն նմ մնայեալ էին առ բազումս՝ ա-

ռեալ

ռեալ՝ ի սքին կղեմայ աշակերտէն պետրո-
սի, և՝ ի սքին յակոբայ եղբօրէ նոն, ապա
նքն քարսեղ, և զկնի ոսկեբերան, (ըստ ոմանց՝
և մեծն աթանաս) ՝ի համառօտութի վերա-
ծին զպատարագամատոյցն, յայտ է թէ յո-
րինեալով և ինչ ինչ աղօթս խորհրդաւորս ըստ
դիտաւորութե քանիցն առաջնոց. և օրինակք
սոցա առաւել հանդիսացան յեկեղեցւոջ։
Ուազում ինչ գրէ ածաբանն և զաղքատսի-
րութէ քարսղի, որով ձեռնտու եղև բազմաց
յաւուրս սուղս. նոյնպէս և զայլ առաքինի
գործոց նր, և զչքնաղութէ աղօթիցն. որում
՝ի դէպ գան և այլ բանք աւանդելք յայլոց։
Երբև փոխեցաւ ՝ի կենաց եպիսկոպետն կե-
սարու եւսեբիոս յառաջնկատութէ քարսղի,
և աներնեքեան կամէին զքարսեղ կացուցա-
նել՝ի տեղին նր, փութացաւ գրեաց քարսեղ
առ ածաբանն գրիգոր՝ վաղվաղել գալ առ
ինքն, ոպ թէ հիւանդ իցէ. այլ կամք նորա
այն էին, զի զգրիգոր տացէ ընտրել առաջ-
նորդ կեսարիոյ. իսկ գրիգոր երթալ՝ի ձ՛պհ՝
իբրև լուաւ զմահ եւսեբի, ՝ի միտ եառ ըզ-
հնարս քարսղի, և ոչ կամեցաւ երթալ առ
նա. այլ ինքն յորդորեաց զբազումս՝ զի ըզ-
քարսեղ նստուսցեն ՝ի հայրապետութէն. որ
և եղև իսկ. և եղև գլխաւորն յեպիսկոպոսունս՝
որք ձեռնադրեցին զքարսեղ, գրիգորիոս
ծերունի եպս՝ հայրն գրիգորի ածաբանի.
և այս համարի լինել յամի նն 370։
Իսկ թէ քանի՛ վայելուչ եղև նստիլ նմ յայն
աթոռ՝ յօգուտ կաթուղիկէ եկեղեցւոյ, և

թէ ուրախի հոգւոյն ընդհատց և իմաստուն
կառավարեաց զհօտ իւր, ո կարէ պատմել.
Թող զբազմադիմի նեղուն՝ զորս կրեաց
՚ի պեսպես երկպառակութենէ ընտանեաց և
օտարաց. այլ եկաց յիմի իբրև զվէմ հաս-
տատուն, ունելով ինքեան գործակից և խոր-
հրդակից ՚ի բազում իրս զաճաբանն. զոր և
ձարտարութեամբ ձգեաց ընդէմ կամաց նոր յաս-
տիճան եպսուն. զի առաւել լուսաւորես-
ցէ լոյս նոր զեկեղեցի այ:

Արեծ եղև ջանն նահատակութեանն մեծին բարսղի
և վճռ արմատախիլ առնել լոյ զհերձուածն ա-
րիանոսաց, ոմն և զայլ աղանդս ժամանա-
կին. զի փոյթ նոր էր ոչ միայն զիւր հօտն ա-
նարատ պահել, այլև զընդհանուր եկեղեցին
Քր և անբիծ տեսանել ՚ի խաղաղութենէ. և
վճռ Թուղթս գրէր ՚ի տեղիս տեղիս, առա-
ւել առ մեծն աթանաս աղեքսանդրացի, և
առ դամասոս հռովմայ հայրապետ. և ինքն
հանապազորդ աղօթիւք և հոգովք մաշէր
յանձն իւր վճռ սոցին իրայ. և ձառս յօրվա
արձանագրէր լուսաւոր և ազդու բանիւք ՚ի
վանումն հերեսիովտաց, և ՚ի հաստատուն
ուղղափառ վէպութեան: Իանգամայն և
զերկպառակութիս եպսաց ուղղափառաց բազ-
մահնար խորհրդովք ՚ի միաբանութենէ և
՚ի խաղաղութենէ յեղափոխէր, յանձն առեալ
կրել զբազմապատիկ բամբասանս ՚ի թշնա-
մեաց: Իսկ զհանապազորդեան տքնութենիս
և զձգնութենին իւր, և զանձանձրոյթ երկա-
րութենէ ՚ի գրութենէ ազգի ազգի մեկնուածոց

և

և ՚ի քարոզութիւն բանին այ նաև հիւանդա-
գին անձամբ, և զայլ առաքինի գործս քաջ
հովուին և տիեզերալոյս վիպին, զորս ան-
հնար է մի առ մի նշանակել ։

Այլ եղև յետ միւսանգամ փորձելոյ վաղեսի
կայսեր զմեծն բարսեղ ՚ի ձեռն եպարքոսին
իւրոյ մոգեստիոսի, լուեալ եթէ անդրդուե-
լի կայ ՚ի խորհուրդս իւր, մինչ զի ոչ սպառ-
նալեաց և ոչ ողոքանաց երեսս առնէ, և այն
ոչ առնու իշխանի և թիկնի, գոլեաց զնա
վաղեսս, այլ կամեցաւ և անձամբ զփորձ առ-
նուլ. ապա եկեալ ՚ի կեսարիա, ըստ գրելոյ
թէոդորետոսի և սոզոմենոսի՝ յաւուր ծնն-
դեանն քրիստոսի և սուրբ աստուածայայտ-
ութեանն զնաց յեկեղեցին բազմութիւք մե-
ծամեծաց. և մատոյց ընծայս ոսկւոյ սեղանոյ ։
Ուր առեալ բայերտիոս քոլլանդեան. * Ծնունդ
նոն ՚ի նմին աւուր կատարիւր ընդ յայտնութիւնն
յարևելս. վասն և նազիանզացին գրէ, թէ
էր օր յայտնութեան, և ժողով բազում յոյժ
եկեղեցւոյ ։

Ընդ տեսեալ վաղեսի զկարգ և զվայելչուն
պաշտամանց եկեղեցւոյ, և զնոր հայրապետն
անշարժելի ոտիւ սիւն կացեալ ՚ի պաշտօնն այ,
նոյնպէս և զպաշտօնեայս հանդերձ ժողո-
վրդեամբն, զի ոչինչ վրդովեցան ընդ գալուստ
ինքնակալին, ոտիւ թէ ոչինչ նորութիւն լեալ
էցէ, յայլոյ խելս լինէր յապշուէ. և իբրև
զայն ևս ետես, զի հայրապետն ոչ մերժեաց
զընծայս նր, այլ՝ ընկալաւ, այնուհետև ոչ-
ինչ կարաց ասել ընդդէմ սրբին ։ Ոսկ սրբին կո-
չէին զնա ՚ի ներքս առ ինքն ընդ վարագուրաւ,

խօսեցաւ առ նա այնպիսի ազդու բանս, մինչև ասել Ճծաբանին. ոչ այլ ինչ էր՝ զոր խօսեցաւ, բայց Ոյ բարբառ. զոր ոչ ոք ընդկայսեր էին, նոյնպէս և մեք որ ի միասին մտեալ էաք՝ լուաք։

Յայնմ վայրի յանդգնեցաւ խոհակերապետ արքայի՝ դեմոսթենէս անուն, զոր նաբուզարդան դահճապետ կոչէն Ճծաբանն և նիւսայինն, բանալ զբերան իւր, և բանս ձգել ընդդէմ մեծին բարսղի։ Ասէ՝ նբ հայրապետն ժպտեցաւ, և ասէ. դեմոսթենէս տեսաք հռետոր՝ անգէտ ի դպրութէ։ Այլ ի զայրանալն եւս, և ի սպառնալ ընդէմ հայրապետին, ասէ ցնա՝ քէն աներկիւղ համարձակութէ. քեզ ինկ է զդահամունս կերակրոց հոգալ. և զի ականջք քո լի են աղտիւք ձենձերաց, անմարթ է քեզ լսել զբէ վիպուրս։ Յայնժամ առաւել աքանչացեալ վաղեսի կայսեր ընդ մեծն բարսեղ՝ յակամայ կամս պատուհասիրեաց զնա. և պարգևեաց նմա զգեղեցիկ անդս արքունի՝ որ էին ի կողմանս կեսարիոյ, ծախել ի պետս աղքատաց։ Այսպէս խորտակեաց զալիս ծփանաց վաղեսի մեծ նաւապետն բասիլիոս. Թոզ և զայլ բազմապատիկ հալածանս՝ զոր կրեաց յերեսաց նր և գործակցաց նորին. զի յամի յաղթօզ հանդիսացաւ ախոյեանն ուղղափառաց. մինչ զի Թէպետև կամեցաւ կայսրն վճիռ տալ արտասահմանուէ սբին, այլ Ճծ խափանեաց զայն. զի ի նմին գիշերի՝ յորում զվճիռն ունէր գրել, եհաս պատուհաս

հաս

հաս ՚ի տունն արքունի . որպէս արքային հիւանդացաւ մերձ ՚ի մահ , և կինն յանկարծելի ցաւս ըմբռնեալ՝ տանջիւր իբրև ՚ի ձեռաց դահճաց . յաւելու սքեն եփրեմ, թէ ՚ի կամիլ ստորագրել վճռոյ՝ երիցս բեկաւ գրիչն ՚ի ձեռին վաղեսի . մինչև հարկ եղև դադարել ՚ի գրելոյ ։

Ապա իբրև անյոյս եղև ՚ի բժշկաց վիճ մանկանն , հարկեցաւ ապաւինիլ յաղօթս սքեան . և ՚ի ձեռն միջնորդաց ոմանց ետ կոչել զնոքա հայրապետն ։ Այս իսկ և իսկ ընդ՝ մեզ մնացաւ ախտն . այլ իբրև խստասիրտ գտաւ վաղես , և ոչ դարձաւ ՚ի մոլորութենէ իւրմէ , դարձեալ վտանգեցաւ մանուկն ։ Յայնժամ ասէ մեծն բարսեղ ցթագրն . եթէ հաւատաս ով կայսր ընդ իմոյս հաւատոց , և առնես միւոյն եկեղեցւոյ , կեցցէ մանուկդ . և յոչ առնուլ նոր յանձն՝ ասէ բարսեղ . ապա ուրեմն եղիցին կամքն ոյ ՚ի վրդ մանկանն . զայս ասացեալ՝ եւ չերեսաց արքայի . և մանուկն փչեաց զոգին ։

Իսկ եպարքոսն մոգեստիոս անկեալ ՚ի ծանր խօթութենէ՝ աղաչէր զմեծն բարսեղ օգնել նմա . և ՚ի դնել նոր ձեռն՝ առողջացաւ . և յայնմհետէ դարձաւ յուղղափառութենէ , և եղև մի ՚ի գլխաւոր բարեկամաց բարսղի . և վաղես ակն ածեալ ՚ի սքեան՝ ոչ էս կամեցաւ հալածել զնոր հայրապետն . իսկ նա տխրեր , զի չէղև արժանի վկայական մահուան , կիճ խոստովանողական արտասահմանութենէ . և զայլ եւեպոսց տարագրելոյ քաջալերեր մխիթա .

Թարական Թղթովք իւրովք . և առաւել զնքն մեկիտոս անտիոքայ Հայրապետն՝ ընդ որում մունէր սերտ բարեկամութի՛ , և ընկալեալ գիր ՚ի նմանէ՝ ցնծայր յոգի իւր . և էր յայնմ ժամուի բարսեղ ոպ ընդհանուր Հովիւ՛ ամ եկեղեցեաց ուղղափառաց , որոց Հովիւ՛ք էին յաքսորս :

Ընդ այն ժամանակ՝ ըս գրելոյ նիւսացւոյն ՚ի վարս սբյն եփրեմի , եկեալ ծերունին աոաջնորդութքն ՚ի կեսարիա կապադովկացւոց , անդ ետես և ծանեաւ զբերրանն եկեղեցւոյ , զոսկեղէն ասեմ զխօսնակն վարդապետուե՛ զբասիլիոս , և սրհնառաք ձայնի՛ ցնծութի՛ սկսաւ ողջունել զնա : Ա՛ւ զի կորովաբիք աչօք Հոգւոյն ետես զփայլակնացեալ աղաւնին , զի յուս նր աջոյ նատեալ՝ թեւադրեր նմա զիմաստութի՛ բանս , զորս նա բարբառեր ՚ի լսելիս ժողովրդեան . և ինքն իսկ բարսեղ ՚ի պատուական աղաւնոյ անտի՝ իմա ՚ի Հոգւոյն սբյ՝ ուսեալ եր զ՚ի տար ՚ճ գալուստ սբ աբբայիս , և թէ նա ինքն է եփրեմ ասորին : Այս եղև ուրախութի՛ և մխիթարութի՛ մեծ երկոցունց սբցն . մինչ զի ոչ ՚ի զուր եղև աշխատուե՛ այնչափ ձանապարհին , զոր արար ծերունին : Ո՛ սոյն ընարեալ գրէ և եղադիոս ՚ի ձառընտիրս . և՛ս ձոխացոյն պատմէ նա ինքն սբն եփրեմ ՚ի գովեստն բարսղի :

Այսց այնուհետև սբն բարսեղ մինչև ՚ի ըսկիզբն խաղաղութի՛ եկեղեցւոյ , և ՚ի դարձ ուղղափառ եպսց յաքսորանաց , ըս որում

մար-

մարգարէացեալ էր և ինքն ՚ի Թուղքին առ
Եւսեբիոս եպս սամոսատիոյ ։ զի յամի տն 378 ։
վաղես կայսր հալածիչ ուղղափառաց պար-
տեալ ՚ի բարբարոսաց՝ ՚ի յետին վտանգի կե-
նաց և Թէրուէնէ իւրոյ հրաման տայր յետս
դարձուցանել զեպսունս աքսորեալս ։ այլ
ինքն խոցեալ նետիւ ՚ի գեթայ ՚ի Թրակիա ,
և ՚ի հիւղ մի շինականաց անկեալ՝ պաշարի
և այրի , անարժան գտեալ Թաղման անգամ ։
Եւ ՚ի յաջորդ ամի Թէրեալ ճածասէրն Թէո-
դոս մեծ՝ դարձոյց զմնացեալ եպսունս յար-
տասահմանուէ , և արար խաղաղութիւն կա-

Թուղիկ եկեղեցւոյ ։

Եւ ահա յայնպիսի աւուրս վախճան հասա-
ներ երանելի հայրապետին բարսղի ՚ի տա-
րեգլուխն ամի տն 379 , կի՛380 ։ ՚ի յունվա-
րի ։ ա ։ նմանեալ մովսէսի առն այ ։ որ ետես
զպարգևական երկիրն , և ոչ եմուտ ՚ի նա ։
նոյնպս և մեծն բարսեղ կրեաց զմեմատառա-
պանս և զվիշտս եկեղեցւոյ , և ՚ի խաղաղու-
թիւն ոչ վայելեաց , ըստ գրելոյ եղբօր նր նիւ-
սացոյն ։ Իսկ զքաղցր ատանդումն հոգւոյ
նր ՚ի ձեռն հրեշտակաց , և զկոծ ամքաղա-
քին կեսարացւոց և գաւառականաց , ոչ մի-
այն քրիստոնէից , այլև հրէից և հեթանո-
սաց , և զիառաւոր Թաղումն նր , քան նկա-
րագրէ ցաւագին անձամբ ամենայնից նորա
ճածաբանն գրիգոր՝ յարձանակատն , զոր խո-
սեցաւ ՚ի վեր նր յերրորդ ամի փոխման նո-
ցուն , յորժամ գարձաւ ինքն ՚ի ժողովոյն և
յաթոռոյն կոստանդնուպօլսոյ յառաջին վի-

ձակ

Ձակ իւր . յորմէ յայտ է լեալ ժամանակ կե-
նաց սքեղն բարսղի եղև գրեթէ միջոցն՝ որ ի
ծբ ժողովոյն Նիկիոյ ցծբ ժողովն կոստանդ-
նուպօլսոյ , այն է իբր ծնեալ ամ . և առ առա-
ւելն՝ ընծայիւն նմա ամք ՀԿ , կամ կե . վասն թէ-
պէտև ոչ շատ ծերացաւ , այլ խստակրօն
վարք նր և հոգք եկեղեցեաց , և անդադար
աշխատասիրուն գլուսոր՝ հանդերձ թոքա-
ցաւութքն կարձեցին զցանկալի կեանս նր :
Յայս վայր ծաղկաքաղ արարուք զընթացս վա-
րուց մեծին բարսղի՝ առաւել ըստ օրինի յետինն
քննչաց , ասօկապէս հանեալ ի բանից երե-
ցունց ականատես ներբողաբանից , այր գրիգո-
րի ՃԾաբանի , գրիգորի Նիւսացւոյ , և աբբայ
Եփրեմի : Այլ կան և բազմադիմի աւանդու-
թիք առաջնոց և յետնոց զմեծամեծ գործոց
նր և Տաքարող Հայրապետիս . զորս ոչ տանի
մատեանս : Արդեւ ըստ կարգի պատ-
մութեն նր գրեալ ի ձառընտիրս մեր յանուն
եղադիոսի կեսարացւոյ , որ յայլոց ընծայի
ամփիլոքիոսի իկոնիացւոյ . ուստի առեալ է
և քաղուածք յայսմաւուրաց . զորմէ ասաս-
ցուք լիով ի կարգի ծանօթութեց . իսկ ասա
զկնաւոր բանս պատմութեն նշանակեմք :
Այդ՝ ըստ եղադիոսի կիր ըստ ձառընտրաց , բալ-
սեղ եօթնամեայ եղեալ՝ տուչեալ լինի յու-
սումն գրոց . և կացեալ ի նմին զհինգ ամ
ի կեսարիա կապադովկացւոց՝ (թո՛ղ զգե-
դերանս յայլ գպրոցս) գնաց ի մայրն իմաս-
տութե յաթէնս . և ուստու զփիլիսոփայուն
(յետ ուսանելոյ զհեաւորութի ի պարոյ-
րայ)

ըսայ) յԵւսուղոսէ վիպէ հելլենացւոց ըն գրի-
գորի ածաբանի. իբրև երկոտասան ամ հան-
գարտեր յուսումն , յուլիանոս և լիբիանոս
խոտորեցան յուղիղ ձանապարհէն. իսկ ոքն
բարեզ սքանչելի վարուք կացեալ՝ ինդրեր
պահօք և աղօթիւք ՚ի վերին տեսչէն իմա-
նալ զածայինն իմաստութեն զհանգամանս։
Եւ զինգետասան ամ ըն ամ հելլենացի ի-
մաստութեի ընթացեալ՝ ոչ եգիտ զոր խնդ-
րերն ՚ի նմին զլոյս , որ առաջնորդեսցէ առ
ածն։

Եւ ՚ի տքնիլ նր ՚ի միում գիշերի՝ ծագումն
ածային լիներ նմ , զի Թողցէ զարտաքնոցն
աղանդաւորաց զգիրս. և յարուցեալ էջ ի-
գիպտոս. ուր եգիտ զոմն յառաջնորդաց վա-
նից պորփիւրոս անուն , որ ետ նմա զսրբա-
զան գիրս ածային պատգամաց. և նր այսմ
իրի հանդիպեալ՝ դադարեաց անդ ընթեռ-
նուլ զամ մի՝ ջուր և բանջար ճաշակելով. և
ապա աղաչեաց զվանականն , զի արձակես-
ցէ զնա յեկեմ առ ՚ի յաղօթել և տեսանել
զսբ տեղիս։

Եւ դարձեալ անտի յաթէնս ելանէր՝ սեր-
մանել զհաւատս քրի ՚ի մէջ փիլիսոփայից
հելլենացւոց , և սա առաւել դարձուցանել
զեւսուղոս վիպ իւր փոխան երախտեացն. և
խօսեցեալ ընդ նմա գիտնաւոր կարգօք և
ածային իմաստութեբ՝ զարմացոյց զնա. մին-
չև ասել եւսուղոսի. ով բարեիղիկ՝ երկնա-
ւոր զօրութեցն տեսօղ , վա՛ք՝ հաւատամ
՚ի մի ած հայր ամենակալ յարարօղն երկնի
և

և երկրի , և որ ինչ ՚ի կարգին է . ակն ունիմ յարուցեալ մեռելոց , և կենացն անվախճանից յաւիտեան : Յայնժամ միաբան խորհրդով վաճառեալ զինչս իւրեանց՝ բաշխեցին աղքատաց . և դեմ եղեալ գնալ յերկիր, եկին նախ յանտիոք ասորւոց . ուր տեսեալ բարսղի ՚ի պանդոկի զորդի փեղիքսիանոսի պանդոկապետին , զի դաս առեալ ՚ի լուճանեայ փիլիսոփայէ առնս ինչ քերականականս՝ մեկնել հռետորաբար , վարաներ յոյժ պատանին , զրեաց զմեկնութիւնս նոցա երրեակ օրինակաւ . և իբրև ետես վիշապն նորա լուճանեոս , զարմացաւ , և հարցանէր՝ թէ ո՞ զրեաց զլուծումն բանից : Նա ասաւ եղև կոչել նմա զբարսեղ ՚ի տուն իւր , և առաջի առնել նմա զայլ ինդիրս իմաստասիրականս . և նա առաջի եդ բանս վե՛ր ՚ի քո հաւատոց . խոսեցաւ և առ աշակերտեալ մանկունս զայսպիսիկ կարևոր խրատս :

Ասարո՛ւք ասէ Հոգւոյ մաքրուի , և անախտութիւն մարմնոյ . գնացք հեզութ , ձայն չափաւոր , և խօսք բաւական . կերակուր և ըմպելի անխռով . առաջի ծերոց լռութիւն , առաջի իմաստնոյ ունկնդրութիւն . առ վերակացուս հնազանդութիւն , առ ընկերակիցս սէր . առ կրսերս անկեղծաւորութիւն . սակաւ խօսել , և յոլով իմանալ . մի յաճախել ՚ի բանս . մի յանդգնել ՚ի խօսս ծաղրու . ամօթխած ըզարդարիլ . ընդ անպարկեշտ կանայս առհասարակ մի խօսել . ՚ի վայր ունելով զակն , և ՚ի վեր զմիտան՝ փախչել ՚ի հակառակութենէ .

մի

մի իշխանաբար ուսուցանել. մի ընդունել հեշտաբար յամենեցուն պատիւ. և որ կարօղն է՝ի ձէնջ ընկերին փոխ տալ, մի դարձեալ պահանջեսցէ զկշիռն. այլ ամենայն վարձուցն ակն ունել, և զյաւիտենական կենացն հատուցումն ընդունել՝ի քէն։

Ո այս ասացեալ բարսիղիոս ցաշակերտսն լինէանեայ, և հրաժարեալ գնաց զձիգն իւր հանդերձ եւուղաւ. և իբրև հասին յեդեմ, եկին՝ի տեսուքի մաքսիմինոսի ենպսի քաղաքին. և անկեալ առաջի նորա աղաչէին արժանի լինել վերստին ծննդեանն՝ի յորդանան գետ. և իբրև ակրտեցան, նոյնժամայն սիւն հրեղէն եկաց՝ի վր նոց. և ելեալ աղաւնի մի՝ի լուսոյն՝ կղ՝ի յորդանան և խառնեաց զջուրսն, և վերացաւ յերկինս. և զարմացեալ ենպսին ըստ սերն բարսղի՝ որ առ ինձ, զգեցոյց նմա զքէի վարշամակն. և օծեալ զնա ձեռնասուն, ընդ նմին և զեւուղոս, տայր նոց՝ի կենդանարար հաղորդութիւն։

Եւ ջրջեալ բարսղի ըստ եւուղեայ ըստ ձեռ տեղիսն՝ զկնի ամի միոյ կամ եղև նոց դառնալ յանտիոք. ուր առաջի ենպսին ընթեռնոյր բարսեղ և մեկներ զառաքացն բանս, մինչև զարմանալ ամենեցուն. ապա զկնի բազում ինչ աւուրց դէմ եդեալ գային յենն կապադովկացւոց։ Եւ՝ի մերձենալ նոց՝ի դուռն կեսարացւոց քաղաքին՝ յայտնեցաւ՝ի տեսլեան գիշերոյ եւսեբիոսի ենպսի տեղւոյն, թէ ահա գայ բարսիղիոս՝ որ հանդերձեալ է ունել զկնի քո զաթոռ ենպսուքեդ. վ՚ոյ

հաւա

Եհաւ Եպան զնա առ իւր. մինչև փոխեալ լինէր յԵգիպտոս եպս Եպան. և յայնժամ ձեռնադրեցաւ ի տեղի նորին բարսիղիոս գործակցութեամբ հոգւոյն սրբոյ։

Եւ յաւուրն եօթներորդի ի մատուցանել բարսղի հայրապետին զնոր պատարագն՝ լցաւ հոգւով սրբով. և զկնի սակաւ ինչ աւուրց հաւատովք և աղօթիւք բազմօք կամէր սկիզբն առնել և գրել իւրովք ձեռօքն զպատարագին խորհուրդն։ Եւ ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա Տէր հանդերձ սրբոյ առաքելովքն, և ասէ ցնա. Ընդրուժածոց քոց լցցի բերան քո գոհութեամբ. ոչ զի քո կարգաւորութեամբդ մատուսցեն ինձ անարիւն պատարագ. և յաւուցէ սկսանէր երանելին գրել ի քարտիսի այսպէս. Լ՛ց բերան իմ գոհութեամբ, ոչ զի օրհնեցից ընդմատս քո. Տէր ածմեր՝ որ ստացար զմեզ և ածեր ի կենդանութիւն յայս. սոյնպես և զայլ աղօթանի սրբոյ պատարագին։ Եւ ի մատուցանել զսբ խորհուրդն ընդ այսմ կարգաւորութեամբ, իբրև վերացոյց՝ ասելով, սրբութիւնք սրբոց. և ժողովուրդքն ասէին, միայն սբ, միայն Տր, միայն յն քս ի փառս Աստուծոյ հօր, տեսանէին ամենեքին հանդերձ եւսեբիոս եպս իմանալի լոյս ի խորանին, և զբարսեղ ի մէջ հրեշտակաց սպիտակազգեստից։ Ասէ սբ հայրապետն ի ձայնակել անդ զսբ հացն՝ եթող և մատուսնս երկու. յորոց զմին պահեաց, զի թաղեսցի ընդնմա (ի նշանակ հաւատոց յարութեանն, ընդանին ինն՝ թէ որ ուտէն զկս, և նա կեցցէ վս իմ. և թէ՝ յարու-

ցից զնա յաւուրն յետնում . զայս արարին և ոմանք յառաջնոյ . այլ յետոյ արգելին ժողովք) . և կոչեցեալ առ ինքն ոսկեգործ՝ հրամայեաց առնել աղաւնի յոսկւոյ սքեայ . և յայնմ եդեալ զերծողդ մանր խորհրդոյն՝ կախեաց ՚ի վեր սքեայ սեղանոյն . (յայտ է թէ ՚ի պետս հաղորդելոյն արտաքոյ պատարագի , որ և ՚ի պետս հիւանդաց) ։

Նոյնպէս յաւուր միում հրեայ ոմն միաքանեալ ընդ ժողովս քրիստոնէից՝ եկն յեկեղեցի դիտել զկարգ պատարագին և զհաղորդուն նոր խորհրդոյն . և տեսանէր հրեայն , զի մանուկ յօշէր ձեռօք իւրովք բարսիղիոս . և ՚ի հաղորդիլ ամենեցուն՝ ընկալաւ և հրեայն ոչ ձգմարտանայր միս և արիւն . և մանր ինչ տարեալ ՚ի տուն իւր՝ եցոյց զուգակցին իւրում . և ապա եկեալ առ սքեայ հայրապետն՝ միրտեցաւ ամ տամբ իւրով ։

Վկին մի նեղեալ վասն պարտուց հարկին՝ եկն առ մեծն բարսեղ՝ օգնել նմ . և նա գրեաց առ իշխանն հարկապահանջ . վասն մեր՝ արջառի կարօղ ես , օգնեա դմա . իսկ իշխանն արար պինդ . վասն քո մի հայր նոր կամեցայ թողուլ հնոջդ , այլ ոչ կարացի . վասն զի զհարկս թառգաւորի պարտի ։ Այս նա գարձեալ գրէ . եթէ կամեցար և ոչ կարացեր , թողջի քեզ . ապա եթէ կարօղ էիր , և ոչ կամեցար , ածցի զքեզ ածգ յայլ պատշաճ ժամու յայնպիսի վիճակ , զի յորժամ կամիցիս՝ յայնժամ ոչ կարասցես ։ Այս առժամայն եղեն նմ լիքն . զի իշխանն պարտաւոր գտեալ՝ արգելաւ ՚ի

բանտ արքունի կապանաք . և յայնժամ առաքեր եղկելին աղաչաւորս առ սբ Հայրապետն միջնորդ լինել առ Թէքրն՝ ներել նմ. և այնպէս ազատացեալ՝ ողորմեցաւ և լինքն տառապեալ կնոջն :

Ասեցաւ սբ Հայրապետն ՚ի միում յաւուրց ելանել արտաքոյ քաղաքին , և ասէ ցմեզ (ասէ եղադիոս) . որդեակք իմ ելկայք զկնի իմ , զի տեսջիք զփառսն ՚ոյ հանդերձ ինև . և ելեալ ՚ի քաղաքէն մերմէ գնացաք : Եւ ապա պատմէ յերկար , թէ ՚որպէս յայտնեցաւ առաքինութիւն սբ քահանային անատոմասայ՝ որ էր երէց գեղջ միոյ , և սբ կնոջ նորա Թէոգնեայ , որ անուամբ էր կին , իսկ գործովք քոյր , և կոյս պարկեշտ . և էր նմ զբառասուն ամ կայեալ տնտկցութիւն , և պահեալ զառաքինի սրբուն իւրեանց՝ պատճառելով զամբարիշտն . և զօրհանապազ պահովք կատարէին , ոչինչ ճաշակեալ՝ բայց միայն հաց և ջուր : Եւ իբրև հրամայեաց հայրապետն քհնային , զի մատուսցէ զպատուական , նա ասէր . սբդ ՚ոյ , ոչ ուսուցանես , նուճապն ՚ի լուէն օրհնեսցի : Ասէ ցնա երջանիկ հայրն մեր . զկնի ամ առաքինի վարուց քոց կալջիր և զլսողուն . և յունկնդիր լինել նր՝ ետես սբն բարեգ և արժանաւորքն ընդ նմա զամենասբ հոգին ՚ի նմանուն լուսոյ շրջապատեալ զնորանաւն և զքահանայիւն : Ապա եկաք ՚ի տուն քահանային . և յետ ճաշելոյ ասէ ցնա արքեպն . պատմեա ինձ , ուստի ե գանձդ քոյ այդ , և զինչ էն

վարք

վարք քո ։

Ասէ ցնա երէցն . մարդ եմ մեղաւոր՝ հնա-
զանդեալ դիմաւորական հարկի . ունիմ լուծս
երկուս եզանց . զմին ես վարեմ , և զմիւսն
վարձկան ունիմ . և զոր ինչ տայ մեզ ՚ած ,
առնեմք երկուս մասունս . զմինն առնեմք ՚ի
պէտս օտարսիրուէ , և զմիւսն ՚ի պէտս հար-
կահանաց ։ Նա իբրև լուեաց զայլ գործս իւր ,
առեալ սքէն բարսղի զձեռանէ երիցուն՝ ե-
բեր ՚ի խուց մինչ , և ասէ . քաց մեզ զդուրս .
և յոչ կամիլ նմ՝ սղնքն ինքնին բացան . և
մտեալ ՚ի ներքս՝ տեսաք այր մի գոդի՝ ոչ ու-
նելով ամենևին ողջ տեղի . և ոչ ոք գիտէր՝
եթէ անկեալ դնի անդ . բայց միայն քահա-
նայն և զուգակիցն իւր , որք սպասաւորէին
նմա ։ Ասէ սքէն ցերէցն . վ՚ն էր կամեցար թա-
քուցանել զդանձս զայս . յայնժամ յաղօթս
եկաց ՚ած հայրապետն , և բժշկեաց զնա . և
դարձաք ՚ի քաղաքն՝ ցնծուբք օրհնելով զ՚ած ։
Յետ այսորիկ պատմէ եղադիոս զգալուստ
սքէն եփրեմի առ ՚ած բարսեղ , և զտեսա-
նէն նմ ՚ի վր միմեանց զչնորհսն ՚այ . զորմէ
երկար լինի գրել ։ Իրէ զկնի Ճոխագոյն և
վ՚ն այրն կնոջն մեղաւորի , որոյ ջնջեցաւ ձե-
ռագիր յանցանաց աղօթիւք բարսղի և եփ-
րեմի ։ Նա ապա վ՚ն յովսեփայ հրեի և բժշ-
կի . զոր սիրեր ՚ած բարսեղ և ստէպ յորդո-
րեր գառնալ ՚ի քո . այլ նա ոչ առնոյր յանձն ,
մինչև մերձեցան աւուրք փոխման սքէն . և
իբրև եկն յովսէփ , և սրտցաւութիք ծանոյց
նմա վախճանի այն օր , ասէ ցնա մեծն բար-

սեղ. ոչ գիտես՝ զինչ ասես. ասէ ցնա Հրէայն յովսէփ այլաբանօրէն. Հաւատա՛ ինձ, զի աբեգակն ընդ արեւմուտս է այսօր: Ասէ ցնա տէրն. Ասէ եթէ ապրիմ մինչեւ ցայգուցն՝ի վեցերորդ ժամին, զինչ առնես: Նա նա ասէ. Ես մեռայց: Ասէ ցնա տէրն. այո՛ մեռանիցիս մեղացն, և կենդանասցիս քոյին իմոյ: Յայնժամ երդուաւ Հրէայն մկրտել, եթէ լինիցի բան տէրն:

